



ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՆՈՐԱՎԱՆՔԻ

ՎԻՄԱԳՐԵՐԸ ԵՎ

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ



KAREN MATEVOSYAN

**THE EPIGRAPHIC INSCRIPTIONS  
AND COLOPHONS OF NORAVANK MONASTERY**

КАРЕН МАТЕВОСЯН

**ЭПИГРАФИЧЕСКИЕ НАДПИСИ  
И ПАМЯТНЫЕ ЗАПИСИ НОРАВАНКА**

MOUGNI PUBLISHERS . ИЗДАТЕЛЬСТВО “МУГНИ”  
YEREVAN . 2017 . ЕРЕВАН

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**ՆՈՐԱՎԱՆՔԻ  
ՎԻՄԱԳՐԵՐԸ ԵՎ  
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ**

ՄՈՒՂՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2017

ՀՏԴ 94(479.25):27  
ԳՄԴ 63.3(5Հ)+86.37  
Մ 151

Խմբագիր՝ **Արսեն Հարությունյան**  
պատմական գիտությունների թեկնածու

### Մաթևոսյան Կարեն

Մ 151 Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները/

Կ. Մաթևոսյան. Եր.: «Մուղնի» հրատարակչություն, 2017.- 244 էջ:

Գիրքը նվիրված է միջնադարյան Հայաստանի նշանավոր վանքերից մեկին՝ Նորավանքին, նրա պատմության որոշ դրվագներին և մշակութային ժառանգության հարցերին: Միաժամանակ, նախորդ երեք հրատարակություններից ի մի են բերված և լրացված վանքի վիմագրերը (ընդհանուր թիվը՝ 236), ներկայացված են նաև այստեղ գրված ձեռագրերի հիշատակարանները՝ համապատասխան ուսումնասիրությամբ:

Նախատեսված է աղբյուրագետների, պատմաբանների, Հայոց պատմության և մշակույթի հետաքրքրվող ընթերցող լայն հասարակության համար:

ՀՏԴ 94(479.25):27  
ԳՄԴ 63.3(5Հ)+86.37

*Տպագրվում է մեկենասությամբ Աննա Ջիրջիրյանի  
ի հիշատակ սիրելի հոր՝  
Մաքս Ջիրջիրյանի (1926-2016)*

ISBN 978-99941-33-83-3  
© Մաթևոսյան Կ., 2017 թ.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Վայոց ձորի Նորավանքը, որը 13-րդ դարի վերջերից Այունյաց մետրոպոլիտների աթոռանիստն ու Օրբելյան զորեղ իշխանական տան դամբարանավայրն էր, նշանավոր է ոչ միայն իր պատմությամբ, այլև հարուստ մշակութային ժառանգությամբ՝ որպես ճարտարապետության, քանդակագործության, վիմագրության, գրչության և մանրանկարչության խոշոր կենտրոն: Բնական է, որ վանքը բազմիցս արժանացել է ուսումնասիրողների ուշադրությանը, որոնք անդրադարձել են նրա պատմությանն ու մշակութային դերին, տեղի ճարտարապետներ Սիրանեսին և Մոմիկին, հրատարակել վիմագրերը և այլն:

Նորավանքի վիմագրերը, որոնք հայագիտության երախտավոր Սեդրակ Բարխուդարյանի վերծանությամբ տեղ են գտել «Դիվան հայ վիմագրության» 1967 թ. լույս տեսած 3-րդ հատորում, ամբողջական չեն (ավելի հատվածական ու փոքրաթիվ են եղել նախորդ հրատարակիչների հավաքածուները): Ակադեմիական այդ հրատարակությունից հետո՝ 1970-ականներին վանքում իրականացված մասնակի պեղումների արդյունքում ի հայտ են եկել բազմաթիվ նոր արձանագրություններ, բացվել են նաև վանքի հնագույն՝ կոպտատաշ քարով կառուցված Ս. Կարապետ եկեղեցու ավերակները: Վաստակաշատ վիմագրագետ Սուրեն Սաղումյանը 1993 թ. հրատարակել է Նորավանքի հինգ տասնյակից ավելի նորահայտ արձանագրություն: 1990-ականների վերջերին Նորավանքի Ս. Աստվածածին եկեղեցու վերականգնման աշխատանքների ընթացքում հողից մաքրվեց վանքի բակը՝ երևան բերելով մի շարք նոր վիմագրեր, որոնց հրատարակությունը 2006 թ. իրականացրեց պրոֆեսոր Մայրլ Սթոունը: Այս ամենից բացի, վանքի տարածքում և շրջակայքում մեզ նույնպես հաջողվեց գտնել դեռևս չհրատարակված շուրջ երկու տասնյակ վիմագրեր: Ահավասիկ, այս ողջ վիմագրական ժառանգությունը մեկտեղելու, որոշ արձանագրությունների դեպքում սրբագրումների և համապատասխան ծանոթագրությունների



նպատակով է ընթերցողի սեղանին դրվում ներկա հրատարակությունը, ուր Ս. Բարխուդարյանի 136 վիմագրով հավաքածուն լրացվում է ուղիղ 100 միավորով, որն անկասկած կարևոր նյութ է ավելացնում Նորավանքի պատմությանը:

Գրքի մյուս առանձնահատկությունը Նորավանքում գրված բոլոր հիշատակարանների ամբողջացումն է: Ի տարբերություն հիշատակարանների ժողովածուների, որտեղ բնագիրը հիմնականում առանց ծանոթագրությունների է, այստեղ յուրաքանչյուր հիշատակարան ներկայացվում է պատմական, աղբյուրագիտական համառոտ ուսումնասիրությամբ: Ավելորդ է ասել, որ միևնույն վայրի վիմագրական և հիշատակարանային նյութերը, որպես կանոն, բազմաթիվ շփման եզրեր են ունենում, պատմական, փաստագրական, լեզվաբանական առումով լրացնում են միմյանց, ինչն ակներև է նաև Նորավանքում:

Հայկական միջնադարյան վանքերի մշակութային ժառանգության ներկայացման այս եղանակը հնարավորություն է տալիս ամբողջացնելու միևնույն վայրում՝ քարի և մագաղաթի վրա դրոշմված գրավոր նյութը և այն արժևորել պատմամշակութային, աղբյուրագիտական, հնագրական տեսանկյունից՝ որոշ դեպքերում թույլ տալով տեսնելու նաև տեղական յուրահատկությունները: Թե՛ վիմական արձանագրությունների և թե՛ ձեռագրերի հիշատակարանների աղբյուրագիտական որակ ստեղծող բազմաքանակությունը հայ միջնադարյան մշակույթի առանձնահատկություններից է (այլ մշակույթներում ոչ վիմագրերն են այդքան բազմաթիվ, ոչ էլ հիշատակարանները), որն ինչ-որ չափով փոխհատուցում է փաստաթղթային նյութի և արվեստի գործերի (արքունական ու եկեղեցական դիվաններ, եկեղեցաձիսական առարկաներ և այլն) անդառնալի կորուստները: Հետևաբար, ավելի քան տեղին է վանքերի ու գրչության կենտրոն հանդիսացող որոշ եկեղեցիների վիմագրական և հիշատակարանային նյութի մեկտեղումն առանձին հրատարակություններում: Նորավանքին նվիրված սույն ժողովածուն թերևս առաջին նման փորձն է:

Նորավանքի պատմության հարցերին, ինչպես նաև բազմաշնորհ Մոմիկի կյանքին ու ստեղծագործությանը մենք անդրադարձել ենք 1998 թվականից սկսած, երբ երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի (1995-1999), 1700-ամյակի տոնակատարության գրասենյակի տնօրեն Մեսրոպ արք. Աշճյանի և Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ սրբազանի նախաձեռնությամբ, կանադահայ Տիգրան և Դիանա Հաճեթյանների բարերարությամբ վերականգնվում էր Բուրթելաշեն Սուրբ Աստվածածին եկեղեցին, որի օժումը՝ կաթողիկոսի ձեռամբ, տեղի ունեցավ 1999 թ. ապրիլի 18-ին: Այդ առիթով Եղեգնաձորում կազմակերպվեց գիտաժողով և մշակութային միջոցառումների ծրագիր, որի համակարգումը հանձնարարված էր տողերիս հեղինակին: Այդ օրերին լույս տեսավ վանքի պատմությանն ու մշակույթին նվիրված մի ժողովածու՝ «Նորավանք 99» (Ս. Էջմիածին-Մոնթրեալ, 1999): Երկու տարի անց գիտաժողովի նյութերը, որոշ լրացումներով, ամփոփեցինք մեկ այլ հրատարակության մեջ՝ «Նորավանք» Բ ժողովածու, իսկ 2009-ին, Ս. Աստվածածնի վերածման 10-ամյակի առիթով դարձյալ մեր խմբագրությամբ հրատարակվեց մեկ ուրիշ ժողովածու-ալբոմ՝ «Նորավանք 2009»: 2010 թ. Մոմիկի՝ պետականորեն նշվող 750-ամյակի առիթով լույս տեսան նրան նվիրված մեր երկու գրքերը (ամբողջական անվանումները տե՛ս գրականության ցանկում):

Նորավանքի վիմագրերի և հիշատակարանների սույն ժողովածուի կազմումը առիթ հանդիսացավ վանքի պատմության և մշակութային ժառանգության մի շարք հարցերին կրկին անդրադառնալու համար: Պարզվեց, որ լրացուցիչ հետազոտման կարոտ ոչ քիչ խնդիրներ կան՝ կապված վանական շինություններից մի քանիսի անվանումների, կառուցման ժամանակի և որոշ առանձնահատկությունների պարզաբանման առումով, պատկերաքանդակների ժամանակի, հեղինակային պատկանելության ու իմաստային մեկնաբանման, ինչպես նաև՝ Նորավանքին սերտորեն առնչված գործիչների կենսագրական մանրամասների ճշգրտման կամ վաստակի գնահատման տեսանկյունից և այլն: Ահավասիկ այս ամենը, որպես «Նորավանքի պատմության դրվագներ», կազմում են սույն գրքի առաջին՝ ուսումնասիրության հատվածը:

Այսպիսով, կարելի է ասել, որ ներկա հրատարակությամբ նաև ամփոփում ենք մեր նորավանքյան ուսումնասիրությունները՝ միաժամանակ ներկայացնելով վանքի պատմության յուրօրինակ աղբյուրագիտական շտեմարանը, համոզված լինելով, որ այն օգտակար կլինի հետագա հետազոտողներին:

Գրքի տպագրության հովանավորության համար խորին շնորհակալություն ենք հայտնում մեր բարեկամ Աննա Զիրջիրյանին (ԱՄՆ):

Շնորհակալություն ենք հայտնում Տ. Աբրահամ արք. Մկրտչյանին՝ տարիներ ի վեր Նորավանքում մեր կատարած ուսումնասիրություններին աջակցելու համար: Երախտապարտ ենք նաև Նորավանքի հոգևոր հովիվ Տ. Սահակ քհ. Մարտիրոսյանին, որը տրամադրել է սույն գրքի լուսանկարների մեծ մասը: Նրա միջոցով պարբերաբար ստացած լուսանկարների շնորհիվ հնարավորություն ենք ունեցել համապատասխան ճշգրտումներ կատարել վիմագրերի վերծանություններում:

Շնորհակալություն ենք հայտնում գրքի խմբագիր, վիմագրագետ Արսեն Հարությունյանին, որը մասնակցել է նոր արձանագրությունների վերծանմանը, պատրաստել որոշ գրչանկարներ, ինչպես նաև Մատենադարանի մեր մյուս երիտասարդ գործընկերներ Լուսինե Թումանյանին և Խաչիկ Հարությունյանին՝ աշխատանքի ընթացքում բնագրական համեմատությունների, նաև սրբագրության գործում ցուցաբերած օգնության, իսկ արվեստաբան Ավետ Ավետիսյանին՝ պատկերագրությանը վերաբերող հարցերում խորհրդատվության համար:

*Կարեն Մաթևոսյան  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Մատենադարանի արվեստի պատմության բաժնի վարիչ  
22, մարտ, 2017 թ.*

## ՆՈՐԱՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ

Պատմական նշանավոր վանքերով հարուստ Սյունյաց աշխարհը երեք Նորավանք է ունեցել: Դատելով պահպանված նյութերից՝ երեքն էլ 10-րդ դարում են կառուցվել, բայց ավելի վաղ գոյություն ունեցած սրբավայրերում: Բղենո Նորավանքը գտնվում է Որոտան գետի մոտ՝ Տաթևից արևելք, որտեղ 989 թ. ստեղծվել է նշանավոր «Էջմիածնի Ավետարանը»: Երկրորդը՝ Վայոց ձոր գավառում, Ս. Փոկասի հին սրբավայր-մատուռի մոտ գտնվող՝ հետագայում (13-րդ դարի վերջերին) որպես Սյունյաց եպիսկոպոսանիստ հռչակված Նորավանքն է, որը նոր շրջանում, մոտակա գյուղի անվան զուգորդմամբ հաճախ կոչվում է նաև Ամաղուի Նորավանք: Եվ, վերջապես, նույն գավառում, բայց ավելի բարձրադիր տեղում գտնվող մյուս Նորավանքը, որը նախորդից զանազանելու համար հիշատակագիրները հաճախ կոչում են Վերին Նորավանք: Այն եղել է նշանավոր ուսումնակրթական և գրչության կենտրոն:

Առավել հայտնին եպիսկոպոսանիստ Նորավանքն է, որին նվիրված բավական հարուստ գրականություն կա: Ուսումնասիրողները բազմիցս անդրադարձել են վանքի պատմությանը, քանի որ այն նշանավոր Օրբելյան իշխանական տոհմի դամբարանավայրն էր և 13-րդ դարի վերջերին ու 14-րդ դարի առաջին կեսին Սյունյաց մետրոպոլիտների նստավայրը<sup>1</sup>, վանքի ճարտարապետությանը, որովհետև այն առանձնահատուկ տեղ է գրավում 13-14-րդ դարերի հայ ճարտարապետության պատմության մեջ՝ ունենալով նաև հարուստ քանդակագործություն և բացառիկ խաչքարեր<sup>2</sup>, մեծաքանակ ու արժեքավոր վիմագրությանը<sup>1</sup> և մշակութային ընդ-

<sup>1</sup> Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 185-232, Ա. Մկրտչյան, Էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995, էջ 50-77, նույնի՝ Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Օրբելյանների իշխանության ժամանակաշրջանում, Երևան, 2013, էջ 71-155, և այլն:  
<sup>2</sup> Օ. Խալպաչյան, Архитектурные ансамбли Армении, М., 1980, с. 441-455, Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 327-328, Ք. Աւետիսեան, Աստուածամօր պատկերաքանդակները Արենիում եւ Նորավանքում, «Նորավանք» ժողովածու, Մոնրէլ-ալ-Երեւան, 2001, էջ 114-118, Հ. Պետրոսյան, Խաչքար, Երևան, 2015, էջ 60-73, և այլն:

հանուր ժառանգությանը: Նորավանքի Ս. Աստվածածին եկեղեցու նորոգման ու վերածման առթիվ լույս են տեսել վանքի պատմությանն ու մշակույթին նվիրված գիտական նյութերի ժողովածուներ<sup>2</sup>:

Նախորդ ուսումնասիրողներին չկրկնելու համար, ստորև վանքի պատմության և կառույցների մասին մենք կխոսենք շատ հակիրճ՝ առաջնությունը տալով սկզբնաղբյուրների վկայություններին, միաժամանակ անդրադառնալով պատմական և մշակութային այն հարցերին, որոնք տարբեր պատճառներով անորոշ կամ թեական են մնացել և լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն:

Նորավանքի հիմնադրման պատմության միակ և անփոխարինելի սկզբնաղբյուրը Ստեփանոս Օրբելյանի Սյունյաց պատմությունն է, որն ի դեպ, գրվել է հենց Նորավանքում: Իր երկի ԿԴ (64-րդ) գլուխը նա վերնագրել է. «Սկիզբն է պատճառ շինութեան եւ նախապատիւ գահերիցութեան սուրբ եւ գերահոջակ եւ փառաւոր ուխտին եւ աշխարհադէտ խմբարանին Նորավանից», որի սկզբում գրում է. «Յառաջ քան զայս բա-

<sup>1</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 209-246, **Հ. Եղիազարյան**, Ամաղու Նորավանքը, «Էջմիածին», 1972, Ա, էջ 39-44, Բ, էջ 35-44, **Ս. Սաղումյան**, Նորահայտ վիմագրեր Նորավանքից, «Հուշարձան» տարեգիրք, հ. Բ, Երևան, 1993, էջ 91-103, **M. Stone**, Further Armenian Inscriptions from Noravank, Apocrypha, Pseudepigraphia and Armenian Studies, Collected Papers Volume II, Leuven-Paris-Dudley, 2006, p. 813-859 և այլն:

<sup>2</sup> «Նորավանք 99» Ս. Էջմիածին-Մոնթրեալ, 1999: Ժողովածուի գիտական նյութերից են՝ **Ա. Եպս. Մկրտչեան**, Նորավանքը Հայ եկեղեցու պատմութեան մէջ (էջ 11-27), **Մ. Հասրաթեան**, Նորավանքի վանական համալիրի ճարտարապետութիւնը եւ պատկերաքանդակները (էջ 28-50), **Ս. Սաղումեան**, Նորավանքի վիմագրերը (էջ 51-55), **Ա. Մաթեոսեան**, Նորավանքը միջնադարեան համալսարանների համակարգում (էջ 56-61), **Կ. Մաթեոսեան**, Ճարտարապետ, գրիչ եւ մանրանկարիչ Մոմիկը (էջ 62-67), **Հ. Գասպարեան**, Նորավանքի Ս. Աստուածածին եկեղեցի-դամբարանի յորինումը, ծագումնաբանութիւնը եւ վերականգնումը (էջ 68-76): «Նորավանք» Բ ժողովածու (գիտական խմբագիր՝ **Կ. Մաթեոսեան**), Մոնթրեալ-Երեւան, 2001, որի մեջ ներառված հոդվածներն են՝ **Շ. արք. Աճէմեան**, Մետրոպոլիտութիւնը Հայոց մէջ (էջ 26-32), **Վ. Յարութիւնեան**, Վայոց ձորի քարակերտ գանձերը (էջ 33-48), նույնի, Վայոց ձորի պատմաճարտարապետական յուշարձանների պահպանութեան և վերականգնման ուղղութեամբ գործադրուած ջանքերը (էջ 38-44), **Գ. Գրիգորեան**, Սինեաց եպիսկոպոսների շինարարական գործունեութիւնը (10-14-րդ դդ.) (էջ 45-54), **Հ. Մարգարեան**, Նորավանքը եւ հայ իշխանական տները ԺԲ-ԺԴ դարերում (էջ 55-61), **Կ. Մաթեոսեան**, Դրուագներ Նորավանքի եպիսկոպոսական աթոռի պատմութիւնից (Արատես եւ Վերին Նորավանք) (էջ 62-76), **Գ. Սարգսեան**, Նորավանքի նուիրատուական արձանագրութիւնները եւ մի տեղադրութեան ճշգրտման փորձ (էջ 77-83), **Յ. Մելքոնեան**, Յաղաց քար վանքի պեղումները եւ նորայայտ արձանագրութիւնները (էջ 84-98), **Ա. Գեորգեան**, Վայոց ձորի մանրանկարիչները 14-15-րդ դդ. (էջ 99-109), **Ք. Աւետիսեան**, Աստուածամոր պատկերաքանդակները Արենիում եւ Նորավանքում (էջ 111-121):

զում ժամանակօք, վաղաուրբք և հնագոյն ամօք, ի նեղ և անձուկ ձորակին այնմ, ի պատշաճաւոր տեղուջ էր շինեալ եկեղեցի մի կրաշաղախ վիմօք յանուն սրբոյ Կարապետին՝ յոյժ սքանչելագործ և ահարկու և անուանի մերձակայ սահմանացն: Եւ բղխէր մերձ նմին աղբիւր քաղցրահամ. և ձորն ամենայն գեղեցկացեալ էր այգեօք և թանձրախիտ ծառօք մրգաբերօք»<sup>1</sup>: Աշխարհաբարը՝ «Սրանից շատ ժամանակներ առաջ, վաղ օրեր ու երկար տարիներ ի վեր այն նեղ ու անձուկ ձորակում մի հարմար տեղում կառուցված էր մի եկեղեցի՝ կրաշաղախ քարերով՝ Սուրբ Կարապետի անվամբ, հույժ սքանչելագործ, ազդեցիկ ու անվանի շրջակա սահմաններում: Նրա մոտ բխում էր քաղցրահամ մի աղբյուր, և ամբողջ ձորը զարդարված էր այգիներով ու թանձրախիտ պտղատու ծառերով»<sup>2</sup>: Այնուհետև պատմվում է նույն ձորում գտնվող Փոկաս հայրապետի անունով՝ հրաշագործ աղբյուրով մատուռի մասին<sup>3</sup>: 1105-ին այստեղ է հաստատվել Բաղքի Հասան իշխանի որդի Հովհաննես Կապանեցի եպիսկոպոսը, որի ջանադիր գործունեությամբ բարձրացել է տեղի հոջակը, վանքն ապահովվել կալվածքներով և այլն:

Նորավանքի պատմության հենց այս սկզբնական հատվածից է սկսվում նրա երկու հին եկեղեցիների՝ Սուրբ Կարապետի և Սուրբ Ստեփանոս Նախավկայի անունների շփոթը, որը չնայած պարզաբանվել է 1980-ական թվականներին, սակայն անորոշությունը պահպանվում է ցայժմ, ուստի ավելի հանգամանալից ներկայացման կարիք ունի: Ներկա հրատարակության մեջ սույն հարցի լուսաբանումը կարևոր է նաև այն պատճա-

<sup>1</sup> **Ստեփանոս Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Տիֆլիս, 1910, էջ 346:  
<sup>2</sup> **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 287: Այստեղ գրաբարի «սքանչելագործը» թարգմանված է «սքանչելակերտ», որն իմաստային շեղում է:  
<sup>3</sup> «Նույն ձորում, խիտ քարակույտերի մեջ կար նաև մի այլ եկեղեցի՝ կառուցված Փոկաս սուրբ հայրապետի անվամբ. և եկեղեցու մեջ, բեմի տակից մի քիչ ջուր էր բխում, որի հետ բուժիչ ձեթ էր դուրս գալիս: Սրա մասին շատ հին ավանդություններից իմացանք, թե սուրբ հայրապետ Փոկասի նշխարներից բերվել ու այնտեղ էր թաղվել, որի անվամբ էլ տեղը Փոկաս կոչվեց: Դա զարմանալի հրաշքներ էր կատարում. ամեն տեսակի ցավերը, որոնց բուժումը մարդկանց կողմից անհնարին էր, ինչպես գոդությունն ու բորոտությունը, երկար ժամանակվա նեխած ու ապականված վերքերը, հավատով այստեղ եկողներն այդ ջրով լվացվելիս ու ձեթով օծվելիս բուժվում էին, իսկ մեռնելու ենթակաները՝ անմիջապես վախճանվում էին: Այս պատճառով էլ այդ տեղի համբավը խիստ հոջակված էր ամբողջ երկրում» (**Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, նույն տեղում):

ռով, որ Նորավանքի վիմագրության ակադեմիական հրատարակության մեջ Ս. Ստեփանոսը ներկայացված է որպես Ս. Կարապետ (այդպես է նաև վիմագրերին անդրադարձած Մ. Սթոունի և այլ հեղինակների մոտ):

## ՆՈՐԱՎԱՆՔԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵՎ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Նորավանքի հիմնական հուշարձանախումբը՝ հյուսիսից հարավ, բաղկացած է հետևյալ կառույցներից՝ Ս. Գրիգոր դամբարան միանավ բազիլիկ եկեղեցին (կառուցվել է 1275 թ.), նրան պատակից է սրբատաշ քարերով կառուցված խաչաձև գմբեթավոր Ս. Ստեփանոս Նախավկա մեծ եկեղեցին (1216-1221 թթ.), որի դիմաց գավիթն է (1261 թ.), իսկ Ս. Ստեփանոսին հարավից պատակից է հնագույն՝ Ս. Կարապետ (Հովհաննես Մկրտչին նվիրված) եկեղեցին (նկ. 1, 70):



Նկ. 1 Հուշարձանախումբը հարավ-արևելքից՝ Ս. Կարապետ (կոպտատաշ քարով), Ս. Ստեփանոս (գմբեթավոր), Ս. Գրիգոր:

Կոպիտ մշակված խոշոր քարերով կառուցված և շինարարական արձանագրություն չունեցող այս միանավ եկեղեցու ավերակները բացվել են 1982-1983 թթ. պեղումների ժամանակ: Քանի դեռ այն քարակույտերի մի բլրակ էր ներկայացնում, ուսումնասիրողները հիմնականում վերջինիս գոյությանն անտեղյակ լինելով նրա մոտ գտնվող Ս. Ստեփանոս եկեղեցին թյուրիմացաբար համարել են Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Ս. Կարապետը: Այդ շփոթը կարելի է տեսնել վաղ շրջանի գրականության մեջ ամենուր, բայց այն գրքից-գիրք անցնելով նշվում է նաև այժմ հրատարակվող աշխատություններում: Սակայն դրա պատճառը միայն իրական Ս. Կարապետի անհայտ լինելը չէ, այլև Ս. Ստեփանոսի պատին եղած մի արձանագրություն, որը, ցավոք, դիտարկվել է պատմական ենթատեքստից կտրված և սխալ է ընկալվել:

Մինչ այդ արձանագրությանն անդրադառնալը, նախ տեսնենք թե որտե՞ղ է նշվում և ի՞նչ աղբյուրներով է փաստվում Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու անունը: Ստեփանոս Օրբելյանն իր Պատմության մեջ շատ հանգամանորեն գրում է այդ մասին. «Տէր Սարգիս հիմնարկեալ գեղապաճոյճ եկեղեցոյն ի Նորավանս հրամանաւ և օժանդակութամբ մեծ իշխանաց իշխանին Լիպարտի՝ որդոյ Ելիկումին ի ցեղէ մեծի նահապետութանն Օրբէլեանց, որ ի Վրաց աշխարհէն, ի թուականին ՈԿԵ (1216) և կատարէ հրաշագան **յօրինուածովք յանուն սրբոյ Նախավկային**. և ի նմին խորանս խորհրդաւոր ութ՝ զամս եօթն (աշխատեալ)»<sup>1</sup>: Աշխարհաբարը՝ «Տեր Սարգիսը վեց հարյուր վաթսուներեք թվականին (1216 թ.) Նորավանքում գեղատեսիլ եկեղեցու հիմք է դնում՝ հրամանով ու օժանդակությամբ Ելիկումի, որ որդին էր մեծ իշխանաց իշխան Լիպարտի, Վրաց աշխարհից եկած Օրբելյան մեծ նահապետական տոհմից: Յոթ տարի աշխատելով ավարտում է հրաշակերպ կերտվածքով, ներսում ութ խորհրդավոր խորաններ ունեցող **Սուրբ Նախավկայի անվամբ եկեղեցին**»<sup>2</sup>: Այնուհետև ասվում է, որ նույն տեր Սարգիս Ա եպիսկոպոսը

<sup>1</sup> **Ստեփանոս Օրբելեան**, Պատմութիւն, էջ 344: Այս և հաջորդ մեջբերումներում կատարված ընդգծումները մերն են – Կ. Մ.:

<sup>2</sup> **Ստեփանոս Օրբելյան**, էջ 285: Ձարմանալի է, բայց փաստ, որ Ստ. Օրբելյանի Պատմության աշխարհաբարի թարգմանիչն այս հատվածում Ս. Ստեփանոս եկեղեցու անունը ծանոթագրելով գրում է՝ «Սա նույն Ս. Կարապետ եկեղեցին է...» (նույն տեղում, էջ 496, ծնթ. 1071):



(1216-1244) գնում է Երուսաղեմ, որտեղ քաղաքին տիրացած խաչակիրներից (փռանկ) մեկից գնում է «զաջն սրբոյ նախավկային Ստեփաննոսի» և ուղարկում է Նորավանք, որը դրվում է եկեղեցում և պատմիչի ժամանակ էլ այնտեղ էր<sup>1</sup>:

Նորավանքի եկեղեցիների մեջ հենց գլխավոր եկեղեցին է, որը ներքուստ խաչաձև է, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով, որոնց մեջ եղած պատարագի սեղաններն ու փոքր խորաններն էլ ապահովել են պատմիչի նշած բազմախորանությունը:

Հաջորդ հստակ նշումը Ստեփանոս Օրբելյանի մոտ գտնում ենք Նորավանքի եկեղեցու գավթի (ժամատան) կառուցման հատվածում, որտեղ ասվում է, որ արդեն Սարգիս Բ (1261-1298) եպիսկոպոսի ժամանակ՝ 1261 թ. իշխան Սմբատ Օրբելյանը Ս. Ստեփանոս եկեղեցու դիմաց կառուցեց գավթի թռ. «...արքայաշուք իշխանն Սմբատ՝ որդի Լիպարտի, շինե՛ ժամատուն մի հրաշակերտ յօրինուածովք՝ տեղի աղօթարանի **ի դրան Սրբոյ Նախավկային**՝ ի տաշածոյ վիմաց և ի կոփածոյ քարանց»<sup>2</sup>:

Տեսնենք, թե ինչ են հաղորդում այս եկեղեցու անվան մասին վիմագրերը: Եկեղեցու կառուցումից կարճ ժամանակ անց գրված և հստակ թվական ունեցող ամենավաղ վիմագիրը, որը ներառված է գավթի հյուսիսային պատի շարվածքում, հետևյալն է. «ԹՎ(ԻՆ) :ՈՁԱ: (1232) ԵՄ՝ ԳՈՐԳ, ԶԻՄ ՀՈԳՈՅ ԱՐԴԻԻՆՔ ՏՎԻ Ի Ս(ՈՒՐ)Բ ՆԱԽԱՎԿԱՅՍ» (տե՛ս ստորև՝ արձ. Հ<sup>մ</sup> 16): Եկեղեցու ներսում՝ արևմտյան պատի վերնամասում եղած 13-րդ դարավերջի՝ Զուրջի նվիրագրում ասվում է. «...ՄԻԱԲԱՆԵՑԱ Ս(ՈՒՐ)Բ ՆԱԽԱՎԿԱ ՎԱՆԻՑ» (տե՛ս ստորև՝ արձ. Հ<sup>մ</sup> 7): Նույն բանը տեսնում ենք նաև գավթի այլ արձանագրություններում՝ Հ<sup>մ</sup> 18 (1256 թ.), Հ<sup>մ</sup> 20 (1261 թ.), Հ<sup>մ</sup> 22 (13-րդ դ.), Հ<sup>մ</sup> 5 (13-րդ դ.): Այսքանից հետո կարելի է, իհարկե, զարմանալ, որ եկեղեցու անունը հստակ պահպանած նման ծանրակշիռ աղբյուրագիտական նյութն անտեսվել է:

Ինչպե՞ս է այս հարցը ներկայացվել գրականության մեջ: Ակադեմիկոս Վ. Հարությունյանը գրում է. «Վանքի հնագույն եկեղեցին (որն այժմ բոլորովին ավերակ է) կոչվում է Ս. Կարապետ անունով ու ենթադրաբար

<sup>1</sup> Ստեփաննոս Օրբելյան, Պատմություն, էջ 344, Ստեփանոս Օրբելյան, էջ 285:

<sup>2</sup> Ստեփաննոս Օրբելյան, Պատմություն, էջ 363, Ստեփանոս Օրբելյան, էջ 297:

թվագրվում է 9-10-րդ դարերով: Ավելի ուշ՝ 1216-1227 թթ. սրա հյուսիսային կողմում կառուցվել է նույնանուն եկեղեցի»<sup>1</sup>: Թեպետ մեզ հայտնի չէ մի դեպք, որ պատակից երկու եկեղեցիները նույն անունն ունենան, սակայն Նորավանքի պարագայում այս անսովոր տեսակետն ավելի վաղ արտահայտել է նաև Հ. Խալիփախյանը<sup>2</sup> (թերևս նաև ուրիշները): Հ. Եղիազարյանն էլ հին Ս. Կարապետը նշելուց հետո գրում է՝ «Ս. Կարապետի անվան մյուս եկեղեցին, կամ ինչպես անվանում են նաև Ստեփանոս Նախավկայի անվան եկեղեցի...»<sup>3</sup>: Գ. Գրիգորյանը նույնպես, հավանաբար, կարծում է, որ Ս. Կարապետն ու Ս. Նախավկան նույն եկեղեցու զույգ անուններն են<sup>4</sup>:

Վանքի գլխավոր եկեղեցին Ս. Կարապետն է համարել նաև Ստ. Մնացականյանը՝ այդ մասին գրելով ոչ միայն իր ուսումնասիրության մեջ<sup>5</sup>, այլև հայկական ամենամեծ տպաքանակն ունեցող տեղեկատու գրքում՝ Հայկական սովետական հանրագիտարանում, որտեղ վանքի նկարագրության մեջ նշում է. «Համալիրի պարսպապատ տարածքում են Ս. Կարապետ գլխավոր եկեղեցին, նրան արևմուտքից կից՝ գավթի թռ...»<sup>6</sup>: Հայկական համառոտ հանրագիտարանում «Նորավանք» բառահոդվածը խմբագրելով՝ Մուրադ Հասրաթյանը նշում է, որ հին Ս. Կարապետ եկեղեցու ավերակները «բացվել են 1982-83-ի պեղումներով» և ավելացնում՝ «վանական համալիրի կենտրոնում վանքի գլխավոր՝ Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին է (գրականության մեջ՝ նախկինում՝ Ս. Կարապետ), որը կառուցել են իշխան Լիպարիտ Օրբելյանը և արք. Սարգիսը 1216-21-ին (օծվել է 1223-ին)»<sup>7</sup>: Հարկ է նշել, որ հնագույն Ս. Կարապետի և Լիպարիտ Օրբելյանի ու Սարգիս Ա եպիսկոպոսի հիմնած Ս. Ստեփա-

<sup>1</sup> Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 327:

<sup>2</sup> Օ. Халпахчян, նշվ. աշխ., էջ 441:

<sup>3</sup> Հ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 41:

<sup>4</sup> Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 188, 314:

<sup>5</sup> Ստ. Մնացականյան, Վարպետաց վարպետներ. Մանուել, Տրդատ, Մոմիկ, Երևան, 1982, էջ 158,

<sup>6</sup> Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, Երևան, 1982, էջ 378, (տպաքանակը՝ 100 000):

<sup>7</sup> Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 4, Երևան, 2003, էջ 17: Տե՛ս նաև Մ. Հասրաթյանի հոդվածը՝ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 811:

նուսի մասին ցայժմ առավել հստակ ու հանգամանորեն գրել է հենց Մ. Հասրաթյանը 1984-ին հրատարակած իր արժեքավոր հոդվածում<sup>1</sup>:

Իսկ ո՞րն է եղել թյուրիմացության հիմնական պատճառը: Արդեն ասվեց, որ եկեղեցին կառուցել են Լիպարիտ Օրբելյանն ու Սարգիս Ա Եպիսկոպոսը, սակայն ինչպես երևում է կառույցի ներսում եղած երկու արձանագրությունից, նվիրատվություններով այդ գործին մասնակցել են նաև այլ մարդիկ, որոնց միջոցներով կառուցվել են շենքի առանձին մասեր, մասնավորապես՝ հարավային երկու ավանդատները: Միևնույն եկեղեցու տարբեր հատվածների՝ առանձին նվիրատուների միջոցներով կառուցման ակնառու օրինակ է Հավուց թաղի վանքի՝ նույն շրջանում հիմնված եկեղեցիներից մեկը, որի մասին են վկայում նրա վիմագրերը<sup>2</sup>: Նորավանքի եկեղեցու հարավարևելյան ավանդատան ճակատաքարի արձանագրության մեջ ասվում է, որ տեր Սարգիսը «ՀԱՃՈՒԹ(ԵԱՄ)Բ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆՍ» այդ խորանի տարեկան երկու պատարագը հատկացրել է իր աշակերտ և եկեղեցու փակակալ Խիկարին, քանի որ այն նրա միջոցներով է կառուցվել՝ «ԶԻ ՆՈՐԱՅ ԱՐԴԵԱՄԲՔ ՇԻՆԵՑԱԻ» (արձ. Հ<sup>մ</sup> 4):

Հարավարևմտյան ավանդատան վիմագիրը նմանատիպ բովանդակություն ունի, բայց հենց սա է վերոնշյալ թյուրիմացության առիթ տվել, ուստի այն բերում ենք ամբողջությամբ՝

*«ՅԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ. ԱՅՍ ԳԻՐ Է Տ(ԵԱՌ)Ն ՍԱՐԳԻ  
ՍԻ ԵՒ ՍՊԱՍԱԻՈՐԱՅ Ա(ՈՒՐ)Բ ԿԱՐԱՊԵՏԻ  
Ս, ՈՐ ՏՈՒԱՔ ԶԻՈՐԱՆՍ ՀԱՍԱՆԱՅ Ա  
ՄԱՂՈՒԵՑՈՅ, ՈՐ ՆՈՐԱ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱ  
ՄՔ ՇԻՆԵՑԱԻ, Ի ՏԱՐԻՆ :Բ: (2) ԱԻՐ ԺԱՄ  
ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ԶՊԵՏՐՈՍԻ-ԶՊԱԻՂՈՍԻ  
ՏԱԻՆ ՀԱՍԱՆԱ, ԻԻՐ ԿՆՈՋՆ, ԵՒ ՈՐ ՀԱԿ  
ԱՌԱԿԻ...» (արձ. Հ<sup>մ</sup> 3):*

<sup>1</sup> Մ. Հասրաթյան, Հայ ճարտարապետության և քանդակագործության նորահայտ հուշարձաններ Նորավանքում, «Լրաբեր», 1984, N 8, էջ 57-58, Նորավանքի հնագույն եկեղեցու (Ս. Կարապետի) գտնվելու տեղը մատնանշում է դեռևս Ս. Տեր-Ավետիսյանը՝ 1942 թ. գիտարշավի ժամանակ (Ս. Տեր-Ավետիսյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 2010, էջ 476):

<sup>2</sup> Կ. Մաթևոսյան, Հավուց թաղի վանքը, Երևան, 2012, էջ 50-51:



Նկ. 2 Ս. Կարապետ եկեղեցու խորանը:

Ինչպես տեսնում ենք, ավանդատունը կառուցելու համար Հասան Ամաղուեցին նույնպես ստացել է երկու ժամ պատարագ: Բայց ո՞վ է նրան պատարագի խոստումը տվել. Սարգիս Եպիսկոպոսը և գործող վանքի միաբան-սպասավորները: Վանքն այդ ժամանակ Ս. Կարապետ էր կոչվում տեղում եղած հնագույն եկեղեցու անունով, և նրա միաբաններն էլ, որոնք նախորդ վիմագրում «եղբայրություն» են անվանվում, բնականաբար, պետք է Ս. Կարապետի սպասավորներ կոչվեին: Այլ խոսքով ասած՝ սույն արձանագրության մեջ ոչ թե նշված է նորաշեն եկեղեցու անունը (ի դեպ, հնարավոր է, որ այս երկու վիմագրերն էլ գրվել են դեռևս շինարարության ընթացքում), այլ այն վերաբերում է արդեն գործող վանքի՝ Ս. Կարապետի առաջնորդի և միաբանների խոստմանը, որոնք պատարագ են հատկացրել Ս. Ստեփանոս եկեղեցու ավանդատներից մեկի շինության ծախսը հոգացած Հասան Ամաղուեցուն: Իսկ այն, որ բուն եկեղեցին Ս. Ստեփանոս Նախավկա էր կոչվում, ինչպես տեսանք, վկայում են տեղի առնվազն 6 վիմագիր և Նորավանքում աթոռակալած ու այդտեղ

էլ իր պատմությունը գրած մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի մի քանի հաղորդումները:

Որպես եզրափակում տեղին է վկայակոչել Լիպարիտ Օրբելյանի աներ, մեծ իշխան Բուպակի 1223 թ. Ս. Ստեփանոս Նախավկայի հանդիսավոր օծման ժամանակ կատարած նվիրատվության մասին վկայող գրության մի հատվածը, որտեղ Աղբերիս գյուղի ընծայման վերաբերյալ ասվում է՝ «վԱղբերիս գիւղ իւր ամեն սահմանաւն ի սուրբ եկեղեցիս **Նորավանից՝ ի Սուրբ Կարապետս և ի Սուրբ Նախավկայս** տուի՝ ազատ յամեն հարկաց»<sup>1</sup>: Այսինքն, 1223 թ. կազմված պաշտոնական գրության մեջ նշվում են վանքի երկու եկեղեցիները, և բնականաբար՝ նախ հիշատակվում է հնագույն Ս. Կարապետը (նկ. 2), այնուհետև նորաշեն Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին:

## ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՂԱՄԲԱՐԱՆԸ ՆՈՐԱՎԱՆՔՈՒՍ

Նորավանքի հռչակը պայմանավորված էր նրա՝ Օրբելյան իշխանական տան դամբարանավայրը լինելու հանգամանքով, որի շնորհիվ այն կառուցապատվեց հրաշալի եկեղեցիներով, օժտվեց եկեղեցական սրբություններով, գանձերով, կալվածքներով ու այլազան հարստությամբ:

Օրբելյանների տոհմի մասին հանգամանորեն գրել է հենց նրա շառավիղ, իշխան Տարսայիճի որդի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, որն իր Պատմության մի ընդարձակ գլուխը (ԿԶ) նվիրել է այդ հարցին: Ըստ նրա՝ տոհմն իր անունը ստացել է Վրաստանի Օրբեթ ամրոցի անունից<sup>2</sup>: Օրբելյաններն առաջնակարգ դիրք ունեին Վրաց թագավորության մեջ մինչև 1177 թ., երբ Գեորգի Գ (1156-1184) թագավորի դեմ ծագած ապստամբությունը գլխավորեց ամիրսպասալար Իվանե Օրբելին: Ապստամբության պարտությունից հետո Վրաստանում մնացած Օրբելյանները ո-

<sup>1</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 357, աշխարհաբարը՝ Ստեփանոս Օրբելյան, էջ 294:

<sup>2</sup> Այս հարցին հանգամանորեն անդրադարձել է Հայրապետ Մարգարյանը, տե՛ս Հ. Մարգարյան, Օրբելյանների ծագման ավանդությունը Ստեփանոս Օրբելյանի «Պատմության» մեջ, Լ. Խաչիկյանի 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2010, էջ 152-154:

չնչացվեցին, տոհմն ունեզրկվեց: Իվանե Օրբելու եղբայր Լիպարիտը, որ մեկնել էր Ելտկուզ աթաբեկի մոտ իր Էլիկում (Ելիկում) և Իվանե որդիների հետ, փրկվեց հաշվեհարդարից: Հետագայում Թամար թագուհու ժամանակ, Իվանեն վերադարձավ Վրաստան, իսկ Էլիկումը ծառայության մտավ Ատրպատականի ամիրաների մոտ և զորավարի պաշտոն ստացավ Նախիջևանում: Այստեղ նա ամուսնացավ Սյունյաց Ստեփանոս Գ եպիսկոպոսի (Ֆայխր էլ Մսեհ՝ 1170-1216) քրոջ դստեր՝ Խաթունի հետ: Նրանցից ծնված որդին՝ Լիպարիտը (նրա կյանքն անցել է բազում փորձություններով)<sup>1</sup> հետագայում Ջաքարե և Իվանե Ջաքարյանների հովանավորությամբ դարձավ Սյունյաց մեծ իշխանը: Ահա այսպես Օրբելյան տոհմը հաստատվեց Հայաստանում, իսկ հետագայում՝ մոնղոլների ներխուժումից հետո, այս տոհմի ներկայացուցիչները կարողացան համաձայնության գալ բարբարոս նվաճողների հետ և նրանց գերակայությունն ընդունելով՝ հարկ վճարելով ու զինվորական ծառայություն մատուցելով, ոչ միայն պահպանեցին, այլև ավելի ամրապնդեցին ու ընդարձակեցին իրենց իշխանությունը:

Օրբելյանների դիրքերը Սյունիքում ամրապնդվեցին հատկապես Լիպարիտի որդիների՝ Էլիկումի (որն էլ ընդունեց մոնղոլների գերակայությունը և մասնակցեց նրանց ռազմարշավներին), Սմբատի, որը հայտնի էր «Սմբատ արքա» անունով (անզավակ էր, իշխել է 1253-1273 թթ.) և նրա եղբայր Տարսայիճի (մահ. 1290 թ.) ժամանակ: Բավական է նշել, որ Սմբատը Սյունյաց իշխանության համար հատուկ «ինչուական» կարգավիճակ ստանալու նպատակով երկու անգամ՝ 1251 և 1256 թթ. եղել է մոնղոլական աշխարհակալության մայրաքաղաք Կարակորումում՝ Մանգուխանի (1251-1259) մոտ (նա հայերենից ու վրացերենից բացի տիրապետում էր պարսկերենին, ույղուրերենին և մոնղոլերենին): Այս քայլի շնորհիվ Օրբելյաններն ազատվեցին Վրաց թագավորությունից և իրենց նախկին գերակա Ջաքարյաններից (Իվանե Ջաքարյանի որդի Ավագի տնից) ունեցած կախվածությունից<sup>2</sup>: Ռազմական ու դիվանագիտական հաջողություններով եղբորը ոչնչով չզիջեց Տարսայիճը, որն ավելի ըն-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 46-49:

<sup>2</sup> Հայոց Պատմություն, հ. II, Երևան, 2014, էջ 294-295:

դարձակեց իշխանության սահմանները: Վերջինիս տասնամյա իշխանությանը հաջորդեց որդին՝ Էլիկումը (մահ. 1300), իսկ նրանից հետո երկարատև ու ծաղկուն կառավարման շրջան ունեցավ նրա որդին՝ Բուրթել Մեծը (1300-1348):

Բազմաճյուղ այս տոհմի մյուս ներկայացուցիչներին չենք անդրադառնում, մանավանդ որ այդ մասին հանգամանալից ուսումնասիրություն կա և կազմված է Օրբելյանների տոհմաձառը<sup>1</sup> (նրանցից շատերի անուններն առկա են նաև Նորավանքի վիմագրերում): Հատկապես թվարկված իշխաններն են, որ նաև շինարարական հետք են թողել Նորավանքում: Մասնավորապես՝ Լիպարիտը, ինչպես վերը նշվեց, Սարգիս Ա եպիսկոպոսի հետ հիմնադրել է վանքի գլխավոր Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցին (1221 թ.), նրա որդի Սմբատի միջոցներով կառուցվել է այս եկեղեցու գավիթը (1261 թ.), որի հյուսիսային պատին առկա է նաև մի հարթաքանդակ՝ Սմբատն առյուծի դեմ մարտնչելիս (նկ. 3):



Նկ. 3 Սմբատ Օրբելյան (քանդակ Նորավանքի գավթի հյուսիսային պատին):

<sup>1</sup> Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 260-ին հաջորդող ներդիրը: Տե՛ս նաև Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, Բանբեր Մատենադարանի, 1969, թիվ 9, էջ 173-199, Գ. Կիրակոսյան, Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Երևան, 1997, էջ 249-286:

Տարսայիճը եղբոր մահից հետո նրա համար Ս. Ստեփանոսի հյուսիսային կողմում կառուցել է տվել հատուկ տապանատուն եկեղեցի՝ Ս. Գրիգոր (1275 թ.), և վերջապես Բուրթել Մեծը նշված շինություններից փոքր-ինչ դեպի հարավ-արևմուտք կառուցել է Ս. Աստվածածին երկհարկ եկեղեցին, որի առաջին հարկը պետք է ծառայեր որպես տապանատուն: Նկատենք, որ Սմբատի համար կառուցված տապանատանը հետագայում թաղվեցին նաև Տարսայիճը, նրա որդի Էլիկումը և Օրբելյան այլ իշխանազուններ ու իշխանուհիներ, իսկ Ս. Ստեփանոս եկեղեցու գավիթը որպես տապանատուն է ծառայել Սյունյաց եպիսկոպոսների և այլ բարձրաստիճան անձանց համար:

Նորավանքի թվարկված կառույցների մեջ առանձնահատուկ է Սմբատի տապանատուն-եկեղեցին<sup>1</sup>: Նրա մուտքից վեր կամարածև գեղագիր արձանագրությունը վկայում է՝ «ԵՍ՝ ՏԱՐՍԱԻՃ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ, ՇԻՆԵՑԻ ԶԴԱՄԲԱՐԱՆՍ ՅԱՂԱԳՍ ԵՂԲԱԻՐ ԻՄՈ ՍՄՊԱՏ ԱՐՔԱԻՆ...»: Իսկ հյուսիսային պատին իշխանը գրում է. «ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ՏԱՐՍԱՅԻՃԻՍ՝ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՍ... ՈՐ ԵԿԵՂԷՑԻ ՏՎԻ ՇԻՆԵԼ ՍԻՐԱՆԷՍ ՎԱՐԴՊԵՏԻՆ...» (արձ. Հ<sup>մ</sup> 87, 88): Եկեղեցու կառուցման և անվան վերաբերյալ նշում է Ստեփանոս Օրբելյանը՝ Սմբատի հուղարկավորության մասին պատմելիս. «...բերեալ ի հայրենի դամբարանն սուրբ ուխտին Նորավանից, և աշխարհախումբ հանդիսի եղին ի տապանի ընդ հարս իւր ի թուականին 722 (1273): Վասն որոյ և շինէ եղբայր իւր Տարսայիճն նմա տուն տապանի, և եկեղեցի յանուն սրբոյն Գրիգորի, և անդ փոխէ ի հանգիստ զեղբայր իւր Սմբատ»<sup>2</sup>:

<sup>1</sup> Այս եկեղեցին Նորավանքի մյուս կառույցների նման խիստ խարխուլված վիճակում էր մինչ 1980-ական թվականները, երբ պետական միջոցներով վերականգնվեց (վերականգնող ճարտարապետ՝ Հրաչյա Գասպարյան): Աշխատանքի ընթացքում քանդվել, ապա վերաշարվել են արևմտյան ճակատի քանդակազարդ երեսապատի քարերը, հյուսիսային ճակատի երեսապատը՝ լայնածավալ արձանագրությամբ, արևելյան ճակատի երեսապատը: Վերականգնումն ավարտվել է 1986 թ.:

<sup>2</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 420, աշխարհաբարը՝ Ստեփանոս Օրբելյան, էջ 335: Պատմիչի խոսքերից երևում է, որ 1273-ին Թավրիզում մահացած Սմբատի դին հայրենիք բերվելով վանքի այլ հատվածում է հուղարկավորվել, բայց տապանատուն-եկեղեցու կառուցումից հետո (1275 թ.) անճյունը տեղափոխել են եկեղեցու մեջ:



Միանավ այս շինությունն ունի խորան և բեմ, այսինքն՝ միանգամայն համապատասխանում է եկեղեցական կառույցի պահանջներին և ինչպես տեսանք՝ Սուրբ Գրիգորի անունով էր կառուցված (նկ. 4):



Նկ. 4 Ս. Գրիգոր եկեղեցի-տապանատան ներքը:

Սույն տապանատուն-եկեղեցին, սակայն, հայ եկեղեցական ճարտարապետության մեջ առանձնահատուկ է, քանի որ հայկական եկեղեցիներում սովորաբար թաղում չի կատարվում: Մ. Հասրաթյանն այս առումով գրում է. «Հայկական ճարտարապետության մեջ սա եզակի դեպք է, երբ տոհմական տապանատունը նաեւ եկեղեցի է»<sup>1</sup>: Կարծում ենք, որ սա կարելի է բացատրել Օրբելյանների՝ Վրաստանից եկած լինելու հանգամանքով, իսկ այնտեղ (քաղկեդոնական եկեղեցական ավանդույթում) ընդունված էր եկեղեցիներում թաղում կատարելը, մանավանդ՝ թագավորների, ազնվականների ու բարձրաստիճան հոգևորականների պարագայում:

<sup>1</sup> Մ. Հասրաթյան, Նորավանքի վանական համալիրի ճարտարապետությունը, էջ 31: Եկեղեցու յուրահատկություններից մեկը նրա խորանի միակ լուսամտի փոքր-ինչ շեղ դիրքն է, որը հավանորեն արվել է հատուկ նպատակով, որպեսզի տարվա որոշակի օրերի այնտեղից ներթափանցող լույսն ընկնի Սմբատի տապանաքարի վրա:

Հետևաբար, Նորավանքում Օրբելյաններն այս հարցում պարզապես շարունակել են իրենց վաղ տոհմական ավանդույթը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Օրբելյան իշխաններն առանձնակի ուշադրության են արժանացրել Նորավանքը, քանի որ այն իրենց տոհմական դամբարանավայրն էր: Սակայն նշված ժամանակաշրջանում Նորավանքը նաև Սյունյաց հնամյա եպիսկոպոսական աթոռի գահակալների նստավայրն էր՝ մի աթոռ, որը սկսած Ստեփանոս Օրբելյանից նույնպես անցավ այս տոհմի ներկայացուցիչներին: Հարկ է նաև ընդգծել, որ Նորավանքն Օրբելյանների դամբարանավայրը դարձավ հենց Սյունյաց եպիսկոպոսների նստավայրը լինելու շնորհիվ:

Ավելացնենք, որ 13-րդ դարի սկզբներից մինչև 14-րդ դարի կեսերը Նորավանքը բուռն ծաղկում ապրեց և Օրբելյան իշխանների, նրանց ստորակա ազնվականների, Սյունյաց մետրոպոլիտների ու այլոց առատ նվիրատվությունների շնորհիվ տեր դարձավ բազմաթիվ գյուղերի, կավվածքների, այգիների և տարատեսակ այլ սեփականության<sup>1</sup>:

#### ԻՆՉՈՒՒ Է ՍՄԲԱՏ ՕՐԲԵԼՅԱՆԸ ԿՈՉՎԵԼ «ՍՄԲԱՏ ԱՐՔԱ»

Որպես նախորդ հատվածի շարունակություն անդրադառնանք Օրբելյաններին և Նորավանքի վիմագրությանն առնչվող ևս մի հարցի: Կարծես թե առայժմ գրականության մեջ չի պարզաբանվել այն հարցը, թե ինչու է Սմբատը 1273 թ. իր տապանաքարի արձանագրության մեջ, ինչպես նաև նրա համար՝ Տարսայիճի 1275-ին կառուցած տապանատան մուտքի վիմագրում կոչվում «արքա»: Մասնավորապես՝ տապանագրում նշվում է. «ՍՄԳԱՏ ԱՐՔԱԻՆ Է ՏԱՊԱՆՍ ՅԻՇԵՑԷՔ :ՉԻԲ: (1273)» (նկ. 5): Նույն «արքա» բնորոշումը տեսնում ենք նաև Տարսայիճի իշխանության ժամանակ Սարգիս Բ եպիսկոպոսի՝ վանքի հյուրատան մասին պատմող, ինչպես և Ջուրջի գրված արձանագրությունների մեջ (արձ. Հ<sup>մ</sup> 96, 87, 136, 7): Ըստ էության, բոլոր չորս վիմագրերն էլ գրվել են Սմբատի մահից հետո:

<sup>1</sup> Այս մասին հանգամանորեն տես Գագիկ Սարգսյանի հոդվածը՝ Գ. Սարգսեան, Նորավանքի նուիրատուական արձանագրությունները..., էջ 77-83:



Նկ. 5 Սմբատ Օրբեյանի տապանաքարը:

Խոսելով Սմբատ Օրբեյանի վերելքի մասին՝ Գ. Գրիգորյանը գրում է. «Սմբատ Օրբեյանի համբավը տարածվում է ամենուր, նրան սկսում են անվանել «մեծ իշխան», «իշխանաց իշխան», անգամ «Սմբատ արքա»<sup>1</sup>: Մեկ այլ տեղում նշվում է, որ Սմբատին այդպես են կոչել «հավանաբար նկատի ունենալով ձեռք բերած ներքին ինքնավարությունը»<sup>2</sup>: Իհարկե, սա մեծարական արտահայտություն է, բայց արդյո՞ք այստեղ մենք գործ ունենք թագավոր բառի

համարժեք արքա կոչման հետ: Ժամանակի հայ իշխանների շարքում Սմբատի գրաված դիրքի մասին կարելի է պատկերացում կազմել՝ ելնելով այն փաստից, որ 1270 թ. Ջազավանի եկեղեցական ժողովը հրավիրողների մեջ նրա անունը հիշվում է չորրորդը՝ Խոշաք Ջաքարյանի, Պոռոշ Խաղբակյանի և Սադուն Արծրունու անուններից հետո<sup>3</sup>: Հարց է առաջանում, եթե Սմբատն իր տիրույթներում մեծարվել է «արքա» տիտղոսով, ապա ինչո՞ւ նրան հաջորդած եղբայրը՝ Տարսայիճը, որն ավելի ընդարձակեց իշխանության սահմանները, այդպես չկոչվեց:

Մեզ թվում է, որ այստեղ մեկ այլ պատճառ կա, որը կապված է հենց Սմբատի կենսագրության, մասնավորապես նրա՝ 1251 և 1256 թվականներին Կարակորում՝ Մանգու խանին այցելելու իրողության հետ, և որի մասին հանգամանորեն պատմում է Ստեփանոս Օրբեյանը: Նա, մասնավորապես գրում է, որ բազմապիսի ճնշումներից խուսափելու համար

<sup>1</sup> Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 74:

<sup>2</sup> Ով ով է. Հայեր (կենսագրական հանրագիտարան), հ. 2, Երևան, 2007, էջ 479:

<sup>3</sup> Հայոց պատմություն, էջ 308-309:

Սյունյաց իշխանը որոշում է դիմել, ըստ պատմիչի՝ քրիստոնյայի նման օրինավոր մեծ խանին. «...անցեալ ընդ անհուն ասպարէզս երկայն ճանապարհին՝ հասանէր յաշխարհն արևելեան ի գահն աշխարհակալ ղանութեանն զոր Ղարաղուրու կոչէին. և զի քրիստոնեայ էր օրինաւոր Մանկու ղանն, և ունէր ի դրան մեծի պալատանն եկեղեցի և քահանայս, յորում միշտ պաշտօն և պատարագ անխափան լինէր. և ինքն յոյժ սիրէր զքրիստոնեայսն զորս և **արքաուն** կոչէին»<sup>1</sup>: Ուրեմն, մոնղոլները քրիստոնյաներին «արքաուն» էին կոչում (այս մասին հանգամանալից ուսումնասիրություն ունի Ն. Մառը)<sup>2</sup>: Նկատենք, որ Ստեփանոս Օրբեյանի երկի բոլոր հրատարակություններում սույն հատվածում և ներկայացվող հաջորդ երկու մեջբերումներում գրված է «արքայուն», մինչդեռ 14-րդ դարի հնագույն ձեռագիրը պահպանել է գրության սկզբնական ձևը՝ «արքաուն»: Ինչպես երևում է, սա ոչ միայն ընդհանրական անվանում էր, այլ կարող էր վերաբերել նաև որևէ բարձրաստիճան անհատի: Խոսելով Սմբատին ու նրա իշխանությունն անմիջապես խանի տիրապետությանը ենթարկելու՝ «Ենչու, այսինքն՝ տէրունի» դարձնելու մասին, պատմիչը փոխանցում է Մանգուի հետևյալ խոսքերը. «**զայս մի արքաունս մե՛զ պահեսցուք** և ո՛չ տացուք այլ ումեք իշխել ի վերայ դորա»<sup>3</sup>: Ստեփանոս Օրբեյանը՝ Սմբատի արդեն երկրորդ այցի մանրամասները նկարագրելով, ասում է, թե ինչպես է Մանգու խանը դիմել նրան. «Իսկ այն ինչ ի հասանել նորա ի պալատն՝ յանդիման լինէր Մանկու ղանին: Եւ նորա տեսեալ ծանեալ զնա. և զի յոյժ սիրէր զՍմբատ և հաւատայր նմա. կոչէ առ ինքն և ասէ. **ե՛կ արքաուն՝** և ծանոյ՛ ինձ զամենայն որպիսութիւն այնր աշխարհի և

<sup>1</sup> Մատենադարան, ձեռ. թիվ 6271, 270բ, **Ստեփանոս Օրբեյան**, էջ 408, աշխարհաբարը՝ **Ստեփանոս Օրբեյան**, էջ 327: Հետաքրքրական է նաև պատմիչի հայտնած տեղեկությունն այն մասին, որ երբ Մանգու խանը Սմբատին հարցնում է «զի՞նչ ազգի ես», նա պատասխանում է՝ «հաւատով քրիստոնեայ եմ և ազգաւ՝ հայ» (նույն տեղում):

<sup>2</sup> **H. Mapp**, Аркаун, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах, Санкт-Петербург, 1905, է. Շիրինյանի նախաձեռնությամբ կատարված հայերեն թարգմանությունը տպագրվել է նորերս՝ **Ն. Մառ**, «Արքաուն» քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ, Երևան, 2016:

<sup>3</sup> Մատենադարան, ձեռ. թիվ 6271, 270բ, **Ստեփանոս Օրբեյան**, Պատմություն, էջ 409, աշխարհաբարը՝ **Ստեփանոս Օրբեյան**, էջ 327:

զօրաց իմոց»<sup>1</sup>: Այսպիսով, մեծ խանը Սմբատին պարզապես «արքաուն» է կոչել: Հասկանալի է, որ այս պատմությունը՝ բոլոր մանրամասներով, իր եղբորորդի և որդեգիր Ստեփանոս Օրբելյանին պատմել է հենց ինքը՝ Սմբատ Օրբելյանը: Հատկանշական է, սակայն, որ Ստեփանոս Օրբելյանը Սմբատին հիշատակելով նաև մի շարք այլ առիթներով, նրան երբեք չի կոչում «Սմբատ արքա»:

Ինչպես վերը նշեցինք, Սմբատը «արքա» է կոչվում Նորավանքի արձանագրություններից չորսում: Տեսնենք, թե ինչպես է նա հիշատակվում Սյունիքի այլ վիմագրերում: Եղեգիսի իր իսկ իշխանական ապարանքի մուտքին արձանագրված է, մեր կարծիքով, նրա իրական տիտղոսը՝ «ՄԵԾ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ»<sup>2</sup>: Այլ արձանագրություններում այս ձևակերպմանը գերազանցող խոսքեր չկան, միայն Ցաղաց քարի նվիրատվական արձանագրության մեջ Տարսայիճն իրեն կոչում է «ԵՂԲԱՅՐ ՍՄՊԱՏ ԱՐՔԱԻ»<sup>3</sup>: Սակայն, մեր խնդրի պարզաբանման տեսանկյունից, որոշիչ դեր է կատարում Սյունյաց Ծղուկ գավառի Հարժիս գյուղի եկեղեցու գավթի մոտ կանգնեցված խաչքարի (այժմ կորած) արձանագրությունը, որը ժամանակին արտագրել է Ե. Լալայանը, և որը հետևյալ սկիզբն ունի՝ «Յանուն Ա(ստուծոյ) ու **արքաուն Սմպատայ** ու Տարսայիճին իշխանութեամբ...»<sup>4</sup>: Ինչպես տեսնում ենք, Հարժիսի վիմագրի գավառական գրիչն ավելի ստույգ է վկայաբերել Սմբատի պատվանունը:

Բերված տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ արձանագրություններում Սմբատի անվանը կից նշվող «արքա» մականունը ծագում է մոնղոլների՝ քրիստոնյաներին տրվող «արքաուն» անվանումից<sup>5</sup>, որով

<sup>1</sup> Մատենադարան, ձեռ. թիվ 6271, 273բ, **Ստեփանոս Օրբելյան**, Պատմութիւն, էջ 413, աշխարհաբարը՝ **Ստեփանոս Օրբելյան**, էջ 330:

<sup>2</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 115, Հ<sup>մ</sup> 337:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 149, Հ<sup>մ</sup> 451: Վիմագիրը գրվել է 1261 թվականից հետո, քանի որ նրա մեջ հիշվում է Տարսայիճի երկրորդ կինը՝ Մինա Խաթունը, որի հետ ամուսնացել է այդ թվականին:

<sup>4</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1960, էջ 82, Հ<sup>մ</sup> 240: Ցավոք վիմագրի թվականը սխալ է ընթերցանվել՝ ՆՂԲ (1043), քանի որ, տեքստից դատելով, այն անկասկած 13-րդ դարին է պատկանում:

<sup>5</sup> Որպես մականուն՝ «Արքայունը» (թնագրերում առավել հաճախ՝ Արքաուն) հանդիպում է Անիում՝ **Բագրատ Արքայուն**, **Սարգիս Արքայուն** (քաղաքի մերձակա Կարմիր վանք), Վասպուրականում՝ Սեֆեդին Արքայուն, Խեղենեկ Արքայուն (տե՛ս **Ն. Մառ**, «Արքաուն», էջ 96-99):

Կարակորումում նրան կոչել է Մանգու մեծ խանը<sup>1</sup>: Այդ է պատճառը, որ Սմբատի իշխանությունը ժառանգած եղբայրը (ինչպես և նրա հաջորդները՝ հզոր Տարսայիճը, քաջակորով Էլիկումը և Բուրթել Մեծը), այլևս այդպիսի կարծեցյալ «տիտղոսով» չեն հիշատակվում: Հասկանալի է, որ «արքաուն» կամ «արքա» մականունը Սմբատը կրել է որպես մեծարական պատվանուն, իսկ ժողովրդի մեջ այն հավանորեն նույնացվել է թագավոր իմաստի հետ՝ շոյելով մեծ իշխանի, ինչպես նաև նրա հետնորդների ինքնասիրությունը:

## ՆՈՐԱՎԱՆՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՐԸ

Նորավանքի եպիսկոպոսական աթոռի պատմությանը հանգամանորեն անդրադարձել է Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանն իր երկու գրքերում և հողվածներում, ուստի մենք միայն շատ համառոտ կներկայացնենք Նորավանքում աթոռակալած եպիսկոպոսներին, որոնց տապանաքարերը ցայժմ պահպանվել են վանքում, իսկ դրանց վիմագրերը ներկայացվում են սույն գրքում: Նախ պետք է նշել, որ Նորավանքի եպիսկոպոսանիստ կենտրոն դառնալը պայմանավորված էր Սյունյաց թագավորության անկման և սելջուկյան տիրապետության շրջանի քաղաքական վայրիվերումներով: Տաթևի աթոռի թուլացումը և մի շարք այլ հանգամանքներ ստեղծեցին մի իրավիճակ, երբ Վայոց ձորի կիրճերում ծվարած փոքրիկ վանքն ավելի ապահով հանգրվան համարվեց և այստեղ աթոռակալած անձանց ջանադիր գործունեության շնորհիվ ընթացավ վերելքի ճանապարհով:

<sup>1</sup> 1255-1260 թթ. Կարակորումում եղած Արցախի իշխան Հասան Ջալալ Դուլան նույնպես Մանգու խանից արտոնություններ է ստացել և բազմիցս «արքա» է կոչվում, այդ թվում Նորավանքում՝ իր դստեր՝ Մինա Խաթունի վիմագրում (արձ. Հ<sup>մ</sup> 103): Սակայն նա, Առանշահիկներից սերված լինելով, Գանձասարի շինարարական արձանագրության մեջ (1240 թ.) իրեն կոչում է ինքնակալ, ստորակաները նրան նաև թագավոր են կոչում: Այնպես որ, այս հարցում Հասան Ջալալի և Սմբատ Օրբելյանի պարագաները նմանություններով հանդերձ, մասամբ տարբեր են (տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, *Խաչենի իշխանությունը X-XVI դարերում*, Երևան, 1976, էջ 211-214, Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1982, էջ 15, Հ<sup>մ</sup> 12, էջ 38, Հ<sup>մ</sup> 82, էջ 88, Հ<sup>մ</sup> 268, էջ 120, Հ<sup>մ</sup> 400 և այլն): Գանձասարի վիմագրերն ամբողջացվել են հետևյալ նոր հրատարակության մեջ. **И. Орбели**, Надписи Гандзасара и навоцптука, собрал и подготовил к печати **А. Акопян**, Ереван, 2016.

Նորավանքում աթոռակալած առաջին եպիսկոպոսը Ստեփանոս Գ Ֆայխր էլ Մսեհն<sup>1</sup> էր՝ Գրիգոր Մեղրեցու որդին (վերջինս մահացել է 1168 թ.): Ինչպես վերը նշվեց՝ հենց նա էր, որ իր քրոջ դստեր և էլիկումի ամուսնության միջոցով խնամիական կապ հաստատեց Օրբելյանների հետ: Կարելի է ասել, որ այդտեղից էլ սկիզբ է առնում Օրբելյանների կապը Նորավանքի հետ: Ստ. Օրբելյանը Ստեփանոս եպիսկոպոսի՝ Նորավանքում հաստատվելը պատճառաբանում է նրա հոր այնտեղ թաղված լինելու հանգամանքով, և որ Տաթևի «հին աթոռն աներեալ էր եւ ապականեալ»<sup>2</sup>: Բուռն գործունեություն ծավալելով ու ժամանակի աշխարհիկ և հոգևոր իշխանավորների բարեհաճությանն արժանանալով՝ Ստեփանոս Գ-ը մեծ հռչակ է բերում նաև իր նստավայր վանքին<sup>3</sup>: Կենդանության օրոք նա հաջորդ եպիսկոպոս է ձեռնադրում քրոջ որդուն՝ տեր Սարգսին, բայց Ստեփանոսի մահից հետո՝ 1216 թ., Տաթևում նույնպես վերականգնվում է եպիսկոպոսական աթոռը (այնտեղ գահակալում է Ստեփանոս Գ-ի հորեղբոր որդի Հովհաննեսը): Փաստորեն, Սյունյաց աթոռը երկփեղկվում է՝ բաժանվելով Նորավանք և Տաթև կենտրոնների միջև:

Սարգիս Ա-ն (1216-1242) իր քեռու արժանավոր հաջորդն էր, նույնպես գործունյա մի մարդ, որի ջանքերով և հիմնականում Լիպարիտ Օրբելյանի միջոցներով Նորավանքն ունենում է նաև իր կարգավիճակին համապատասխան գեղաշեն եկեղեցի՝ հին Ս. Կարապետի հյուսիսային կողմում սրբատաշ քարով կառուցված գմբեթավոր Ս. Ստեփանոս Նախավկան, որի նավակատիքը 1223-ին կատարվում է մեծ շուքով և որի առիթով վանքը մեծաթիվ նվիրատվություններ է ստանում: Ավելի վաղ, նրա ջանքերով Նորավանք են վերադարձվում Սյունյաց աթոռի նշանավոր խաչերը՝ Ավագ խաչը (հետագայում այն հիշատակվում է Ավագ

<sup>1</sup> Եպիսկոպոսի Ֆայխր էլ Մսեհ մականունը Ստեփանոս Օրբելյանը բացատրում է որպես «սիրող Քրիստոսի», իսկ Հր. Աճառյանի բացատրությամբ՝ «պարծանք քրիստոնեից» (տե՛ս Ա. Մկրտչյան, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը, էջ 34): Նորավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու արևմտյան պատի մեջ երկու խաչքար է ագուցված, որոնք Ստեփանոսի ծնողների հիշատակի համար են (տե՛ս ստորև արձ. Հ<sup>4</sup> 13, 14):

<sup>2</sup> **Ստեփաննոս Օրբելեան**, էջ 351:

<sup>3</sup> Այս մասին հանգամանորեն տե՛ս Ա. Մկրտչյան, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը, էջ 36-43:

Սուրբ Նշան անունով), Թիթեղակապն ու Կամարակապը<sup>1</sup>: Նորավանքի այս եպիսկոպոսն այնուհետև մեկնել է Կիլիկիա, իսկ կյանքն ավարտել է Երուսաղեմում ուխտագնացության ժամանակ՝ նահատակությամբ:

Սարգիս Ա-ին հաջորդել է նրա քրոջ որդին՝ Ստեփանոս Դ եպիսկոպոսը (1242-1260), այնուհետև մեկ տարի աթոռակալել է Գրիգոր Զ-ը (1261): Անհամեմատ ակտիվ գործունեություն է ծավալել Սարգիս Բ եպիսկոպոսը՝ աթոռակալելով 1261-1298 թվականներին, որը Ստեփանոս Դ-ի եղբայր Վահրամ ճգնավորի որդին էր: Ինչպես տեսնում ենք, Նորավանքի եպիսկոպոսների շրջանում Ստեփանոս Գ-ից սկսած ձևավորվել էր տոհմական հաջորդականության մի շղթա: Բայց հենց այս կետում այն փոխարինվեց եպիսկոպոսական մեկ այլ տոհմագրությամբ՝ այս անգամ ծագելով Օրբելյանների իշխանական տնից<sup>2</sup>:

Սարգսի ժամանակ ընդհանուր առմամբ շարունակվում է Նորավանքի ու նրա եպիսկոպոսության բարգավաճումը: Այդ ընթացքում, սակայն, Խաղբակյան Պոռոշ իշխանի նախաձեռնությամբ Սյունյաց աթոռի մասնատման մեկ այլ փորձ է կատարվում, Երնջակում Հովհաննես եպիսկոպոսի գլխավորությամբ նոր թեմի ստեղծման միջոցով (որին ակամա նպաստել էր Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը), սակայն Նորավանքի ու Տաթևի եպիսկոպոսների և Տարսայիճ Օրբելյանի գործուն միջամտությամբ 1268-ին այդ ձեռնարկը խափանվում է:

Սյունյաց եպիսկոպոսության պատմության մեջ շրջադարձային է Ստեփանոս Օրբելյանի աթոռակալության շրջանը, որը միավորեց Նորավանքի և Տաթևի աթոռները իր մետրոպոլիտական իշխանության ներքո: Նրա կենսագրական տվյալները, շատ հակիրճ, հետևյալն են. իշխան Տարսայիճի և նրա առաջին կին Արուզ խաթունի չորս զավակներից երկրորդն էր: Եղել է իր անզավակ հորեղբայր Սմբատի որդեգիրը: Ծննդյան թվականն անհայտ է, ուսումնասիրողները ենթադրաբար այն դնում են 1250-1260 թթ. միջակայքում, մահացել է 1303 թ., որի մասին վկայում է

<sup>1</sup> **Ստեփաննոս Օրբելեան**, էջ, 352, 355-356: Աշխարհաբարում «զաւագ խաչն» թարգմանված է «մեծ խաչը», որն իմաստային շեղում է (տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 290-291):

<sup>2</sup> Սյունյաց եպիսկոպոսների տոհմագրությունը տե՛ս Ա. Մկրտչյան, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը, էջ 153-155:



Նորավանքի գավթում գտնվող նրա տապանաքարը (նկ. 6): Վերջին հանգամանքը շեշտում ենք, քանի որ գրականության մեջ շատ հաճախ՝ այդ թվում հայկական չորս հանրագիտարաններում, կարելի է տեսնել 1305 թվականը<sup>1</sup>:



Նկ. 6 Ստեփանոս Օրբելյանի տապանաքարը (1303 թ.):

Ստեփանոսի կենսագրության մյուս տվյալները պահպանվել են նրա Պատմության մեջ: Նախնական կրթությունը ստացել է Տաթևի Հայրապետ եպիսկոպոսի դպրոցում: 1280-ին Նորավանքում դարձել է կուսակրոն քահանա, 1282-1284 թթ. ժամանակամիջոցում ուսանել է նորահաստատ Գլաձորի համալսարանում՝ աշակերտելով ընդհանուրապես Ներսես Մշեցուն և նրանից ստացել վարդապետական գավազան: 1285-ին մեկնել է Կիլիկիա, 1286-ին Կոնստանդին Բ Կատուկեցի (1286-1289) կաթողիկոսից եպիսկոպոսական ձեռնադրություն ստացել և հաստատվել որպես Սյունյաց աթոռի մետրոպոլիտ, նաև՝ «...պռատաֆրանտես պատրիարզին Հայոց, այսինքն՝ նախաթոռ լինել եւ գլուխ ամենայն եպիսկոպոսաց Հայոց»<sup>2</sup>:

<sup>1</sup> Նշենք դրանցից վերջին երկուսը՝ Քրիստոնյա Հայաստան, էջ 931, Ով ով է. Հայեր (կենսագրական հանրագիտարան), էջ 503:

<sup>2</sup> Ստեփաննոս Օրբելյան, Պատմություն, էջ 479-480:



Նկ. 7 Ստեփանոս Օրբելյանի արձանագրությունը Տաթևում (1295 թ.):

Այդպիսի լայն լիազորություններով նա վերադառնում է հայրենիք և լծվում ընդարձակ թեմի գործերի կարգավորմանը: Աթոռի միավորմանն ընդդիմացող Տաթևի աթոռակալների դիմադրությունը հաղթահարելով՝ նա իր թերևս միակ շինարարական ձեռնարկը կատարում է հենց այդ վանքում՝ 1295-ին, գլխավոր եկեղեցու հարավային կողմում, նախկինում գոյություն ունեցած և քանդված եկեղեցու տեղում կառուցելով Ս. Գրիգոր եկեղեցին և մուտքի ճակատակալ քարին թողնելով այդ մասին վկայող արձանագրություն (նկ 7): Բայց նրա հիմնական աթոռանիստը Նորավանքն էր, որից բացի, նաև եպիսկոպոսական ամառային նստոց է դարձնում Վայոց ձորի Արատեսի վանքը:

Ամենակարևոր ձեռքբերումներից մեկն այն էր, որ նա իր հոր՝ Տարսայիճի միջոցով ստանալով մոնղոլական գերագույն իշխանության հաստատումը, Սյունյաց վանքերի մի մասը դարձնում է իր սեփականությունը, այսինքն՝ օժտվում է եկեղեցական ու աշխարհիկ՝ կրկնակի իշխանությամբ<sup>1</sup>: Այդ իշխանությունը Ստեփանոս Օրբելյանից հետո փոխանցվեց իր տոհմակից մետրոպոլիտներին: Ստեփանոս Օրբելյանը, մերժելով

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 481-482: Այս հարցի վրա հատուկ ուշադրություն է հրավիրել Աբրահամ արքեպիսկոպոսը (Ա. Մկրտչյան, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը, էջ 89):

նաև Կիլիկիայում թափ առած՝ Հռոմի պապի իշխանությունն ընդունելուն ուղղված միտումները, հատուկ ժողով գումարելով ու մերժողական թղթով պատասխանելով դավանաբանական ու ծիսական զիջումների պահանջ դնող Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին, հասնում է այն բանին, որ Սյունիքի հաջորդ մետրոպոլիտներն այլևս ձեռնադրության համար չէին դիմում Կիլիկիայում նստող Հայոց հայրապետներին:

Ստեփանոս Օրբելյանից հետո Նորավանքում աթոռակալում են նրա հորեղբայր Իվանեի թոռ Հովհաննես Օրբելը (1300-1324) և անհամամայր եղբայր Զալալի որդի Ստեփանոս Տարսայիճը (1314 -1331), որոնք երկուսն էլ ուսանել են Գլաձորի համալսարանում և հայտնի են կրթամշակութային ու շինարարական փառավոր գործունեությամբ:

Հարկ է նշել, որ այս շրջանում Սյունյաց մետրոպոլիտության տարածքում Եսայի Նչեցու գլխավորած Գլաձորի համալսարանից բացի գործում էր նաև Վերին Նորավանքի<sup>1</sup> բարձր տիպի դպրոցը՝ Դավիթ րաբունապետի գլխավորությամբ, որը նույնպես հովանավորում էին Օրբելյանները: Ե՛վ Գլաձորը, և՛ Վերին Նորավանքը ոչ միայն ուսումնական, այլև գրչության խոշոր կենտրոններ էին, որտեղ տասնյակներով ձեռագրեր էին գրվում ու պատկերազարդվում: Այս երևույթը ցայժմ ուսումնասիրողների ուշադրությունը գրավել է գլխավորապես մշակութային տեսանկյունից, սակայն պետք է նշել, որ ձեռագրաստեղծման այս բուռն գործընթացը միտված էր նաև հիշյալ վանքերի նյութական կարիքները ապահովելուն, քանի որ ձեռագրերը բավական թանկ արժեքին:

Ստորև ներկայացնում ենք Սյունյաց եպիսկոպոսների ընդհանուր ցանկից առանձնացված՝ Նորավանքում աթոռակալած եպիսկոպոսների անվանացանկը՝ գահակալության տարեթվերով՝ ըստ Աբրահամ արք. Մկրտչյանի<sup>2</sup>:

<sup>1</sup> Զարմանալիորեն, ինչպես Գլաձորի համալսարանի, այնպես էլ Վերին Նորավանքի ստույգ տեղը ցայժմ հայագիտության մեջ համարվում է անհայտ, չնայած որ երկու կենտրոններից էլ մեծաքանակ ձեռագրեր են մեր օրերը հասել: Վերջերս Տիգրան Մկրտչյանը Գլաձորի տեղորոշման համար մի վարկած շրջանառեց, ըստ որի այն գտնվել է Հերմոնի վանքի մոտ՝ Քարեվանում (տե՛ս Տ. Մկրտչյան, Գլաձորի համալսարանի տեղորոշման նոր վարկած, Երևան, 2016, էջ 51-53): Իր հետազոտությունները շարունակելով Տիգրան Մկրտչյանը հետաքրքիր տվյալներ է հավաքել նաև Վերին Նորավանքի գտնվելու տեղի վերաբերյալ, այն նույնացնելով Վայոց ձորի Շատիկ վանքի հետ: Այդ մասին վկայող՝ նախկինում հայտնի մի շարք փաստարկներին նա ավելացրել է մի նորահայտ վիմագիր, որտեղ մասնակիորեն ընթերցվում է «Նորավանք» տեղանունը:

<sup>2</sup> Ա. Մկրտչյան, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը, էջ 151:

*Ստեփանոս Գ Ֆախր էլ Մսեհ՝ 1170 -1216*

*Սարգիս Ա՝ 1216 -1242*

*Ստեփանոս Դ՝ 1242 -1260*

*Գրիգոր Ա՝ 1260-1261*

*Սարգիս Բ՝ 1261 -1298*

*Ստեփանոս Ե Օրբելյան՝ 1286-1303*

*Հովհաննես Օրբել՝ 1300-1324*

*Ստեփանոս-Տարսայիճ՝ 1314 -1331*

*Սարգիս Գ՝ 1333 - 1337*

*Ստեփանոս Սուլթանշահ՝ 1366*

14-րդ դարի երկրորդ կեսին և 15-րդ դարում Նորավանքում շարունակվել է բնականոն վանական կյանքը: Հետաքրքիր է, որ երկու եպիսկոպոս՝ Առաքելը և նրա եղբորորդի Եղիշեն այստեղ հիշատակվում են 16-րդ դարի երկրորդ կեսի վիմագրերում (արձ. Հ<sup>մ</sup> 79, 85), իսկ մեկ ուրիշ Առաքել եպիսկոպոս՝ 1661-ին (արձ. Հ<sup>մ</sup> 86):

## **ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ, «ԱՅՑԵԼՈՒ» ԵՂՐԸ ԵՎ ՄԻ ԶԵՌԱԳՐԻ ԹՎԱԿԱՆԻ ՃՇՏՈՒՄ**

Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը ոչ միայն նշանավոր եկեղեցական գործիչ էր, այլև բազմարդյուն մատենագիր, աստվածաբան, պատմիչ, բանաստեղծ: Որպես հոգևոր պետ ու նաև քաղաքականությանը մոտ կանգնած գործիչ՝ անհրաժեշտաբար պիտի տեղյակ լիներ պատմությանը, ուստի ջանադիր աշխատությամբ գրել է Սյունյաց աշխարհի ամբողջական պատմությունը: 1297 թ. իր նստավայր Նորավանքում ավարտած այդ կոթողային աշխատության մեջ նա հանդես է գալիս որպես պատմության և աղբյուրների նկատմամբ հետազոտական վերաբերմունք ունեցող հեղինակ, որը ներկայացնում է Սյունիքի պատմությունն ու աշխարհագրությունը, եկեղեցիները և վանքերը, բազմաթիվ ու բազմապիսի իրողություններ՝ օգտագործելով ոչ միայն նախորդ պատմիչների երկերը, այլև դիվանական նյութեր, նամակներ, վիմագրեր և այլն:

Որպես աստվածաբան-տեսաբան և Հայ Եկեղեցու վարդապետության ջատագով գրել է «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» երկը (1302 թ.) նվիրված քաղկեդոնականության և աղանդների հերքմանը, իսկ Խաչա-

տուր Կեչառեցու պատվերով՝ «Պատճառ ժողովոյն Քաղկեդոնի» գործը: Լինելով հայրենիքի ճակատագրով մտահոգ մարդ ու մեծ հայրենասեր, նույն Խաչատուր Կեչառեցու պատվերով գրել է «Ողբ ի Սուրբ Կաթողիկէն» բանաստեղծությունը, որտեղ, Սուրբ Էջմիածնի տաճարն անձնավորելով՝ ողբում է պետականությունից զրկված Հայաստանի վիճակը, կաթողիկոսական աթոռի տարագիր լինելը, միաժամանակ ցիրուցան եղած հայ ժողովրդին կոչ է անում համախմբվել իր շուրջը, այդտեղ վերահաստատել Հայոց թագավորական գահը և հայրապետական աթոռը: Լավատեսական ոգևորությամբ ավարտելով իր երկը՝ Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ եթե Կաթողիկեի կոչին ականջալուր լինելով հայ ժողովուրդը «քնից զարթնի», ապա նրա ապագան կգերազանցի նախկին փառքը:

Ստեփանոս Օրբելյանի գործունեությանն ու մատենագրական վաստակին բազմաթիվ ուսումնասիրողներ են անդրադարձել, բայց այստեղ մենք ուզում ենք ուշադրություն հրավիրել հեղինակի երկերի վերնագրերում և այլ առիթներով, որպես նրա պաշտոնի անվանում գործածված «այցելու» եզրին, որը հունարեն հենց բառացի «եպիսկոպոս» է նշանակում<sup>1</sup>: Այս հարցը կարևոր է՝ հատկապես Ստեփանոս Օրբելյանի կազմած շուրջ 100-ամյա ժամանակագրության հեղինակային պատկանելության հարցի վերջնական ճշգրտման տեսանկյունից, որը վիճարկման նյութ է դարձել: Ստեփանոս Օրբելյանի պատմագրքի վերնագիրն<sup>2</sup> ըստ Մատենադարանում պահվող հնագույն օրինակի, հետևյալն է. «Հանդէս բանից քաղցրավէպ պատմութեանց Տանն Սիսական, հրաշահիւս յարինուածովք յարմարեալ գլխատակարանս հնոցն, նուաստ եւ ապիկար ոգւոյ **Ստեփաննոսի Սիւնեաց այցելուի եւ նախագահ մետրապալտի**, որդւոյ մեծափառ իշխանաց իշխանին Տարսաիճի, որ կոչի սա յիշատակաց մատենան» (Մատենադարան, ձեռ. թիվ, 6271, 7բ):

<sup>1</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1837, էջ 100:

<sup>2</sup> Ստեփանոս Օրբելյանի պատմության հրատարակիչները երկարաշունչ բնագրային վերնագիրը, հասկանալի պատճառով համառոտել են մասնավորապես՝ «Պատմութիւն նահանգին Սիսական» (Փարիզ, 1859, և Տիֆլիս, 1910), կամ՝ «Պատմութիւն Տանն Սիսական» (Մոսկվա, 1861), աշխարհաբար թարգմանության մեջ՝ «Սյունիքի պատմություն» (Երևան, 1986):

Ինչպես տեսնում ենք, վերնագիրը երկի որոշակի հակիրճ բնութագիրն է, հեղինակի ու նրա ծագման մասին ամփոփ տեղեկությամբ, ինչպես նաև համառոտ անվանումով, իսկ հեղինակի պաշտոնը կոչվում է նաև «**այցելու**» բառով:

Մի քանի տարի անց՝ 1299-ին, Ստեփանոս Օրբելյանի գրած «Ողբ ի Ս. Կաթողիկէն» կարճ անունով հայտնի չափածո երկի ամբողջական վերնագիրն է՝ «Բան բարառնական ոգեալ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու Ս. Կաթողիկէին. Ողբ աւաղականք և ձայն աշխարականք լեալ անհուն հեծեծանօք վասն աւերման աշխարհիս Հայոց և բնաւին սպառելոյ հայրապետութեան և թագաւորութեան համագունդ իշխանութեան, շարեալ չափաբան բերմամբ հոմերական արհեստիւ ի **Ստեփաննոսէ Սիւնեաց այցելուէ** ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատրոյ Կեչառեցի»<sup>1</sup>:

Ստեփանոս Օրբելյանը ժամանակագրորեն իր վերջին՝ «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» (1302 թ.) երկի վերնագրում ևս այդպիսի ձևակերպում է օգտագործում. «Տեառն **Ստեփաննոսի Սիւնեաց այցելուի** և նախագահ մետրապալտի...»<sup>2</sup>: Իսկ ավարտում է այս գործը Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին ուղղված խոսքերով՝ «Եւ ընդ ողջունիս՝ զայս իսկ ծանուցանէ պատուական գլխոյդ, բերանով թարմատար և եղկելի անձին՝ **Ստեփաննոսի նախագահ Սիւնեաց այցելուի...**»<sup>3</sup>: Եվ վերջապես, Գլաճորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցին Ստեփանոս Օրբելյանի պատվերով գրած գործի նախաբանում նրան այս ձևով է դիմում՝ «**Տէր Ստեփաննոս՝ այցելու եւ վերադիտող** գերահոջակ եւ առաքելական աթոռոյ Տանդ Սիւնեաց...»<sup>4</sup>:

<sup>1</sup> **Ստեփաննոս Օրպէլեանի** Ողբ ի Ս. Կաթողիկէն, Բնագիրը յառաջաբանով եւ ծանօթութիւններով հրատարակեց **Կ. Կոստանեանց**, Թիֆլիս, 1885, էջ 53-54: Այլ տարբերակ ունի երկի Կալկաթայի 1846 թ. հրատարակության վերնագիրը, որտեղ մեզ հետաքրքրող հատվածն այսպես է՝ «Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց **այցելուի**»:

<sup>2</sup> Ամբողջական վերնագիրն ըստ 15-րդ դարի ձեռագրի՝ Մատեն. ձեռ. թիվ 573, 55ա, տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, Երեւան, 2004, էջ 1322:

<sup>3</sup> Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց նախագահ արհիեպիսկոպոսի Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց շարադրեալ ի թուին Հայոց ՉԾԱ (1302) ի կաթողիկոսութեան Գրիգորի Անավարզեցոյ, Կ. Պոլիս, 1756, էջ 171:

<sup>4</sup> Մատենադարան, ձեռ. թիվ 1276, 3ա, 176ա:

Մինչև Սյունիքի պատմությունը գրելը՝ Ստեփանոս Օրբելյանը կազմել է **1193-1290** թվականներն ընդգրկող մի ժամանակագրություն՝ շարունակելով Սամվել Անեցու ժամանակագրությունը: Այդ մասին Օրբելյանը նշում է հենց հիշյալ գործի սկզբնամասում՝ հայտնելով, որ Սամվել Անեցու ժամանակագրությունը նա շարունակել է՝ հասցնելով մինչև իր ապրած ժամանակը՝ «...բերել հասուցանել մինչ ի մերս ժամանակ», իսկ իր մասին նշում է՝ «**Ես՝ նուաստ Ստեփաննոս անուամբ այցելու** կարգեցից ի գաւազանս սկիզբն արարեալ...»<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք պաշտոնի նշման այս ձևը՝ «այցելու», լիակատար ներդաշնակության մեջ է Ստեփանոս Օրբելյանի մյուս գործերում և հատկապես դրանց վերնագրերում եղած հիշատակությունների հետ: Յավոք, այս ակնառու հանգամանքը դուրս է մնացել նախորդ ուսումնասիրողների ուշադրությունից: Նաև այդ է պատճառը, որ հանիրավի կերպով կասկածի տակ է առնվել Ստեփանոս Օրբելյանի՝ հիշյալ ժամանակագրության հեղինակը լինելու իրողությունը և ենթադրվել է, թե դա նույն ժամանակ Սյունիքում ապրած մեկ այլ Ստեփանոս եպիսկոպոս է<sup>2</sup>:

Դատելով այն փաստից, որ որոշ դեպքերում Ստեփանոս Օրբելյանն «այցելու» անվանում-եզրը գործածում է իր մետրոպոլիտական աստիճանի հետ միասին, պետք է ենթադրել, որ հիշյալ շրջանում այդ անվանը յուրահատուկ իմաստ է տրվել: Ինչպես երևում է, եկեղեցիների վրա տա-

<sup>1</sup> Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբելեանի, հրատարակության համար պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երևան, 1942, էջ 21, 31:

<sup>2</sup> Ժամանակագրությունը եզակի օրինակով պահվում է Մատենադարանում (ձեռ. թիվ 8481), որը 1942 թ. հրատարակել է Ա. Աբրահամյանը՝ «Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբելեանի» վերնագրով: Բայց դրանից հետո Օրբելյանի հեղինակ լինելու հարցը վիճարկել են Լ. Խաչիկյանը և Վ. Հակոբյանը (Լ. **Խաչիկյան**, Վ. **Հակոբյան**, Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները, ՀՍՍՐ ԳԱ Տեղեկագիր, 1949, թիվ 2, էջ 77-87): Այս հարցը Վ. Հակոբյանն արծարծել է նաև «Մանր ժամանակագրությունները» հրատարակելիս և նշված գործը վերահրատարակել «Ստեփաննոս եպիսկոպոսի տարեգրությունը» վերնագրով (Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. 1, կազմեց՝ Վ. **Հակոբյան**, Երևան, 1951, էջ 32-34): Այնուհետև Ստեփանոս Օրբելյանի՝ այս երկի հեղինակ լինելն ապացուցող համոզիչ հոդվածով հանդես է եկել Է. Բաղդասարյանը (Է. **Բաղդասարյան**, 13-րդ դարի մի ժամանակագրության հեղինակի մասին, ՊԲՀ, 1971, թիվ 2, էջ 210-216): Լրացուցիչ փաստարկներով այդ տեսակետը հիմնավորել ենք նաև մենք, միաժամանակ ցույց տալով, թե Ստեփանոս Օրբելյանն ինչպիսի աշխատանք է կատարել Անեցու ժամանակագրության հետ՝ ոչ միայն հավելումներ, այլև կրճատումներ անելով (Սամուել Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրություն, աշխատասիրությամբ **Կ. Մաթևոսյանի**, Երևան, 2014, էջ 44-50):

րածվող «իշխանությունը» Ստեփանոս Օրբելյանը նախընտրել է կոչել «այցելություն» բառով: Օրինակ, իր Պատմության հիշատակարանում նա նշում է, որ այդ գիրքը ընծայում է Սյունյաց աթոռին՝ ի պայծառություն եկեղեցիների, որոնք այդ աթոռի իշխանության՝ «այցելության» ներքո են գտնվում. «Թողաք զսա արձան անջնջելի... ի հաստատութիւն սուրբ և երկնահանգէտ աթոռոյս Սիւնեաց և ի պայծառութիւն եկեղեցեաց՝ **որ ընդ սորին այցելութեամբ**»<sup>1</sup>: Նույն իմաստը պետք է տեսնել Ստեփանոս Օրբելյանի անմիջական հաջորդի՝ Հովհաննես Օրբելի 1323 թ. հիշատակարանում, որտեղ նրա մասին ասվում է՝ «տէր Յովհաննէս մականուն Աւրպէլ **մետրապալիտ** եւ **այցելու** Սիւնեաց երկոտասան գաւազանաց»<sup>2</sup>:

Ամփոփելով այս հատվածը՝ կարող ենք ասել, որ վերոնշյալ ժամանակագրության կազմողի հարցը որոշելիս, եթե անգամ չլինեին այդ մասին ժամանակին շրջանառված բազմաթիվ հիմնավորումները<sup>3</sup>, ապա միայն երկում առկա «**Ստեփաննոս անուամբ այցելու**» վկայությունը բավական է հաստատելու համար, որ դրա հեղինակը հենց Ստեփանոս Օրբելյանն է:

Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը ոչ միայն բազմարդյուն հեղինակ էր, այլև պատվիրել ու ստացել է բազմաթիվ ձեռագրեր: Նրա պատվերի շնորհիվ է, օրինակ, մեր օրերը հասել 10-րդ դարի հեղինակ Թովմա Արծրունու Պատմության հնագույն և ամբողջական ընդօրինակությունը<sup>4</sup>:

Ստեփանոս Օրբելյանի ստացած ձեռագրերից մեկը՝ մեկնողական երկերի ժողովածու է, որը պահվում է Մատենադարանում (ձեռ. թիվ 2603): Յավոք, գլխավոր հիշատակարան չունի, որի պատճառով գրչության տեղն ու ժամանակն անհայտ են: Պահպանվել են միայն Չաքետս գրչի կարճ հիշատակագրությունները, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Մատենադարանի ձեռագրացուցակում գրչության ժամանակի մասին նշվում է՝ «ԺԳ դար (1265ից յետոյ)»<sup>5</sup>, նկատի ունենալով,

<sup>1</sup> **Ստեփաննոս Օրբելեան**, էջ 506:

<sup>2</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց **Լ. Խաչիկյան**, Երևան, 1950, էջ 183:


<sup>3</sup> Տե՛ս վերը նշված Է. Բաղդասարյանի և մեր հրապարակումները (էջ 36, ծնթ. 3):

<sup>4</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 13:

<sup>5</sup> Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը., խմբագրութեամբ **Գ. Տէր-Վարդանեանի**, Երեւան, 2013, էջ 663:



որ մատյանում ընդգրկված Վարդան Արևելցու գործերից մեկը գրվել է 1265-ին: Հիշատակագրություններից մեկը, սակայն, թույլ է տալիս ավելի որոշակի դարձնելու գրչության ժամանակը: Այն գրված է ստացողի անունից՝ 48բ էջին. «Տ(է)ր Ա(ստուա)ծ տացէ իմաստութիւն և հանճար նորընծա ս(ուր)բ թաբունոյն՝ որդո մեծի իշխանին Տարսաիճին՝ Ստեփ(ան)նոսի, և թողցէ զանցանս մար իմոյ, որ և փոխ(եցաւ) ի Ք(րիստո)ս»<sup>1</sup>:



Նկ. 8 Ստեփանոս Օրբելյանի մասին հիշատակարան (Մատենադարան, N 2603, 224ա):

Իր Պատմության մեջ Ստեփանոս Օրբելյանը նշում է մոր՝ Արուզ խաթունի մահվան և Տաթևի վանքում հուղարկավորվելու մասին՝ ցավոք թվական չնշելով<sup>2</sup>: Սակայն, մինչև 1931 թ. Սյունիքի ավերիչ երկրաշարժը Տաթևի վանքում պահպանված է եղել Տարսայիճի առաջին կնոջ և Ստեփանոս Օրբելյանի մոր տապանաքարը, որի արձանագրությունը ժամանակին արտագրել ու հրատարակել է Ս. Զալալյանցը, ըստ որի՝ «մեծահաւատ» այդ կինը մահացել է Հայոց ՉԼԵ (1286) թվականին<sup>3</sup>: Հետաքրքրա-

կան է, որ վերոնշյալ ձեռագրի մեկ այլ հիշատակագրության մեջ (224ա), ուր վկայված են Ստեփանոս Օրբելյանի ծնողները, մոր մասին ասվում է՝

<sup>1</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 794: Այստեղ անթվական սույն հիշատակարանը դրված է Ստեփանոս Օրբելյանի Պատմության 1297 թ. հիշատակարանից հետո, որպես նույն հեղինակի ստացած մատյան:

<sup>2</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 425:

<sup>3</sup> Ս. Զալալեանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիս, 1858, էջ 304: Արձանագրության մյուս հրատարակիչները վերցրել են Ս. Զալալյանցի տեքստը: Տե՛ս նաև՝ Դիվան հայ վիճագրության, պրակ II, էջ 36, Հ<sup>մ</sup> 74:

«յիշեցեք... և զմեծահաւատ մայր իւր՝ զԱրուզ խաթունն, ամէն» (նկ. 8)<sup>1</sup>: Հիշատակագրության և արձանագրության տվյալներից ելնելով կարելի է ենթադրել, որ վերոնշյալ ձեռագիրը Ստեփանոս Օրբելյանն ստացել է իր մոր մահվան տարում, կամ առնվազն մեկ տարի անց, այսինքն՝ 1286-1287 թթ. միջակայքում:

Սակայն ձեռագրի մյուս հիշատակագրությունները ստիպում են հարցը դիտարկել նաև այլ տեսանկյունից: Մասնավորապես, ինչպես վերը նշվեց, հենց այդ ժամանակ Ստեփանոսը նոր էր վերադարձել Կիլիկիայից՝ եպիսկոպոսական ձեռնադրություն ստացած և մետրոպոլիտի կոչումով: Նկատենք, որ ձեռագրի հիշատակագրություններում նրա «նորընծա» լինելու փաստի արձանագրման հետ մեկտեղ, չկան վերոնշյալ կոչումների մասին ակնարկներ: Դրա փոխարեն ասվում է. «Ձերջանիկ և զհանճարեղ նորընծա սուրբ թաբունին, որդի մեծի իշխանին Տարսաիճին...», կամ՝ «Ձգեղեցիկ ծաղիկն եկեղեցոյ և զՔ(րիստո)սապսակ նորընծա ս(ուր)բ թաբունին զՍտեփ(ան)նոս...»<sup>2</sup>: Այսպիսի բնութագրումները (երեք տեղում նա կոչվում է միայն «թաբունի») առավել համապատասխանում են նրա վարդապետական գավազան ստանալու ժամանակին, այսինքն՝ առնվազն 1284 թվականին:

Զենք բացառում, որ Տաթևում Արուզ խաթունի տապանաքարի արձանագրության թվականը Ս. Զալալյանցը սխալ է ընթերցել, քանի որ նույն վիճագրում մի քանի վրիպում է թույլ տվել (հնարավոր է, որ ՉԼԳ (1284) է եղել, վերջին տառի բոլորակը ջնջված, որի պատճառով ՉԼԵ է կարդացվել): Ամեն դեպքում, առկա տվյալներն ի մի բերելով, կարող ենք եզրակացնել, որ Մատենադարանի թիվ 2603 ձեռագիրը Ստեփանոս Օրբելյանը ստացել է 1284-1287 թթ. միջակայքում, երբ նորընծա թաբունի էր, և երբ մահացել էր նրա մայրը:

<sup>1</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 794:

<sup>2</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 794:.

## ՆՈՐԱՎԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՎԱՐԴՊԵՏԸ՝ ՍԻՐԱՆԵՍ

Նորավանքը բացառիկ տեղ է գրավում հայ մշակույթի՝ մասնավորապես ճարտարապետության և քանդակագործության պատմության մեջ՝ շնորհիվ հրաշագեղ եկեղեցիների և բազմազան ու բարձրարվեստ խաչքարերի: Վանքի կառույցների զուտ ճարտարապետական մանրամասների քննությունը մեր նպատակից դուրս համարելով, ստորև համառոտակի կանդրադառնանք դրանց պատմական կողմին և հատկապես ճարտարապետներին: Բանն այն է, որ Նորավանքը հայոց միջնադարյան վանքերի մեջ եզակի է, որտեղ հայտնի են կառույցների մեկից ավելի ճարտարապետները: Նկատենք, որ «վարդպետ» բառը, որպես «ճարտարապետ» կամ «վարպետաց վարպետ» նշանակությամբ եզր (տերմին), հանդիպում է հատկապես 13-րդ դարում, Հայաստանի մի շարք վայրերում: Այդ կոչումով են հիշվում Վեցիկը՝ Կեչառիսում (13-րդ դ. սկիզբ), Աղբայրիկը՝ Տեղեղի վանքում (1221 թ.), Անիում՝ Շահեր վարդպետը (1271 թ.), Մրենում՝ Մխիթարը (1277 թ.), Այրիվանքում՝ Գալձագը և ուրիշներ<sup>1</sup>: Նորավանքը միակ տեղն է, որի վիմագրերում երեք անգամ վկայված է «վարդպետ» բառը՝ մեկ անգամ Սիրանեսի և երկու անգամ՝ Մոմիկի անվան հետ:

Սիրանեսի մասին ամենավաղ հիշատակությունը պահպանվել է Վայոց ձորի Արատեսի նշանավոր վանքի գավթի կարճ արձանագրության մեջ. «Աստուած ողորմի Սիրանէսի»<sup>2</sup>: Այն վերաբերում է Սմբատ և Տարսայիճ իշխանների հովանավորությամբ՝ Հայրապետ աբեղայի 1270 թ. վանքում սկսված լայնածավալ նորոգչական աշխատանքին և խաչվող կամարներով գեղաշեն գավթի կառուցմանը, որն իրականացել է Սիրանեսի ձեռքով, Գրիգորիկ վարպետի գործակցությամբ (ցավոք, գավիթը 1980-ականներին փլվել է):

<sup>1</sup> Տե՛ս **Ս. Բարխուդարյան**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 46-78: Հեղինակն այս շարքում նշում է նաև 1277 թ. Հոռոմոսի ժամատներից մեկը կառուցողին՝ «վարպետ Ֆրերս Կարնոյ քաղաքացի», գրելով, որ հրատարակիչ Ն. Սարգիսյանը հավանաբար սխալ է կարդացել, և այնտեղ պիտի «վարդպետ» լիներ: Իսկ եթե վարպետ է՝ «այս կդառնա «վարպետ» կոչումի հնագույն գործածության օրինակ արձանագրական նյութի մեջ» (նույն տեղում, էջ 77): 2014-ին Հոռոմոս կատարած այցի ժամանակ մենք համոզվեցինք, որ այնտեղ իրոք «վարպետ» է գրված: Տե՛ս Horomos monastery: Art and History (Edited by **E. Vardanyan**), Paris, 2015, p 478.

<sup>2</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 125, Հ<sup>փ</sup> 361:



Նկ. 9 Ս. Գրիգոր եկեղեցու արևելյան պատուհանը:

Երկրորդ կառույցը, որի շինարարական ընդարձակ վիմագրում նշվում է այս շնորհալի վարդպետը՝ Նորավանքի Ս. Գրիգոր եկեղեցի-դամբարանն է, կամ ինչպես ընդունված է ասել՝ Սմբատի տապանատունը, որը Տարսայիճի պատվերով կառուցվել է 1275-ին: Այն թեպետ պարզ հատակագիծ ունի, սակայն շինարարական արվեստի ու քանդակային հարդարանքի, պատուհանների ինքնատիպ մշակման առումով (նկ. 9) հրաշալի և յուրօրինակ մի գործ է: Սիրանեսն այստեղ հանդես է գալիս նաև որպես արձանագրությունների հմուտ գրիչ, մուտքի

վիմագրի դեպքում՝ նորարար (տե՛ս արձ. Հ<sup>փ</sup> 87, նկ. 82): Շինության հյուսիսային պատի ողջ երկայնքով, չորս տողի մեջ նա վերարտադրել է Տարսայիճ իշխանի՝ իրեն հատկացրած վարձատրության մասին հրովարտակի բովանդակությունը: Սիրանեսը պահպանել է իշխանի գրության ինչպես առաջաբանը՝ «ԿԱՄԱԽՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ՏԱՐՍԱՅԻՃԻՍ՝ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՍ, ...ՈՐ ԵԿԵՂԷՏԻ ՏՎԻ ՇԻՆԵԼ ՍԻՐԱՆԷՍ ՎԱՐԴՊԵՏԻՆ», այնպես էլ վերջաբանը՝ «ԵՍ՝ ՏԱՐՍԱՅԻՃՍ, ԻՄ ՁԵՌԱԻՔՍ ՀԱՍՍԱՏԵՏԻ ԶԳԻՐՍ ԶԱՅՍ» (արձ. Հ<sup>փ</sup> 88, նկ. 10):

Արձանագրության համաձայն՝ կառույցն ավարտելուց հետո ճարտարապետն իշխանից ստացել է այժմյան Գորիսի Շինուհայր և Հալիձոր գյուղերի արանքում մի հողաբաժին՝ իբրև ժառանգական սեփականություն, ինչպես նաև նախա-



Նկ. 10 Սիրանեսի արձանագրության ավարտի հատվածը:

պես խոստացված 500 սպիտակ (արծաթ) գումարի փոխարեն՝ տեղաբնակ մի շինական-ճորտ՝ Աղազար Ըղվերծեցի անունով<sup>1</sup>: Հետաքրքրական է, որ պահպանվել է նաև Տարսայիճի անունից գրված ու Սիրանեսին հողամաս նվիրելուն վերաբերող արձանագրություն Հալիճորի «Խաչերի խուֆ» կամ Վնսար կոչվող վայրում՝ Շինուհայր-Հալիճոր ճանապարհի մոտ՝ խաչքարի պատվանդանին, որտեղ ասվում է. «ՍԻՐԱՆԷՍ ՔԱՐԳՈՐԾՆ ԵԿԵՂԵՑԻ ՇԻՆԵ(Ա)Ց ԱՆՎԱՐՁ ՆՈՐԱՅՎԱՆՍ, ԵՍ ԶԱՅՍ ՆՐԱ ԴԱՏՄԱՆ ՓՈԽԱՐԷՆՔ ԱՐԱՐԻ...»<sup>2</sup>: Սրա մոտ գտնվող մեկ այլ խաչքարի վիմագիր վկայում է, որ Սիրանեսը և նրա եղբայր Հզարմելն այն կանգնեցրել են իրենց ծնողներ Գորքի (Գևորգ) և Թենիկի հիշատակին<sup>3</sup>:



Նկ. 11 Քանդակազարդ հատվածներ՝ Սիրանեսի վարպետանշանով:

Նորավանքի Ս. Գրիգոր եկեղեցի-դամբարանն ունի նաև հետաքրքրական քանդակային հարդարանք, որի նմուշները կարելի է տեսնել կառույցի որմնասյուների վրա (թռչնապատկերներ, դեմք), ինչպես նաև մուտքի մշակված եզրաքարերին և ճակատներին՝ առանձին զարդաքանդակների տեսքով: Դրան կից երևում է մի մեծագիր «Ո» տառ, որի գրության ձևը՝ սուր ծայրերով, հար և նման է Սիրանեսի թողած մեծ արձանագրության Ո և Ս տառերին: Կարծում ենք, որ սա վարպետի նշանն է, Սիրանեսի

<sup>1</sup> Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ, էջ 74:

<sup>2</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 52, արձ. Հ<sup>մ</sup> 125: «Անվարձ» ասելով նկատի են ունեցել, որ Սիրանեսը դրամական վարձատրություն չի ստացել:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 53, արձ. Հ<sup>մ</sup> 126:

անվան սկզբնատառը, բայց շրջված (նկ. 11): Կարելի է ենթադրել, որ հենց «Ս» չի գրել, քանի որ այն վիմագրական ընդունված կաղապարներում «ՍՈՒՐԲ» բառի սկզբնատառն է, օրինակ՝ «ՍԲ ԽԱԶՍ», «ՍԲ Ա(ՍՏՈՒԱ)-ԾԱԾԻՆ», կամ էլ զաղտնագրման ձև է: Ամեն դեպքում, այս տառի հայտնվելը շինության քանդակային մանրամասներում, պատահական չէ և կարծում ենք, որ կարող է միայն վարպետանշան լինել: Այդպես են վարվել նաև ժամանակի այլ ճարտարապետներ: Օրինակ, Հաղարծինի 13-րդ դարի սեղանատան ճարտարապետ Մինասը արձանագրությունից զատ, շինության տարբեր քարերի վրա թողել է «Մ» տառը, որպես իր վարպետանշան: Իսկ Սաղմոսավանքի գրատան ճարտարապետ Մկրտիչ վարպետն իր անունը փակագրով թողնելուց բացի նաև գեղագիր «Մ» անվանատառն է թողել կամարների և որմնասյուների խոյակների վրա<sup>1</sup>:

Սիրանեսի ճարտարապետական և քանդակագործական ժառանգությունը կարող է մանրակրկիտ մասնագիտական ուսումնասիրության<sup>2</sup>: Կարծում ենք, որ դրանից հետո հնարավոր կլինի ավելի փաստարկված խոսել նաև Նորավանքի գավթի 1261 թ. հիմնարար վերակառուցումը Սիրանեսին վերագրելու մասին: Ակադեմիկոս Վ. Հարությունյանը գրում է, որ գավթի թղթը սկզբում եղել է քառամյոթ, բայց՝ «Հետագայում այն վերակառուցման է ենթարկվել և ծածկվել գոց թաղերով: Միայն այս գավթում հանդիպող ծածկի հիշյալ կոնստրուկցիան իրականացված է չորս պատերից բարձրացող կիսաթաղերով, որոնք անկյունագծային ուղղությամբ հատվելով՝ կենտրոնական մասում կազմավորում են երդիկով պսակված քառակուսին»<sup>3</sup>: Ինչպես երևում է, Ս. Ստեփանոս եկեղեցու շինարարությունից անմիջապես հետո նրա դիմաց կառուցվել է քառամյոթ գավթ, որի ճարտարապետական հետքերը՝ որմնամույթերը, երևում են պատերի վրա, և որտեղ կան 1222 և 1232 թթ. արձանագրություններ (արձ. Հ<sup>մ</sup> 16, 17): Սակայն, 1261-ին այն վերաշինվել է և ստացել այժմյան տեսքը՝ խաչվող կամարներով և կենտրոնում քառակուսի գմբեթահատվածով:

<sup>1</sup> Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ, էջ 58, Ա. Մանուչարյան, Սաղմոսավանք, Երևան, 2015, էջ 118:

<sup>2</sup> Յայժմ Սիրանեսին հանգամանորեն անդրադարձած հեղինակը պատմաբան-վիմագրագետ Ս. Բարխուդարյանն է (տես՝ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ, էջ 62-75):

<sup>3</sup> Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 328:





Նկ. 12 Որմնախաչեր  
գավթի պատերին:



Նկ. 13 Գավթի առաստաղի  
արձանագիր խաչապատկերը:

Ս. Բարխուդարյանը գավթի ճարտարապետ է համարում Սիրանեսին: Նա գրում է. «Գավթի պատերին Սիրանեսի ստորագրությունը չկա, բայց նկատի ունենալով, որ նա Սմբատի ժամանակներից սկսած, ապա նաև Տարսայիճի օրոք եղել է Օրբելյան իշխանական տոհմի և Նորավանքի գլխավոր ճարտարապետը, անկասկած այդ շրջանի կառույցները նրա ձեռագործները պիտի լինեն»<sup>1</sup>: Այս տրամաբանական եզրահանգումը, մեր կարծիքով փաստարկվում է նաև գավթի ներքնամասի քանդակային հարդարանքի քննությամբ, մասնավորապես հյուսիսային պատին եղած՝ առյուծի դեմ մարտնչող հեծյալ Սմբատի պատկերաքանդակով, միանման ոճ ունեցող մի քանի որմնախաչերով (նկ. 12) և արևելյան պատից վեր՝ առաստաղի մասում եղած վերասլաց խաչաքանդակային հորինվածքով, որոնք աղերսներ ունեն Ս. Գրիգոր եկեղեցի-դամբարանի քանդակագործման հետ: Հատկապես այս վերջին հորինվածքը՝ «Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)Ծ, Յ(ԻՍՈՒ)Ս Ք(ՐԻՍՏՈ)Ս» համառոտագրությամբ (նկ. 13) և խաչի շուրջ եղած օղակաձև մշակումներով (կարծում ենք, որ կարկինով աշխատելն այս վարպետի նախընտրություններից է), համեմատելի է Ս. Գրիգորի պատուհանների ձևավորման հետ: Ակնառու են հատկապես խոշոր սլացիկ տառերով վիմագրության ընդհանրությունները: Նկատենք, որ «Տ(Է)Ր» բառի գրության միանգամայն ինքնատիպ ձևը («Ր» տառի փոխարեն նրա վերին բոլորակը միանում է «Տ» տառի վերին բոլորակին), պարզապես նույնությամբ կրկնվում է գավթի խաչի շուրջը ե-

<sup>1</sup> Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ, էջ 74:

ղած և Ս. Գրիգոր եկեղեցի-դամբարանի արևմտյան պատի լուսամուտի վերնամասի արձանագրություններում (նկ. 14): Գավթի արձանագրության մեջ ակնառու է նաև տառերի ավարտվելը սուր ծայրերերով (հատկապես՝ «Ս» տառի դեպքում), որը հատուկ է Սիրանեսի գրին:

Կարծում ենք բոլորովին պատահական չէ, որ թեև եկեղեցի-դամբարանի մեծ արձանագրության մեջ նշված է Սիրանեսի՝ վարդպետ-ճարտարապետ լինելու փաստը, բայց նա կառույցի քանդակագործ քարերի վրա ևս թողել է իր վարպետանշանը, իբրև տեղեկություն առ այն, որ դրանք նույնպես իր ձեռքի աշխատանքն են: Այսինքն, ճարտարապետը նպատակ է ունեցել տեղեկացնելու, որ ինքը նաև քանդակագործ է: Ինչպես քիչ հետո կտեսնենք, Նորավանքում Սիրանեսին հաջորդած Մոմիկը ճիշտ հակառակ միջոցին է դիմել, իր քանդակագործական (խաչքարային) գործերի տակ գրելով «Մոմիկ վարդպետ», հասկացնելու համար, որ ինքը ոչ թե միայն քանդակագործ է, այլ նաև ճարտարապետ:

Այս առնչությամբ հարկ է նշել միջնադարյան իրականության համար բնութագրական երկու հանգամանք: Առաջինն այն է, որ ընդհանրապես հմուտ վարպետները՝ ճարտարապետ կամ քանդակագործ, այնքան էլ մեծաթիվ չէին, և եթե մեկը հայտնի էր դառնում, ապա խոշոր միջոցների տեր պատվիրատուները հենց նրան էին դիմում: Եվ երկրորդն այն է, որ որևէ կառույցի կամ քանդակագործական ստեղծագործությանն առընթեր վիմագրում ճարտարապետի, վարդպետի, քանդակագործի անվան հիշատակությունն ընդունված երևույթ չէր, և մեզ հասած նման փոքրաթիվ հիշատակումները բացառություն են, ոչ թե օրինաչափություն: Այդպիսի պատվի են արժանացել միայն հատուկենտ անհատներ, չնայած հիշատակվելու ցանկությունը, հավանաբար, հատուկ է եղել բոլորին: Բայց այդ եզակի ճանաչված ճարտարապետները նույնպես, սկսած Աղթամարի Մանուելից ու Անիի Տրդատից, որոնց, ի դեպ, հիշատակում են



Նկ. 14 Ս. Գրիգորի արձանագիր արևելյան պատուհանը:



միայն պատմիչները, մինչև Սիրանեսն ու Մոմիկը, անկասկած ունեցել են նաև ստեղծագործություններ, որոնցում չի նշվել նրանց անունը:

### ՆՈՐԱՎԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԴՊԵՏԸ՝ ՄՈՄԻԿ


Մոմիկը որպես ճարտարապետ, Նորավանքում, ըստ ամենայնի, հաջորդել է Սիրանեսին, սակայն նրա մասին տեղեկություններն անհամեմատ ավելի շատ են, քանի որ նա նաև գրիչ և մանրանկարիչ էր: Հատկանշական է սակայն, որ ձեռագրերում նա անունից բացի հիշատակվում է միայն «գրիչ», «գծող», «քարտուղար», «գիծ և նկար դրոշմող», «նկարիչ» անվանումներով (ծնողների ու ազգականների անունները չի նշում), իսկ վիմագրերում՝ որպես «վարդպետ»: Այսինքն, եթե նրա անունը Մոմիկ չլիներ, որն այն ժամանակի համար եզակի է, այլ տարածված մեկ այլ անձնանուն (ինչպես օրինակ՝ Հովհաննես կամ Գրիգոր), ապա շատ դժվար կլիներ հաստատել, որ նրա գրած-ծաղկած մատյանների ու կերտած եկեղեցու կամ խաչքարերի հեղինակը նույն մարդն է:

Նկատի ունենալով այն, որ այս քանքարաշատ արվեստագետի մասին մեծաքանակ գրականություն կա և մենք էլ նրան անդրադարձել ենք առանձին գրքերով<sup>1</sup>, այստեղ ընդհանուր տեղեկությունները կնշենք շատ հակիրճ՝ միաժամանակ որոշ նոր դիտարկումներ անելով:

Ինչպես հայտնի է, նշանավոր ռաբունապետ Ներսես Մշեցին (մահ. 1284 թ.) 1282 թ. իր աշակերտների հետ հաստատվում է Վայոց ձորի Աղբերց վանքում: Այստեղ ձևավորվում է նշանավոր Գլաձորի համալսարանը, որտեղ, ինչպես վերը նշեցինք, Ստեփանոս Օրբելյանը Ներսես Մշեցուց վարդապետական գավազան է ստանում: Դատելով այն փաստից, որ Մոմիկը 1283-1284 թթ. Գլաձորում Ներսես Մշեցու համար ընդօրինակված մի ձեռագրում (Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. թիվ 571) կիսախորան է նկարել և դրա մեջ փոքրիկ հիշատակարան գրել՝ կարող ենք ենթադրել, որ նա Սյունյաց ապագա մետրոպոլիտի

<sup>1</sup> Կ. Մաթևոսյան, Լ. Չաքարյան, Մոմիկ մանրանկարիչը, Երևան, 2010, Կ. Մաթևոսյան, Մոմիկ (հայերեն, անգլերեն), Երևան, 2010:

կրտսեր ուսումնակիցն է եղել, այսինքն, նույն տարիներին միասին ուսանել են Գլաձորում: Փաստորեն, հենց այդ ժամանակից էլ սկսվել է նրանց՝ մի կողմից պատվիրատու-մեկենասի, մյուս կողմից՝ հովանավորյալ արվեստագետի գործակցությունը, որը Ստեփանոս Օրբելյանից փոխանցվել է նրա հաջորդ և տոհմակից մետրոպոլիտներին՝ Հովհաննես Օրբելին և Ստեփանոս Տարսայիճին: Նրանց և Օրբելյան տոհմի իշխանների ու իշխանուհիների պատվերով է Մոմիկը գրել ձեռագրեր, կերտել եկեղեցիներ ու գեղաքանդակ խաչքարեր:



Նկ. 15 Մոմիկի և Ստ. Օրբելյանի ձեռագրերի հիշատակարանները «ամէն» փակագրով:

Գլաձորի վերոհիշյալ ձեռագրում առկա Մոմիկի անվան առաջին հիշատակությունը զետեղված է կիսախորանի գլխազարդի ներսում՝ «զՄոմիկ նկարիչ խորանիս յիշեցեք, աղաչեմ, ամէն»: Այստեղ վերջին «ամէն» բառը փակագիր է և նախկինում չի վերծանվել (նկ. 15)<sup>1</sup>: Մոմիկի՝ Գլաձորի համալսարանի հետ ունեցած կապի մեկ այլ արտահայտություն է

<sup>1</sup> Վիեննա, ձեռ. թիվ 571, 24ա: Հետաքրքրական է, որ վերջին «ամէն» փակագրով բառը Վիեննայի ձեռագրացուցակում բազմահմուտ Հ. Տաշյանը չի վերծանել (Յուզակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հ. Ա, կազմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 1039): Մենք նույնպես նախկինում փակագիրը չենք բացել (Կ. Մաթևոսյան, Մոմիկ, էջ 12), սակայն ճիշտ այդպիսի փակագրի հանդիպեցինք Ստեփանոս Օրբելյանի ստացած, վերը քննված ձեռագրի հիշատակագրություններից մեկի վերջում, որտեղից ակնհայտ է դառնում նրա իմաստը՝ «Փառք Սուրբ Երրորդութեանն, համագո միութեանն և եռատրոհ անձնաորութեանն այժմ և յանվախճան յափտեանս: Ամէն» (Մատենադարան, ձեռ. թիվ 2603, 341բ): Ի դեպ, փակագիրը չի վերծանված նաև Մատենադարանի ձեռագրացուցակում (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, էջ 663):

Ներսես Մշեցուն հաջորդած ռաբունապետ Եսայի Նշեցու մասին փոքրիկ հիշատակագրությունը, որը նա թողել է 1307 թ. իր ընդօրինակած Ավետարանում (տե՛ս ստորև՝ հիշատակարանների բաժնում):

1292 թ. Մոմիկի անունն առաջին անգամ տեսնում ենք Նորավանքում: Այստեղ նա Վայոց ձորի Ուռոյ քար վանքի քահանա Հովհաննեսի ու նրա եղբոր պատվերով գրած և նկարագրողով Ավետարանում (Մատենադարան, ձեռ. թիվ 2848) ուշագրավ հիշատակարան է գրել՝ նաև փառաբանական տողեր ձոնելով Ստեփանոս Օրբելյանին:

1302 թ. Մոմիկն արդեն Ստեփանոս Օրբելյանի պատվերով, բարձրարվեստ տերունական պատկերներով նկարագրող է փոքր չափերի մի Ավետարան (Մատենադարան, ձեռ. թիվ 6792) որի գրիչը Հովհաննես Օրբելն էր: Հիշատակարանում նա թողել է հետևյալ տողերը, որոնց առաջին ընթերցողը հենց Ստեփանոս Օրբելյանը պիտի լիներ. «Աղաչեմ զհանդիպեալքդ այսմ աստուածաբան տառիս յիշել զանիմաստ նկարողս՝ Մոմիկ և սխալանացն անմեղադիր լինել, զի թեպէտ անհմուտ էի, այլ ժամանակս ձմեռն էր և տունս նսեմ...»<sup>1</sup>:

Այս երկու մատյանների ստեղծման ժամանակագրական միջակայքում՝ 1295 թ., Ստեփանոս Օրբելյանի հովանավորությամբ կառուցվել է Տաթևի Ս. Գրիգոր Լուսավորիչ միանավ եկեղեցին, որի արձանագրության մեջ ճարտարապետի անունը չի նշված: Սակայն ճարտարապետական մի շարք մանրամասներ Ստեփան Մնացականյանին (և այլոց) թույլ են տվել սույն եկեղեցու կառուցումը վերագրել Մոմիկին<sup>2</sup>: Ստեփանոս Օրբելյանի և Մոմիկի կապերի մասին վերը բերված տեղեկություններն ավելի հիմնավոր են դարձնում այդ ենթադրությունը, որը կարելի է ամրապնդել ևս մի քանի փաստարկով:

Առաջինը 2004 թ. Վայոց ձորի Աղավնաձոր գյուղից մոտ 5 կմ հյուսիս-արևմուտք, Ներքին Ուլգյուր գյուղատեղի Ս. Աստվածածին եկեղեցու մոտ հայտնաբերված Մոմիկի ծնողների տապանաքարն է՝ հետևյալ արձանագրությամբ. «ԶՀԱՅՐ ԵՒ ԶՄԱՅՐ ՄՈՄԿԱ ԶԳՐ(Ի)ԳՈՐ ԵՒ ԶԱՎ-

<sup>1</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 9:

<sup>2</sup> Ստ. Մնացականյան, Վարպետաց վարպետներ, էջ 152:

ԹԱՅՆ ՅԻՇԵՑԷՔ :ԹՎ: ՉԻԷ (1298)»<sup>1</sup>: Գրությունը վկայում է այն մասին, որ 1298 թ. Մոմիկն արդեն հայրենի գավառում հայտնի, հռչակված մարդ էր, մի բան, որը հնարավոր էր ոչ այնքան ձեռագրական աշխատանքի, որքան Սյունյաց մետրոպոլիտի հանձնարարությամբ եկեղեցի կառուցած լինելու պարագայում:

Երկրորդը՝ Մոմիկի անունը (որոշ իմաստով՝ ստորագրությունը) պարունակող ընդամենը երկու խաչքարերի վիմագրերն են: 1303 թ. մահացած Ստեփանոս Օրբելյանին հաջորդած մետրոպոլիտ Հովհաննես Օրբելի պատվերով Մոմիկը Ստեփանոս Օրբելյանի հիշատակին Նորավանքում շքեղ խաչքար է պատրաստել, որի 1304 թ. արձանագրության վերջում նշում է՝ «Մոմիկ վարդպետ» (նկ. 79): 1308 թ. Էլիկում Օրբելյան իշխանի կնոջ՝ Թամթա խաթունի պատվերով Մոմիկը Նորավանքում մեկ այլ հոյակապ խաչքար է կերտում, որի արձանագրությունն ավարտվում է «Մոմիկ վարդպետ յիշեցէք» բառերով (նկ. 80): Այս արձանագրություններին անդրադարձած Ս. Բարխուդարյանն իրավացիորեն գրում է. «Չարդաքանդակներ կատարող վարպետների բազմաթիվ կոչումների մեջ վարդպետ ձևը գոյություն չունի, խաչքարեր շինող վարպետների համար ամենատարածված կոչումներն են հորինող, և մանավանդ՝ կազմող...»<sup>2</sup>: Ուրեմն խաչքարերի արձանագրություններում Մոմիկը հատուկ նպատակով է իրեն «վարդպետ» կոչում, ցույց տալու համար, որ ինքը ճարտարապետ է, ոչ թե միայն խաչքարագործ: Իսկ 1304 թվականից առաջ ի՞նչ շինություն կարող էր նա կառուցած լինել, եթե ոչ իր հովանավոր Ստեփանոս Օրբելյանի՝ Տաթևի Ս. Գրիգոր եկեղեցին:

Իր «ուղերձը» հաստատապես տեղ հասցնելու համար շուտով Մոմիկն ունենում է ավելի պատեհ հնարավորություն: 1321 թ. Հովհաննես Օրբելի հանձնարարությամբ նա կառուցում է Արենիի Ս. Աստվածածին եկեղեցին, որի մուտքի պատկերաքանդակի վերևում ու կողքերին եղած՝

<sup>1</sup> Հնավայրի ուսումնասիրության մասին և Մոմիկի ազգականների տապանաքարերի վիմագրերի ամբողջական տեքստերը տե՛ս Ա. Քալանթարյան, Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան, Մոմիկյան նորահայտ հիշատակներ, «Հայ արվեստ», 2005, թիվ 3, էջ 28-30:

<sup>2</sup> Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ, էջ 82:



Նկ. 16 Տաթևի Ս. Գրիգոր եկեղեցու արևելյան պատուհանները:



Նկ. 17 Արենիի եկեղեցու արևելյան խաչաձև պատուհանները:

ԹՎ(ԱԿԱՆԻՆ) ՉՀ (1321) տողով ավարտվող պաշտոնական արձանագրության ներքևում իրավունք է ստանում նշելու իր անունը: Ձախ կողմում նա տառերը հիմնականում ուղղահայաց դասավորելով գրում է՝ «ՄՈՄԻԿ ՎԱՐԴ(ՊԵՏ)» իսկ աջում՝ ՇԱՐԺ ԵՂԵԻ<sup>1</sup>: Սակայն այս եկեղեցում Մոմիկը օգտագործում է ճարտարապետական մի մանրամասն, որը միայն մեկ նախօրինակ ունի՝ Տաթևի Ս. Գրիգոր եկեղեցում: Դա գլխավոր խորանի մեջ բացվող երկու խաչաձև և դրանցից վեր՝ մեկ կլոր պատուհաններն են (նկ. 16): Փաստորեն, Մոմիկն իր հեղինակած և 1295-ին Տաթևում կիրառած խորանի պատուհանների ձևը կրկնել է Արենիում (նկ. 17), որտեղ առկա է նաև իր անվան հիշատակությունը որպես «վարդպետ», որով, ըստ էության, Տաթևի Ս. Գրիգորի ճարտարապետի ինքնության հարցը լուծվում է: Ի դեպ, երկու եկեղեցիների մուտքի վերնամասը ձևավորող շրջանակը՝ փոքր սրածայրով ավարտվող կամարով, նույնպես միանման է<sup>2</sup>:

Մենք սույն հարցին այսքան հանգամանորեն անդրադարձանք, քանի որ ենթադրում ենք, թե Մոմիկը նման մի «ուղերձ» էլ թողել է Նորավանքի գավթի մուտքի ճակատային քանդակներում:

Այժմ տեսնենք, թե որպես ճարտարապետ ի՞նչ է արել Մոմիկը Նորավանքում, որը նրա բնակության հիմնական վայրն էր: Մասնագիտական գրականության մեջ Մոմիկին է վերագրվում երկու գործ՝ Ս. Ստե-

<sup>1</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 29, Հ<sup>40</sup> 61:

<sup>2</sup> Հմմտ. աստ լուսանկար 7 և 18:

փանոսի գավթի արևմտյան ճակատի վերակառուցումը՝ համապատասխան պատկերաքանդակների զետեղումով և Բուրթել իշխանի կառուցած Ս. Աստվածածին երկհարկ եկեղեցի-դամբարանը: Սակայն, քանի որ այդ մասին հստակ փաստական արձանագրումներ չկան, երկուսն էլ մնում են ենթադրությունների դաշտում: Այդուհանդերձ, այդ ենթադրությունների համար հիմք ծառայած փաստարկներին հնարավոր է ավելացնել մի շարք նոր հիմնավորումներ:

## ՆՈՐԱՎԱՆՔԻ ԳԱՎԹԻ ՃԱԿԱՏԻ ՊԱՏԿԵՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Կարելի է առանց երկմտելու ասել, որ Նորավանքի նշանակալից դերը հայ արվեստի պատմության մեջ պայմանավորված է նաև Ս. Ստեփանոս եկեղեցու գավթի արևմտյան պատի զույգ պատկերաքանդակներով, որոնցից մեկը մուտքի ճակատակալ քարի վրա է, իսկ երկրորդը՝ դրանից վեր՝ պատուհանը պսակող կամարածև քարին: Դրանք, անկասկած, հայ միջնադարյան արվեստի բացառիկ արժեքավոր ու ինքնատիպ ստեղծագործություններ են և պատահական չէ, որ արժանացել են բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությանը:

Այստեղ մենք պատկերաքանդակները մանրամասնորեն քննելու նպատակ չունենք, բայց ուզում ենք անդրադառնալ վիմագրական նյութից բխող որոշ հարցերի, որոնք նպաստում են ինչպես դրանց իմաստային կապի բացահայտմանը, այնպես էլ հստակություն են մտցնում ստեղծման ժամանակի, պատվիրատուի ու հեղինակի ինքնության հարցերում:

Նորավանքի հիշյալ քանդակներին անդրադարձողները, սովորաբար ուսումնասիրությունը կառուցում են հետևյալ հաջորդականությամբ. նախ անդրադառնում են Արենիի 1321 թ. եկեղեցու մուտքի ճակատակալ քարի՝ Մոմիկի հեղինակած պատկերաքանդակին, որտեղ ծաղկահյուս խորքի (ֆոնի) վրա պատկերված է ծոպավոր գորգին նստած Աստվածամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին, որն ասես, շրջվել, մի փոքր առաջ է եկել (նկ. 18): Այնուհետև անցում են կատարում Արենիից ընդամենը 10 կմ հեռու գտնվող Նորավանքի գավթի մուտքի ճակատը զարդարող քանդակին,



Նկ. 18 Արենիի մուտքի ճակատի պատկերաքանդակը:

որը նույն թեման ունի, միայն թե երկու այլ մարդկային պատկերներով ու հավելյալ ուշագրավ մանրամասներով<sup>1</sup>, սակայն Աստվածամոր ու Մանկան դիրքերը շատ նման են, իսկ գահավորակի դեր կատարող ծոպավոր գորգը և նրա զարդերը՝ կրկնվում են: Նշված հիմնավորումներով առաջ է քաշվում երկու պատկերաքանդակների ստեղծման ժամանակի մերձավորության և հեղինակի նույնության ենթադրությունը: Այս առնչությամբ Մ. Հասրաթյանը գրում է. «Գոյություն ունի անվիճելի ժառանգորդական կապ այս երկու ստեղծագործությունների միջև. Արենիի հարթաքանդակը նախորդել է և սկզբնօրինակ է ծառայել Նորավանքի գավիթի նույն թեմայով ավելի կատարյալ մշակված բարձրաքանդակի համար»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ք. Ավետիսեան, նշվ. աշխ., էջ 110-120: Ուշագրավ է նաև Վ. Ղազարյանի տեսակետը (տե՛ս Ա. Աղասյան, Հ. Հակոբյան, Մ. Հասրաթյան, Վ. Ղազարյան, Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009, էջ 114-116), տես նաև՝ Ioanna Rapti, Displaying the Word: Words as visual signs in the Armenian architectural decoration of the monastery of Noravank, Viewing inscriptions in the Late Antique and Medieval World, Edited by Antony Eastmond, Cambridge, 2015, 191-195.

<sup>2</sup> Մ. Հասրաթյան, Հայ ճարտարապետության..., էջ 62: Քանդակներին անդրադարձել է նաև Պատրիկ Դոնապետյանը, հիմնականում դրանց ոճական զուգահեռները փնտրելով Նորավանքին մոտ և բավական հեռու հուշարձաններում, իսկ դրանց մոտավոր ժամանակը համարելով 13-րդ

Այնուհետև անդրադարձ է կատարվում գավթի մուտքից վեր գտնվող լուսամուտը պսակող քանդակին, որի կենտրոնում ներկայացված է Հայր Աստծո խոշոր պատկերը, մի բան, որը հայ միջնադարյան քանդակագործության մեջ բացառիկ է: Ենթադրվում է, որ գավթի արևմտյան պատը վերակառուցվել է (դրա մասին են վկայում նաև շինարարական որոշ մանրամասներ), հավանաբար, տուժած լինելով երկրաշարժից, որի առնչությամբ վկայաբերվում է Մոմիկի վիմագիրը Արենիում՝ թե «Շարժ եղե»<sup>1</sup>, և ի վերջո գավթի այդ հատվածի վերակառուցումն ու պատկերաքանդակները վերագրվում են Մոմիկին: Այս ամենն, իհարկե, միանգամայն տրամաբանական է:

Գավթի քանդակներն ուղեկցվում են արձանագրություններով, որոնք օգնում են բացահայտելու դրանց իմաստը և փոխադարձ կապը: Ըստ այդմ՝ «քարապատկեր պատմությունը» սկսվում է վերևից: Հայր Աստված վեր բարձրացրած աջով օրհնում է, իսկ ձախ ձեռքին Ադամի գլուխն է, որի վրա իջնելով, կտուցով նրա շուրթերին է հպվում աղավնակերպ Սուրբ Հոգին (նկ 19): Հետաքրքիր է, որ Ադամին շունչ ու կենդանություն հաղորդելուց հետո, երկրորդ անգամ պատկերված աղավնակերպ Սուրբ

դարի վերջերը, և ըստ այդմ՝ Արենիի քանդակում տեսնելով Նորավանքի ազդեցությունը (Դոնապետյան Պ., Նորավանքի քանդակագործական մի հուշարձանի ոճական առանձնահատկությունները և ստեղծման ժամանակը, «Լրաբեր», 1979, N 11, էջ 94-104): Հարկ է նշել, որ Նորավանքի գավթի և Արենիի քանդակների համեմատության ժամանակ, սովորաբար նկատի է առնվում հիմնականում վերջինիս դռան՝ Աստվածամոր և Մանկան քանդակը, մինչդեռ նույն ճարտարապետաքանդակագործին՝ Մոմիկին են պատկանում նաև եկեղեցու ներսում՝ առագաստների վրա եղած՝ ավետարանիչների խորհրդանիշների քանդակները (հրեշտակ-մարդ, եգ-ցուլ, այլուժ, արծիվ), որոնք իրենց ընդգծված ծավալներով տարբերվում են դռան համեմատաբար հարթ մակերեսով քանդակից և ավելի մոտ են Նորավանքի քանդակներին: Կարծում ենք, որ իրավացի է Ստ. Մնացականյանը, երբ Արենիի դռան քանդակի «որոշ հարթային բնույթը, միտումնավոր կերպով ուժեղ ռելիեֆից խուսափելը» պայմանավորում է շքամուտքի ճարտարապետական ձևով և «ընդհանուր զուսպ, հարթային մշակումով» (Ս. Մնացականյան, Վարպետաց վարպետներ, էջ 157):

<sup>1</sup> Հնարավոր է, որ Արենիի արձանագրության մեջ պատահական չէ Մոմիկի գրած՝ վիմագրերի համար անսովոր, հիշատակարանային բնույթի այդ տեղեկությունը: Ստ. Մնացականյանը այս երկրաշարժի փաստով է պատճառաբանում Նորավանքի գավթի ու Սպիտակավոր Ս. Աստվածածնի գմբեթի վերականգնումը, գրելով՝ «1321 թվականին Մոմիկը ավարտում է Արենիի եկեղեցին, և նույն այդ ժամանակ էլ ուժեղ երկրաշարժը ցնցում է ամբողջ Վայոց ձորը» (Ս. Մնացականյան, Վարպետաց վարպետներ, էջ 158): Երկրաշարժի մասին հիշատակումը, իր նորաշեն կառույցի ամրությունը փաստելուց բացի, Մոմիկի համար գուցե անհրաժեշտ էր, որպես մի «հուշում» այդ շրջանում եկեղեցիներում իրականացվող կամ իրականացվելիք վերականգնումների մասին:





Նկ. 19 Հայր Աստծո պատկերաքանդակը Նորավանքում:

Հոգին հետադարձ թռիչքով վերադառնում է Հայր Աստծո մոտ (պատկերված է նրա մորուքի մեջ մխրճված)<sup>1</sup>:

Պատկերաքանդակի աջ կողմում՝ շրջանակին մոտ դեպի Հայր Աստված շրջված մի հրեշտակ է, որոնց միջև մի քանի տողով գրված է խոշորատառ վիմագիրը. «ՀԻՆԱԻՈՒՐՑՆ Ա(ՍՏՈՒԱ)Ծ ԸՆԴ ՍՏԵՂԾԻԼՆ ԱԴԱՄ ՆՈՐՈԳԵՑԱԻ ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿԻՐ, ՈՐ ՄԻՇՏ ԱԻՐՀՆԵՆ ԶԱ(ՍՏՈՒԱ)Ծ» (արձ. Հ<sup>մ</sup> 33): Զախ կողմում՝ Հայր Աստծո աջի ներքևում քանդակված է Խաչելությունը. Քրիստոսի երկու կողմում Աստվածամայրն է և Հովհաննեսը (սիրելի աշակերտը), կից գրված են նրանց անունները, իսկ տեսարանի ներքևում՝ ձեռքը խաչված Հիսուսին մեկնած մի կերպար, որի մոտ գրված է «ԴԱՆԻԷԼ»: Փաստորեն այս տեսարանում առկա են Սուրբ Երրորդության երեք անձերը, միաժամանակ կարելի է տեսնել նաև Քրիստոսի՝ որպես «նոր Ադամի» հանդես գալու իրողությունը:

<sup>1</sup> Մ. Հասրաթյան, Հայ ճարտարապետության..., էջ 61:



Նկ. 20 Աստվածամայրը Մանկան հետ քանդակը Նորավանքում:

Հայր Աստված «Հինաուրցն» է կոչվում Դանիել մարգարեի տեսիլքում. «Տեսանէի մինչեւ աթոռք անկանէին, եւ Հինաուրցն նստէր, հանդերձ նորա սպիտակ իբրեւ զծիւն» (Դանիել, է, 9), «Տեսանէի ի տեսլեան գիշերոյ՝ եւ ահա ընդ ամպս երկնից իբրեւ որդի մարդոյ գայր՝ եւ հասանէր մինչեւ ի Հինաուրցն, եւ մատուցաւ առաջի նորա: Եւ նմա տուաւ իշխանութիւն եւ պատիւ եւ արքայութիւն. եւ ամենայն ազգք եւ ազինք եւ լեզուք Նմա ծառայեցեն. եւ իշխանութիւն Նորա՝ իշխանութիւն յաիտենական, որ ոչ անցանէ, եւ թագաւորութիւն Նորա ոչ եղծանիցի» (Դանիել, է, 13-14): Քանդակի համար սպիտակավուն քարի ընտրությունը, կարծում ենք, պայմանավորված է Դանիելի տեսքստում Հայր Աստծո հանդերձի գույնի մասին նշումով (սպիտակ իբրեւ զծիւն), (նկ. 73): Իսկ երկրորդ քաղվածքը իմաստային առումով անմիջականորեն կապվում է քանդակի ներքևում գտնվող՝ «Աստվածամայրը Մանկան հետ» պատկերաքանդակի վիմագրի բովանդակության հետ:

Այստեղ հիմնական արձանագրությունը պատկերաքանդակը վերևից երիզող կամարի վրա է և մի քանի բառ՝ ստորին հորիզոնական մասում (նկ. 20, 42): Բայց երկու համառոտագրություն կա նաև բուն քանդակի վրա. ձախ կողմում պատկերված է դեպի Աստվածամայրը թեքված լու-

սապսակով մի կերպար, որի շուրթերից սկիզբ են առնում զարդաքանդակներին միահյուսված երկու բառ՝ «ՁԱՅՆ ԲԱՌ»: Ըստ Մ. Հասրաթյանի, այստեղ պատկերված է Հովհաննես Մկրտիչը և համառոտագրված է Աստվածաշնչյան հայտնի խոսքը՝ «ՁԱՅՆ ԲԱՌԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ»<sup>1</sup>: Հովհաննես Մկրտիչն ասում է. «Ես՝ ձայն բարբառոյ յանապատի. ուղիղ արարէք զճանապարհն Տեառն, որպէս ասաց Եսայի մարգարէ» ( Յովհ. Ա, 23, հմմտ. Ղուկաս Գ, 4): Սակայն հնարավոր է, որ այստեղ հենց Եսայի մարգարեն է պատկերված, քանի որ քանդակը շատ նման է հանդիպակաց անվանակիր կերպարին (միանման են դիմագծերն ու խոպոպավոր մազերը), որը աջ ձեռքով ցույց է տալիս Աստվածամորն ու Մանկանը իսկ ձախով պահում է մագաղաթագալարի ծայրը, որին գրված է. «ՀԱՅ ԿՈՅՍ. ԵՍԱՅԻ» («ՀԱՅ»-ը հավանորեն պիտի կարդայ «Ա-ՀԱՅ», այս մասին տե՛ս վիմագրերի բաժնում, արձ. Հ<sup>մ</sup> 32): Դժվար չէ կռահել, որ ինչպես քանդակի ձախ կողմում, այնպես էլ այստեղ, գործ ունենք Եսայի մարգարեի մեկ այլ կանխատեսման համառոտագրության հետ. «Վասն այդորիկ տացէ ձեզ Տէր ինքնին նշան. **Ահա կոյսն յղասցի՝ եւ ծնցի որդի...**» (Եսայի, է, 14)<sup>2</sup>:

Սույն պատկերաքանդակին վերաբերող գրականության մեջ ուշադրության չեն արժանացել Մանկան ազդրից ներքև քանդակված զոհական հորթի (զուարակ) և ոտքերի տակ եղած թռչնի՝ տատրակի պատկերները, որոնք ըստ արվեստաբան Ավետ Ավետիսյանի դիտարկման ներկայացնում են Հին Ուխտում ընդունված զոհաբերվող կենդանիներին և այս պատկերում խորհրդանշում են Հիսուսի հետագա կյանքն ու զոհաբերությունը: Հետաքրքրական է, որ Եղեգիսի Չորաց տաճարի բարձունքի հարավարևմտյան ստորոտում գտնվող որմնափակ խաչքարերի վերնամասում եղած «Աստվածամայրը Մանկան հետ» (1273 թ.) քանդակում նույնպես Մանկան ոտքերի ներքևում կարելի է տեսնել զոհաբերության տատրակը (նկ. 21): Իսկ աղավնակերպ Սուրբ Հոգին պատկերված է ար-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 60-61:

<sup>2</sup> Այս համատեքստում «ԱՅ ԿՈՅՍ» հատվածը կարելի է վերծանել «Ահայ կոյսն»: Ինչպես ստորև 1292 թ. Մոմիկի հիշատակարանի ուսումնասիրության մեջ կտեսնեք, այնտեղ նա «ահա» բառն օգտագործել է «ահայ» սխալագրությամբ (տե՛ս նկ. 63):

ծիվ հիշեցնող խոշոր թռչնի տեսքով՝ Աստվածամոր գլխավերևում (լուսապսակի վրա կանգնած)<sup>1</sup>, մինչդեռ Նորավանքում այն ներառված է Աստվածամոր լուսապսակի մեջ:



Նկ. 21 Աստվածամայրը Մանկան հետ քանդակը Եղեգիսում (1273 թ.):

Այժմ ծանոթանանք բուն վիմագրին: Կամարի վրա գրված է. «ԱՅՍ Է ԱՌ ԻՄ: ԱԻՐՀՆԵԱԼ Է ԱՀԵՂ ԱՆՈՒՆՆ Ա(ՍՏՈՒԱ)Ծ Ի ԾԱԳԱՅ ՄԻՆՉ Ի ԾԱԳԱ ԾԱԳԻՆ, ՈՐ ՈՉ Հ», որից հետո՝ պատկերաքանդակի ստորին մասում հորիզոնական տողով շարունակված՝ «ԱՏ ԵՒ ՈՉ ՎՃ(ԱՐ)» (արձ. Հ<sup>մ</sup> 32): Տողերը դիտմամբ ենք առանձնացրել, քանի որ վիմագրի հրատարակությունների մեծ մասում այս վերջին հատվածն անտեսվել է կամ առանձին գրություն հասկացվել, և միայն վիմագրագետ Ս. Ավագյանն է այն ամբողջության մեջ վերծանել<sup>2</sup>: Սակայն ցայժմ իմաստին չեն անդրադարձել: Փորձենք թարգմանել. «ԱՅՍ Է ԻՆՉ ՄՈՏ:

<sup>1</sup> Քանդակագործական արվեստի տեսանկյունից պարզ, հարթային մշակմամբ այս պատկերաքանդակը հետաքրքրական է մի շարք առումներով: Այստեղ նույնպես առկա է ֆոնի զարդապատկերներին միահյուսված գրություն («Ք(ՐԻՍՏՈ)Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ»), Մանուկը Աստվածամոր աջ ձևկանն է նստած (ի տարբերություն Արենիի և Նորավանքի) և նրանք Չորեքկերայան աթոռի վրա են:

<sup>2</sup> Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 274-277, նույնի, Վիմագրական պրպտումներ, Երևան, 1986, էջ 123-132:



ՕՐՀՆՎԱԾ Է ԱՀԵՂ ԱՍՏՎԱԾ ԱՆՈՒՆԸ, ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ ԾԱՅՐԵ-  
ԾԱՅՐՆ Է, ՈՐ ՈՉ ՀԱՏՎՈՒՄ Է, ՈՉ ԷԼ ԱՎԱՐՏՎՈՒՄ»:

Դժվար չէ նկատել, որ այս գրությունն իմաստային առումով կապվում է գավթի վերնամասի քանդակում ակնարկված Դանիելի մարգարեության համապատասխան հատվածի հետ. «...եւ իշխանութիւն Նորա՝ իշխանութիւն յաւիտենական, որ ոչ անցանէ...» (Դանիել, Է, 13-14): Այսպիսով, ինչպես վերևի, այնպես էլ ներքևի պատկերաքանդակներում, չնայած սահմանափակ տարածքին, զուգադրված են Հին և Նոր Կտակարանների անձանց պատկերներն ու թեմաները: Թե՛ քանդակից և թե՛ գրություններից ակներև է, որ դրանց հեղինակն օժտված է եղել աստվածաբանական ու պատկերագրական հարուստ գիտելիքներով, քանի որ ստեղծել է իրոք բազմիմաստ և խորհրդավոր մի ստեղծագործություն:

Հետաքրքիր է պարզել, թե պատկերաքանդակը բոլորակող կամարի բավական լավ պահպանված արձանագրությունն ինչո՞ւ է ցայժմ տարընթերցումներ ունեցել: Գոյություն ունի վիմագրերի կրկնվող բնույթ ունեցող (ստերեոտիպ) ընկալում, հատկապես թվականների (տարեթվերի) պարագայում, որոնք նշվում են կամ արձանագրությունների սկզբում կամ՝ վերջում: Սույն արձանագրության պարագայում այդ սովորական ընկալումը գործել է գրեթե անվրեպ և քանի որ սկզբում թվական չկա, կամարի գրության վերջին հատվածը հասկացվել է որպես թվական: Նկատենք նաև, որ կամարի վրայի վերջին երկու տառն ավելի լայն են գծագրված և աչքի են զարնում: Վիմագրի առաջին հրատարակիչ Ս. Զալայանցն այս մասում կարդացել է. «...ի ծագս ծագի լոյս, **թուին ՉՀ**»<sup>1</sup>: Նրանից քաղելով Ղ. Ալիշանը հրատարակել է՝ «...ի ծագս ծագի ? լոյս. **թուին ՉՀ**»<sup>2</sup>: Ե. Լալայանը տեղում արտագրել է՝ «...ի ծագս ծագի լոյս. **թվին ՉՀ** (=1321)»<sup>3</sup>: Եվ վերջապես, հմուտ վիմագրագետ Ս. Բարխուդարյանի մոտ արձանագրության ավարտի բառանջատումն արված է հետևյալ կերպ. «ՄԻՆՉ Ի ԾԱԳՍ ԾԱԳ Ի ՆՈՐՈ :**ՉՀ**: (1321)»<sup>4</sup>:

<sup>1</sup> Ս. Զալայանց, Ճանապարհորդություն, էջ 171:

<sup>2</sup> Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 187:

<sup>3</sup> Ե. Լալայան, Վայոց-ձոր. նշանաւոր վանքեր, «Ազգագրական հանդես», XXVI գիրք, Թիֆլիս, 1916, էջ 60:

<sup>4</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 222, Հ<sup>4</sup> 705:

Այս վերձանումների հիման վրա ճարտարապետության պատմաբաններից շատերը գավթի վերակառուցման և քանդակների ստեղծման թվական են կարծել 1321-ը (դրա հիման վրա ենթադրություն անելով գավթի վերակառուցման ժամանակի ու քանդակի հեղինակի ինքնության վերաբերյալ): Ինչպես նշեցինք, Ս. Ավագյանը պարզել է, որ այս վիմագրում թվական ընդհանրապես չկա: Սակայն դրանից հետո, նա ավելի հեռուն գնացող ենթադրություն է անում, մերժելով քանդակների՝ գավթի կառուցումից (1261 թ.) ավելի ուշ արված լինելու և Մոմիկի, դրանց հետ կապ ունեցած լինելու հնարավորությունը<sup>1</sup>: Ս.




Նկ. 22 Կամարի վիմագրի ավարտական հատվածը:

Ավագյանի տեսակետին ու վիմագրի ճիշտ վերձանությանը ծանոթ Մ. Հասրաթյանը գտնում է, որ պատկերաքանդակների տեղադրումը եղել է գավթի կառուցումից ավելի ուշ: Որոշակի վերլուծությունից հետո նա գրում է. «Մեր կարծիքով Նորավանքի գավթի շքամուտքի երկու բարձրաքանդակն էլ ստեղծվել են XIV դ. 30-ական թվականներին, իսկ դրանց հավանական հեղինակը Մոմիկն է կամ նրա աշակերտը»<sup>2</sup>:

Այնուամենայնիվ, հարց է առաջանում, թե արդյո՞ք պատահականություն է կամարի վրայի բնագրի ավարտը հենց ՉՀ տառերով, որոնք թվական են ընկալվել (նկ. 22): Ինչպես վերևում նշեցինք, Նորավանքից ոչ հեռու գտնվող Արենիի եկեղեցու արձանագրության պաշտոնական մասն ավարտվում է հենց ՉՀ (1321) թվականի նշումով, որին հաջորդում են ճարտարապետի անունը՝ «ՄՈՄԻԿ ՎԱՐԴ(ՊԵՏ)» (նկ. 23):

<sup>1</sup> Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, էջ 276, նույնի՝ Վիմագրական պրպտումներ, էջ 127-132:

<sup>2</sup> Մ. Հասրաթյան, Հայ ճարտարապետության..., էջ 62:



Նկ. 23 Արենիի արձանագրության գրչանկարը (Դիվան, III, էջ 294, լրացված):

Մեր կարծիքով, չնայած որ Նորավանքի գավթի պատկերաքանդակները Մոմիկին վերագրելու հիմնավորումներն ավելի քան բավարար են, սակայն դրանց կարելի է գումարել նաև արձանագրության մեջ նրա բանեցրած հնարքը, տեքստի յուրօրինակ տեղաբաշխումը կամարի վրա, որպեսզի այն ավարտվի ՉԿ տառերով: Նպատակը հասկանալի է, եթե ժամանակը հայտնի է, ապա բոլորի համար պարզ է դառնում, թե ով էր Նորավանքի այդ ժամանակի նշանավոր վարպետը: Եթե այդպես է, ապա պետք է ընդունել, որ վիմագիրը կազմողը հասել է իր նպատակին, քանի որ անգամ փորձառու վերձանողները կամարի արձանագրության ավարտին տեսել են ՉԿ՝ 1321 թվականը և անմիջապես հիշել են Մոմիկի անունը:

Հավանական է, որ Մոմիկն այս «վարպետական» հնարքը կատարել է պատկերաքանդակների պատվիրատուի գիտությամբ, որը, ժամանակից դատելով՝ Հովհաննես Օրբելը պիտի լիներ: Ինչպես երևում է, նրանք բավական մտերիմ են եղել, եթե հիշենք, որ երկուսն էլ Գլաձորի շրջանա-

վարտներ էին, իսկ 1302 թ. միասին ձեռագիր են ստեղծել Ստեփանոս Օրբելյանի համար, մեկը որպես գրիչ, մյուսը՝ նկարիչ: 1304 թ. Հովհաննես Օրբելի պատվերով Մոմիկը Նորավանքում խաչքար է կերտել, իսկ հետո Արենիում եկեղեցի կառուցել և այս երկուսի վիմագրերում իր անունը («Մոմիկ վարդպետ») հիշատակելու իրավունք է ստացել: Այնպես որ, գավթի մուտքի արձանագրության՝ որոշ իմաստով «գաղտնագրված» թվականը, միաժամանակ խոսում է և՛ վարպետի, և՛ նրա պատվիրատուի մասին:

Արձանագրության մեր մեկնաբանությունը, իհարկե, ներկայացվում է որպես վարկած, բայց որ գավթի քանդակները 14-րդ դարի սկզբին են պատկանում, ակնհայտ է նաև պատկերագրական ու ոճական տեսանկյունից:

Գավթի քանդակների վերաբերյալ խոսքն ավարտելուց առաջ համառոտ անդրադառնանք նաև Սպիտակավոր Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի ներսում եղած Հայր Աստծո քանդակապատկերին, որը Նորավանքում եղած քանդակի հորինվածքային ձևի կրկնությունն է: Գմբեթի կենտրոնում՝ բոլորակի մեջ պատկերված Հայր Աստված վեր բարձրացրած աջ ձեռքով օրհնում է, ձախ ձեռքին Ադամի գլուխն է, որի վրա իջնում է աղավնակերպ Սուրբ Հոգին: Բոլորակի ներսում՝ պատկերից ձախ խոշոր տառերով գրված է «Տ(Է)Ր», իսկ աջ կողմում՝ «Ա(ՍՏՈՒԱ)Ծ» (վիմագրության «Դիվանում» չի ներառված): Բոլորակի չորս կողմում՝ չորս ավետարանիչների խորհրդանիշների գլխաքանդակներն են (նկ. 24):

Մասնագիտական գրականության մեջ այս պատկերը հիշատակում է միայն Մ. Հասրաթյանը Նորավանքի քանդակների ծագումնաբանությանն անդրադառնալիս: Նա գրում է. «...Սպիտակավոր Աստվածածին եկեղեցու (1321 թ.) բարձրաքանդակները... ավելի վաղ են ստեղծված, որովհետև այստեղ Ադամի ծնունդը պատկերող քանդակն ավելի պարզունակ է և նույնպես սկզբնօրինակ է եղել Նորավանքի բարձրաքանդակի համար, որտեղ այդ թեման կերտված է ավելի կատարյալ, ազդու, ընդհանուր բարդ հորինվածքով և ավելի ցցուն ծավալով»<sup>1</sup>:

<sup>1</sup> Մ. Հասրաթյան, Հայ ճարտարապետության..., էջ 62: Հարկ է նշել, որ գրականության մեջ (օրինակ՝ հայկական հանրագիտարաններում) նշված է, թե պատկերվածը Քրիստոսն է, Ադամի քանդակը չեն տեսել: Սպիտակավորի սույն քանդակի լուսանկարն առաջին անգամ հրատարակվել է մեր գրքում (Կ. Մաթևոսյան, Մոմիկ, էջ 45, 76):



Հարկ է նշել, որ Սպիտակավորում քանդակի տեղն այնքան փոքր է, որ այլ պատկերներ այդտեղ դժվար կլինեն տեղավորել, և ըստ էության, արվեստագետն այն արդյունավետ է օգտագործել: Նշենք, որ Ս. Բարխուդարյանն այս եկեղեցին վերագրում է Մոմիկին և այդ տեսակետը հիմնավորող մի քանի փաստարկ է բերում<sup>1</sup>, իսկ Ստ. Մնացականյանը կարծում է, որ 1321 թ. Մոմիկը վերանորոգել է միայն եկեղեցու գմբեթը<sup>2</sup>:



Նկ. 24 Սպիտակավորի գմբեթի ներսում  
Հայր Աստծո քանդակը:

<sup>1</sup> Դիվան հայ վիճագրության, պր. II, էջ 95:

<sup>2</sup> Ս. Մնացականյան, Վարպետաց վարպետներ, էջ 158:

Մենք այս հարցում ձեռնպահ ենք մնում որոշակի տեսակետ արտահայտելուց, քանի որ դրա համար մանրակրկիտ ուսումնասիրություն է անհրաժեշտ, որն առայժմ չունենք: Համենայն դեպս, Սպիտակավորի հարդարանքի երկու գլխավոր տարրերը՝ մուտքի ճակատի «Աստվածամայրը Մանկան հետ» ուռուցիկ քանդակը՝ առանց որևէ զարդային ֆոնի և արևելյան ճակատի տպավորիչ, մեծ ասիմետրիկ խաչը՝ Մոմիկի ոճով չեն, բայց դրանց հեղինակն, անկասկած, տաղանդավոր և համարձակ արվեստագետ է եղել: Այդուհանդերձ, Մոմիկի գործունեության հնարավորությունը կամ թեկուզ խորհրդատվությունը Սպիտակավորում չենք բացառում, մանավանդ նկատի ունենալով, որ Ս. Աստվածածին եկեղեցին կառուցող Էաչի Պոռչյանը և ժամանակի Սյունյաց մետրոպոլիտ և Մոմիկի հովանավոր Հովհաննես Օրբելը մորաքրոջ որդիներ էին՝ համապատասխանաբար Թածեր և Նանա քույրերի զավակները<sup>1</sup>:

Շեռաքրքրական փաստ է նաև այն, որ թեև Սպիտակավորի կառուցողի անունից գրված ու նաև նվիրատվությունների մասին վկայող հյուսիսային պատի մեծ վիճագիրը 1322 թվականից է, բայց դրանից անկախ հարավային պատին մի առանձին քարի վրա գրված է «ԹՎ(Ի)Ն ԶՀ»<sup>2</sup> որն էլ (1321 թ.) համարվում է եկեղեցու կառուցման թվականը: Արդյո՞ք սա նույնպես մոմիկյան մի «հուշում» չէ:

Անկախ ամեն ինչից, հայ արվեստում սակավադեպ հանդիպող Հայր Աստծո քանդակի պատկերագրական միևնույն հորինվածքի կրկնությունը Նորավանքում և Սպիտակավորում խիստ ուշագրավ երևույթ է: Կարծում ենք, որ ինչպես այս վանքերի, այնպես էլ վայոցձորյան միջնադարյան քանդակագործական ժառանգությունն ընդհանրապես կարոտ է նորովի, համալիր և մանրակրկիտ հետազոտության, որը բազմաթիվ հարցերի պատասխաններ կտա:

<sup>1</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 859:

<sup>2</sup> Դիվան հայ վիճագրության, պր. III, էջ 96:

## ԲՈՒՐԹԵԼԱՇԵՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Հայ ճարտարապետության պատմության մեջ ընդունված տեսակետ է, որ Մոմիկի ճարտարապետական ստեղծագործական մտքի ծնունդն է Նորավանքի համալիրի հարավային կողմում<sup>1</sup> Բուրթել իշխանի կառուցած սլացիկ ռոտոնդայով պսակված երկհարկ եկեղեցի-դամբարանը: Չնայած այդ տիպի կառույցներ հիմնվել են նաև ավելի վաղ (Գոշավանք, Եղվարդ և այլն), սակայն Բուրթելաշեն Ս. Աստվածածնի ծավալատարածական կուռ լուծումը նորություն էր հայկական ճարտարապետության մեջ: Ակադեմիկոս Վ. Հարությունյանն այս եկեղեցին համարում է «միջնադարյան հայ դասական ճարտարապետության կարապի երգը»<sup>2</sup>:

Ս. Աստվածածին եկեղեցի-դամբարանն օժտված է գեղարվեստական արտակարգ գրավչությամբ ու արտահայտչականությամբ: Փառահեղ է հատկապես արևմտյան ճակատի շքեղ ձևավորումը: Գետնից մինչև երկրորդ հարկի շքամուտք տանող աստիճանները, յուրօրինակ եռանկյունաձև շրջանակ կազմելով առաջին հարկի մուտքի համար, զուգակցվելով քանդակազարդ ճակատակալ քարերի ու զարդաքանդակ այլ մանրամասների հետ, ստեղծում են ճարտարապետական անկրկնելի կերպար<sup>3</sup>:

Մ. Հասրաթյանը նկատել է, որ 1292 թ. նկարագրող Լվետարանի լուսանցազարդերից մեկում Մոմիկը պատկերել է եկեղեցական երկհարկանի նման մի կառույց, փաստորեն, ունեցել է մտահղացում, որը հետո իրականացրել է Նորավանքում (նկ. 25)<sup>4</sup>: Բուրթելաշեն Ս. Աստվածածին

<sup>1</sup> Եկեղեցու երկայնական առանցքը մոտ 20 աստիճանով շեղված է համալիրի մյուս եկեղեցիների արևելք-արևմուտք ուղղությունից, որի հետևանքով այն մյուս կառույցների նկատմամբ փոքր-ինչ շեղ է տեղադրված: Դա կարող է պայմանավորված լինել նրանով, թե տարվա ո՞ր ամսին է տեղի ունեցել հիմնարկեքը, քանի որ այդ արարողության ժամանակ տեղի ունեցած արևածագով էր որոշվում և կառույցի հիմքի հատվածում նշվում արևելյան կողմը:

<sup>2</sup> Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 328:

<sup>3</sup> Բուրթելաշեն եկեղեցու ճարտարապետությանը բազմաթիվ ուսումնասիրողներ են անդրադարձել: Դրանց թվում առանձնանում են Մ. Հասրաթյանի վերը նշված հրապարակումները և եկեղեցու վերականգնող ճարտարապետ Հրաչյա Գասպարյանի հոդվածը (Հ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 68-75):

<sup>4</sup> Մ. Հասրաթյան, Հայ ճարտարապետության..., էջ 64-65:

եկեղեցու վրա պահպանվել է նրա կառուցման թվականը՝ 1339, իսկ Մոմիկի հիշատակի համար Նորավանքում կանգնեցված խաչքարի արձանագրության մեջ գրված է արվեստագետի մահվան թվականը՝ 1333 թ.՝ «ՅԻՇԵԱ ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ԶՄՈՄԿԱ ՀՈԳԻՆ ԵՒ ՈՂՈՐՄԵԱ :ԹՎ ՉՁԲ: (1333)»<sup>1</sup>: Սրանից ելնելով՝ ուսումնասիրողները Բուրթելաշենի ճարտարապետի ինքնության մասին տարբեր տեսակետներ են առաջ քաշել, որոնցից առավել տարածվածի համաձայն՝ Մոմիկի նախագծով սկսվել է շինարարությունը, բայց արվեստագետի մահվան պատճառով այն շարունակել ու ավարտել են նրա աշակերտները:

Սակայն կան որոշ հանգամանքներ, որոնք թույլ են տալիս փաստարկված ենթադրություն անելու եկեղեցու շինարարության սկզբի մասին: Բուրթելաշենի հյուսիսարևմտյան անկյան մոտ, կառույցին կից պատրաստված պատվանդանի վրա կանգնեցված է մի խաչքար, որը Բուրթելը նվիրել է իր 1318 թ. սպանված եղբոր՝ Բուդտայի հիշատակին: Այս փաստը վկայակոչելով Ս. Սաղումյանը գրում է. «Համաձայն սովորույթի, խաչքարը, ան-



Նկ. 25 Երկհարկանի եկեղեցու պատկերով լուսանցազարդ (Մոմիկի 1292 թ. Ավետարանից):

շուշտ, պատրաստված-տեղադրված պետք է լինի 1318 թ. անմիջապես հետո և ոչ անպայման եկեղեցին կառուցելու ընթացքում (1339 թ.): Այս պարագայում ենթադրելի է, որ Բուրթելաշեն տաճարի տեղում եղել է մի այլ շինություն, որին առընթեր կանգնեցվել է կոթողը: Այնուհետև այդ ենթադրելի շինությունը քանդվել է ու տեղը բարձրացել այդ հրաշակերտը,

<sup>1</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 244: Որոշ հետազոտողներ փորձել են արձանագրության միավորը Ը (8) կարդալ, որով Մոմիկի մահվան թվականը դառնում է 1339 և լուծվում է նրա՝ Բուրթելաշենի ճարտարապետ լինելու հարցը: Սակայն միավորը Բ (2) է (այս մասին տե՛ս նաև Ս. Ավագյան, Վիմագրական պրպտումներ, էջ 127):

իսկ խաչքարը մնացել է իր նախկին տեղում»<sup>1</sup>: Վաստակաշատ վիմագրագետի դիպուկ դիտարկումը, կարծում ենք, ավելորդ կերպով բարդացվել է ինչ-որ կարծեցյալ շինության մասին ենթադրությամբ: Նախ, Բուղտայի խաչքարը չէին դնի որևէ պատահական շինության կողքին. այն պետք է եկեղեցի լիներ: Երկրորդ, Բուղտայի խաչքարի պատվանդանը հարմարեցված է եկեղեցու պատի ստորին աստիճանաձև շարվածքին, այսինքն, այն ի սկզբանե այդպես է դրվել (նկ. 26, 76): Երրորդ, ոչ միայն եկեղեցու հյուսիսային, այլև հարավային կողմում, ճիշտ նույն կերպ պատին հարմարեցված պատվանդանին դրված է մեկ այլ բարձրարվեստ խաչքար, այսինքն, սրանց տեղադրումը ծրագրված, մտածված կերպով է արված, հետևաբար դրանք դրվել են հենց եկեղեցի-դամբարանին պատակից (նկ. 27, 77):

Մեր կարծիքով, Բուղտայի խաչքարի կանգնեցման ժամանակից ելնելով (նկատի ունենալով նրա մահը՝ 1318-ին)՝ կարելի է երկու ենթադրություն անել. կամ Բուրթելաշենի կառուցումը սկսված է եղել արդեն այդ ժամանակ կամ սկսվել է հենց այդ ժամանակ: Ի դեպ Բուղտայի գերեզմանը Նորավանքում՝ Սմբատի դամբարանում է, հետևյալ տապանագրով. «[ԵՂԱԽԻՐ ՄԵԾ] ԲԻԻՐԹԷԼԻՆ, ԳԵՂԱՀՐԱՇՆ ՊՈՒՂՏԱՅԻՆ, ՈՐ ԵՂԻՏԱՍԱՐԴ ՀԱՍԱԿԻ ՅԵՏ ՅՈՒՆՎ ՔԱՋ ՄՐՑՄԱՆՑ ՏԻԳՂԱԽՈՅԵԱԼ ԶԱՆԴԱՌԱՄՆ ԸՆԿԱԼԱԻ ԶՊՍԱԿ ԹՎ(ԻՆ) :ԶԿԷ: (1318)» (արձ. Հ<sup>4</sup> 101): Այստեղից պարզ չէ, թե Բուղտան ինչ հանգամանքներում է զոհվել, իսկ գրականության մեջ այս



Նկ. 26 Բուղտայի խաչքարի եկեղեցուն պատակից պատվանդանը:

<sup>1</sup> Ս. Սաղումյան, Նորահայտ վիմագրեր Նորավանքից, էջ 103:



Նկ. 27 Բուրթելաշենը 1950-ական թթ. (պատվանդանից ընկած Բուղտայի խաչքարը):

մասին նշված է մի սխալ տեղեկություն<sup>1</sup>: Սակայն, բարեբախտաբար, պահպանվել է 1319 թ. Հերմոնի վանքում գրված ձեռագրի մի արժեքավոր հիշատակարան, որտեղ ի թիվս այլ փաստերի ասվում է. «Այս ամի անկա պատերազմին բարեպաշտ պարոնն [Պա]ղտեն յանաւրէն Խուրումչոյ, զոր եւ նա ըստ արժանւոյն բեւեռեցաւ ի փայտի ի դուռն արքայի»<sup>2</sup>: Այս Խուրումչին կենտրոնական իշխանության դեմ ընդվզած մոն-

<sup>1</sup> Հայոց պատմության նոր հրատարակության մեջ Բուղտայի մահվան մասին գրված է. «Ռազմական գործում քաջ ու հմուտ Բուղտան իր զորախմբով ակտիվ մասնակցում է ինչպես հայրենիքի պաշտպանությանը, այնպես էլ մոնղոլների վարած պատերազմներին և Պոռոջան Էաջի իշխանի հետ զոհվում է հայրենիքից հեռու 1317 թ. դեկտեմբերի 18-ին» (Հայոց Պատմություն, էջ 553-554): Այդտեղ տրվում է հղում ԺԴ դարի հիշատակարաններին, որտեղ համապատասխան էջում նշվում է Էաջի Պոռոջանի մահվան մասին (այդ օրը)՝ «հանգեաւ ի Քրիստոս», առանց այլ տվյալի և որևէ մեկ այլ մարդու անվան հիշատակության (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 128):

<sup>2</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. է (յօրինեաց Ս. Ճենճեմեան), Վենետիկ, 1996, էջ 496: Այս փաստին առաջին անգամ ուշադրություն է դարձրել Տիգրան Մկրտչյանը, տե՛ս Տ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 16, ծան. 21:



ղոլ զորավար էր, որը ներխուժել էր Սյունիք ու Գեղարքունիք և ավազակությամբ էր զբաղվում<sup>1</sup>: Փաստորեն, հայրենի երկիր ներխուժած օտար հրոսակների դեմ կռվում է զոհվել երիտասարդ Բուղտան:

Չի կարելի բացառել, որ հենց Բուղտայի անժամանակ մահն է եղել դամբարանի վրա աշխատանքը հետաձգելու պատճառը: Բուղտան Բուրթելի կրտսեր եղբայրն էր, և նրա սպանվելը ծաղիկ հասակում, պետք է ծանր տպավորություն թողներ ազգակիցների վրա, և գուցե այդ պատճառով՝ ժամանակից շուտ ընտանեկան դամբարանի շինարարությունն սկսելը համարվել է վատ նշան ու որոշ ժամանակով դադարեցվել է: Կարող էր տեղի ունեցած լինել նաև ճիշտ հակառակը, Բուղտայի սպանվելը պատճառ հանդիսանար, որպեսզի սկսվեր ընտանեկան դամբարանի շինարարությունը հենց 1318 կամ 1319 թ. և սկզբնական փուլում էլ դրվեր խաչքարը: Ի դեպ, կարծում ենք իրավացի է Գարեգին Հովսեփյանը, երբ այս խաչքարի մասին գրում է. «Մոմիկի գործը պիտի լինի»<sup>2</sup>:

Իսկ թե ինչու է եկեղեցի-դամբարանի կառուցումն ուշ ավարտվել, հիմա դժվար է ստույգ ասել: Տևական աշխատանքի պատճառ կարող էր լինել շինարարական բազմաթիվ գործերի համաժամանակյա ընթացքը (օրինակ, այդ ժամանակ կառուցվում էր Արենիի եկեղեցին, քիչ անց հիմնվեց Եղեգիսի Ս. Աստվածածինը): Ի վերջո, աշխատանքների վերջնամասում դրա դանդաղելու մի պատճառ էլ կարող էր վարպետաց վարպետի՝ Մոմիկի մահը լինել 1333-ին:

Հետաքրքրական է, որ Եղվարդի Ս. Աստվածածին երկհարկ եկեղեցի դամբարանը, որը շատ նման է Բուրթելաշենին և՛ ճարտարապետությամբ և՛ հատկապես քանդակային ճոխ հարդարանքով, իշխան Ազիգբեկի և իր կնոջ միջոցներով Շահիկ վարդապետը սկսել է կառուցել 1301 թ., որի մասին է վկայում մուտքի արձանագրությունը, իսկ գմբեթի վրա գրված է եղել «Ի թուին ՉՀԷ (1328) շինեցաւ»<sup>3</sup>, այսինքն, ըստ այդ վիմագ-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 143:

<sup>2</sup> Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, Խ. Բ, Երևան, 1987, էջ 222:

<sup>3</sup> Գ. Յովսեփյան, Խաղթակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 408-409:

րերի, շինարարությունը տևել է 27 տարի: Բուրթելաշենի դեպքում, եթե 1318-ը շինարարության սկիզբ համարենք, ապա կառուցումը տևած պիտի լիներ 21 տարի: Հնարավոր է, որ նման հարդարանք ունեցող կառույցներում ժամանակատար էր հատկապես քանդակազարդման գործը: Նորավանքի պարագայում հարկավոր է նկատի ունենալ նաև այն, որ եկեղեցին կառուցելու համար նրա պարագծով և հատկապես հարավային ու արևմտյան կողմում հողի արհեստական լիցք է կատարվել և ստեղծվել այն բավական մեծ հարթակը, որի վրա հիմնվել է եկեղեցին, դիմացի կողմում ունենալով բավական մեծ, հարթ հրապարակ (նրա կենտրոնական մասում նաև ստորգետնյա պահեստարան է պատրաստվել): Ի դեպ, սա նույնպես Նորավանքի համալիրի յուրահատկություններից մեկն է, երբ ճարտարապետը ոչ թե պարզապես հարմարվել է տեղանքին (լանդշաֆտին), այլ ինքն է ստեղծել կառուցի համար անհրաժեշտ միջավայրը (նկ. 28):



Նկ. 28 Բուրթելաշենը՝ ձեռակերտ հարթության վրա:

Ինչևէ, թվարկված հանգամանքները հաշվի առնելով կարող ենք ասել, որ Բուրթելաշեն Ս. Աստվածածին եկեղեցու շինարարությունը սկս-



վել է առնվազն 1318 թ., Մոմիկի կենդանության օրոք: Հայտնի է, որ 1307 թ. Մոմիկը մետրոպոլիտ Հովհաննես-Օրբելի պատվերով Բուրթել իշխանի համար Նորավանքում ընդօրինակել է մի Ավետարան, բայց նկարագարողումը չի կարողացել կատարել տեսողության վատացման պատճառով: Սակայն այս ձեռագրում նա մի արժեքավոր հիշատակարան է գրել տասնամյակներ անց՝ 1331 թ., Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս-Տարսայիճի (1314-1331) պատվերով, որին ավելի հանգամանորեն կանդադանանք ստորև՝ հիշատակարանների բաժնում: Նշենք միայն, որ այդտեղ Մոմիկն ուշագրավ համեմատություններով մի պերճախոս և փառաբանական ծոն է նվիրել Բուրթել իշխանին ու նրա տիկնոջը՝ Վախախին, որոնց հովանավորությամբ ինքն ապրում ու ստեղծագործում էր Նորավանքում:

### ՆՈՐԱՎԱՆՔԻ ԱՐԾՎԱՔԱՆԴԱԿԸ

Նորավանքի Բուրթելաշեն Ս. Աստվածածին եկեղեցի-դամբարանի մասին մեր խոսքն ամբողջացնելու համար անդրադառնանք նաև նրա քանդակագործական հարդարանքին և մասնավորապես արևելյան պատի վերնամասում գտնվող արծվաքանդակին<sup>1</sup>, որը մինչ այժմ մեկնաբանվել է որպես Օրբելյանների տոհմի զինանշան: Հարկ է նշել, որ եկեղեցու հարդարանքին անդրադարձողները հիմնականում ուշադրություն են դարձրել արևմտյան ճակատին, որը շքեղորեն հարդարված է զարդաքանդակներով և առաջին ու երկրորդ հարկերի մուտքերի ճակատակալ քարերին եղած կերպարային քանդակներով: Դեպի դամբարան տանող առաջին հարկի ճակատաքարին ներկայացված են Աստվածամայրը Մանկան հետ՝ գահի վրա, երկու կողմերում՝ հասակով մեկ, բարեխոսի դիրքով՝ Գաբրիել և Միքայել հրեշտակները: Կառույցի երկրորդ հարկի՝ եկեղեցու մուտքից վեր քանդակված է աջ ձեռքով օրհնող, իսկ ձախում Ավետարան պահած Քրիստոսը (կիսանդրի), որից ձախ (Քրիստոսի աջ

<sup>1</sup> Բուրթելաշեն եկեղեցու վերին հատվածի քանդակելու հետևանքով այս քանդակը հայտնվել էր գետնին, ընկած էր պատի տակ: 1997-1998 թթ. նորոգման աշխատանքների ժամանակ, շրջանակի քարերով հանդերձ խնամքով իրականացվել է քանդակի վերականգնումն իր նախնական տեղում:

կողմում)՝ հասակով մեկ՝ Պետրոս առաքյալն է, մյուս կողմում՝ Պողոս առաքյալը. երկուսն էլ ձեռքերում մագաղաթագալար ունեն (նկ. 74): Բոլոր քանդակներում կերպարներին կից գրված են նրանց անունները՝ փակագրով և «պատիվ» նշանով: Այդպիսի մակագրությամբ է օժտված նաև եկեղեցու ներսում՝ խորանի գմբեթարդի կենտրոնում, փոքր որմնակամարի մեջ տեղադրված Սուրբ Հոգու աղավնակերպ քանդակը:

Նորավանքում կոտորակալ (պատվիրատուների) քանդակախումբ է եղել ռոտոնդայի ճակատային կողմի սյուների վրա, որը մեծապես տուժել է գմբեթի փլվելու հետևանքով: Այնուամենայնիվ, եկեղեցու վերականգնման ժամանակ հնարավոր է եղել այն մասամբ վերականգնել: Կենտրոնում՝ սյան վրա տեղադրված է «Աստվածամայրը Մանկան հետ» քանդակը, ձախ կողմում՝ Բուրթել իշխանն է՝ եկեղեցու մանրակերտով, մյուս կողմում՝ իշխանի որդիներ Բեշքենը և Իվանեն: Հնարավոր է, որ քանդակներ են ունեցել նաև մյուս սյուները:



Նկ. 29 Դամբարանի արևելյան պատի որմնախաչը:

Թվարկված քանդակներից բացի, որոնք հիշատակվում են արվեստաբանական գրականության մեջ, հետաքրքիր քանդակային ձևավորում ունի նաև եկեղեցու առաջին հարկի՝ դամբարանի ներսը: Առաստաղին, կենտրոնական քառակուսի շարվածքի չորս կողմերում ավետարանիչների խորհրդանիշներն են:

Հետաքրքիր է, որ արծվի, թևավոր առյուծի և եզան կողքին Մատթեոսի խորհրդապատկեր մարդը հրեշտակի թևեր չունի, աջ ձեռքով օրհնում է, իսկ կրծքին սեղմած ձախում Ավետարան է պահում (նկ. 78), հիշեցնելով Քրիստոսի նմանօրինակ քանդակը, որը գտնվում է եկեղեցու հյուսիսային պատուհանից վեր, զույգ սերույթների միջև:

Ուշագրավ է դամբարանի արևելյան պատը, որի կենտրոնում քանդակազարդ որմնակամարի տակ մի մեծ խաչ է քանդակված՝ կողքերին ևս երկու փոքր խաչեր: Մեծ խաչաքանդակի վերնամասում եղել է Բարեխոսության քանդակախումբը: Ցավոք, այժմ երեք կերպարներից միայն մեկն է պահպանվել՝ ձախ կողմում, խաչաթևից վեր՝ Աստվածամոր քանդակը: Նրանից աջ և վեր (խաչի գագաթին) Քրիստոսի պատկերի ուրվագիծն է միայն երևում, իսկ ավելի աջ՝ Հովհաննես Մկրտչի քանդակով քարը տեղահանված է (նկ. 29): Բարեխոսության թեման հատուկ է դամբարանային կառույցներին, հանդիպում է նաև խաչքարերի վերնամասում: Այդպիսի որմնանկար է պահպանվել Անիում, Տիգրան Հոնենցի ժայռափոր տապանատանը (13-րդ դ. սկիզբ):

Բուրթելաշենի քանդակային հարդարանքի այլ մանրամասների մեջ չխորանալով, նշենք, որ այն ամբողջովին ներդաշնակ է դամբարանային կառույցի նպատակին՝ ծառայելով այնտեղ հուղարկավորված անձանց հոգու փրկության գաղափարին: Կարծում ենք, որ հենց այս համատեքստում պետք է դիտարկել նաև եկեղեցի-դամբարանի արևելյան ճակատի մոնումենտալ հարդարանքը, որը վերևում արծվաքանդակով ավարտվող՝ ուղղահայաց դասավորված երեք հաջորդական խաչերի մի մեծ կոմպոզիցիա է (նկ. 30): Ներքևում դամբարանի ուղղանկյուն լուսամուտն է, որի վերնամասում զարդագրված է Բուրթելի անունը (նկ. 83), իսկ չորս կողմերում եղած ծաղկանման խաչերը կազմում են առաջին մեծ խաչը:

Դրանից վեր, արդեն եկեղեցու հատվածում, մի ութանկյուն շրջանակ է, որի ներսում աստղազարդ թևերով կազմվում է մեկ այլ հավասարաթև խաչ: Սրանից ավելի վեր, անկյունավոր թևերով հայկական ավանդա-



Նկ. 30 Բուրթելաշենի արևելյան ճակատը:

կան խաչապատկեր է, որի ներսում՝ խաչաթևերի հատման տեղից ներքև բացվում է եկեղեցու արևելյան միակ լուսամուտը: Այս խաչից վեր՝ որսը ճանկած արծվի քանդակն է՝ վերնամասում կամարով երիզված, որը ներքևի երկու խաչապատկերներն իր մեջ առնող մեծ շրջանակի ամենավերին մասն է: Միասնական շրջանակը հուշում է, որ այստեղ նաև իմաստային կապ գոյություն ունի և որ արծվաքանդակը անմիջականորեն առնչվում է խաչի խորհրդի հետ: Հասկանալի է, որ ինչպես այլուր, այստեղ ևս խաչն առաջին հերթին խորհրդանշում է Քրիստոսի խաչելությունն ու հարությունը և փրկագործական իմաստ ունի: Հարց է առաջանում. ի՞նչ խորհրդանիշ է քրիստոնեական պատկերագրության մեջ արծիվը: Ըստ Ջեյմս Հոլլի հանրամատչելի գրքի՝ արծիվը «միջնադարում եղել է Քրիստոսի համբարձման խորհրդանիշը»<sup>1</sup>:

Հանրահայտ է, որ արծվի պատկերը որպես երկնքի, ուժի, անմահության կամ վերակենդանացման խորհրդանիշ, շատ ավելի վաղ ծագում ունի և տարածված էր քրիստոնեությունից առաջ: Քրիստոնեության շրջանում այն առաջին հերթին կապվում էր այս թռչնի աստվածաշնչյան հիշատակությունների հետ (Չորեքկերպյան աթոռի նկարագրության մեջ, Եզեկ. Ա, 10, հմմտ. Հայտ. Դ, 7), ավելի ուշ համարվելով նաև Հովհաննես ավետարանչի խորհրդանիշը: Երկնքի տիրակալ թռչնի հնագույն խորհրդանիշն իր տեղն է գտել քրիստոնեական պատկերագրական համակարգում, բայց նոր իմաստային շերտեր ստանալով: Մասնավորապես «ճանկող արծվի» թեմայի բացահայտման տեսանկյունից կարծում ենք, որ ուշադրության են արժանի Մատթեոսի ավետարանում եղած՝ Քրիստոսի հետևյալ խոսքերը. «Որտեղ որ դիակն է, այնտեղ կհավաքվեն արծիվները» (Մատթ. ԻԴ, 28): Այն բազմաթիվ մեկնաբանություններ ունի, սակայն մեր խնդրի առումով էական են այն երկու տեսակետները, որոնք ի թիվս այլոց, վկայաբերում է նշանավոր աստվածաբան-մեկնիչ և Հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին (1166-1173): Ըստ նրա՝ նախկին մեկնիչներից ոմանք այս հատվածը մեկնաբանում են որպես մեռելների հարությունը՝ Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ, ըստ որի՝ երբ հնչում է հրեշտակապետի փողի ձայնը, յուրաքանչյուր մարդու հոգին արծվի նման («իւրաքանչիւր հոգի իբրև արծուի») սլանում է դեպի իր

<sup>1</sup> Д. Холл, Словарь сюжетов и символов в искусстве, Москва, 1996, с. 406.

մարմինը (դիակը): Իսկ ուրիշ մեկնիչներ ասում են, որ արծվի տեսքով հրեշտակներն են սլանում և մարտիրոսների ու քրիստոնեական վկաների մարմինները հափշտակում, տանում փառքի մեջ («յափշտակեն՝ ի փառս»), որտեղ Աստծո ընտրյալներն են<sup>1</sup>: Այս վերջին մեկնության համաձայն արծիվը կերպարանափոխված հրեշտակն է, որը երկրորդ գալստյան ժամանակ ցած իջնելով հափշտակում ու երկնային արքայություն է տանում հարուցյալ մահացածին:

Այն, որ սույն մեկնաբանությունը տարածում է ունեցել հայ իրակա-նության մեջ և անգամ հասել ուշ միջնադար, հաստատվում է նաև հայրեններից մեկում («Տաղ ազնի») պահպանված հետևյալ տողերով՝

«Հրեշտակնին արծիւ դարձեր,

Տէ՛ր, Տէ՛ր, Տէ՛ր,

Կու տանին մեզ մէկ-մէկ ի վեր»<sup>2</sup>:

Կարծում ենք, որ ինչպես Նորավանքում, այնպես էլ բազմաթիվ այլ եկեղեցիներում և հուշարձաններում պահպանված «ճանկող արծվի» պատկերները փրկագործական խորհրդանիշներ են՝ արծիվ հրեշտակի և հարություն ակնկալող մահացածի (որս) կերպարներով:

Հասկանալի է, որ «ճանկող արծվի» պատկերագրությունը ծավալուն թեմա է, որն ամբողջական ընդգրկմամբ հանգամանորեն կուսումնասիր-վի համապատասխան մասնագետների կողմից (այդպիսի մի փորձ կա-տարել է արվեստագիտության մագիստրոս Նարեկ Հովհաննիսյանը): Բնականաբար, այն դուրս է սույն աշխատության նպատակից և մեր քն-նությունը՝ Նորավանքի քանդակի մեկնաբանման շրջանակում լինելով, մասնակի է:

<sup>1</sup> Ամբողջական հատվածը հետևյալն է. «Իսկ այլք ի վերայ հասարակաց ասեն, զի նախքան գերևումն Տեանն ի ձայն փողոյ հրեշտակապետի մեռեալքն յառնեն, և իւրաքանչիւր հոգի իբրև արծուի սլացեալ ի վերուստ՝ դիմէ ի վերայ գիշի մարմնոյ իւրոյ: Եւ կէսք՝ զհրեշտակաց սլացումն ասէն՝ որք զարեամբ նահատակեալ մարտիրոսս և վկայս յափշտակեն՝ ի փառս, որպէս յառաջ տանելով ասէ թէ՛ ժողովեսցեն զընտրեալս Նորայ» (Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթեոսի, արա-րեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալոյ, Կ. Պոլիս, 1825, էջ 509):

<sup>2</sup> Հայրեններ, աշխատասիրությամբ **Աս. Մնացականյանի**, Երևան, 1995, էջ 466-467: Այս հայրենի մասին տեղեկացել ենք Նարեկ Հովհաննիսյանի «Ճանկող թռչնի պատկերագրությունը և խորհրդաբանությունը միջնադարյան հայկական արվեստում» մագիստրոսական ատենախոսությունից (էջ 60): Հեղինակը բազմակողմանիորեն քննել է խնդիրը և հանգել ուշագրավ ու ընդունելի եզրա-հանգումների: Հուսով ենք, որ առաջիկայում այդ աշխատությունը կիրատարակվի:



Նկ. 31 Բուրթելաշենի արծվաքանդակը:

Ի տարբերություն հայկական այլ եկեղեցիների պատերին պահպան-ված «ճանկող արծվի» քանդակների՝ Նորավանքի եկեղեցի-դամբարանի արևելյան ճակատի ձևավորման մեջ արծվաքանդակի փրկագործական նշանակությունը շատ ավելի ընդգծված կերպով է երևում: Այն նույնիսկ արտահայտվում է քանդակի որոշ մանրամասներում, օրինակ՝ արծվի դիրքում, որի աչքերն ուղղված են դեպի վեր՝ երկինք, և որն իր «որսը» (դարձյալ գլուխը վեր պահած), կամ՝ ենթադրաբար հանգուցյալի (տվյալ դեպքում՝ Բուրթելի) փրկվող հոգին, տանում է դեպի երկնային արքայու-թյուն (նկ. 31, 75): Թեմայի նման մեկնաբանման տեսակետից հետաքրք-րական է նաև Վայոց ձորի Հերիերի (Երեբան) վանքում, Օրբելյանների ստորակա իշխան (սպարապետ) Վահրամ Շահունեցու՝ 1282 թ. կա-ռուցած Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակատի նմանօրինակ քանդակը, որտեղ արծիվը ոչ թե «ճանկել», այլ կարելի է ասել՝ խնամքով գրկել է «որսը», որն էլ իր հերթին շատ հանգիստ ու խաղաղ տեսք ունի (նկ. 32): Նկատենք, որ այս վանքն էլ Շահունեցիների փոքր իշխանա-կան տան դամբարանավայրն է եղել: Այն, որ «ճանկող արծվի» պատկե-րը կապվում է հանգուցյալների հոգու փրկության գաղափարի հետ, եր-



լում է նաև նրանից, որ այդպիսի բազմաթիվ քանդակներ տեսնում ենք ավելի ուշ շրջանի գերեզմանաքար-տապանաքարերի վրա (այդ մասին՝ քիչ հետո):

Այժմ համառոտ անդրադառնանք հիշյալ թեմայի զինանշանային մեկնաբանությանը: Նորավանքի քանդակի մասին գրելիս, այն համարելով Օրբելյանների զինանշանը, հայկական հերալդիկայի ուսումնասիրության առաջին փորձը կատարած Ռաֆայել Մաթևոսյանը



Նկ. 32 Հերերի (Երերան) արծվաքանդակը:

գրում է. «հորինվածքը նույնն է Մամիկոնյան զինանշանի հետ»<sup>1</sup>: Ակնհայտ հայտ է, սակայն, որ «ճանկող արծվի» պատկերները քիչ չեն նաև Օրբելյանների մրցակից Խաղբակյան կամ Պոռոշյան տոհմին պատկանող եկեղեցիներում (Կեչառիս, Այրիվանք, Թանահատ, Գոմք): Այդպիսի խոշոր քանդակ կա նաև Ազիզբեկյանների՝ Եղվարդում կառուցած եկեղեցի-դամբարանի պատին, Խորանաշատում, և այլուր: Այդպիսի մի քանդակ այժմ գտնվում է Վանի թանգարանում (նմանօրինակ քանդակները բավական շատ են, ուստի այստեղ մենք զետեղում ենք միայն սակավ հայտնիների լուսանկարները): Հետաքրքրական է, որ քանդակներում որպես «որս» պատկերվում են տարբեր չորքրտանի կենդանիներ՝ հիմնականում ոչխար (խոյ, գառ), եղնիկ (Եղվարդում՝ հորթ) և այստեղ միօրինակություն չկա:

«Ճանկող արծվի» եկեղեցու պատին արված մեզ հայտնի հնագույն զույգ քանդակները գտնվում են Բագրատունյաց մայրաքաղաք Անիում, Մայր տաճարի (1001 թ.), հարավային մուտքից վեր: Նույն տաճարի արևելյան պատին մեկ այլ արծվաքանդակ կա՝ առանց որսի: Ի դեպ, քանդակներից առաջին երկուսը Ռ. Մաթևոսյանը զինանշան չի համարում,

<sup>1</sup> Ռ. Մաթևոսյան, Հայկական զինանշաններ, Երևան, 1994, էջ 61:



Նկ. 33 Անիի Մայր տաճարի արծվաքանդակներից մեկը:

Անիի Մայր տաճարի խոշոր, թևատարած արծիվների համեմատությամբ նրանց բռնած որսը չափազանց փոքր է, գրեթե ճանկերի չափով և անգամ պարզ չէ, թե ինչ կենդանի է (նկ. 33): Նման քանդակ կա Անիի Փրկչի եկեղեցու պատին (Պահլավունիների կառուցածներից), Արծվի քանդակ (առանց որսի) առկա է նաև 1215 թ. Տիգրան Հոնենցի կառուցած Ս. Գր. Լուսավորիչ եկեղեցու գմբեթի թմբուկին, ընդ որում՝ կառուցողը որևէ իշխանական տոհմից չէր սերում:

«Ճանկող արծվի» քանդակներ կան Տայքի՝ քաղկեդոնական դավանանքը որդեգրած եկեղեցիներում (Օշկվանքի և Խախու): Նման քանդակ գոյություն ունի նաև Հայաստանից դուրս՝ Աթենքի Փոքր Մետրոպոլի եկեղեցու պատին, որտեղ «որսը» մի նապաստակ է (նկ. 34)<sup>2</sup>:



Նկ. 34 Աթենքի Փոքր Մետրոպոլի եկեղեցու արծվաքանդակը:

<sup>1</sup> Ռ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 37:

<sup>2</sup> Քանդակի մասին մեզ տեղեկություն հաղորդելու և լուսանկարը տրամադրելու, ինչպես նաև Մատթեոսի ավետարանի վերը նշված հատվածը մատնանշելու համար շնորհակալություն ենք հայտնում Գևորգ Ղազարյանին (Հունաստան):



Դժվար է հավատալ, որ այդքան տարբեր իշխանատոհմեր (Արծրունիներ, Մամիկոնյաններ, Պահլավունիներ, Խաղբակյաններ, Օրբելյաններ, Ազիզբեկյաններ, Վահրամյաններ, Տայքի քաղկեդոնական Բագրատունիներ) կարող էին «ճանկող արծվի» պատկերով միևնույն զինանշանն ունենալ: Կարծում ենք, որ այդ քանդակների զինանշանային մեկնաբանությունը չունի համոզիչ հիմնավորումներ:

Այժմ թվարկենք «ճանկող արծվի» պատկերով ուշ շրջանի մի քանի հուշարձաններ, որոնք ավելի առարկայական են դարձնում մեր տեսակետը: Առաջինը խաչքար է, որը գտնվում է Գեղարքունիքի մարզի Կարմիր գյուղում՝ Ս. Գրիգոր եկեղեցու մոտ: Խաչաքանդակի վերնամասում անսովոր կերպով տեղ է գտել մի խոշոր «ճանկող արծիվ» (նկ. 35): Համաձայն արձանագրության՝ խաչքարը 1505 թ. կանգնեցրել է մելիք Փիրհամզան՝ իր որդի Զոհրապի հոգու փրկության համար, նրա տապանաքարին կից («ԵՏՈՒ ԿԱԶՄԵԼ ՏԱՊԱՆՍ ԵՒ ՆԿԱՐԵԼ ԶԻԱԶՍ...»): Խաչքարագործը կամ պատկերը գծագրողը, բարձրաստիճան հոգևորական էր, որը գրում է՝ «ԵՍ ԳՐԻԳՈՐԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԿԱՐԵՑԻ ԶԻԱԶՍ Ի ԽՆԴՐՈ ՓԻՐՀԱՄԶԻՆ Ի ՓՐԿՈՒԹԻ(ԻՆ) ՀՈԳՈ ՈՐԴՈՅ ԻԻՐՈՅ ԶԱԻՐՀՐԱՊԻՆ»<sup>1</sup>: Տեսարանը, փաստորեն, նման է Նորավանքի եկեղեցու արևելյան ճակատի հորինվածքին՝ ներքևում խաչ, ավելի վեր՝ որսը ճանկած արծիվ, որի պատկերման նպատակը տվյալ հանգուցյալի հոգու փրկությունն է:



Նկ. 35 Կարմիր գյուղի խաչքարը (1505 թ.):

<sup>1</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ IV, Գեղարքունիք, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 98, տե՛ս նաև Հ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 260:

Մյուս յոթ քանդակները ուշմիջնադարյան տապանաքարերի վրա են (հիմնականում՝ գյուղական գերեզմանոցներում): Առաջինը Նորատուսի նշանավոր գերեզմանոցի կենտրոնական մասում է: Տապանաքարի արևելյան նիստին գառանը ճանկած արծվի խոշոր քանդակն է: Վիմագիրը վկայում է, որ այն դրվել է ոմն Քասպարի համար՝ ՌԵ (1556) թվականին (նկ. 36): «Ճանկող արծվի» քանդակով երկու այլ տապանաքար գտնվում են Ներքին Գետաշեն գյուղում, եկեղեցուց արևելք (նկ. 37) և Գեղիովիտի գերեզմանոցում (Գեղարքունիք)<sup>1</sup>: Տապանաքարերն արձանագրություն և թվական չունեն, բայց նրանց ձևից և քանդակի ոճից դատելով՝ ուշ միջնադարից են: Նման քանդակ ունեցող՝ 16-18-րդ դարերին վերաբերող մեկ այլ տապանաքար էլ գտնվում է Սողքում<sup>2</sup>, ևս երկուսը՝ Սյունիքի Տեղ գյուղում և Քաշաթաղի Ուտածոր կոչվող տեղանքում:

Վերջապես յոթերորդ տապանաքարը դրված է Սյունիքի Եղվարդ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու բակում և ստույգ թվագրում ունի. քանդակից վեր գրված է՝ «ԹՎ(Ա)Կ(ԱՆ) ՌԼԵ (1586)»:

<sup>1</sup> Վերը նշված խաչքարի և երեք տապանաքարի մասին տեղեկություններ ու լուսանկարները մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում խաչքարագետ Սևակ Արևշատյանին:

<sup>2</sup> Տապանաքարի մասին հոդված է պատրաստում հնագետ Ավետիս Գրիգորյանը:



Նկ. 36 Նորատուսի տապանաքարը (1571 թ.):



Նկ. 37 Ներքին Գետաշեն գյուղի տապանաքարը:



Նկ. 38 Սյունիքի Եղվարդ գյուղի տապանաքարը (1586 թ.):



Նկ. 39 Արծվաքանդակ Վանի թանգարանում:

Տապանաքարի ճակատին տեղադրված «ճանկող արծվի» քանդակը պարզունակ է, սխեմատիկ կառուցվածքով<sup>1</sup> (նկ. 38): Այս բոլոր օրինակներն, անկասկած, որևէ կապ չունեն 13-14-րդ դարերի հայ իշխանական տների հետ, որոնք այդ ժամանակ վաղուց հեռացել էին պատմական սպարեզից: «Ճանկող արծվի» սույն քանդակներն ակներևորեն առնչվում են տվյալ գերեզմաններում ամփոփված հանգուցյալների հոգու փրկության գաղափարին: Այս առումով հետաքրքրական է նաև Վանի թանգարանում պահվող քանդակը, որը ոչ թե տապանաքարի, այլ առանձին սալի վրա է, սակայն ստորին մասում՝ արծվի ճանկած գառան երկու կողմում գեղեցիկ փորագրությամբ գրված է «ԲԱՐՍԵՂ»<sup>2</sup> (նկ 39): Պարզ է, որ այն կապ ունի քանդակի հետ և նշված Բարսեղի հոգու փրկության համար է պատկերված (այլ մեկնաբանություն թերևս դժվար է գտնել):

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ 11-14-րդ դդ հայկական եկեղեցիների պատերին եղած «ճանկող արծվի» քանդակները հերալդիկ պատ-

<sup>1</sup> Տապանաքարի մասին տեղեկության և լուսանկարը մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում հնագետ Արման Նալբանդյանին:

<sup>2</sup> Քանդակի մասին տեղեկության և լուսանկարը մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում հուշարձանագետ Սամվել Կարապետյանին:

կերներ չեն, այլ ներկայացնում են փրկագործական խորհրդանիշ, կապված Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ հանգուցյալների փրկության գաղափարի հետ: Դրանցում արծիվը խորհրդանշում է հրեշտակին<sup>1</sup>, որսը՝ փրկություն ակնկալողին: Նորավանքի արծվաքանդակի վերլուծությունը, մեկնողական նյութերը և ուշ շրջանի տապանաքարերի նման քանդակները, թույլ են տալիս այդպիսի եզրահանգում անել: Ի դեպ, այս պատկերագրության արծվակերպ մարդադեմ տարբերակն առկա է Գանձասարի (1238 թ.) գմբեթի քանդակներում (նկ. 40):

Ամփոփելով ուսումնասիրությունը, հակիրճ անդրադառնանք Նորավանքի ևս մեկ ֆենոմենին, որն այստեղ եղած բարձրարվեստ խաչքարերի առատությունն է: Դեռևս 1942 թ. Կ. Ղաֆադարյանի հետ դեպի Նորավանք կատարած գիտարշավի ժամանակ Սմբատ Տեր-Ավետիսյանը, նկատելով այս հանգամանքը, գրում է. «արշավախումբը գրանցել է ավելի քան 34 խաչքար»<sup>2</sup>: Ավելի ուշ, պեղումների ու տարածքի հողից մաքրման ընթացքում դրանց թիվն ավելացել է շուրջ երկու տասնյակով: Նորավանքի լավագույն խաչքարերից երեքը՝ Մոմիկի կերտածներն այժմ գտնվում են թանգարաններում (երկուսը Ս. Էջմիածնում, մեկը՝ Եղեգնաձորում), բայց տեղում եղածներն էլ շատ արժեքավոր են: Դրանց մեջ Մոմիկին են պատկանում ևս երկուսը՝ Բուրթելաշենին պատակից բարձր պատվանդաններով գեղաքան-



Նկ. 40 Արծվակերպ հրեշտակի քանդակ Գանձասարում:

<sup>1</sup> Մենք այս հարցին գուցե կանդրադառնանք հետագայում, սակայն որպես նախնական դիտարկում նշենք, որ մեր կարծիքով Զվարթնոցի հայտնի արծվաքանդակները նույնպես խորհրդանշում են հրեշտակներին և հենց նրանք են «զվարթունները», որոնք (ըստ ավետարանի վերը նշված հատվածի՝ Մատթ. ԻԴ, 28) հավաքվել են Գր. Լուսավորչի՝ տաճարում թաղված մասունքների շուրջը:

<sup>2</sup> Ս. Տեր-Ավետիսյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 2010, էջ 494:

դակ խաչքարերը (նկ. 76, 77): Իսկ այլ հեղինակների կամ Մոմիկի աշակերտների գործերի մեջ կարելի է առանձնացնել 1332 թ. բացառիկ պատկերագրությամբ խաչքարը (նկ. 87, արձ. Հ<sup>մ</sup> 143):

Եթե մտովի հիշենք Հայոց հայտնի վանքերը՝ Վայոց ձորից և Սյունիքի նշանավոր Տաթևից սկսած մինչև Գուգարք՝ Հաղբատ-Սանահին, Տավուշ՝ Գոշավանք, Հաղարծին, Շիրակ՝ Հոռոմոս, Հառիճ, Մարմաշեն, Արագածոտն՝ Հովհաննավանք-Սաղմոսավանք, Կոտայք՝ Կեչառիս, Հավուց թառ, Այրիվանք, Արցախ՝ Գանձասար, Դադիվանք և այլն, ապա ամեն տեղ ակնառու խաչքարերը փոքրաթիվ են, իսկ ընդհանուր թիվը չի գերազանցում երկու կամ երեք տասնյակը: Մինչդեռ Նորավանքում և՛ խաչքարագործական գլուխգործոցները, և՛ առկա խաչքարերի թիվը կրկնակի շատ է: Սա, իհարկե, բացատրվում է նրանով, որ հայ խաչքարային մշակույթի առավելագույն վերելքի ժամանակաշրջանում Նորավանքը զորեղ իշխանական տան՝ Օրբելյանների և նրանց ստորակա իշխանների տապանավայրն էր, Սյունյաց աթոռակալների նստոցն ու դամբարանը: Իսկ խաչքարերի, ինչպես նաև տապանաքարերի բարձրարվեստ հարդարանքն էլ ապահովվում էր շնորհիվ այստեղ աշխատող տաղանդավոր քարգործ վարպետների և խաչքարագործների՝ ինչպիսիք էին Սիրանեսն ու Մոմիկը և նրանց աշակերտները:

Նորավանքի նրբաճաշակ խաչքարային արվեստը ներդաշնակ է տեղի ընդհանուր ճարտարապետական, գեղարվեստական միջավայրին (նկ. 86), որի մյուս բաղկացուցիչներն են եկեղեցիների ու գավթի քանդակագործական ճոխ հարդարանքը, եզակի առյուծաքանդակ տապանաքարերը (նկ. 84, 85) և գեղագիր վիմագրությունը: Այս ամենի հանրագումարով էլ հատկանշվում է բնության գեղատեսիլ անկյունում հիմնված այս վանքի ուրույն գեղարվեստական դիմագիծը:

Այսպիսով, Նորավանքը հանդիսացել է բարեբախտ դիպվածների հանդիպավայր, որը թեպետ բուռն ծաղկումից հետո պատմական հանգամանքների բերումով լքվել ու ամայացել է, դարձել կիսակործան, սակայն բարեբախտաբար մեր ժամանակներում ունեցել է նոր նվիրյալներ, ոսկեձեռիկ վերականգնող վարպետներ ու բարեգործներ, որոնց «արդեամբք» այժմ վեր է հառնում իր նախկին փառահեղությամբ:

## ՆՈՐԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Նորավանքի վիմագրերը բացառիկ աղբյուրագիտական արժեք են ներկայացնում, միաժամանակ ուշագրավ են արձանագրությունների ձևավորման ու գրչության տեսանկյունից: Մասնավորապես Սիրանեսը և Մոմիկը լինելով բազմաշնորհ արվեստագետներ, ճարտարապետական մոնումենտալ մտածողության կրողներ, ստեղծել են նաև վիմագրական ինքնատիպ ու արժեքավոր գործեր (նկ. 82, 83) որոնք իրենց հերթին ազդեցություն են թողել տեղի այլ վիմագիր գրիչների աշխատանքի վրա:

Նորավանքի արձանագրությունները «Դիվան հայ վիմագրության» 3-րդ պրակում զետեղված են վերջում և կրում են 677-ից 813 համարները (137 միավոր): Սակայն, 805 համարի դիմաց վիմագիր չկա (էջ 245), ուստի մենք նպատակահարմար չգտանք այդ դատարկ տեղը (համարը) թողնել: Այստեղ Սեդրակ Բարխուդարյանի հավաքածուն համարակալում ենք՝ 1-136, ապա այն շարունակում Սուրեն Սաղումյանի (137-181) և Մայքլ Սթոունի (182-210) հավաքածուներով՝ շարքը եզրափակելով մեր ավելացրած վիմագրով (211-236):

Հարկ է նշել, որ Ս. Բարխուդարյանի հրատարակած որոշ վիմագրեր Ս. Սաղումյանը և Մ. Սթոունը վերատպել են: Առաջինը դա արել է վերջանությունների մեջ լրացումներ և ճշգրտումներ կատարելու նպատակով, երկրորդը՝ նկարագրությունն ու լուսանկարն ավելացնելով: Խուսափելով նման կրկնությունից, մենք ամեն մի վիմագրի մասին նյութն ամփոփել ենք առաջին հրատարակչի բնագրում՝ համապատասխան ծանոթագրությամբ:

Յուրաքանչյուր արձանագրությունից հետո տրվում է մատենագիտությունը (նախորդ հրատարակությունների հղումը), որտեղ Ս. Բարխուդարյանի վկայաբերած հրատարակությունների ցանկը լրացրել ենք ևս չորսով (տե՛ս ստորև): Մատենագիտությանը հաջորդում է հրատարակչի ծանոթագրությունը և ըստ անհրաժեշտության՝ մեր լրացուցիչ ծանոթագրությունը, որտեղ, որոշ դեպքերում, նշում ենք նաև այլ ուսումնասիրող-

ների՝ Սուրեն Սաղումյանի, Սուրեն Ավագյանի, Գագիկ Սարգսյանի կատարած սրբագրումները: Գրքի խմբագրման ընթացքում գրչանկարների և լուսանկարների հետ համեմատությամբ զգալի սրբագրումներ է արել նաև պատմական գիտությունների թեկնածու, վիմագրագետ Արսեն Հարությունյանը՝ ավելացնելով որոշ ծանոթագրություններ:

Քանի որ Նորավանքի արձանագրությունների սույն հրատարակությունը զուտ վիմագրագիտական նպատակ չի հետապնդում, այլ՝ աղբյուրագիտական և պատմաբանասիրական, ելնելով նաև առկա հնարավորություններից՝ վիմագրերի գրչանկարներն ու լուսանկարները չենք զետեղում (բացառությամբ նորահայտ և վերծանման կամ այլ առումով հետաքրքրություն ներկայացող որոշ նմուշների):

Վիմագրերի վերծանություններում բացել ենք համառոտագրությունները, բոլոր թվատառերին կից փակագծերում դրել դրանց համարժեք արաբական թվանշանները: Արձանագրությունները ներկայացվում են ըստ բնօրինակի տողատման, իսկ երկար տողերի դեպքում՝ դրանց համարակալմամբ:

Համառոտագրությունները բացվում են սովորական փակագծում. օրինակ՝ Ա(ՍՏՈՒԱ)Ծ, նույն կերպ լրացնում ենք նաև գրչի բաց թողած տառերը, օրինակ՝ ՈՐՔ ԸՆԹ(ԵՌՆ)ՈՅՔ: Զարդված տառերի և վնասված հատվածների վերականգնումները նշվում են ուղիղ փակագծում, օրինակ՝ ՅԱՌ[ԱԶՆ]ՈՐԴՈՒԹԵԱՆ:

## ՆՈՐԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Օրբէլեան – Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910:
- Ջալալեանց – Ջալալեանց Սարգիս արքեպիսկոպոս, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփիսիս, 1858:
- Ալիշան – Ալիշան Ղևոնդ, Սիսական, Վենետիկ, 1893:
- Քաջբերունի – Քաջբերունի (բժ. Գաբրիէլ Յովհանիսեան), Ճանապարհորդական նկատողութիւնք. «Փորձ», 1877-1879, «Արարատ», 1888-1891 թթ.:
- Լալաեան – Լալալեան Երուանդ, Վայոց-ձոր. նշանաւոր վանքեր, «Ազգագրական հանդէս», XXVI գիրք, Թիֆլիս, 1916:
- МАК – Материалы по археологии Кавказа, вып. XII, М, 1916.
- Բարխուդարյան – Դիվան հայ վիմագրության, պրակ III, Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967:
- Սաղումյան – Ս. Սաղումյան, Նորահայտ վիմագրեր Նորավանքից, «Հուշարձան» տարեգիրք, հ. Բ, Երևան, 1993, էջ 91-103:
- Stone – M. Stone, Further Armenian Inscriptions from Noravank, Apocrypha, Pseudepigraphia and Armenian Studies, Collected Papers Volume II, Leuven-Paris-Dudley, 2006, 813-859.
- Տեր-Ավետիսյան – Ս. Տեր-Ավետիսյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 2010, Надписи Нораванка (Կ. Ղաֆադարյանի ընկերակցությամբ՝ 1942 թ. գիտարշավի նյութերը), էջ 474-495:



**ՆՈՐԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐՆ ԸՍՏ  
ՍԵԴՐԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ**

**Ս. ՍՏԵՓԱՆՈՍ**

1. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ<sup>1</sup>. հյուսիսային պատի ամենավերին մասում, ներքուստ, 12 սոռդ.
1. Ի Թ(ՎԻՆ) :ՈՀ: (1221). ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ, ԵՄ՝ ԼԻՊԱՐԻՏ, ՈՐԴԻ ԱԼԱԿՈՒՄԻՆ, ԹՈՌՆ ՄԵԾԻ ԱԻՐՊԵԼԱՆՑ, ԶԻ ՀԱՅՐՆ ԻՄ ԱԼՈՒՄԻՆ ՔԻՆԱՑԱԻ Թ
2. ԱԳԱԻՈՐԻՆ ԱԲԻ(Ա)ՋԱՑ, ԳՆԱՑ Ի ՏՈՒՆՆ ԱԹԱԲԱԿ ԷԼՏԿՈՒՋԱՆՑ ԵՒ ՆԱ ՄԵԾ ԱԻԳԱՏՈՎ ՄԵԾԱՐԵՑ ԶՆԱ, ԵՏ ՆՄԱ ԶՄԵԾ ՔԱՂԱՔՆ
3. ՀԱՄԻԱՆ: ԵՄ՝ ԼԻՊԱՐԻՏՍ, ՈՐԴԻ ՆՈՐԱ, ՄԱՆՈՒԿ ԳՈԼՈՎ ԴԱՐՁԱ ՎԵՐԸՍՏԻՆ Ի ԼՈՒՍԱԻՈՐ ՀԱԻԱՏՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐ(Ի), ԵԿԻ ԱՌ Մ
4. ԵԾ ԱԹԱՊԱԿ ԻԻԱՆԷ ԵՒ ՀԱՅՐԵՆԵՑՆ ՓՈԽԱՆ ԵՐ[Ե]Տ ԶՀԱՐԱՇԿԱԲԵՐԴ ԻԻՐ ԿԵՐՈՎՍ. ԵՒ ԵՍ ՇԻՆԵՑԻ ԶՎԱՆՔՍ, ՈՐ ԿՈՉ
5. Ի ՆՈՐԱՎԱՆՔ, ՅԱՌ[ԱՋՆ]ՈՐԴՈՒԹԵ(ԱՆ) Տ(Է)Ր ՍԱՐԳՍԻ ՍԻԻՆԵԱՑ ՎԵՐԱԴԻՏՈՂԻ, ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ԱԻԱԳ Ս(ՈՒՐ)Բ ՆՇԱՆ ԱՌ ԱԹԱԲ
6. ԱԿ ԻԻԱՆԷԻ ԷՐ, ԱՅԼ ՅԵՏ ԲԵՐԱՔ ԳԵՂ :Բ: (2)՝ ԶԱԳԱՐԱԿԻ ՁՈՐ ՈՒ ՏԻԱՐԲ ԻԻՐ ՍԱՀ(Մ)ԱՆԱԻՔՆ: Տ(Է)Ր ՍԱՐԳԻՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԻՆՁ ԶԱԻ
7. ԱԳ ԽՈՐԱՆՆ :Գ: (3) ԱԻՐ ԺԱՄ ԿԻՐԱԿԷՆ, Ի ՇԱԲԱԹՆ ԵՒ ԶՀԻՆԳՇԱԲԱԹՆ Ի ՅԱՄԷՆ ՇԱԲԱԹՈՒՄ. ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ ԻՄՈ ԱՋՓԱԻՆ

<sup>1</sup> «Դիվան հայ վիմագրության» պր. III-ում Ս. Ստեփանոս եկեղեցին ամենուրեք նշված է «Ս. Կարապետ» անունով: Մեր կատարած փոփոխության հիմնավորումը հանգամանորեն ներկայացված է սույն գրքի ուսումնասիրության բաժնում - Կ. Մ.

8. ՍԱՀՄԱՆԵՑԻՆ Ի ՏԱՐՈՒՄՆ Տ(ԵԱՌ)ՆԸՆԴԱՌԱՋ ԱԻՐՆ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ: ԱՐԴ, ՈՐՔ ԸՆԹ(ԵՌՆ)ՈՅՔ ԶԳԻՐՍ ԽՆԴԻԵՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Է
9. ԻՄ ՈՐԴԵ(Ա)ՑՆ՝ ԱԼՈՒԿՈՒՄԻՆ, ՍՄՊԱՏԱ, ԻԻԱՆԷԻ, ՓԱԽՐԱԴԱԻԼԱԻՆ, ՏԱՐՍԱԻՃԻՆ ԱՐԵԻՇԱՏՈՒԹԻ(ԻՆ): ԱՐԴ, ՈՐՔ ԱՅՍ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԳՐՈ
10. ՅՍ ՀԱԿԱՌԱԿ ԿԱ, ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱԻՏԱՐԱՑ, ԿԱՄ ՅԱԻԱԳԱՑ Ի ՀԱ(ՅՈՑ), ԿԱՄ Ի ՎՐԱՑ Ի ԶԱՅՆ ԳԵՂԱՐԷՔՆ ՀԱՆԵԼ ԶԱՆԱՆ ԿԱՄ ԶԺԱՄՆ ԽԱՓԱՆԵԼ :ՅԺԸ: (318)
11. ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆՁՈՎԱԾ Է ՈՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է, ՈՒ ԹԷ ՏԱՃԻԿ ԱԻԱԳ ՓՈԽԻ ՈՒ ՀԱՆԵԼ ԶԱՆԱՑ ԻԻՐ ՀԱԻԱՏԷՆ ՈՒ Ի ՄԱՀ
12. ՄԵՏԻ ԱՊԻՋԱՐԷ ՈՒ :Ռ: (1000), :Ռ: (1000), :Ռ: (1000) ՆԱԼԱԹ ՆԱԼԱԹ:

*Հրատ. Օրբէլեան, 359-60 և 362-63: Ալիշան, 187-88: Զալալեանց, 174: MAK, XIII, 164, Լալաեան, XXVI, 46-47, Տեր-Ավետիսյան, 477: Բարխուդարյան, 211, արձ. 677:*

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Երկրորդ տողում ԱԹԱԲԱԿՍ-ԿՈՒՂԱՆՑ համարում ենք գրողի շփոթմունք և վերծանում ԱԹԱԲԱԿ ԷԼՏԿՈՒՂԱՆՑ: Երկրորդ տողում ՄԵԾԱԻԳԱՏՈՎ վերծանում ենք ՄԵԾ ԱԻԳԱՏՈՎ = ԱԻԳՏՈՎ. Օրբելյանն ունի մեծաւ փառօք, այլ հրատարակիչներ՝ մեծաւգթով: Օրբելյանի մեջբերածը հավանորեն վանքի «Քոթուկ»-ից է, թեև նույնիմաստ, բայց ավելի ընդարձակ և թվականն էլ :ՈՀԲ: միաժամանակ գրիչների շփոթմամբ բաժանված է երկու մասի, որոնց արանքում մտցվում է այլ արձանագրություն:*

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Արձանագրությունը մեծ կարևորություն ունի Օրբելյան տոհմի Հայաստանում հաստատման պատմության տեսանկյունից և պատահական չէ, որ այն իր գրքում մեջ է բերում Ստեփանոս Օրբելյանը, բայց որոշ հավելումներ կատարելով: Մասնավորապես, Լիպարիտի՝ Իվանե Զաքարյանից ստացածի մասին պատմող այս*

հատվածը՝ «ԵՒ ՀԱՅՐԵՆԵՑՆ ՓՈՒԱՆ ԵՐ[Ե]Տ ԶՀԱՐԱՇԿԱԲԵՐԴ ԻԻՐ ԿԵՐՈՎՍ» Ստեփանոս Օրբելյանը լրացրել է՝ «և այլ բազում գիրքս ի վայոց ձոր, ի Գեղարքունի, ի Կոտայսն և ի Կայեն» (Օրբելյան, 360), որից հետո շարունակել է, ինչպես վիճաբանում է:

Երկրորդ տողի սկզբում Ս. Բարխուդարյանը պակասող (ենթադրաբար գրչի բաց թողած) տառի վերականգնում է կատարում՝ ԱԲԽ(Ա)ՋԱՅ, բայց հնարավոր է, որ այստեղ գործ ունենք խոսակցական լեզվի կամ բարբառի արտահայտման հետևյալ և գրիչն ուզել է գրել հենց «Աբխազաց»:

Հիշատակված ՀԱՄԻԱՆ քաղաքը – Համադան քաղաքն է Պարսկաստանում (այլ մանրամասներ տես՝ Մարգարեան, նշվ. աշխ., էջ 55-56):

2. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. արևմտյան մուտքի կամար ճակատաքարի և նրա շրջանակի վրա, արտաքուստ (այժմ գավթի մեջ). 7 տող.

1. ԵՄ՝ Տ(Է)Ր ՍԱՐԳԻՍ, ՔԵՌՈՐԴԻ Տ(Է)Ր ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍԻՆԵԱՑ
2. ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ,
3. ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ԲԱՐԷԽ
4. ԱԻՍՈՒԹԻ(ԻՆ) ԻՆՁ, ԵՒ ԼԻՊԱՐՏԻՆ, ԵՒ ՆԱԽՆԵԱՑ
5. ՄԵՐՈՑ, ԵՒ ԵՐԿՈՒՑ ՀԱՅՐԱԶԱՏ ԵՂԲԱՐՑՆ,
6. ՈՐ ՍՊԱՆԱՆ Ի ԹՈՒՐՔԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱՑ, ՎԱՍՆ
7. ՈՐՈՑ ԱՂԱԶԵՄ ՀԱՆԴԻՊՈՂԱՑ ՅԻՇԵԼ ԶՄԵԶ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Թեև թվական չունի, սակայն պարզ է, որ ժամանակը նույնն է, ինչ-որ նախորդինը՝ 1221 թ.:

Հրապ. Զալալեանց, 176-177: Ալիշան, 189: MAK, XIII, 165: Լալաեան, XXVI, 49, Տեր-Ավետիսյան, 482: Բարխուդարյան, 212, արձ. 678:

3. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. հարավարևմտյան ավանդատան մուտքի ճակատին, երեսով հյուսիս. 8 տող.

ՅԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ. ԱՅՍ ԳԻՐ Է Տ(ԵԱՌ)Ն ՍԱՐ[Գ]  
ՍԻ ԵՒ ՍՊԱՍԱԽՈՐԱՑ Ս(ՈՒՐ)Բ ԿԱՐԱՊԵՏԻ

Ս, ՈՐ ՏՈՒԱՔ ԶԽՈՐԱՆՍ ՀԱՍԱՆԱՅ Ա ՄԱՂՈՒԵՑՈՅ, ՈՐ ՆՈՐԱ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱ ՄՔ ՇԻՆԵՑԱԻ, Ի ՏԱՐԻՆ :Բ: (2) ԱԻՐ ԺԱՄ ՀԱՍՏԱՏԵՑԱՔ ԶՊԵՏՐՈՍԻ-ԶՊԱԻՂՈՍԻ ՏԱԻՆ ՀԱՍԱՆԱ, ԻԻՐ ԿՆՈՋՆ, ԵՒ ՈՐ ՀԱԿ ԱՌԱԿԻ...

Հրապ. Զալալեանց, 176: Ալիշան, 197: MAK, XIII, 197:

Լալաեան, XXVI, 49: Բարխուդարյան, 212, արձ. 679:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Թեև տեղ կա, բայց չի շարունակված:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Այս արձանագրությունն է հիմնական պատճառներից մեկը, որ Ս. Ստեփանոս նորակառույց եկեղեցու անունն ուսումնասիրողների զգալի մասը համարել են Ս. Կարապետ (մինչև Ս. Կարապետի ավերակների հայտնաբերումը 1970-ականներին): Մինչդեռ այս արձանագրության մեջ ոչ թե նշված է նորաշեն եկեղեցու անունը, այլ այն վերաբերում է արդեն գործող վանքի՝ Ս. Կարապետի առաջնորդի և միաբանների խոստմանը, որոնք համապատասխան պատարագ են հատկացրել Ս. Ստեփանոս եկեղեցու խորաններից մեկի շինության ծախսերը հոգացող Հասան Ամաղուեցուն:

«Դիվանի» վերծանության մեջ 7-րդ տողում սխալմամբ ՅԱՍԱՆԱ է տրվել:

4. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. հարավարևելյան ավանդատան ճակատին (Ա. հարկի). 10 տող.

1. ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ. ՆՈՒԱՍ ՇԱՌԱՅՍ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ Տ(Է)Ր ՍԱՐԳԻՍ,
2. ՀԱՃՈՒԹ(ԵԱՄ)Բ ԵՂԲԱՅՐ
3. ՈՒԹԵԱՆՍ ԵՏՈՒ ԶԱՅՍ ԽՈՐԱՆՍ ԸՍՏ
4. ՀՈԳՈՑ ԶԱԻԱԿԻ ԽԻԿԱՐԻ, ՁԵՌԱՅՍ
5. ՈՒՆ ԱՇԱՅԿԵՐՏԻ ԵՒ ՓԱԿԱԿԱԼԻ Ս(ՈՒՐ)Բ ՔԱԻ
6. ԱՐԱՆԻՍ, ԶԻ ՆՈՐԱՅ ԱՐԴԵԱՄԲՔ ՇԻՆԵ
7. ՑԱԻ. ԵՒ ՍԱՀՄԱՆԵՑԱՔ :Բ: (2) ԱԻՐ ԺԱՄ, ՈՐՉԱ

8. Փ Ի Ն Ք Ն
9. [Ք] Լ Ի Ն Ի Ի Ն Ծ Ն ...
10. Ո ...

Հրատ. Բարխուդարյան, 213, արձ. 680:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Վերջին երեք կարճ փողերը շարունակված են մուտքի կողին և եղծված են: Ժամանակակից է շինությանը՝ 1221 թ.:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Արձանագրությունից երևում է, որ ինչպես նախորդ ավանդապուն խորանի կառուցման ծախսերը կատարել էր Հասան Ամաղուեցին՝ ստանալով երկու պատարագ, այնպես էլ այս խորանի ծախսը հոգացել է եկեղեցու փակակալը՝ Սարգիս եպիսկոպոսի աշակերտ Խիկարը՝ նույնպես երկու պատարագ ստանալով:

5. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. արևմտյան պատի հարավային մասում, խիստ հողմահարված, ներքուստ, 8 տող.
1. ԿԱՄԱԻ [ԱՄԵՆԱԿԱԼԻՆ] Ա(ՍՏՈՒԾՈ)Յ. ԵՄ՝ ԴԱԻԻԹ ԿՐԱԻՆԱ-ԻՈՐ,
2. ՄԻԱԲԱՆԵՑԱ Ս(ՈՒՐ)Բ ՈՒԽՏԻՍ ԵԻ ԵՏՈՒ ԻՄ Ի[ՆՉ]-Ք [Ի Ս(Ո-ԻՐ)Բ]
3. ՎԿԱՅՍ, ԽԱՉԵՐ ԾԱՌԻ ԵԻ ՅԱՅՍՄԱ(Ի)ՈՐ[Ք]...
4. ՎԵՑԿԻ ԵԻ :Ի: (20) ՈՉԽԱՐ. Տ(Է)Ր ՍԱՐԳԻՍՆ ԵԻ Մ[ԻԱԲԱՆ-Ք]
5. ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Ս(ՈՒՐ)Բ ՅԱԿՈՒԻՆ ՏԱԻՆ :Դ: (4) Պ
6. ԱՏԱՐԱԳ՝ :Բ: (2) ԳՐԻԳՈՐՈՅՆ, :Բ: (2) ԻՆՁ՝ ԴԱԻԹ
7. Ի. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻՆ ԵԻ ԽԱՓԱՆԻՉՔՆ
8. ԴԱՏԻՆ Ի Տ(ԵԱՌՆ)Է:

Հրատ. Բարխուդարյան, 213, արձ. 681:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Ժամանակը որոշվում է վանահայր Սարգսի հիշատակումով, որը շինության ժամանակակից էր, հետև-

արար՝ XIII դարի առաջին կեսը: Նույնանուն վանահայր կա նաև դարավերջին:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Եթե ճիշտ է երկրորդ փողի վերջում Ս. Բարխուդարյանի վերականգնումը՝ «ԵՏՈՒ ԻՄ Ի[ՆՉ]-Ք [Ի ՍԲ]», որին հաջորդում է «ՎԿԱՅՍ» բառը, ապա այն վերաբերում է Ստեփանոս Նախավկային, որի անունով էր եկեղեցին: Հնարավոր է նաև, որ եղած լինի. «...Ի ՆԱԽԱ/ՎԿԱՅՍ»: Այնուհետև, հավանաբար, խոսվում է «Ձեռաց խաչերի» մասին, հետաքրքրական է նաև նվիրաբերված Հայսմավուրքի հիշատակությունը:

6. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. հյուսիսարևելյան ավանդատան մուտքի գլխին ագուցված խաչքարի վրա:

ԱՅՍ ԱԻԾԵԱԼ ԱՐՁԱՆ  
 ՆԿԱՐԵԱԼ ԱՐԵ(Ա)ՄԲ  
 ԱՐԱՐՉԻՆ ԲԱՐ  
 ԷԽԱԻՍՈՒԹԻ(ԻՆ) ԱԶԶ[ԻՆ ԿԱՆ]  
 ԳՆԵՑԱԻ ԹՈՄԱԻ, ՊԱՆԴՈՒԽՏ ԵԻ ՏՐՈՒՊ Կ  
 ՐԱԻՆԱԻՈՐԻ, ՈՎ  
 ԵՐԿՐՊԱԳԷՔ .... [ՅԱՂԱԻ]ԹՍ Յ  
 ԻՇԷՑԷ[Ք]:

Հրատ. Բարխուդարյան, 213, արձ. 682:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Երկու մասերից բաղկացած այս որմնախաչը պատի մեջ է դրվել շինության ժամանակ, հետևաբար և արձանագրությունը ժամանակակից է շինությանը՝ 1221 թ.:

7. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. արևմտյան պատի վերնամասում, ներքուստ, 8 փող.
1. ...ԿԱՄՂԱԻ ԹԱԳԱԻՈՐԻ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ս(ՈՒՐ)Բ ՆԱԽԱՎԿԱ ՎԱՆԻՑ ԵԻ

2. [ԵՏՈՒ ԻՄ ... ՀԱՅ]ՐԵՆԵ(Ա)ՑՆ Ի Ա(ՈՒՐ)Բ ՆՇԱՆ ԵՒ ...Ն ԶԻՄ ԲԱԺԻՆՆ, ԶՈՐ ԳԵՏԱ(Ի) ՀԱԻՏԱՐԱՐԱԾ ԸԶՃՈԿԱՆ ԱՐՏՈՅ ԿՈՅՄՆ ՈՒ
3. ՄՈՐԴԱԿ...: Տ(Է)Ր ՍԱՐԳԻՍ ՈՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍ[ՏԱՏԵՑԻՆ... Պ]ԱՏԱՐԱԳ :Ե: (5) ԱԻՐ ԶՈՒՐԶԻՆ, :Ե: (5)՝ ԽՈՒԹԼՈՒ ԽԱԹՈՒՆԻՆ, :Դ: (4)՝ ԶՈՒՐԶԻՆ ՀԱԻՐՆ՝
4. ԳՐ[ԻԳՈՐԻՆ]... [ՏԻ]ԿՆԱՆՑ ՏԻԿՆՈ՝ :Գ: (3), ՀԱՍԱՆԱ՝ :Ե: (5) ԷՐ ՎՃ[ԻՌԱ...] ՅԻՇԽԱՆՈՒԹԵ[ԱՆ] ՏԱՐՍԱԻՃԻՆ, ՄԵԾ ԻՇԽԱՆԻ, ԵՂԲԱԻՐ ՍՄՊԱՏԱ ԱՐՔԱԻ ԵՒ ԱՄ
5. ՈՒՍ[ՆՈՅ ՆՈՐԱ Մ]ԻՆԱՅ ԽԱԹՈՒՆԻ, ՈՐ ԴՈՒՍՏՐ ԷՐ [ԶԱԼԱԼԻՆ, ԱՂ]ՎԱՆԻՑ ԱՐՔԱԻ: ԱՐԴ, ՈՐ ԱՅՍ ՀԱՍՏԱՏ ՎՃՈՒՍ ԽԱՓԱՆԵԼ ԶԱՆԱՅ, ԹԷ ՅԻՄՈՅ,
6. ԹԷ ԱԻՏԱՐԱՑ, ԹԷ ՅԻՇԽԱՆ[ԱՑ], ԹԷ Ի ԶԵՌՆԱԻՈՐԱՑ՝ ԵՐԻՑ Ս(ՈՒՐ)Բ. ԺՈՂՈՎՈՅՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ :ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏ[ԱՑ] ՈՐՈՇԵԱԼ ԵՂԻՑԻ ՈՒ ՄԱՍՆ, ՈՒ ԲԱ
7. ԺԻՆ ԶՅՈՒԴԱՅԻ, ԵՒ ԶԿԱՅԵՆԻ ԱՌՑԷ: ԹԷ ՏԱՃԻԿ ԱԻԱԳ ՓՈԽԻ՝ Ի ՅԱ(ՍՏՈՒԾՈ)Յ, ՈՒ ՅԻՐ ՄԱՀՄԱԴԷՆ ԱՊԻԶԱՐ ԵՂԻՑԻ ՈՒ :Ռ: (1000), :Ռ: (1000) ՆԱԼԱԹ, :Ե: (5) ԱԻՐ
8. ՅԱՅՏՆՈՒԹԵ(ԱՆ)Ն, :Ե: (5)՝ ԾԱՌ-Զ[ԱՐԴ]ԱՐԻՆ, :Դ: (4)՝ ԶԱՏ[ԿԻՆ], :Դ: (4)՝ ՎԱՐԴԵ[Ի]ՈՐԻՆ, :Գ: (3)՝ Ա(ՈՒՐ)Բ ԽԱԶԻՆ:  
*Հրատ. Զալալեանց, 176: Ալիշան, 197-198: Բարխուդարյան, 214, արձ. 683:*

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Արձանագրությունից մի շարք քարեր թափված են, այդ տեղերը առնված են գծերի մեջ. մնացած մասերը խիստ հողմահարված են: Նույն վիճակում է եղել դեռևս Զալալեանցի ժամանակ, այդ պատճառով էլ հրատարակիչների կողմից վերծանվել է պակասավոր և սխալներով:*  
 Ժամանակը մոտավորապես որոշվում է Տարսայիճի հիշատակումով, որը մահացել է 1290 թ., ուրեմն դեռևս նրա կենդանության օրոք է գրված:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Արձանագրության սկզբում նվիրատուն նշում է «ՄԻԱԲԱՆԵՑԱ Ա(ՈՒՐ)Բ ՆԱԽԱՎԿԱ ՎԱՆԻՑ», այսինքն, այստեղ ոչ միայն եկեղեցին, այլև վանքն է կոչում Ս. Նախավկայի անունով:*

**8.** Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. *հյուսիսարևմտյան ավանդապատ երկրորդ հարկի պատին, երեսով հարավ. 7 տող.*

1. ....
2. ....
3. ....Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾԻՆ.....ԴԱԻԼԱԹԻՆ....
4. ....
5. ԱԹԱՊԻՆ ՅԻՇԱՏ[ԱԿ] ՄԵՐ ԱՍ.... Խ]ՈՒԹԼՈՒ ԽԱԹՈՒՆԻՆ, Տ(Է)Ր ՍՏԵՓԱՆՈՍ
6. ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ [Ի] ՏԱՐԻՆ :Ա: (1) ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ԱՆԽԱՓԱՆ, ՈՐ ԽԱՓԱ
7. ՆԵԼ ԶԱՆԱ, ԴԱՏԻ Ի Տ(ԵԱՌՆ)Է:

*Հրատ. Բարխուդարյան, 215, արձ. 684:*

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Սկզբի երկու տողերը բոլորովին եղծված են: Նախորդ արձանագրության նվիրատուներին է վերաբերում և մոտ է նրան ժամանակով:*

**9.** Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. *հյուսիսային պատին, ներքուստ, Հ<sup>մ</sup> 677-ի տակ (այս համարակալմամբ թիվ 1-ի – Կ. Մ.), 22 տող.*

1. ՇՆՈՐՀԱԻՔ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹ(ԵԱՄ)Բ Ա(ՈՒՐ)Բ ԵՐՐՈՐԴՈՒԹԵ(ԱՆ)Ն. ՅՈՒՍՈՎՆ,
2. ՈՐ ԱՌ-Ք(ՐԻՍՏՈ)Ս. ԵՍ՝ ՅՈՔՆԱՄԵՂ ԵՒ ԱՊԻԿԱՐ ՍՏԵՓԱՆՈՍ, ՈՐԴ
3. Ի ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՏԱՐՍԱԻՃԻՆ, ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՆ
4. ԵԱՑ ԵՒ ՏԵՍՈՒՉ ԵՐԿՆԱՀԱՆԳԷՏ ԱԹՈՌՈՅՍ ՏԱԹԵԻՈ ԵՒ
5. ՆՈՐԱՎԱՆԻՑ, ՅԻՇԵԼՈՎ ԶՈՒՆԱՅՆՈՒԹԻ(ԻՆ) ՎԱՅՐԿԵՆԻ ԿԵՆԱ



6. ՑՄ՝ ԵՏՈՒ ԶԻՄ ՀՈԳՈ ՄԱՍՆՆ ԲԱԺԻՆ Ա(ՍՏՈՒԾՈՆ)Յ ԵՒ ԺԱՌԱՆԳ Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԶԶՎԱ ԳԵՂՆ ԻՒՐ ԲՈԼՈՐ ՍԱՀՄԱՆԱԻՔՆ ԱԶԱՏ
7. ՅԱՄԷՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՀԱՐԿԱՑ՝ Ի ԴԻԻԱՆԷ, Ի ԽԱԼԱՆԷ ԵՒ ՅԱՄԷՆ ՉԱՐԷ, ԶՈՐ ԳՆԵԼ ԷՒ ՅԻՄ ԱԽԲԱԻՐԷՆ՝ Ի ԶԱԼԱԼԷՆ ԵՒ ՏՎԵԼ Ի Գ
8. ԻՆՆ :ԻԱ: (21) ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԵՒ Ի ՓՈՇԱՀԱՆՔՆ՝ ԶՍ(ՈՒՐ)Բ ՍԱՀԱԿ ԵՒ ԶԱԲԱՍԱՇԷՆ, ԵՒ ԱՅԼ ԵՏՈՒ ՅԻՄ ՀԱԼԱԼ ՀԱՅՐԵՆԱԲԱԺՆԷՆ Ի ՀՐ
9. ՇԿԱԲԵՐԴ, ԶՔԱՐԿՈՓ ՎԱՆՔՆ ԻՒՐ ՍԱՀՄԱՆԱԻՔՆ, ԵՒ ՅԵՂԵԳԵՑ ԶՈՐԻՆ՝ ԶԱՐԱՏԷՆՍՆ ԻՒՐ ԳԵՂՈՎՆ, ԵՒ ԱՄԷՆ ՀԱՅՐԵՆԻՔ
10. Ն Ի ՄԱՍ ԺԱՌԱՆԳՈՒԹԻ(ԻՆ) Ի Ս(ՈՒՐ)Բ ՈՒԽՏՍ ՆՈՐԱՎԱՆԻՑ ՀԱՅՐԵՆԻՔ ԱՆԽԱԽՏ ԵՒ ԱՆԴԱՎԻ՝ ՄԻՆՉ Ի ԳԱԼՈՒՍՏՆ Ա(ՍՏՈՒԾՈՆ)Յ. ԵՒ ԱՅԼ ԲԱԶ
11. [ՈՒՄ...] ԵՒ ԿԱՄԱԻ ՄԻԱԲԱՆ ԵՂԲԱՐՑՍ ՀԱՍՏԱՏԵՑԻ ԻՆՉ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԱ, ԶԻ ԶԿՆԻ ԿՐԿՆՈԶԱՏԿԻՆ :Ա: :Խ: (մեկ 40-ունք)
12. ՊԱՏԱՐԱԳ ԱՌՆԵՆ ԵՒ ԱՄԷՆ ԱԻՐ ԱՄԲԻԾՔ ԵՒ ԱԻԵՏԱՐԱՆ՝ ՄԻՆՉ Ի ՀՈԳՈՅՆ ԳԱԼՈՒՍՏՆ, ԵՒ ԶԱԻՐ ՊԷՆՏԷԿՈ[Ո]ՍՏԷԻՆ ՄԵԶ
13. ՅԻՇԱՏԱԿ ԿԱՏԱՐԵՆ՝ ԶԵՆՄԱՄԲ ԶՈՒԱՐԱԿԱՑ ԵՒ ԸՌԱՏ ԸՌՈՃԿԱԻՔ, ԵՒ ՅԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ՄԵԶ ՊԱՏ
14. ԱՐԱԳԵՆ՝ ԹԵՐԵԻՍ ԳՏԻՑ ՅԱ(ՍՏՈՒԱ)Ծ ՀՈԳՈՅՆ ՈՂՈՐՄՈՒԹ(ԻԻ)Ն ԵՂԿԵԼԻ ՀՈԳՈՅՍ Ի ՄԵԾԻ ԱԻՈՒՐՆ ԱՆԵՐԵԿԻ՝ ՈՒՐ ԲԱՆՔՆ ՍՊԱՌԻՆ
15. ԵՒ ԳՈՐԾՔՆ ԹԱԳԱԻՈՐԵՆ: ԵՒ ԱՐԴ, ԵԹԵ ՈՔ ԶԱՅՍ ԽԱՓԱՆԵԼ ԽՈՐՀԻ ԿԱՄ ՅԱՓՇՏԱԿԵԼ ԶՏՈՒՐՔՍ ԵՒ ԿԱՄ Ի ԺԱՌԱՆԳԱԻ
16. ՈՐԱՑԴ ԾՈՒԼԱՆԱԼ ԵԴԵ(Ա)Լ ՍԱՀՄԱՆԻՍ՝ ԸՆԴ ԱՆԼՈՅԾ ՆԶՈՎԻՔ ԵՂԻՑԻՆ ՅԱ(ՍՏՈՒԾՈՆ)Յ. ԱՄԵՆԱԿԱԼԵՆ ԵՒ ՅԱՄԵ
17. ՆԱՅՆ ՍՐԲՈՑ ՅԵՐԿՆԱԻՈՐԱՑ ԵՒ ՅԵՐԿՐԱԻՈՐԱՑ, ԸՆԴ ԿԱՅԵՆԻ ԵՒ ԸՆԴ ՅՈՒԴԱԻ ԵՒ ԱՐԻՈ

18. ՍԻ ՊԱՏԺԵԼ ԽԱՅՏԱՌԱԿԵՍՑԻՆ, ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԵՂԻՑԻ[Ն]:
19. ԹԵ ՏԱՃԻԿ ՓՈՒԽ ԵՒ ԽԼԵԼ ԶԱՆԱ(Յ) ՅԱ(ՍՏՈՒԾՈՆ)Յ ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ Ն
20. ԶՈՎԱԾ ԵՂԻՑԻ ԵՒ ՅԻՒՐ ՓԵՂԱՄՊԱՐԷՆ Ի ՄԱՀՄԵՏԷ ԱՊԻՋԱՐ.
21. ԵՒ :Ռ: (1000), :Ռ: (1000) ՆԱԼԱԹ ԼԻՆԻ, ՄԵՌԵԼԱԻՔ ԵՒ ԿԵՆԴ
22. ԱՆԱԻՔ, Ի ԹՎԻՍ :ՉԽԷ: (1298). ՀԱՍՏԱՏ Է:  
*Հրատ. Զալալեանց, 175-176: Ալիշան, 196: MAK, XIII, 165-166: Լալաեան, XXVI, 53-54, Տեր-Ավետիսյան, 479-80, Բարխուդարյան, 215-216, արձ. 685:*

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *8-րդ տողում բնագիրն ունի ՓՈՇԱՀԱՆՔ, հրատարակիչները վերծանել են ՓՈՂԱՀԱՆՔ, երևի հիմնվելով Սպ. Օրբելյանի Պատմության մեջ մեկ անգամ հանդիպող Փողահանք տեղանվան վրա: Բայց այդպիսի ձևափոխումը հեշտությամբ կարող էր կատարվել ձեռագրի մեջ՝ գրիչների մեղքով:*

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Արձանագրության 9-րդ տողում Ս. Բարխուդարյանի վերծանման «ԶՔԱՐԿՈՓԷԼԱՆՔՆ» վրիպումը Գ. Սարգսյանն ուղղում է՝ «ՔԱՐԿՈՓ ՎԱՆՔՆ», նաև անդրադառնում 8-րդ տողում նշված ՓՈՇԱՀԱՆՔ-ին, վկայակոչելով այդ մասին Ս. Ավագյանի ուշագրավ դիտարկումները և տեղորոշման միանգամայն ընդունելի վարկած է առաջ քաշում (Գ. Սարգսեան, Նորավանքի նուիրատուական արձանագրութիւնները, էջ 80-82):*

**10.** Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. *հյուսիսային պատին, ներքուստ, նախորդի տակ. 2 տող.*

ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈՆ)Յ, ԵՍ՝ ՏԱՐՍ(ԱՅ)ԻՃՍ, ԵՏՈՒ  
 ԷՐԻՆ ԱՐՏ ԻՒՐ ՍԱՀՄԱՆՕՔ ՆՈՐԱՎԱՆԻՑ ՎԱԽ(Մ)Ն:  
*Հրատ. Զալալեանց, 176: Ալիշան, 196: MAK, XIII, 166: Լալաեան, XXVI, 54, Տեր-Ավետիսյան, 480: Բարխուդարյան, 216, արձ. 686:*

Ծանոթագրությունը Ա. Բարխուդարյանի. Այս երկրորդը գրված է նախորդից տարբեր՝ XVI դարի գրչությամբ. հեղադա ավելացում է և կեղծիք:

Ծանոթագրությունը Ա. Հարությունյանի. Նվիրագրի երկրորդ տողի է-ՐԻՆ ԱՐՏ բառակապակցությունը, որը «Դիվան»-ում մեկ բառ է կարդացվել, ցորենի արտն է, այսինքն՝ երբ հարդախառն ցորենը կամ գարին կալի վրա ծեծելուց հետո երնում (էրնում) են (քամուն տալիս)՝ հատիկը հարդից զատելու համար (ՀԲԲ, հ. 1, եր., 1944, էջ 602):

11. Ա. ՍՏԵՓԱՆՈՍ. հյուսիսարևմտյան խորանի երկրորդ հարկի պատին, երեսով հարավ, Հ<sup>մ</sup> 684-ի տակ (այս համարակալմամբ թիվ 8-ի – Կ. Մ.), խիստ հողմահարված. 7 տող.

1. ԵՄ՝ ԾՆՀԱԻՈՐՍ, ՏՎԻ :Ճ: (100)
2. ԴԵԿԱՆ Ի ՆԱԽԱՅՎԿԱՅ
3. .... ԱՀՈ ԵԻ
4. ....Ա Ք(ՐԻՍՏՈ)Ս Մ...ԻՆ
5. ....ՍԳԻՍ ԱՐ
6. ....ՄԵՂԱՑՆ
7. ՊԱՐՏԱԿԱՆ ԵՆ Ի Յ.....

Հրատ. Բարխուդարյան, 217, արձ. 687:

12. Ա. ՍՏԵՓԱՆՈՍ. հյուսիսարևելյան ավանդաբան երկրորդ հարկի մուտքի ճակատակալ քարին, խիստ հողմահարված. 9 տող.

1. ԵՄ՝ ԱԲԱՍ, ՈՐԴԻ ՍՄՊԱՏ
2. Ա..... ԱՆՍ
3. ....
4. .... Զ: Յ(ԱՅ)ՏՆՈՒԹԻ(ԻՆ) ՈՐԶ
5. ԱՓ ԵՍ ԿԵՆԴԱՆ(Ի) ԵՄ Զ:Բ: (2) ԱԻՐՆ
6. [ԻՄ Մ]ԱԻՐ ԴՈ(Վ)ԼԱԹԻ Ա
7. ՌՆԵՆ ԵԻ ՅԵՏ ՄԵՐ ԱՆՑ
8. [ԱՆԵԼՈ]Զ :Բ: (2) ԱԻՐՆ ԻՆՁ ԵԻ Զ :Ա: (1)

9. ԱԻՐ ՀԱԻՐՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐ[ՀՆԻՆ ՅԱ(ՍՏՈՒ-ԾՈ)Յ]

Հրատ. Բարխուդարյան, 216, արձ. 688:

Ծանոթագրությունը Ա. Բարխուդարյանի. XIII դար:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Ստորև ներկայացվող երեք վիճակները Ա. Բարխուդարյանը վկայաբերել է ըստ նախորդ հրատարակիչների և դրանք ներկայացրել գավթի արձանագրությունների վերջում՝ «ԳԱՎԻԹ. արևմտյան մուտքից վեր, արտաքուստ» բացատրությամբ (Դիվան, III, էջ 234, արձ. Հ<sup>մ</sup> 760, 761, 762): Սակայն, այդ վիճակները գտնվում են Ա. Ստեփանոս եկեղեցու արևմտյան պատի ուղղանկյուն պատուհանի շուրջը (վերնամասում) ագուցված խաչքարերի ստորին մասերում, ուստի նշում ենք այստեղ և արձանագրությունները ներկայացնում աջից ձախ հերթականությամբ (նկ. 41): Տեղի ճշգրտմամբ նաև այս երեք խաչքարերի (երեք դեպքում էլ խաչերը փոքրիկ որմնասյունների վրա բարձրացող կամարի տակ են) և անթվական վիճակների ժամանակն է ավելի որոշակի դառնում, քանի որ եկեղեցու կառուցումն ավարտվել է 1223-ին, ուրեմն դրանք մինչև այդ թվականն են գրվել:

13. Ա. ՍՏԵՓԱՆՈՍ. արևմտյան պատուհանի ձախ կողմում, արտաքուստ, պատի մեջ ագուցված խաչքարի ստորին մասում, 3 տող.

ԶՀԱՅՐ Տ(ԵԱՌ)Ն ՍՏԵՓ  
ԱՆՆՈՍԻ ԶՏ(Է)Ր ԳՐ  
ԻԳՈՐ ՅԻՇԵՑԷԲ:

Հրատ. Զալալեանց, 181: Ալիշան, 201: Լալաեան, XXVI, 61:  
Բարխուդարյան, 234, արձ. 762:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Սյունյաց Ստեփանոս Գ Ֆախր էլ Մսեհ եպիսկոպոսի հայրն է՝ Գրիգոր Մեղրեցին, մահացել է 1168-ին:

14. Ա. ՍՏԵՓԱՆՈՍ. արևմտյան պատուհանից վեր, արտաքուստ, պատի մեջ ագուցված խաչքարի ստորին մասում, 1 տող.

ԶՄԱՅՐ Տ(ԵԱՌ)Ն ՅԻՇԵՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս:

Հրապ. Զալալեանց, 181: Ալիշան, 201: Բարխուդարյան, 234, արձ. 760:



Նկ. 41 Արձ. Հ<sup>ր</sup> 13, 14, 15:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Հրապարակության մեջ անեղծ ԶՄԱՅՐ բառը նշված է ԶՀԱՅՐ, իսկ Տ(ԵԱՌ)Ն բառից հետո դրված է բազմակետ, մինչդեռ այսպեղ բացակայող բառեր կամ տառեր չկան (Դիվան, III, էջ 234, արձ. Հ<sup>ր</sup> 760): Հավանորեն այս վիճակը առանց անունը տալու, նշվում է այս շարքի առաջին խաչքարի արձանագրության մեջ հիշատակված տեր Ստեփանոս Ֆախր էլ Մսեհի մայր և Գրիգոր Մեղրեցու կին Ծամամը: Վերջինիս անվանապես և մեծարանքով հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը («սրբասէր և մեծահաւատ տիրուհի», Ստեփանոս Օրբելեան, էջ 341): Բանն այն է, որ հենց Ծամամի համառ պնդումներով է Գրիգոր Մեղրեցին Հռոմկլա գնացել և եպիսկոպոս դարձել, որից հետո նույն պաշտոնին արժանացել է նաև նրանց որդին՝ Ստեփանոս Ֆախր էլ Մսեհը, որն էլ Նորավանքը Սյունյաց աթոռանիստ է դարձրել:

15. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. արևմտյան պատուհանի աջ կողմում, արտաքուստ, պատի մեջ ագուցված խաչքարի ստորին մասում, 3 տող.

ԶՀԱՅՐ Տ(ԵԱՌ)Ն ՍԱՐԳՍ

Ի ԶՅՈՒՍԷՓ ՅԻՇ

ԵՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս:

Հրապ. Զալալեանց, 181: Ալիշան, 201: Լալաեան, XXVI, 61

Բարխուդարյան 234, արձ. 761, Սաղումյան, 95:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Սարգիս Ա-ը Ստեփանոս Ֆախր էլ Մսեհի քրոջ, այսինքն՝ Գրիգոր Մեղրեցու և Ծամամի դուստր Խորիշահի և Հովսեփի որդին էր: Ըստ էության, Ծամամը Սարգսի մայրական գծով տարն էր կամ մեծ մայրը, ընդ որում, մայրական կողմի ազգակցության շնորհիվ էր նա Սյունյաց եպիսկոպոս դարձել:

### ԳԱՎԻԹ

16. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատի կենտրոնական մասում, բազմաթիվ մանր խաչերի մեջ, ներքուստ, 4 տող.

1. ԹՎ(ԻՆ) :ՈՁԱ: (1232) ԵՄ՝ ԳՈՐԳ, ԶԻՄ ՀՈԳՈՅ ԱՐԴԻԻՆՔ ՏՎԻ Ի Ս(ՈՒՐ)Բ
2. ՆԱԽԱՎԿԱՅՍ, ՄԱՍ ՊԱՀԱՐԱՆՈՎ ԵՒ ՏԱԻՆԱՊԱՏՃԱՌ.
3. ԵՒ ԵՄ՝ Տ(Է)Ր ՍԱՐԳԻՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԶՍ(ՈՒՐ)Բ Գ
4. ԵՈՐԳԻՆ :Ե: ՇԱԲԱԹՆ (հինգշաբթին - Կ. Մ.) ԱԻՐՆ :Բ: (2) ՊԱՏԱ ՐԱԳ ԱՆԽԱՓԱՆ:

Հրապ. MAK XIII, 170 (պակասավոր): Լալաեան, XXVI, 47 (նույնպես):

Զալալեանց, 178: Բարխուդարյան, 217, արձ. 689:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Այս ինչպես և հաջորդ արձանագրությունը թվագրված են գավթի կառուցման ընդունված՝ 1261 թվականից առաջ:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Սա եկեղեցու կառուցումից կարճ ժամանակ անց գրված և հսրակ թվական ունեցող ամենավաղ վիմագիրն է (1232), որտեղ այն կոչվում է Սրեփանոս Նախավկայի անունով: Հեղափոխական է նաև մասնատրուփի և Տոնապարծառ մատյանի նվիրարվության արձանագրումը:*

**17. ԳԱՎԻԹ.** *արևելյան պատի հարավային անկյունում, մուտքի կողին, ներքուստ, փորագրած խաչի շուրջը. 5 տող.*

ԹՎ(ԻՆ) :ՈՀԱ: (1222) ՅԻՇԵԱ  
Ք(ՐԻՍՏՈ)Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ ԶՎԱՍ  
ԱԿ, ՈՐ ՏՂԱ  
ՀԱՍԱԿՈՎ ՓՈԽ  
ԵՑԱԻ ՅԱՇԽԱՐԷՍ:

*Հրատ. Բարխուդարյան, 218, արձ. 690:*

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Գավթի արևելյան պատը նույնն է Ս. Կարապետի արևմտյան պատի հետ, հետևաբար գրված է գավթի շինությունից առաջ՝ Ս. Կարապետի (Ս. Սրեփանոսի – Կ. Մ.) արևմտյան պատին, արտաքուստ:*

**18. ԳԱՎԻԹ.** *հարավային պատի միջին մասում, ներքուստ, 6 տող.*

1. ՅԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ, ԵՄ՝ ՇԱՏԼՈՅՍ, ԵԿԻ Ի ՆՈՐԱՎԱՆՍ ԵԻ Ե-ԿԵՂԵՑՈՅՍ ՄԻԱԲԱՆԵՑԱ,
2. ՈՒ ԶԻՄ ԶԵՌԱՏՈՒՆԿ ԱՅԳԻՆ Ի Ս(ՈՒՐ)Բ ՆԱԽԱՎԿԱՅՍ ՏՎԻ. Տ(Է)Ր ՍՏԵՓԱՆՈՍ ԵԻ ՄԻԱԲԱՆՔՍ
3. ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆԻՆ ՏԱԻՆԻՆ :Ա: (1) ՊԱՏԱՐԱԳ ԻՆՁ՝ ՇԱՏԼՈՅՍԻՍ. ԱՐԴ, ՈՐՔ ՅԵՏ
4. Ի ՄԵՐ ԲԱՆԻՍ ՀԱԿԱՌ ԿԱՆ, ՄԵՐՈՑ ԿԱՄ ՅԱԻՏԱՐԱՑ, ԿԱՄ ՊԱՐՈՆ, ԿԱՄ ԶԵՌՆԱԻՈՐ, ՀԱԿԱՌ(Ա)ԿՈՂՔՆ

5. :ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ ՈՒ ԻՄ ՄԵՂԱՑՆ ՊԱՐ
6. ՏԱԿԱՆ Է. ԹՎԻՍ :ՉԵ: (1256). ՀԱՍՏԱՏ Է:

*Հրատ. Զալալեանց, 178-179: Ալիշան, 199-200: MAK, XIII, 170-171: Լալաեան, XXVI, 47, Բարխուդարյան, 218, արձ. 691:*

**19. ԳԱՎԻԹ.** *առաստաղի մեջ ագուցված որմնախաչի շուրջը:*

Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)Ծ, Յ(ԻՍՈՒ)Ս Ք(ՐԻՍՏՈ)Ս

*Հրատ. Զալալեանց, 170: Ալիշան, 187: Բարխուդարյան, 218, արձ. 696:*

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Անկասկած ժամանակակից է շինությունը:*

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Գավթի առաստաղի արևելյան կողմում գտնվող այս խաչը, որի չորս կողմում փակագիր երկուական տառերով գրված է արձանագրությունը, խաչային հորինվածքի վերին մասն է, որից բավական ներքև գտնվում է շեղադիր խաչաքանդակով հիմքը: Այս երկուսը միացած են ուղղահայաց երիզով, որի մեջ՝ հիմքի մոտ, կա վերձիգ տառերով ևս մի փակագիր՝ «Ք(ՐԻՍՏՈ)Ս»:*

**20. ԳԱՎԻԹ.** *պատերի բարձրությունը ներքուստ կիսող քառակուսի գոտու վրա. հարավային պատին ամբողջ և արևմտյանին՝ մինչև մուտքը. 3 երկար տողով.*

1. Ի ԹՈՒԻՍ :ՉԺ: (1261). ԱՅՍ ԳԻՐ ՅԻՇԱ[ՏԱԿԻ ԵԻ] ԱՐՁԱՆ ԱՆՁՆ-ՋԵԼԻ ԻՄ ՍՄՊԱՏԱ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ, ՈՐԴՈ ՄԵԾԻՆ ԼԻ-ՊԱ[ՐՏԻ, ՈՐ] ԶԳ[ԱԻԹ]Ս ՇԻՆԵՑԻ, ԶԵԿԵՂԵՑԻՍ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԻ ԵԻ ԶՄԻ... ԶՄԻ... ԻՐ ՊԱ[Հ]ԱՐԱՆԱԻՔ. ԵԻ (Ե)ՏՈՒ ՅԻՄ [Հ]ԱՅՐԵՆԱՑՆ :Բ: (2) ԳԵՂ Ի Ս(ՈՒՐ)Բ ՆԱԽԱՎԿԱՅՍ, ԶԱ-



Ի՛նչ Ո՛ր ԶԱՆԱՊԱՏ, Ե՛ի ՅԱԿՈՒԻ ԶՆՈՐԱՏՈՒՆԿ ՄԵԾ ԱՅԳԻՆ Ի՛յր ԿԻՐԱԿՆԱԶՐՈՎՆ: Տ(Է)Ր Ս(ԱՐ)Գ(ԻՍ) Ե՛ի ԱՅԼ ՄԻ

2. ԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԶԱԽԱԳ ԽՈՐԱՆՆ, ՈՐ ՀԱՆԱՊԱԶ ՊԱՏԱՐԱԳ ՊԱՐՈՆԱՑՆ ԱՌՆԵՆ ՇԱԲԱԹ ԱԻՐ ՈՒ ԿԻՐԱԿԻ՝ ԼԻՊԱՐՏԻ, ՀԻՆԳՇԱԲԱԹՆ՝ ԱՍՓԱԻՆ, ԶՅԵՐԿՈՒՇԱԲԱԹՆ՝ ԵԼԻԿՈՒՄԻՆ, ՉՈՐԵԼՔՇԱԲԱԹՆ ԻԿԱՆԷԻՆ, ՈՒՐԲԱԹՆ՝ ՓՈՒՐԱԴԱԽԼԱԻՆ. ԱՐԴ, ՈՐ ՅԵՏ ՄԵՐ ԺԱՌԱՆԳ ԼԻՆԻՆ ՏԵՂՈՅՍ, ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱԽՏԱՐԱՑ, Ե՛ի ԱՅՍ ՀԱՍՏԱՏԵԱԼ ՊԱՅՄԱՆԻՍ ՀԱԿԱՌԱԿԵԼ ԶԱՆԱ [Ե՛ի ԿԱՄ Ի Ս(ՈՒՐ)Բ] ԵԿԵՂԵՑՈՅՍ ՀԱՆԵԼ ԿԱՄ ԶԺԱՄՆ ԽԱՓԱՆԵԼՈՅ,
3. ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է Ե՛ի ԶԱՆԷԾՍ ՅԱԽԱԳԻՆ ԶԿԱԵՆԻՆՆ Ե՛ի ԶԳԱԵԶԻՆ ԱՌՑԷ. Ե՛ի ԲԱԺԻՆ ԶՈՒԴԱԻՆ Ե՛ի ԽԱԶԱՀԱՆ[ՈՒԱՑՆ]. ԵԹԷ ՈՔ Ի ՏԱՃԻԿԷ ԱԽԱԳ ՓՈՒԽ ՈՒ ՀԱՆԵԼ ԶԱՆԱ՝ ՅԱ(ՍՏՈՒԾՈ)Յ ՈՒ Ի ՅԻԻՐ [ՄԱՀՄԵՏԷ ԱՊ]ԻԶԱՐ ԵՂԻՑԻ. :Ռ: (1000), [:Ռ: (1000) ՆԱԼԱԹ ԼԻՆԻ: ԵԹԷ] ՅԵՏ ՄԵՐ ԱՅԼ ՈՔ ԱՐԴԻՆՍ ԱՌՆԵ ԿԱՄ ԲԱՐԷԿԱՄԱՑ ՊԱՏԱՐԱԳ ՄԵՐ ՏԱՆ ԶԱԽԱԳ ԽՈՐԱՆՆ ՉՈՒԵ... ՏԱԼՈՒ... :

Հրապ. Օրբէլեան, 360: Քաջբերունի, Արարապ, 1890, էջ 37-38: Ալիշան, 189-190: MAK, XIII, 169: Լալաեան, XXVI, 48: Բարխուդարյան, 218, արձ. 692:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Ամբողջ արձանագրությունը փորագրված է 12 քարերի վրա, որոնցից 7-ը հարավային և 5-ը արևմտյան պատին են: Դրանցից 3-ը և 7-ը բոլորովին ջարդված, թափված են. մյուս մասերում միայն տեղ-տեղ ջարդված: Պակասող մասերը լրացնում ենք մասամբ բառերի մնացորդ տառերի հիման վրա, եթե դրանք կան, ապա ըստ նախկին հրատարակիչների, որոնց ժամանակ քիչ վնասված են եղել և ըստ Սպ. Օրբեյանի, որն ունի արձանագրության բովանդակության շարադրանքը կամ նույնի գրավոր աղբյուրի հիման վրա արագրածը:*

21. ԳԱՎԻԹ. *պատերի բարձրությունը ներքուստ կիսող քառակուսի գոյու վրա. արևմտյան պատի հյուսիսային կեսում և հյուսիսային պատի արևմտյան մասում, 3 երկար տողով.*

1. ՅՈՒՍՈՎՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ, ԵՄ՝ ՍՄՊԱՏ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ, ԻՄ ՍՐՏԻ ՅԱԽԺԱՐՈՒԹ(ԵԱՄ)Բ ՏՈՒԻ Ի Ս(ՈՒՐ)Բ ՆԱԽԱՎԿԱՅ[Ս Ի]Մ ՀԱՅՐԵՆԵԱՑՆ ԶԱԶԱՏՆ ԻԻՐ ՍԱՀՄԱՆԱԻՔՆ, ԼԵՐԱՄԲ Ե՛ի ԴԱՇՏԻԻ Ե՛ի ԶԻ[Մ ԱՅԳԻՆ Ի Գ]ԻՆԻՇԱԿԱԶՈՐ՝ Վ(Ա)Ս(Ն) ՓՐԿՈՒԹ(ԵԱՆ)Ն ՀՈԳՈ ԵՂԲԱԻՐՈՐԴՈՅ
2. ԻՄՈ ԲՈՒՐԹԻԼԻՆ, ՈՐ ԴԵՌԱԲՈՅՍ Ե՛ի ՆՈՐԱՓԹԻԹ ՀԱՍԱԿԱԻ ՓՈՒԵՑԱԻ ԱՌ-Ք(ՐԻՍՏՈ)Ս. ՊԱՏԵՐԱԶՄԱԻ Ի ԴԱՇՏԻՆ ՍԿԻԹԱՑՈՑ, ԽԱԽԱՐ ԷԱԾ ՏԵՍՈՂԱՑՍ Ե՛ի Դ..... ԱԷՑԱՑՍ ԻԻՐ.... ԶԱԽԱԿ ՅԻՇԱ(ՏԱ)ԿԻ: Տ(Է)Ր ՍԱՐԳԻՍ Ե՛ի ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏ
3. ԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐՈՒՄՆ :ԺԵ: (15) ՊԱՏԱՐԱԳ՝ :Ժ: ԱԻՐՆ ԱԽԱԳ ՏԱԽՆԵՐՈՅՆ Ե՛ի ՊԱԻՂՈՍԻ ՈՒ ՊԵՏՐՈՍԻ ՏԱԽՆ(ԻՆ), Ե՛ի ՅՈՀԱՆՈՒ Ե՛ի ՅԱԿՈՐԱ, :Ե: ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ ԿԱՏԱՐԻՉ[ՔՆ] ԱԻՐՀՆԻՆ Ե՛ի ԽԱՓԱՆԻՉՔՆ [ԴԱ]ՏԻ(Ն) Ի Տ(ԵԱՌՆ)Է: Ե՛ի ՈՐ ԶԳԵՂՆ Ե՛ի ԶԱՅԳԻՆ ՀԱՆԵԼ Զ(Ա)ՆԱ :ՅԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱ[Ց]Ն ՆԶՈՎԵ[ԱԼ ԵՂԻՑԻ]:

Հրապ. Օրբէլեան, 361 (բովանդակությունը): Զալալեանց, 178: Ալիշան, 190: MAK, XIII, 169: Լալաեան, XXVI, 48, Տեր-Ավետիսյան, 484: Բարխուդարյան, 218, արձ. 693:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Արձանագրությունը փորագրված է գոյին կազմող 11 քարերի վրա. տեղ-տեղ ունի վնասվածքներ. լրացումները կատարում ենք համաձայն նախորդի: Օրբեյանի ներկա հրատարակությունների մեջ առաջին տողի «այգին ի Գինիշիկաձոր»-ի փոխարեն տպված է «ի Ծաղկաձոր», անշուշտ գրիչների սխալ է, նույն տեղում կա նաև Երևան տեղանունը, որն անհարիր է նկարագրությանը և հավանաբար ԵՐԵՐԱՆ պիտի լինի: Թվականը որոշվում է Բուրթելի սպանությամբ, որը տեղի է ունեցել 1261 թվականին:*

22. ԳԱՎԻԹ. *հյուսիսային պատի բարձրությունը կիսող գուրու արևելյան մասում, 3 տող.*

1. ԿԱՄԱԻՆ [Ա(ՍՏՈՒԾՈ)Յ] Ի Տ(Է)ՐՈՒԹԵ(ԱՆ) ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՍՄՊԱՏԱ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ(ԱՆ) ԳՐ(Ի)ԳՈ(ՐՈ), ԵՍ՝ ԱԼՓԱՍԼԱՆ [ԵԻ]
2. ՄԻԽԻԹԱՐ ՔԱՀԱՆԱՑ ԵՒ ՏՎԻ ԶԴԱԵԿՈ-ՔԱՐՈ ԱՅԳԻՆ [Ի ՆԱԽԱ]ՎԿԱ[ՅՍ ԻԻՐ] ԳԼԽՈՎՆ ԵՒ ԳԵՏՈՎՆ. ԳՐ(Ի)Գ(ՈՐ) ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱ(Ն)ՔՍ ՏՎ(ԻՆ) ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԱԻՐՆ ԶԱՄ(ԷՆ)
3. ԵԿԵ(ՂԵ)ՑԻՔՍ ՊԱՏԱՐԱԳ :Ը: (8) ԱԻՐ՝ :Ա: (1) ԽՈՒՄԱՐԻՆ, :Ե: (5) ԱԼՓԱՍԼԱՆԻՆ, :Բ: (2) ԴԱՄԱԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐ(ՀՆԻ)Ն ՅԱ(ՍՏՈՒԾՈ)Յ:

*Հրապ. Ջալալեանց, 177: Ալիշան, 198: MAK, XIII, 170: Լալաեան, XXVI, 49, Բարխուդարյան, 219, արձ. 694:*

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Գրված է Սմբատ իշխանի մեծ արձանագրությունից անմիջապես հետո, նույն գուրու հյուսիսային պատի վրա եղած հատվածի արևելյան մասում. նախորդից բաժանված է 5 խաչքարով: Առաջին տողի վերջին ԱԼՓԱՍԼԱՆ և երկրորդ տողի ԱԻՐ ԶԱՄ բառերն անցել են արևելյան պատի վրա: Երրորդ տողում պատարագ բառից հետո :Ը: թվական արտահայտող տառը գրված է քառակուսի փոսի մեջ. գրիչը սխալվել է, նախկինը ջնջել և գրել նորը: Թվականը որոշվում է Սմբատ իշխանի հիշատակումով: Նա մահացել է 1273 թ., ուրեմն նրանից առաջ է գրված, նրա կենդանության ժամանակ: Սկզբի մասում, խաչերի շուրջը այլ կարճ հիշատակագրություն է, որը չի հասկացվել հրատարակիչների կողմից և խառնվել է այս արձանագրությանը, որով իմաստն աղճատվել է: Գծագրությունը թողնելով նույնը, այդ մասը համարում ենք որպես առանձին արձանագրություն: Սրա ժամանակն էլ պետք է նույնը համարել: Ամբողջ արձանագրության թե՛ գրչությունը և թե՛ լեզուն ցածրորակ են:*

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Քանի որ իբրև առաջնորդ հիշվում է 1260-1261 թթ. աթոռակալած Գրիգոր 2 եպիսկոպոսը, վիճագիրն այդ ժամանակով պետք է թվագրել:*

23. ԳԱՎԻԹ. *նախորդ 3-րդ տողի սկզբում, 1 տող.*

ՏԻՐԱՑՈՒ ԴԱՎԻԹ

*Հրապ. Բարխուդարյան, 219, արձ. 695:*

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Ս. Բարխուդարյանը կարդացել է «ՏԻՐԱՑՈՒ ԴԱՎԻԹ» և ծանոթագրել. «Հավանաբար նախորդ կամ թերևս դրանից առաջ գրված Սմբատի մեծ արձանագրության գրիչն է»: Նկատենք, որ անունը «Վ» տառով է, իսկ նրա կարծեցյալ վերջին «Է»-ն իրականում վերևի արձանագրության 2-րդ տողի վերջին բառի (ԶԱՄԷՆ) 3-րդ տողի սկիզբ եկած կցագիր «ԷՆ» մասնիկն է: Հնարավոր է, որ այստեղ վկայված է երկու անուն՝ Տիրացու և Դավիթ: Անունների տակ գրված է՝ «ԿԱԿՆԵՑԻՔ ԽԱԶՍ ԲԱՐԵ...», որից հետո այն 2 տողով շարունակվում է կլորավուն որմնասյան վրա: Այս երեք տողերը Ս. Բարխուդարյանի մոտ դարձել են առանձին արձանագրություն՝ Հ<sup>տ</sup> 714 (այստեղ՝ Հ<sup>տ</sup> 41):*

24. ԳԱՎԻԹ. *արևմտյան պատի հյուսիսային մասում, ներքուստ, 5 տող:*

1. ՅԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ, ԵՍ՝ ՍԱՐԿԱԽԱԳ ԵՐԵՑ, ՈՐԴԻ ՄԿ[ՐՏ]-ՉԻՆ, ԵԿԻ Ի ՆՈՐԱՎԱ[ՆՍ Ս(ՈՒՐ)Բ] ՆՇԱՆԻՍ ԱՌ
2. ԱՋԻ, ԻՄ ՍՐՏԻ ՅԱԻԺԱՐՈՒԹ(ԵԱՄ)Բ ԶԻՄ ԳՆԱԾ ՀԱՅՐ[Ե]-ՆԻՔՆ Յ... ԶԻԱԶ... [Ա]ՐԴԵ(Ա)ՆՑ Ի Գ
3. ԻՆ ՈՒ ԶԻՄ ՀՈՎԱՏՈՒՆ ԻԻՐ [Ս]Ա(Հ)ՄԱՆՈՎՆ ՈՒ :Դ: (4) ԽՈՑՏԱՔԱՏՈՒՆ ՈՒ :Դ: (4) ՍԵՆ[ԵԱԿՆ] ՅԵՂԵԳՆ
4. ԱՁՈՐ, ԻՄ ԳՆԱԾ՝ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՏՎԻ, ՈՐ Ի ՏԱՐԻՆ ԻՆ[Ձ]... ԱԻՐ ԺԱՄ ՏԱՆ: ԱՅՍ ՏՈՒՐՔՍ ՈՉ ՅԻՄ ՀԱԻ
5. Ր ՀԱՅՐԵՆԵ(Ա)ՑՆ ԵՒ ՈՉ ԻՄ ԱՂԲԱՐԱՑՆ. ԻՄ ԴՐԱՄԱԳԻՆ Է ԱՆԴԱ[ՐՁ, ՈՐ ԽԱՓԱՆԷ] ԱՆԷԾՍ ԱՌՑԷ: ԹՎ(ԻՆ) :ՉԻ: (1271):

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 37: Այիշան, 190: MAK, XIII, 172: Լալաեան, XXVI, 49: Բարխուդարյան 218, 220, արձ. 697:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Պակասավոր տեղերում քարերը ջարդողոված և փշրված են: Հրատարակիչների մոտ ավելի պակասավոր է, իսկ վերջին երկու տողերը՝ բոլորովին տարբեր և ինքնահնար:

25. ԳԱՎԻԹ. արևմտյան պատի հարավային մասում, ներքուստ, 8 տող

1. ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ, ԵՄ՝ ԱՄԻՐԱՅՍ, ԹՈՌՆ ԶՈՒՐՁԻՆ, ԵԿԻ ՆՈՐԱՎԱՆՍ ԱՌԱՋԻ Ս(ՈՒՐ)Բ
2. ՆՇԱՆԻՍ ՈՒ ԶՅԱՂԹԱ ԱՅԳԻՆ, ՈՐ Ի ՊԱՐՈՆ ՏԱՐՍԱԻՃԷՆ ԳՆԵՑԻ :Դ: :Ռ: (4000) ԴՐԱՄ ՈՒ Ի
3. :Գ: (3) ԶՈՐԻ, ՏՎԻ Ի Ս(ՈՒՐ)Բ ՈՒԽՏՍ՝ Վ(Ա)Ս(Ն) ԻՄ ՀՈԳՈՅՍ ԵՒ ԻՄ ՄԱԻՐՆ՝ ԳՈՀԱՐԻԱԹ(ՈՒՆԻՆ). Տ(Է)Ր ՍՏԵՓԱՆՈՍ ԿԱՐ
4. ԳԵՑ Ի ՏԱՐԻՆ :Դ: (4) ԺԱՄ՝ :Բ: (2) ԻՆՁ, :Բ: (2)՝ ԻՄ ՄԱԻՐՆ ՀՌԻՓՍԻՄԵ(Ա)ՆՑ ՏԱԻՆԻՆ: ԱՐԴ, ԹԷ Ի ՄԵՐ ՅԵՏԱՄ
5. ՆԱՑԱՑ ԿԱՄ Ի ՊԱՐՈՆԱՑ ԵՒ ՅԱԻԱԳԱՑ ՀԱԿԱՌԱԿԵԼ ԶԱՆԱ՝ Ի Ս(ՈՒՐ)Բ ԵՐՐՈՐԴՈՒԹԵ(ԱՆ)Ն
6. ԵՒ ՅԵՐԻՑ Ս(ՈՒՐ)Բ ԺՈՂՈՎՈՅՆ ՆՋՈՎԵ(Ա)Լ ԵՂԻՑԻՆ ԵՒ ԲԱԺԻՆ ԶՅՈՒԴԱԻՆ ԱՌՑԷ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑ
7. ՊԱՐՏԱՎԱՆ ԵՂԻՑԻՆ, ՈՒ ԶԻՄ :Դ: :Ռ: (4000) ԴՐԱՄՆ ՈՒ Զ:Գ: (3) ԶՈՐԻՆ Ի ՆՈՐԱՎԱՆՍ ԴԱՐՁՆԵՆ.
8. ԹՎԻՍ :ՉԻ: (1291). ՀԱՍՏԱՏ Է ԳԻՐՍ ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ:

Հրատ. Զալալեանց, 179: Այիշան, 200: MAK, XIII, 171-172: Լալաեան, XXVI, 51, Տեր-Ավետիսյան, 486: Բարխուդարյան, 220, արձ. 698:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Հրատարակիչները վերջին տողերը ետ ու առաջ են գրել և իմաստը փոխել:

26. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատի պատուհանի արևմտյան կողին՝ մի քարի վրա. ներքուստ, 7 տող:

ԳԹԱ Ք(ՐԻՍՏՈ)Ս  
Ի ՀՈԳԻ ԳՐ  
ԻԳՈՐԷՍ  
ՎԱՐԴԱՊ  
ԵՏԻՆ ԵՒ  
ՈՂՈՐՄԵԱ.

ԹՎ(ԻՆ) :ՉԻԱ: (1292):

Հրատ. Զալալեանց, 178: Այիշան, 199: Բարխուդարյան, 220, արձ. 699:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Հրատարակիչների մոտ թվականը չկա:

27. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատի պատուհանի միջնորմի դեպի արևմուտք նայող երեսին, ներքուստ, 5 տող.

ԳԹԱ Ս(ՈՒՐ)Բ Ն  
ՇԱՆԻԻՍ Ք(ՐԻՍՏՈ)Ս  
ՍԱՐԳԻՍ  
ԵՒ ԾՆՈՂ  
Ս ՆՈՐԱ:

Հրատ. Զալալեանց, 178: Այիշան: Բարխուդարյան, 221, արձ. 700:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Նախորդին մոտ է և գրված նույն գրչով ու ոճով: Ժամանակը նույնն է:

28. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատի պատուհանի կողին, ներքուստ: 2 տող.

ԶՄՆՈՆ ԱՊԱՇԻ  
ԱՐՈՂ ՅԻՇԵՑԷՔ:

Հրատ. Այիշան, 199: Բարխուդարյան, 221, արձ. 701:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Նախորդին մոտ է և՛ ոճով, և՛ ժամանակով:*

**29.** ԳԱՎԻԹ. *արևելյան պատի հյուսիսային մասում Ս. Կարապետի մուրթին կից որմնասայան մոտ, փոքր խաչերի տակ. 3 տող:*

ԶՍԱՐԳԻՍ  
ՅԻՇԵՑԷՔ  
Ի ԹՎ(ԻՆ) :ՉԽԲ: (1293):

*Հրատ. Բարխուդարյան, 221, արձ. 702:*

**30.** ԳԱՎԻԹ. *հարավային պատի պատուհանի կողին, 6 տող.*

ԶԵՂԲԱՅՐ  
Տ(ԵԱՌ)Ն ԳՐԻԳ  
ՈՐԻ ԶԿԱԽ  
ԱԲԷՐ ՅԻՇ  
ԵՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս  
:ՉԾ: (1301):

*Հրատ. Բարխուդարյան, 221, արձ. 703:*

Ծանոթագրությունը՝ Կ. Մաթևոսյանի. *Վիմագրում հիշատակված է հիմնականում Տաթևում նստող, բայց 1305-ին Նորավանքում հուղարկվող Գրիգոր է եպիսկոպոսը (արձ. Հ<sup>ր</sup> 69): Ըստ Ա. Հարությունյանի Կախաբեր սակավադեպ անձնանունը վկայված է նաև Կեչառիսում, 1244 թ. (Կախաբերի որդի Քուրդի):*

**31.** ԳԱՎԻԹ. *արևմտյան պատի հարավային մասում, ներքուստ, 9 տող.*

1. ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ, ԵՍ՝ ՍԱՆՃԱՐ, ՈՐԴԻ ՏԱՆԿՐԱՂՈՒԼԻՆ, ՈՉ
2. ՈՒՆԵԼՈՎ ԶԱԽԱԿ ԵՐԿՐԱԽՈՐ՝ ՍՏԱՑԱ ԻՆՁ ԶԱԽԱԿ ԶՍ(ՈՒՐ)Բ
3. ՆՇԱՆՆ ԵՒ ՏՎԻ Ի ՅԻՄ ՀԱԼԱԼ ՀԱՅՐԵՆԵԱՑՆ ԶՏԱ
4. ՆԾԵԿ ԻՒՐ ՍԱՀՄԱՆԱԿՔՆ ԵՒ ԱՅԳՈՎՆ Ի ՆՈՐԱՎԱՆՔՍ.

5. ԵՒ Տ(Է)Ր ՍՏԵՓ(ԱՆՈՍ) ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԻՆՁ Ի
6. ՏԱՐԻՆ :Ե: (5) ԺԱՄ. ԹԷ ՈՔ ԽԱՓԱՆԵԼ ԶԱՆԱ Ի Ս(ՈՒՐ)Բ ԵՐՐ(ՈՐԴ)ՈՒԹԷ
7. ՆԷՆ ՈՐՈՇԵԱԼ ԵՂԻՑԻ ԵՒ Մ(Ա)ՍՆ ԶՅՈՒԴԱԻՆ ԵՒ Զ
8. ԽԱԶԱՀԱՆՈՒԱՑՆ ԱՌՑԷ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ
9. ՊԱՐՏԱԿԱՆ ԵՂԻՑԻ. Ի ԹՎԻՍ :ՉԾԲ: (1303):

*Հրատ. Զալալեանց, 179: Այիշան, 200: MAK, XIII: Լալաեան, XXVI, էջ 54: Բարխուդարյան, 221-222, արձ. 704:*

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Առաջին տողի ՏԱՆԿՐԱՂՈՒԼ անունը հրատարակիչների մոտ աղավաղված է:*

Ծանոթագրությունը՝ Ա. Հարությունյանի. *Անգավակության մասին վկայությունները վիմագրերում, առհասարակ, սակավ են (տե՛ս նաև Հ<sup>ր</sup> 33): Նախկինում Վարդենիսի շրջանի «Գոմեր» հնավայրում, իսկ ներկայումս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանի այգում կանգնեցված 1297 թվակիր խաչքարն ըստ արձանագրության՝ կերտվել է ոմն Տաշուրակի և նրա կին Թամթոյի հոգիների փրկության համար. «...զի էաք անգաւակ» (Ա. Հարությունյան, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 103, արձ. 89):*

**32.** ԳԱՎԻԹ. *արևմտյան մուրթի կիսակամար ճակատաքարի կենտրոնում Աստվածամայրն է, Հիսուսը գրկին, շուրջը ծաղկանկար քանդակներ և ծաղկագիր տառեր, իսկ շրջապատի շրջանակին 1 տող.*

1. ԱՅՍ Է ԱՌ ԻՄ: ԱԻՐՀՆԵԱԼ Է ԱՀԵՂ ԱՆՈՒՆՆ Ա(ՍՏՈՒԱ)Ծ Ի ԾԱԳԱՅ ՄԻՆՉ Ի ԾԱԳՍ ԾԱԳԻՆ, ՈՐ ՈՉ Հ
2. ԱՏ ԵՒ ՈՉ ՎՃ(ԱՐ):  
*Հրատ. Զալալեանց, 171: Այիշան, 187: MAK, XIII, 177: Լալաեան, XXVI, էջ 60: Բարխուդարյան, 222, արձ. 705:*



## ԼՐԱՅՈՒՄ

Զարդերի մեջ, ձախ կողմում, դեպի Աստվածամայրը թեքված և ձեռքերը նրան պարզած տղամարդու (Հովհաննես Մկրտիչ կամ Եսայի մարգարե) պատկերի դեմքի մոտից սկսվող համառոտագրված գրություն՝ զարդագիր խոշոր տառերով (արաբեսկ)։

### ՁԱՅՆ ԲԱՌ:

Այստեղ համառոտագրված է Աստվածաշնչյան հայտնի խոսքը՝ «ՁԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ» (հանգամանորեն տե՛ս ուսումնասիրության բաժնում)։

Զարդերի մեջ՝ աջ կողմում, Եսայի մարգարեի ձախ ձեռքին առկա՝ ծալքերով ցած իջնող ժապավենի (մագաղաթագալարի) վրա (վերջին տառը դրանից դուրս)։

### ՀԱՅ ԿՈՅՍ. ԵՍԱՅԻ:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Նախ վերջին տողի մասին: Նախորդ հրատարակիչները սկզբում նշել են միայն «ԱՅ», բայց սկզբում առկա է «Հ» տառը, որը միանգամայն նման է կամարի արձանագրության վերջին «Հ» տառին (տե՛ս նկ 22): Կարծում ենք, որ այս բառը պիտի կարդալ «ԱՀԱՅ», քանի որ հատվածն ամփոփում է Եսայի մարգարեի կանխատեսումը՝ «Վասն այդորիկ տացէ՝ ձեզ Տէր ինքնին նշան. Ահա կոյսն յղասցի՝ եւ ծնցի որդի...» (Եսայի, Է, 14): «Ահա» բառի «ահայ» սխալագրությունը բավական տարածված էր և այն առկա է նաև Մոմիկի 1292 թ. Նորավանքում գրված հիշատակարանում (տե՛ս հիշատակարանների բաժնում, նկ. 60): Երկրորդ բառը՝ «ԿՈՅՍ», գրված է աջից ձախ: Իսկ վերջին բառն էլ վերոնշյալ արտահայտության հեղինակ Եսայի մարգարեի անունն է:*

Բուն արձանագրությանը հանգամանորեն անդրադարձել ենք ուսումնասիրության մեջ: Տարընթերցումների առումով նշենք, որ Ս. Բարխուդարյանի մոտ վիմագրի սկիզբը հետևյալ կերպ է. «ԱՅՍ Է ԱՌ ԻՄ Ա ԻՐՀՆԵԱԼ ԵԻ ԱՀԵՂ ԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒԱ)Ծ»: Ս. Ավագյանը լրացնում է «անուն» բառի վերջում բաց թողնված Ն տառը, ապա սկզբում այլ բա-

ռանջատում անում (ԱՅՍ ԷԱՌ...): Սակայն, արձանագրության այս հատվածում կա մի կետրադրական նշան, որն անվանի վիմագրագետները չեն նկատել: Դրա վրա մեր ուշադրությունը հրավիրեց Մատենադարանի գիտաշխատող Լուսինե Թումանյանը. «ԱՅՍ Է ԱՌ ԻՄ»: խոսքերից հետո դրված է զույգ կետ՝ այսինքն վերջակետ, որը տվյալ դեպքում միջակետի նշանակություն ունի: Նշանակում է՝ «ԱՅՍ Է ԻՆՁ ՄՈՏ», որը կարելի է հասկանալ՝ «այս է իմ (սույն) պատկերում»: Ի դեպ, այդ հատվածն ավելի մանրատառ է, որը նույնպես վկայում է նրա իմաստային օժանդակ դերի մասին, որին հաջորդում է վիմագրի հիմնական ասելիքը:

Նախորդ բոլոր հրատարակություններում «ԱԻՐՀՆԵԱԼ ԵԻ ԱՀԵՂ» հատվածի միջնատառը (ԵԻ) ուղղում ենք «Է», ըստ Համլետ Պետրոսյանի դիտարկման:



Նկ. 42 Արձ. Հ<sup>ր</sup> 32:

Արձանագրության ավարտի բառանջատումը Ս. Բարխուդարյանի մոտ հետևյալ կերպ է. «ՄԻՆՁ Ի ԾԱԳՍ ԾԱԳ Ի ՆՈՐՈ :ՉՀ: (1321)»: Ս. Ավագյանը ցույց է տալիս, որ այս վիմագրում թվական չկա (տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 274-277, նույնի, Վիմագրական պրպարումներ, Երևան, 1986, էջ 123-132):

Քանդակի զարդերի միջի և բարավորի ներքևում եղած տառերը միասին կարդալով՝ Ս. Բարխուդարյանը կատարել է այսպիսի վերականգնում՝ «ԲԱՌՆ. (ԽՐ)ԱՏ ԵՒ ՈՉ ՎՃ(ԻՌ). ԵՍԵՅ(Ի)...»: Բայց Ջարդաքանդակային տառերը կապ չունեն քանդակի ստորին մասի «ԱՏ ԵՒ ՈՉ ՎՃ» շարքի հետ, այլ կամարի վրայի արձանագրության եզրափակումն են՝ «ՈՐ ՈՉ ՀԱՏ ԵՒ ՈՉ ՎՃ(ԱՐ)»:

Քանդակի և վիմագրի նախկինում հրապարակված գրչանկարները, ցավոք թերի են («Դիվան» III, էջ 222, Ս. Ավագյան, Վիմագրական պրակտիկներ, էջ 126, Վ. Հարությունյան, Հայ ճարտարապետության պատմություն, էջ 329): Մենք ներկայացնում ենք Արսեն Հարությունյանի ձեռքով նոր կատարված գրչանկարը (նկ. 42):

**33. ԳԱՎԻԹ.** արևմտյան մուտքից վեր՝ լուսամտերի ճակատաքարի կենտրոնում քանդակված է Աստուծո պատկերը, ձախ ձեռքին թագակիր գլուխ, աջը՝ վեր բարձրացրած, որի տակ խաչելություն և Աստվածածին. աջ մասում, 9 տող.

ՀԻՆԱԻՈՒՐՑՆ  
Ա(ՍՏՈՒԱ)Ծ ԸՆԴ ՍՏ  
ԵՂԾԻԼՆ ԱԴ  
ԱՄ ՆՈՐՈԳԵՑԱԻ  
ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿ  
ԻՐ, ՈՐ ՄԻՇՏ  
ԱԻՐՀ  
ՆԵՆ Զ  
Ա(ՍՏՈՒԱ)Ծ

Քանդակի ձախ կողմում Խաչելության փոքրաչափ տեսարանի մոտ (Կ. Մ.).

Ա(ՍՏՈՒԱ)ԾԱԾԻՆ  
ԴԱՆԻԷԼ, ՅՈՀԱՆԷՍ...

Հրատ. Ջալալեանց, 171: Ալիշան, 187: Բարխուդարյան, 222, արձ. 706:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Վերջին բառից հետո մեկ բառ ևս կա, բայց ջնջված: Ժամանակով նույնը պետք է լինի նախորդի հետ: Այդ են վկայում համաժամանակյա շինության և քանդակների ոճերը:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Ս. Բարխուդարյանի մոտ բացակայում է առաջին բառը՝ «ՀԻՆԱԻՈՒՐՑՆ», ինչպես նաև ձախ կողմում՝ Խաչելություն քանդակի մոտ եղած անձանց անուններից վերջինը՝ ՅՈՀԱՆԷՍ (վերջում եղել է ևս մի քանի տառ): Սույն քանդակի մասին տե՛ս Մ. Հասրաթյան, Հայ ճարտարապետության..., էջ 61-62, նաև՝ Բ. Ալեքիսեան, Աստուածամոր պատկերաքանդակները..., էջ 114-118:

**34. ԳԱՎԻԹ,** հյուսիսային պատի արևելյան ծայրում, ներքուստ, 7 տող.

1. ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ, ԵՄ՝ ԳՈՆՑԷՍ, ԹՈՌՆ ՀԱՍ(Ա)ՆԱՅ,
2. ԴՈՒՍՏՐ ՊԱՐՈՆ ԽԱԽՐԱՎԿԱ, ՄԻԱԲԱՆԵՑ
3. ԱՅ Ս(ՈՒՐ)Բ ՈՒԽՏԻՍ ՆՈՐԱՅՎԱՆԻՑ, ՊԱՐ(ՈՆ)ՈՒԹԵ(ԱՆ)
4. ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԱ ԲՈՒՐԹԷԼԻՆ ԵՒ ՏՎԻ ԶԽԱՆԳԱՀԻ ԷԳԻՆ
5. ԱՄԱՏԻՆ ՀՈԳՈՅՆ. ՄԻԱԲԱՆՔ ԽՈՍՏԱՑԱՆ :Զ: (6) ՊԱՏԱՐԱԳՅԱ
6. (Յ)ՏՆՈՒԹԵ(ԱՆ) ՈՒԹԱԻՐԱՑՆ՝ :Բ: (2) ԻՆՁ, :Բ: (2) ԱՄԱՏԻՆ, :Ա: (1) ՀԱՍԱՆԱ,
7. :Ա: (1) ԹՈՒԽԹԱՆԷ: ԹՎ(ԻՆ) :ՉՂԴ: (1345):

Հրատ. Ջալալեանց, 177: Ալիշան, 198-199: MAK, XIII, 173: Լալաեան, XXVI, 53: Բարխուդարյան, 223, արձ. 707:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Բոլոր հրապարակիչների մոտ թվականը սխալմամբ գրված է :ՉԽԴ:

**35. ԳԱՎԻԹ.** հյուսիսային պատի արևելյան եզրին, ներքուստ, 4 տող.

1. ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ, ԵՄ՝ ԽԱԹՈՒՆ, ԴՈՒՍՏՐ ԽԱԼԱՇԱՀԻ, ՄԻԱԲԱՆԵՑԱ Ս(ՈՒՐ)Բ ՆՇ

2. ԱՆԻՍ ՈՒ ՏՎԻ :Յ: (300) ՍՊԻՏԱԿ Ի ՅԱՌՓԱՅ ԱՅԳԻ ԳՆԵՑԻ ՄԱԻՏ Ի...
3. Տ(Ե)Ր ՍԱՐԳԻՍ ՈՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ Տ(Ե)ՐԸՆԴԱՌ[Ա-ՋԻՆ]
4. :Բ: (2) ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ԽԱԹՈՒՆԻՍ:

Հրատ. Զալալեանց, 177: Ալիշան, 198: MAK, XIII, 173: Լալաեան, XXVI, 53:  
 Բարխուդարյան, 223, արձ. 708:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Խալաշահի ընտանիքի անդամները Վայոց ձորի այլ արձանագրությունների մեջ հիշատակվում են XIII դ. վերջին փաստանյալներում:*

**36. ԳԱՎԻԹ. հարավային պատի արևմտյան մասում, ներքուստ, 6 տող.**

1. ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ԵՄ՝ ՀԱԶԱՐԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԼԸՔ, ՈՉ ՈՒՆԷԱՔ ԶԱԽԱԿ ԵՐ
2. ԿՐԱԽՈՐ ՍՏԱՑԱՔ ԶԱԽԱԿ ԱՆԾԵՌԱՆԱԼԻ ԶՍ(ՈՒՐ)Բ ՆՇԱՆՍ ԵՒ ՏՎԱՔ ԶՄԵՐ
3. ՁԵՌԱՏՈՒՆԿ ԱՅԳԻՆ ՈՒ :Դ: (4) ԴՈՒՌՆ ՏՈՒՆ ՄԵՐ ՇԻՆԱԾ Ի ՉՎԱ. Տ(Ե)Ր
4. ՍԱՐԳԻՍ ՈՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ :Դ: (4) ՊԱՏԱՐԱԳ. ԿԱՏԱՐԻՉ
5. ՔՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱ(ՍՏՈՒԾՈ)Յ ԵՒ ԽԱՓԱՆԻՉՔՆ ԴԱՏԻՆ Ի Տ(Ե-ԱՌՆ)Է, ՈՎ ՈՐ ՀԱԿԱ
6. Ռ ԿԱ :ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆՋՈՎԵ(Ա)Լ ԵՂԻՑԻ:

Հրատ. Զալալեանց, 179: Ալիշան, 200: MAK, XIII, 171: Լալաեան, XXVI, 47-48:  
 Բարխուդարյան, 223-224, արձ. 709:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Ժամանակը որոշվում է փեր Սարգիս Բ-ի առաջնորդության ժամանակով՝ XIII դարի վերջին քառորդ:*  
 Հրատարակիչները վերծանել են մեծ աղավաղումներով:

**37. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատի արևելյան մասում, ներքուստ, գուրիի փակ. 2 տող.**

1. ԳՆԵԱԼՔ ԱՐԵԱՄԲ ԳԱՌԻՆՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ԵՐԿՐՊԱԳ[ՈՂՔ Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉԻՍ]
2. ԶՄԻԻԹԱՐ ՔԱՀԱՆԱ ՀԱՆԴԵՐՁ ԾՆՈՂԱԻՔ ԱՆԴ...

Հրատ. Զալալեանց, 177: Ալիշան, 198: MAK, XIII, 61:  
 Բարխուդարյան, 224, արձ. 710:

**38. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատի արևելյան մասում, որմնասյան վրա. 6 տող.**

ԵՄ՝ ԱԲԱՍ, ԿԱՆԳՆԵՑԻ Զ  
 ԽԱՉՍ ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ՍՄԲԱ  
 ՏԱ ԵՒ ԴԱԻԹԻ, ՈՐ ԿԻՍԱԽԻԵԱ Փ  
 ՈՒԵՑԱՆ ԱՌ Ք(ՐԻՍՏՈ)Ս ԵՒ ԹՈՂԻՆ ԻՆ  
 Զ ԿՍԿԻԾ, ՈՐՔ ԵՐԿԸՐՊԱԳ  
 ԷՔ ԱՂԱԽԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

Հրատ. Զալալեանց, 177: Ալիշան, 199: MAK, XIII, 170: Լալաեան, XXVI, 61:  
 Բարխուդարյան, 224, արձ. 711:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *XIII դարի վերջ, հավանաբար:*

**39. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատի կենտրոնում, խաչերի արանքներում, ներքուստ, 2 տող.**

ԶԳՐԻ(ԳՈՐ) Ք(Ա)Հ(ԱՆԱ) ՅԱՂ  
 ԱԻԹՍ ՅԻՇԷՔ:

Հրատ. Զալալեանց, 178: Բարխուդարյան, 224, արձ. 712:

**40. ԳԱՎԻԹ. հյուսիսային պատի կենտրոնում, նախորդին կից խաչերի մոտ. 2 տող.**

ՎԱՐԴԱՆ  
 ՅԻՇԵՑ(ԷՔ):

Հրատ. Բարխուդարյան, 224, արձ. 713:

41. ԳԱՎԻԹ. *հյուսիսային պատի կենտրոնում, պատի և որմնասյան վրա. 3 տող.*

ԿԱԿՆԵՑԻՔ ԽԱԶՍ ԲԱՐԷ  
ԽԱԽՍ ԱՌ Բ(ՐԻՍՏՈ)Ս.  
ՄԵՋ ԵՒ ԾՆՈՂ[ԱՑ ՄԵՐՈՑ...]:

Հրատ. Բարխուդարյան, 225, արձ. 714:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Հավանաբար, արձանագրության առաջին տողն է՝ «ՏԻՐԱՑՈՒ ԴԱՎԻԹ» (տե՛ս Հ<sup>ր</sup> 23):*

42. ԳԱՎԻԹ. *հյուսիսային պատի արևելյան մասում, խաչերի շուրջը, ներքուստ, 3 տող.*

ՋՏ(Ի)Ր(Ա)Տ(ՈՒ)Ր ԵՒ ԶԱՄՈՒՍԻՆ ԻԻՐ  
ԽԱԹՈՒՆ  
ՅԻՇԵՑԷՔ. ԹՎ(ԻՆ) :ՊԻԳ: (1374):

Հրատ. Զալալեանց, 177: Ալիշան, 199: MAK, XIII, 173: Լալաեան, XXVI, 58:  
Բարխուդարյան, 225, արձ. 715:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Հրատարակիչների մոտ թվականի շփոթ կա՝ :ՄԽ: և :ՁԽ:*

43. ԳԱՎԻԹ. *արևելյան պատի հյուսիսային մասում, ներքուստ, խաչի տակ, 2 տող.*

ՀԱՅՐԱ  
ԴԵՂՆ:

Հրատ. Բարխուդարյան, 225, արձ. 716:

44. ԳԱՎԻԹ. *արևմտյան պատի հյուսիսային մասում, պատուհանի պսակի շրջանակին, արտաքուստ, 1 տող.*

Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ՎԱՀՐԱՄԱՑ ԵՒ ՆՐՋԱՀԻ:

Հրատ. Բարխուդարյան, 225, արձ. 717:

45. ԳԱՎԻԹ. *արևմտյան պատի, խաչի տակ, արտաքուստ, 2 տող.*

1. Ի Թ(ՎԻՆ) ՈՂԲ (1243). ՅԻՇԵ(Ց)Է(Ք) ԶԵՂԲԱՅՐ Տ(Է)Ր Ա(ՏԵ)-ՓԱ(ՆՈՍ)Ա Զ
2. ՇԱՐԱԲՆ, ՈՐ ՆԱՀԱ(Տ)ԱԿԵՑ[ԱԻ]:

Հրատ. Բարխուդարյան, 225, արձ. 718:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Ս. Բարխուդարյանի մոտ արձանագրությունը չափազանց թերի է վերծանված (3 բառ), որը լրացրել է Ս. Սաղումյանը՝ տալով հետևյալ բացատրությունը. «Գավթի շքամուտքի հարավային կողմում փորագրված արձանագրությունը՝ ԶԵՂԲԱՅՐ ՇԱՐԱԲՆ, ՈՐ...(ԴՀՎ, III, էջ 255, Հ<sup>ր</sup> 718), մեր վերծանությամբ ստանում է նոր իմաստավորում: Ելնելով պատի շարվածքից, թվում է, որ նահատակ Շարաբի հիշատակագիր քարը պատի մեջ է դրվել շքամուտքի վերակառուցման ընթացքում» (Սաղումյան, էջ 95, հոդվածի նկ. 9):

46. ԳԱՎԻԹ. *արևմտյան պատի հյուսիսային մասում, խաչերից ներքև, արտաքուստ, 2 տող.*

Բ(ՐԻՍՏՈ)Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ՇՄԱԻՈ  
ՆԻ ԵՒ ԻԻՐ ՀԱԻՐ:

Հրատ. Բարխուդարյան, 225, արձ. 719:

47. ԳԱՎԻԹ. *արևմտյան պատի հյուսիսային վերին մասում, խաչերի տակ, արտաքուստ, 2 տող.*

ԶՀԱՅՐ Տ(Է)Ր ՍՏԵՓԱՆՈ[Ա...]  
Ե... ԻՐՔԱՇ ՅԻՇԵՑԷՔ:

Հրատ. Բարխուդարյան, 225, արձ. 720:



48. ԳԱՎԻԹ. արևմտյան պատի հարավային մասի վերևում, արտաքուստ, խաչերի տակ, թերի, 2 տող.

Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻ ՀԱՍԱՆԱՅ...  
ԱՐԴ Ա(ՍՏՈՒԱ)Ծ...:

Հրատ. Բարխուդարյան, 226, արձ. 721:

49. ԳԱՎԻԹ. կտորի ծածկի քար, աջ կողմում գլանաձև ելուստ՝ հեղազայում վրան քանդակված խաչ, ընկած է այժմ գավթի մեջ, խաչի շուրջը 6 տող.

ԵՍ՝ ԴԱԻԻԹ ԴԱՐԲԻՆ, ԿԱՆԿ(ՆԵՑԻ)  
ԽԱԶՍ ՓՐ  
ԿՈՒԹ(ԻԻՆ) ԹՈ  
ԻԻԻԿԻՆ,  
ԹՎ(ԻՆ) :ՌԸ: (1559):

Հրատ. Բարխուդարյան, 226, արձ. 722:

Ծանոթագրությունը՝ Ա. Հարությունյանի. Առաջին երկու տողերը մանրապատ են՝ թերևս փորագրված այլ գրչի ձեռքով: Բնագրում ԴԱՐԲԻՆ բառը հաջորդում է ԿԱՆԿՆԵՑԻ-ին:

**ԳԱՎԻԹ, ԽԱԶՔԱՐԵՐ**

50. ԽԱԶՔԱՐ. ագուցված է գավթի հարավային լուսամուտի միջնորմի մեջ, ներքուստ, տակը՝ մանր տառերով 6 տող.

ԱՅՍ ՆՇԱՆ ԱԻԾԵԼՈՅՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ԿԱ  
ՆԳՆԵԱԼ Ի ԲԱՐԷԽԱԻՍՈՒԹԻ(ԻՆ) ԻՇ  
ԽԱՆԱՅ ԻՇԽԱՆԻ ՀԱՍԱՆԱ՝ ՈՐ  
ԴՈ ՍԻՆԻՔԷՐԻՄ ԱՐՔԱԻ, ՈՐ ԿԻՍԱ  
ԻՐԵԱ ՓՈԽԵՑԱԻ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս ԶՐԿԵԱԼ

Ի ՀԱՅՐԵՆԻ ՓԱՌԱՑՆ, ԱԻՏԱՐ...:

Հրատ. Զալալեանց, 178: Ալիշան, 200: Լալաեան, XXVI, 57,  
Տեր-Ավետիսյան, 487: Բարխուդարյան, 226, արձ. 723:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Վերջից թերի է, հավանաբար իր նախնական տեղում շարունակված կլիներ պատվանդանի վրա, որն այժմ չկա:

Հասանը Բաղասց Սենքերիմ թագավորի կրտսեր որդին է, հայրը նենգորեն սպանվել է 1094 թ., արձանագրությունն էլ ժամանակով մոտ պեպոք է լինի այդ թվականներին:

Այս տոհմից երկու արձանագրություններ էլ գտնվում են բակում ընկած բեկորների վրա:

51. ԽԱԶՔԱՐ. փոքր, պարզ, ագուցված է գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ, տակը և թևերի արանքներում:

Ի ԹՎԻՍ :ՈՀ: (1221)  
Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԵԱՅ..... [ՆԱԶ]  
ԱՐԻՆ ԵԻ ՆԱԶ  
ԼՈՒԻՆ...

Հրատ. Բարխուդարյան, 227, արձ. 724:

52. ԽԱԶՔԱՐ. փոքր, պարզ, ագուցված է գավթի արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ, ճակատի մասում ջնջված, ստորին մասում 3 տող.

ՈՂՈՐՄԻ Վ  
ԱՆԱԿԱՆ  
Ի ԵԻ ԱԻՏԱՐԻՆ:

Հրատ. Բարխուդարյան, 227, արձ. 725:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. XIII դարի առաջին կես:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Առաջին անձնանունը Ս. Բարխուդարյանի մոտ՝ «ՎԱՆԱՎԱՆԻ», բայց Ս. Սաղումյանն իրավացիորեն ճշտում է՝ «ՎԱՆԱԿԱՆԻ» (Ս. Սաղումյան, Կրկին վիմագիր փակագրության մասին, «Լրաբեր», 1985, N 1, էջ 65):*

**53. ԽԱԶՔԱՐ.** գեղաքանդակ, կանգնած է ընդհանուր պատվանդանի վրա՝ գավթի ներսում, արևմտյան պատի տակ, հյուսիսային մասում. տակը 5 տող.

1. Ի ԹՎ(ԻՆ) :ՈԶԹ: (1240):
2. ԱՅՍ ՆՇԱՆ ԿԱ(Ն)ԳՆԷ(Ա)Լ ԱՐՁԱՆ ԱԻԾԵ(ԱԼ ԵԻ ԱՆ)Մ(Ա)Հ Թ(Ա)Գ(ԱԻ)
3. ՈՐԻՆ ԵԻ ՈՐԴՈՅՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ՅԻ(ՍՈՒՍԻ) Ք(ՐԻՍՏՈՍ)Ի ՆԱ ԳՆ... Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՊԱ... ՆԵ
4. ՈՒ...ՆԱ Ի ՎԵՐԱ ...ԱՐԱՆԻ...Ր ՄԵՈ...
5. ...ԷԼՆ...

*Հրատ. Բարխուդարյան, 227, արձ. 726:*

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Ս. Բարխուդարյանն այս արձանագրության միայն առաջին տողն է վերծանել, տվել մյուս տողերի մասնակի գրչանկարը և ծանոթագրել. «Մնացած մասերը եղծված, ջարդուրված են, միայն առանձին բառեր են վերծանվում»: Մյուս տողերը լրացրել է Ա. Հարությունյանը:

**54. ԽԱԶՔԱՐ.** գեղաքանդակ, նախորդին կից է հյուսիսից. տակը՝ 4 տող.

1. Ի ԹՎ(ԻՆ) :ՉԺ: (1261). Ի ԿԱՄՍ ՈՂՈՐՄՈՒԹԵ(ԱՆ)
2. ԱՐԱՐՉԻՆ Յ(ԻՍՈՒՍ)Ի, ԵՄ՝ ԲՈՒՐԹԷԼ, ՈՐԴԻ ԷԼԻԿՈՒՄԻ ՈՐԴՈ ՄԵ
3. ԾԻ ԼԻՊԱՐՏԻ, ԿԱՆԿՆԵՑԻ ԶԱ(ՍՏՈՒԱ)ԾԸՆԿԱԼ ՆՇԱՆՍ ՄԱԻՐ
4. ԻՄ ԹԱՄԿԱ, ՅԻՇԱՏԱԿ ՅԱԻՏԷՆԻՑ. ՅԱՂԱԻԹ ՅԻՇԵՑԷՔ:

*Հրատ. Զալալեանց, 180: Ալիշան, 201 (մոր անունը ԹԱՄԹԱՅ): MAK, XIII, 176 (մոր անունը ԹԱՄԹԱՅ): Լալաեան, XXVI, 59 (մոր անունը ԹԱՄԹԱՅ), Տեր-Ավետիսյան, 487, Բարխուդարյան, 227, արձ. 727:*

**55. ԽԱԶՔԱՐ.** գեղաքանդակ, կանգնած է ընդհանուր պատվանդանի վրա՝ գավթի ներսում, արևմտյան պատի տակ, հարավային մասում. տակը՝ 3 տող.

ԵՄ՝ ԱԻՐՊԷԼ [ՅՈՎՀԱ]ՆԷՍ [ՍԻԻՆԵ]ՑԻ, ԿԱՆԳՆ[ԵՑ]Ի  
ԶԻԱԶՍ Ի [ՓՐ]ԿՈՒԹ(ԻԻՆ) [ՀՈԳ]ԵԻ(Ո)Ր ՀԱԻ[Ր]Ն ԻՄ Տ(Ե)Ր  
ՍՏԵՓԱՆՈ[ՍԻՆ] ԹՎ(ԻՆ) Չ[ԾԳ] (1304), [ՄՈ]ՄԻԿ ՎԱՐԴՊԵՏ:

*Հրատ. Բարխուդարյան, 228, արձ. 728:*

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Ինչպես ԱԻՐԲԵԼ Յովհաննեսը, այնպես էլ Մոմիկ վարդապետը XIV դարի առաջին երեք տասնամյակների գործիչներ են և մի քանի անգամ հիշատակված Նորավանքում:*

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Արձանագրության թվականը Ս. Բարխուդարյանի մոտ «ԹՎ. 2....» է, ամբողջացրել է Ս. Սաղումյանը, որը և ավելացրել ենք այստեղ (տե՛ս Ս. Սաղումեան, Նորավանքի վիմագրերը, էջ 54):*

*Խաչքարը, որը Մոմիկի անունը պարունակող խաչքարերից առաջինն է, 1970-ական թվականներին տեղափոխվել է Ս. Էջմիածին և գտնվում է Գանձատանը: Նրա վերնամասում գահակալ Քրիստոսի պատկերն է: Յավոք, թանգարանում եղած ժամանակ խաչքարն ընկել և վերնամասի քանդակը զգալի չափով վնասվել է (նկ. 79) (այս խաչքարի և արձանագրության մասին տե՛ս նաև՝ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 81, Ա. Հարությունյան, Վաղարշապատ, էջ 106-107, արձ. 94):*

**56. ԽԱԶՔԱՐ.** փոքր, ագուցված է գավթի արևմտյան պատի լուսամտի հյուսիսային կողմին. տակը՝ 4 տող.

ԵՍ՝ ՓԱԽՐԱԴԱԻԼԵՍ, ԿԱ  
ՆԳՆԵՑԻ ԶԻԱԶՍ Ի ՓՐ  
ԿՈՒԹԻ(ԻՆ) ՃՈՐՏՈ ԻՄՈ Բ  
ԱԼԱՊԱՆԻՆ, ՅԱՂԱԻԹ[Ս ՅԻՇԵՑԷՔ]:

Հրապ. Բարխուդարյան, 228, արձ. 729:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Վերջից թերի է, հավանաբար իր նախնական տեղում շարունակված կլիներ պատվանդանի վրա: Օրբեյյան տոհմի մեջ հայտնի են երկու Փախրադավաներ, առաջինը Տարսայիճի եղբայրն է՝ մահացած 1225-1260 թթ. և մյուսը՝ Տարսայիճի որդին, մահացած մանուկ հասակում՝ 1296 թ.: Արձանագրության մեջ հիշատակվածը, հավանաբար, առաջինն է:*

57. ԽԱԶՔԱՐ. գեղաքանդակ, նախորդին կից է հարավից. տակը՝ 4 տող.

1. ԱՅՍ ԳԱԻՍՈՆ ՄԽԵԱԼ ԱՐԵԱՄԲ ԱԻ
2. ԾԵԼՈՅՆ Յ(ԻՍՈՒՍ)Ի, ՈՐՈՎ ԸԱՐԵԱԼ ԽՈՑԱԻ ԳՈ
3. Ռ(Ո)ԶՆ ԻՄԱՆԱԼԻ ԵԻ ԿԱՆԳՆԵՑԱԻ ԸՐԱՄԱՆԱԻ Ա(ՍՏՈՒԱ)ԾԱ-ՊԱԸ
4. ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ ՍՄՊԱՏԱ Ի ՓՐԿՈՒԹԻԻՆ ՈՐԴՈ ԻԻՐՈ ԲՈՒՐԹԷԼԻՆ. Յ(Ի)ՇԵՑ(ԷՔ):

Հրապ. Զալալեանց, 180: Այիշան, 201: MAK, XIII, 176: Լալաեան, XXVI, 61: Բարխուդարյան, 228, արձ. 730:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Օրբեյյան տոհմում շատ Բուրթելներ կան, բայց ոչ մեկը Սմբատի որդին չէ: Կարելի է ենթադրել, որ Սմբատը մեծ իշխանն է, Էլիկումի որդին, մահացած 1273 թ., իսկ Բուրթելը նրա եղբորորդին, որը զոհվեց ղվիչաղների պատերազմում՝ 1261 թ.:*

58. ԽԱԶՔԱՐ. փոքր, օգտագործված է որպես շինանյութ գավթի արևմտյան պատի լուսամտի մի մասը փակելու համար. ներքուստ, խաչի շուրջը (այժմ թանգարանում է – Կ. Մ.) 8 տող.

ԵՍ՝ [ՅՈ]ՀԱՆԷՍ,  
ԿԱՆԳՆԵՑԻ  
ԶԻԱԶՍ Ա  
ՂԱԳԱԻՍ ԵՂ  
ԲԱԻՐՆ Ի  
ՄՈՅ Ա(ՍՏՈՒԱ)Ծ  
ԱՏՐԻՆ, ՅԻՇԵՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս:

Հրապ. Բարխուդարյան, 229, արձ. 731:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. XIII դարի վերջ:

59. ԽԱԶՔԱՐԻ քիվի մասը՝ ընկած գավթի ներսում, ելնդավոր (ուռուցիկ) տառերով 1 տող.

...Ե ՍԻ(Ի)Ն(Ե)ԱՑ ԻՊ(Ի)ՍԿ(ՈՊՈ)Ս Կ(Ա)ՆԿ(ՆԵՑԻ) Խ(Ա)ՉՍ  
ՓՐԿՈՒԹԻ(ԻՆ) ՀՈԳՈՅ:

Հրապ. Բարխուդարյան, 229, արձ. 732:

60. ԽԱԶՔԱՐ. գեղաքանդակ, ազուցված է գավթի արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ. տակը՝ 2 տող.

ԽԱԶՍ Ի ԲԱՐԷԽԱԻՍՈՒԹ(ԻԻՆ) [ՏՈ]ՎԼԱԹԻՆ...:

Հրապ. Բարխուդարյան, 229, արձ. 733:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Ըստ քանդակների ոճի և գրչության XVI-XVII դդ.:

## ԳԱՎԻԹ, ՏԱՊԱՆԱԳՐԵՐ

Ա. ՇԱՐՔ (տրվում է հերթով, հյուսիսից սկսած)

### 61. ՏԱՊԱՆԱՔԱՐ. փափակ, երեսին.

[Զ]ՊԱ[ՐՈՆ] [Թ]ԱՂԷՆ ՅԻ[ՇԵՑԷՔ]

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 41: Ալիշան, 193: MAK, XIII, 173: Լալաեան, XXVI, 60: Բարխուդարյան, 229, արձ. 734:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Ս. Բարխուդարյանն այս արձանագրությունը ներկայացրել է հետևյալ կերպ՝ «**Զպարոն թաղենց**», ծանոթագրելով՝ «Այս փապանաքարն այժմ ծածկված է թափված մեծ քարերով. ստուգել չենք կարողացել, փալիս ենք ըստ նախկին հրատարակիչների»:



Նկ. 43 Արձ. Հ<sup>փ</sup> 61:

Գավթի այդ հատվածն այժմ մաքրված է քարերից, բայց փապանաքարի արձանագրությունը զգալի չափով վնասված է (նկ. 43): Սակայն, ակներև է, որ այստեղ չկա Յ փառ, գրու-

թյունն ավարտվում է ՅԻ-ով, որը պետք է չափահասված ՅԻՇԵՑԷՔ բառի սկիզբը եղած լինի (վերականգնումը՝ Արսեն Հարությունյանի):

Փաստորեն, այստեղ հիշատակված է Թաղա անունը (այն վրացական ծագում ունի), որի կրողն է եղել Տարսայիճ Օրբեյանի երկրորդ կնոջ՝ Մինա խաթունի եղբայրը (տե՛ս Հ<sup>փ</sup> 136): Քանի որ Նորավանքի գավթում թաղված աշխարհականները հիմնականում Օրբեյանների հետ անմիջական կապ ունեցողներն են, մեծ հավանականությամբ այս փապանաքարը հենց Մինա խաթունի եղբորն է պատկանում:

### 62. ՏԱՊԱՆԱՔԱՐ. փափակ, երեսին 4 փող.

[Ս(ՈՒՐ)Բ] ԱԻՐԻՈՐԴ

Ն Է ԹԱՄԹԻԿՆ

ՅԱՂԱԻԹՍ Յ

ԻՇԵՑԷՔ:

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 41: Ալիշան, 193: MAK, XIII, 173: Լալաեան, XXVI, 60: Բարխուդարյան, 229, արձ. 735:

Առաջին հապավում բառի լրացումը՝ Ա. Հարությունյանի – Կ. Մ.

### 63. ՏԱՊԱՆԱՔԱՐ. փափակ երեսին 2 փող

ԲԱ[ՐԵ]ՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ

ԻՆ ԱՅԼՈՒԿՈՒՄԻ Ե ՏԱՊԱՆԱ:

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 40: Ալիշան, 193: MAK, XIII, 174: Լալաեան, XXVI, 57: Բարխուդարյան, 230, արձ. 736:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Մահացել է 1253-1255 թթ.:

### 64. ՏԱՊԱՆԱՔԱՐ. փափակ, երեսին 1 փող.

ԳԵՂԵՑԿԱԾԱՂԻԿՆ Է ԻԻԱՆԷ:

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 40: Ալիշան, 193: MAK, XIII, 174: Լալաեան, XXVI, 57: Բարխուդարյան, 230, արձ. 737:

### 65. ՏԱՊԱՆԱՔԱՐ. փափակ, երեսին 2 փող.

ՔԱՋ ՍՊԱՌԱՋԷՆՆ Է ՓԱԻՐԱԴԱ

ԻԼԱՅՆ:

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 40: Ալիշան, 193: MAK, XIII, 174: Լալաեան, XXVI, 57: Բարխուդարյան, 230, արձ. 738:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Տարսայիճի եղբայրն է՝ վախճանված մոտ 1256-1260 թվականներին:



66. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**. *տափակ, որից այժմ մի բեկոր է մնացել, հին հրա-  
տարակիչների ժամանակ եղել է ամբողջ*.

ԶԲԱՐ[եպաշտ մայր իշ]-

ԽԱՆ[ացս զԱսփայն յիշեցէք]:

Հրապ. Քաջբերունի, Արարապ, 1890, էջ 39: Այիշան, 193: MAK, XIII, 174: Լա-  
լաեան, XXVI, 57: Բարխուդարյան, 230, արձ. 739:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Սմբապ և Տարսայիճ Օրբեյյան-  
ների մայրն է՝ վախճանված 1263 թվականին:*

67. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**. *տափակ, որից այժմ մի փոքր բեկոր է մնացել. հին  
հրատարակիչների ժամանակ եղել է ամբողջ*.

ՏԷՐ ՅՈՎԱ[Ն]

ԷՍ ՍԻԻՆԵ[Ա]

Յ [եպիսկոպոս...]:

Հրապ. Քաջբերունի, Արարապ, 1890, էջ 39: Այիշան, 194:  
Լալաեան, XXVI, 60: Բարխուդարյան, 230, արձ. 740:

68. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**. *տափակ, երեսին 2 տող*.

Տ(Է)Ր ՍՏԵՓԱՆՆՈՍ Ս

ԻԻՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ, :ՉԹ: (1260):

Հրապ. Քաջբերունի, Արարապ, 1890, էջ 39: Այիշան, 194: MAK, XIII, 174:  
Լալաեան, XXVI, 57: Զալալեանց, 180: Բարխուդարյան, 230, արձ. 741:

69. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**. *տափակ, երեսին 2 տող*.

Տ(Է)Ր ԳՐԻԳՈՐ ՍԻԻՆԵԱ

Յ ԷՊԻՍԿՈՊՈՍ, :ՉԾԴ: (1305):

Հրապ. Զալալեանց, 180 (թիվը ՀԺԴ): Քաջբերունի, Արարապ, 1890, էջ 39:

Այիշան, 194: MAK, XIII, 174: Լալաեան, XXVI, 59:

Բարխուդարյան, 231, արձ. 742:

70. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**. *տափակ, երեսին 2 տող*.

ԱՅՍ ՇԻՐԻՄ ՇՆՈՐՀԱԼԻՐ ՍԱՐԳՍԻ Է, ՍԻԻՆԵԱՑ ԵՊԻՍ

ԿՈՊՈՍԻ ԵՒ ԱՆՅԱՂԹ ՀՌԵՏՈՐԻ. ԹՎ(ԻՆ) :ՉԻԷ: (1298):

Հրապ. Զալալեանց, 180 : Քաջբերունի, Արարապ, 1890, էջ 39: Այիշան, 194:  
MAK, XIII, 174: Լալաեան, XXVI, 58: Բարխուդարյան, 231, արձ. 743:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Տապանաքարը Սյունյաց Սարգիս  
Բ եպիսկոպոսինն է (1261-1298) որը շարունակել է Նորավանքում պաշ-  
տոնավարել Սյրեփանոս Օրբեյյանի՝ 1286-ին Սյունյաց մետրոպոլիտ  
դառնալուց հետո, որի նստավայրը նույնպես Նորավանքն էր: Սարգիսը  
հավանաբար եկեղեցական-վարչական հիմնական գործերից մի կողմ  
քաշված լինելով զբաղվել է կրթական, գիտական աշխատանքով, որը  
թերևս արտահայտվել է տապանագրի արձանագրության մեջ:*

**Բ. ՇԱՐՔ** (տրվում է հերթով. հյուսիսից սկսած)

71. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**. *տափակ, երեսին 2 տող*.

ԶԲԱՐԷՊԱՇՏ ՊԱ[րոն զՆաթ]

ԷԼՆ ՅԻՇԵՑԷՔ ԶՄԱՅ[Ր...]:

Հրապ. Լալաեան, XXVI, 59: Բարխուդարյան, 231, արձ. 744:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Տապանաքարն այժմ բեկորի  
ձևով ընկած է գավթի հարավային պատի տակ, ներքուստ: Լալաեանը  
հիշեցեք բառից հետո ունի թվական :ՉԿԲ: 1313: Մեր վերծանման մեջ  
պարզ երևում է նաև ՄԱՅ[Ր] բառը: Այլ հրատարակիչներ միայն անունն  
են հիշում:*

72. **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ, երեսին 2 տող*.

ԶԲԱՐԷՊԱՇՏ ՏԻԿԻՆՆ ԶՆԱ

ԹԷԼՆ ՅԻՇԵՑԷՔ. ԹՎ(ԻՆ) :ՉԻԳ: (1294):

Հրատ. MAK, XIII, 174: Լալաեան, XXVI, (թվ :ՉԽԴ:) երկուսի մոտ էլ:  
Բարխուդարյան, 231, արձ. 745:

**73. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փափակ, երեսին թերի 1 փող.**

ԱՅՍ Է ԳՈՒԲ ԿԱՅԱՆԻ:

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 39: Ալիշան, 193 (շարքերի գծագրի մեջ): MAK, XIII, 173 (նույնպես): Բարխուդարյան, 231, արձ. 746:

Ծանոթագրությունը Ա. Բարխուդարյանի. Միայն այսքանն է գրված: Հրատարակիչները չնկատելով, որ թերի է թողնված՝ վերջին կայան բառը համարել են անձնանուն և այն էլ ԿԱՅԻՆ-ԿԱՅԱՆ է, որը միանգամայն սխալ է, կայան հենց Նորավանքում էլ գործածված է հանգրվան, գերեզմանափոս իմաստով:

**74. ՏԱՊԱՆԱՔԱՐ. փափակ, երեսին 2 փող.**

ԶՎԱՂԱԹԱՌԱՄ Զ[Մ]Ա[Ն]ՈՒԿՆ  
ՍԱՄՈՒԷԼ] ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷԲ]...:

Հրատ. Բարխուդարյան, 232, արձ. 747:

Ծանոթագրությունը Ա. Բարխուդարյանի. Հրատարակիչները միայն անունն են հիշում, այժմ անունն է վնասվել, այլ բառեր վերծանվում են:

**75. ՏԱՊԱՆԱՔԱՐ. փափակ, երեսին 2 փող.**

ԶՎԱՅԵԼՉԱԳԵՂ ՏՂԱՅՆ ԵՒ ԶԴԵՌԱ  
ԲՈՅՍ ՊԱՏԱՆԻՆ ԶՈՒԼՈՒԿՆ ՅԻՇ(ԵՑԷԲ): ԹՎ(ԻՆ) :ՉԽԳ: (1294):

Հրատ. Լալաեան, XXVI, 58: Բարխուդարյան, 232, արձ. 748:

Ծանոթագրությունը Ա. Բարխուդարյանի. Հրատարակիչները և հիշատակողներն անձնանունը ՈՒԼՈՒԿՆ են վերծանել և թվականը :ՉԽԳ:. թվականի վերջին միավորը բնագրում աջ կողմի ստեղ չունի՝ տեղ չլինելու պատճառով:

**76. ՏԱՊԱՆԱՔԱՐ. փափակ, երեսին 2 փող.**

ԶԳԵՂԵՑԿԱՓԹԻԹ ԾԱՂ(Ի)ԿՆ ԵՒ ԶՔԱԶՈՒՂԷ[Շ ՄԱՆ]  
ՈՒԿՆ ՎԱՂԱԹԱՌԱՄ ԻԻԱՆԷ ՅԻՇԵՑԷԲ, ԹՎ(ԻՆ) :ՉԽԳ: (1294):  
Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 39: Ալիշան, 194: MAK, XIII, 175: Լալաեան, XXVI, 58: Բարխուդարյան, 232, արձ. 749:

Ծանոթագրությունը Ա. Բարխուդարյանի. Տողերի վերջին, ջարդված մասերը լրացնում ենք ըստ նախորդ հրատարակիչների:

**Գ. ՇԱՐՔ** (տրվում է հերթով. հյուսիսից սկսած)

**77. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին 3 տող.**

ԹՎԻՍ :ՉԸԳ: (1324)  
ՏՈՒՆ ԻՄԱՍՏԻՑ ԵՒ ՀԱՆՃԱՐՈՑ ԱԻՐՊԷԼ  
ԶՈՎԱՆԷՍ ՀՌՉԱԿԱԻՈՐ ՄԵՏՐԱՊԱԻԼԻՏ ՍԻԻՆԵ(Ա)Ց:  
Հրատ. Զալալեանց, 180 (առանց թվական): Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 39: Ալիշան, 194 (առանց թվականի): MAK, XIII, 175: Լալաեան, XXVI, 57 (թվականը :ՉԽԳ:), Տեր-Ավետիսյան, 488: Բարխուդարյան, 232, արձ. 750:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Տապանաքարի վրա Հովհաննես Օրբելին տրված մեծարական բնութագրումները միանգամայն արդարացի են, քանի որ նա Գլածորի համալսարանի շրջանավարտ էր, ժամանակի զարգացած անձանցից մեկը և մետրոպոլիտական աթոռին Սյրեփանոս Օրբելյանին հաջորդելով եղավ նաև շինարարական, կրթական ու մշակութային բազմաթիվ ձեռնարկների հովանավոր (նրա մասին տե՛ս Ա. Մկրտչյան, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը, էջ 90-103:

**78. ՏԱՊԱՆԱՔԱՐ. փափակ, մարմարե, երեսին 3 փող.**

ԹՎԻՍ :ՉԾԲ: (1303).

ԱՅՍ Է ՇԻՐԻՄ ՀԱՆԳՂՍԵԱՆ

ՄԵԾԻ ՄԵՏՐԱՊԱԽԼՏԻՆ ՍԻՆԵԱՑ ՍՏԵՓԱՆՈՍԻ:

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 38: Այիշան, 194: MAK, XIII, 175: Լալաեան, XXVI, 59, Տեր-Ավերիսյան, 488: Բարխուդարյան, 233, արձ. 751:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Պատմագիր Ստ. Օրբելյանինն է:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Չնայաց տապանաքարին հստակ նշված է թվականը՝ 1303, սակայն զարմանալի կերպով գրականության մեջ հաճախ շրջանառվում են Սյունյաց մեքրոպոլիս, պատմիչ Ստեփանոս Օրբելյանի մահվան այլ թվականներ (օրինակ՝ հայկական հանրագիտարաններում՝ ներառյալ «Քրիստոնյա Հայաստանը»՝ 1305 թ. և այլն): «Դիվան»-ի վերծանության մեջ առկա են որոշ վրիպակներ:*

**79. ՏԱՊԱՆԱՔԱՐ.** *տափակ, երեսին 2 տող.*

ՅԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ ԱՌԱՔԵԼ ԻՊԻ

ՍԿՈՊ(Ո)ՍԻՆ, ՈՐ Հ(Ա)ՆԳԱԻ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս, ԹՎ(ԻՆ) :ՌԻ: (1571):

Հրատ. Ջալալեանց, 180: Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 38: Այիշան, 194: MAK, XIII, 175: Լալաեան, XXVI, 60: Բարխուդարյան, 233, արձ. 752:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Թվականը ջարդված է, վերականգնում ենք ըստ նախորդ հրատարակիչների:*

**80. ՏԱՊԱՆԱՔԱՐ.** *բեկոր, ընկած է գավթի հարավային պատի տակ ներքուստ.*

.....ՍԱՆԳԴՈՒ...

Հրատ. Բարխուդարյան, 233, արձ. 753:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Լրիվ բառ չի մնացել:*

**81. ՏԱՊԱՆԱՔԱՐ.** *փոքր, ագուցված է արևմտյան պատի կենտրոնի լուսամուտի տակ՝ երեսով արևելք. 2 տող.*

ԱՅՍ Է ՇԻՐԻՄ ԴԵՌԱԲՈՅՍ

ՏՂԱԻՆ ԱԽԼԻԿԻՆ, ԹՎ(ԻՆ) :ՉԾԴ: (1305):

Հրատ. Բարխուդարյան, 233, արձ. 754:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Ս. Բարխուդարյանը վերծանության մեջ անձնանունը «ԱԼԻԿԻՆ» գրելով՝ այսպես է ծանոթագրել. «Նախնական տեղն անհայտ է: Անձնանունը ենթադրական է, թերևս ԱԼԻԿՈՒՄԻՆ: Ըստ Քաջբերունու Օլիկ. տե՛ս Արարատ, 1890, էջ 41, որից առել է Այիշանը, էջ 201: Նախապես եղել է դեպի Ս. Կարապետ տանող մուտքից հարավ»: Գրչանկարից երևում է, որ անվան սկզբում Ա-ին հաջորդում է ԻԼ կցագիրը, և հավանորեն այն պետք է կարդալ ԱԽԼԻԿԻՆ, որը թերևս ԱԼԻԿՈՒՄ-ԷԼԻԿՈՒՄԻ փաղաքական ձևն է:*

**82. ՏԱՊԱՆԱՔԱՐ ՓՈՔՐ.** *այժմ չկա. եղել է գավթի մեջ, դեպի Ս. Կարապետ տանող մուտքից հարավ՝ վրան խիստ փակագիր և չափածո.*

Կայ հանգուցեալ յայս տապանի

Չքնաղ մանուկ զարմանալի,

Որ Իւանէ անուն կոչի.

Եղջիւր ծագեալ Աւրբելեցի,

Որդի Չեսար մեծ իշխանի:

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 41: Այիշան, 201: Լալաեան, XXVI, 61:

Բարխուդարյան, 233, արձ. 755:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. *Չեսարը շինողն է Սելիմի քարավանատան, 1332 թ.:*

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Տապանաքարը գտնվել է 1980-ականներին և նրա ճշգրտված 9 տողանոց տեքստը հրատարակել է Ս. Սահումյանը հետևյալ ծանոթագրությամբ. «Գավթի ներսի մաքրման շնոր-*

հիվ բացվել է 1332 թ. Սելիմի քարավանատունը կառուցող Չեսար Օրբել-  
յանի որդի Իվանեի տապանը, որ կորած էր համարվում: Այն նախորդ  
հրատարակիչների վրիպումներով մտել է Դիվանի III պրակի մեջ (ԴՀՎ,  
III, էջ 233, Հ<sup>մ</sup> 755): Տապանագիրը Ի վերջնահանգով ավարտվող բա-  
նաստեղծության է» (Սաղումյան, էջ 95, հոդվածի նկ. 7):

ԿԱ ՀԱՆԳՈՒ  
ՑԵ(Ա)Լ ԱՅՍ Տ  
ԱՊԱՆԻ ՉԲՆԱ  
Ղ ՄԱՆՈՒԿ ԶԱՐ  
ՄԱՆԱԼԻ, ՈՐ ԻԻԱՆԷ  
ԱՆՈՒՆ ԿՈՉԻ՝ Ե  
ՂՋԻԻՐ ԾԱԳԵ(Ա)Լ  
ԱԻՐԲԵԼՑԻ, ՈՐԴԻ Չ  
ԷՍԱՐ ՄԵԾ ԻՇԽԱՆԻ:

**83.** ԳԱՎԻԹ. պատուհանի մեջ ագուցված խաչքարի վրա.

Զխաչատուրն, գԳրիգորն յաղաթս յիշեցէք ի Ք(րիստո)ս:  
Հրատ. Զալալեանց, 177: Այիշան, 199: Բարխուդարյան, 234, արձ. 756:

**84.** ԳԱՎԻԹ. պատուհանի մեջ ագուցված խաչքարի տակ.

:ՉԺԸ: (1269). Ես՝ Դեղ, կանգնեցի զխաչս յիշատակ հոգոյ իմոյ և բարե-  
խաւսութիւն...

Հրատ. Զալալեանց, 178: Այիշան, 200: Լալաեան, XXVI, 57:  
Բարխուդարյան, 234, արձ. 757:

**85.** ԳԱՎԻԹ. մի խաչքարի վրա.

Ես՝ Եղիշա եպիսկոպոս, կանգնեցի զխաչս ի փրկութիւն հաւրեղբար ի-  
մոյ Առաքել եպիսկոպոսին. թվին :ՌԺԸ: (1569):

Հրատ. Զալալեանց, 180: Այիշան, 201: Լալաեան, XXVI, 61:

Բարխուդարյան, 234, արձ. 758:

**86.** ԳԱՎԻԹ. խաչքարի վրա.

Յիշատակ է հաւրեղբար իմոյ Առաքել եպիսկոպոսին. թվին :ՌԺԺ:  
(1661):

Հրատ. Զալալեանց, 61: Բարխուդարյան, 234, արձ. 759:

## ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ

**87.** ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. արևմտյան մուտքի ճակատին, 6 տող:

ԵՍ՝ ՏԱՐՍԱԻՃ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽ  
ԱՆ, ՇԻՆԵՑԻ ԶԴԱՄԲԱՐԱՆՍ Յ  
ԱՂԱԳՍ ԵՂ  
ԲԱԻՐ ԻՄՈ ՍՄՊԱՏ  
ԱՐՔԱԻՆ, ՎԱՍՆ ՈՐՈ ԱՂ  
ԱՉԵՄ ՅԻՇԵԼ: Ի ԹՎ(ԻՆ) :ՉԻԴ: (1275):

Հրատ. Զալալեանց, 171: Այիշան, 190-191: Քաջբերունի, Արարատ, 1889, էջ 658:  
MAK, XIII, 180: Լալաեան, XXVI, 50, Տեր-Ավետիսյան, 488:  
Բարխուդարյան, 234, արձ. 763:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Սիրանեսն այս վիմագրում հան-  
դես է բերում գրչի ու ձևավորողի փայլուն հմտություն: Օգտագործելով  
խոշոր գեղագիր տառեր, արձանագրությունը սկսում է մուտքի կամարից,  
սպա 2-րդ տողը տեղադրում կամարի ներսի կողմում, իսկ հաջորդ 4  
տողն արդեն բարավորի վրա (նկ. 82): Սա մուտքի կամարատակի նման  
օգտագործման մեզ հայտնի առաջին (թերևս միակ) օրինակն է:

**88.** ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. հյուսիսային պատի ամբողջ երկարությամբ,  
արտաքուստ, 4 տող.



1. ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈՅ)Ց ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ՏԱՐՍԱՅԻՃԻՍ՝ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՍ, ՈՐ ԻՇԽԵՑՈՂ Է Ի ՍԻԻՆԵ(Ա)Ց ՆԱՀԱՆԳԻՍ ՈՐՈՏԱՆ ԵՒ ՇՆՀԵՐՈՅ, ՈՐ ԵԿԵՂԵՑԻ ՏՎԻ ՇԻՆԵԼ ՍԻՐԱՆԷՍ ՎԱՐԴՊԵՏԻՆ ՈՒ ԶՀԱԼԷՁՈՐԻ ՇՆՀԵՐՈՅ ՆՐԱՅ ՀԱՅՐԷՆԻՔ ՏՎԻ ԻԻՐ ՍԱՀՄԱՆԱԻՔՆ Յ
2. ՈՐԴԵ(Ա)Ց ՅՈՐԴԻՔ ՆՐԱՅ ՀԱՅՐԷՆԻՔ ՏՎԻ ՈՒ ԻՆՉ ԶԷԿԵՂԵՑԻՆ ԼՄՆԷՑԻՆ ԽԻԼԱՅ ԿՈՒՏԱՅԱՔ :Շ: (500) ՍՊԻՏԱԿ, Ի ԱՅՆ ԽԻՇԱՅԻՆ ՓՈՒՍԱՆ ԶԱՂԱԶԱՐ ԸՂՈՒԵՐԾԵՑԻՆ ՏՎԱՔ՝ ՆՐԱՅ ՀԱՅՐԷՆԻՔ Լ(Ի)ՆԻ, Ի ՆՐԱՅ ԳԵՂԻՆ ԿԱՅ ՅԱԶԳԷ ՅԱԶԳ, ՈՒ ԶՀԱԼԷՁՈՐՈՅ
3. ՀԱԿՆ ՍԱՀՄԱՆԷՑԱՔ Ի ՏԱՐՈՒՄՆ ՎԱՅՍՈՒՆ ՍՊԻՏԱԿ ՏԱ, ԱՅԼ ԱԶԱՏ Է ՅԱՄԷՆ ՀԱՐԿԱՑ. ԱՅԼ ՈՉ ԱՄԻՐԱՅԻ, ՈՉ [ՊԱՐՈՆԻ], ՈՉ ՁԵՌՆԱԻՈՐԻ ՈՉԻՆՉ ՀԱՇԻԻ ՉԿԱՅ ՀԵՏ ՀԱԼԷՁՈՐՈՅ. ՈՉ ԻՇՈՐ ՏԱՅ (Ե)Ի ՈՉ ԱՅԼ՝ ՈՉ ՈՒՄ: ՈՎ ՅԵՏ ՄԵՐ ԶԱՅՍ ՀԱՍՏԱՏ ՎԻՃԻ
4. ՌՍ ԽԱՓԱՆԷ ՈՒ ԶՄԵՐ ՀՐԱՄԱՆՔՍ ՈՒՆԱՅՆ ԱՌՆԷ՝ ՅԵՐԻՑ Ս(ՈՒՐ)Բ ԺՈՂՈՎՈՅՆ ՈՐՈՇԵԱԼ ԵՂԻՑԻ ԵՒ ՄԱՍՆ ՈՒ ԲԱԺԻՆ ԸՂՆԴ ՅՈՒԴԴԱՅԻ ԵՂԻՑԻ ԵՒ ԸՆԴ ԽԱՉԱՅՀԱՆՈՒԱՅՆ ԵՂԻՑԻ: ԵՍ՝ ՏԱՐՍԱՅԻՃՍ, ԻՄ ՁԵՌԱԻՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻ ԶԳԻՐՍ ԶԱՅՍ:  
*Հրատ. Զալալեանց, 172: Ալիշան, 191: MAK, XIII, 183: Լալաեան, XXVI, 50, Տեր-Ավերիսյան, 488-89: Բարխուդարյան, 234, արձ. 765:*

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. 2-րդ պողում երկու անգամ գործածված ԽԻԼԱՅ բառերից երկրորդը գրված է ԽԻՇԱՅ. համարում ենք գրչի սխալ և ուղղում առաջինի օրինակով: Արձանագրության միջին մասից մեկ քար ընկած-կորած է, որով 3-րդ և 4-րդ պողերում ունի պակասավոր տեղեր, բայց հեշտությամբ լրացվում է կողքերին մնացած տառերի օգնությամբ. մանավանդ որ հին հրատարակիչների ժամանակ եղել է ամբողջ: Արձանագրության ժամանակը նույնն է շինության հետ՝ 1275 թ.: Հիշատակված եկեղեցին էլ հենց Սմբատի դամբարանն է, որը արձանագրությունների մեջ անվանվում է Ս. Գրիգոր: Վանական շենքերի մեջ սա միակն է, որը շինված է Տարսայիճի կողմից:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Ս. Բարխուդարյանը նշում է, թե եկեղեցին «արձանագրությունների մեջ անվանվում է Ս. Գրիգոր»: Սակայն արձանագրություններում այդ անվանումը չկա, այն հիշատակում է միայն Ստեփանոս Օրբելյանը (Ստեփաննոս Օրբելեան, էջ 420): Առաջին պողում Ս. Բարխուդարյանի բառանջատումը «ՈՐ ԻՇԽԵՑՈՂ Է Ի ՍԻԻՆԵՑ ՆԱՀԱՆԳԻՍ», Ս. Ավագյանն ուղղել է՝ «ՈՐ ԻՇԽԵՑՈՂ Է Ի ՍԻԻՆԵՑ ՆԱՀԱՆԳԻՍ» (Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, էջ 104):

**89.** ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. արևմտյան պատի նեղ լուսամտուրի շրջանակի շուրջը, մասամբ փակագրերով, արտաքուստ.

Տ(Է)Ր, Ա(ՍՏՈՒԱ)Ծ, Յ(ԻՍՈՒ)Ս, Բ(ՐԻՍՏՈ)Ս ԱԻԳՆԷ ՏԱՐՍԱԻՃԻ:  
*Հրատ. Ալիշան, 191: MAK, XIII, 180 (Տարսայիճի փոխարեն Սմբատ): Քաջբերունի, Արարատ, 1889, էջ 658: Բարխուդարյան, 235, արձ. 764:*

**90.** ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. արևմտյան պատին, մուտքից վերև՝ հարավային մասում՝ արտաքուստ ազուցված որմնախաչի շրջանակներին.

ԱԶԱՏՇԱՀ ԿԱՆ(ԳՆԵՑԻ) ԽԱՉ(Ս) ԾՆՈՂԱՑ ԻՄՈ(Ց). ՅԻՇԵ(Ց)ԷՔ. ԹՎ(ԻՆ) :ՉԻ: (1271):  
*Հրատ. Բարխուդարյան, 235, արձ. 766:*

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Խաչքարն ավելի հին է, քան դամբարանի շենքը. նա ազուցվել է պատի մեջ շինարարության ժամանակ (ինչպես հաջորդ երեք խաչքարերը – Կ. Մ.):

**91.** ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. արևմտյան պատի վերնամասում՝ խաչաքանդակի տակ.

ԶՄԱ(Ր)ԳԱՐԷ Բ(Ա)Հ(ԱՆԱՅ) Յ(Ի)Շ(ԵՑԷՔ):  
*Հրատ. Բարխուդարյան, 235, արձ. 767:*

92. ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. արևմտյան պատիին՝ արտաքուստ, խաչաքանդակի երկու կողմում.

ԶԽՈՆՏԻԿ

Ս Յ(Ի)Շ(ԵՑԷՔ):

Հրատ. Բարխուդարյան, 235, արձ. 768:

93. ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. արևմտյան պատիին՝ արտաքուստ, խաչաքանդակի երկու կողմում.

ԶԽՏԻՐՍ

Հրատ. Բարխուդարյան, 235, արձ. 769:

94. ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. արևմտյան պատիին, արտաքուստ, երեսպատման քարի վրա. 2 տող.

ՍՏԵՓ(ԱՆՈՍ) ՔԱՀԱՆԱ

ՅԻՇԷՑԷՔ:

Հրատ. Բարխուդարյան, 236, արձ. 770:

95. ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. արևմտյան պատիին, արտաքուստ, երեսպատման քարի վրա. թերի.

(ԿԱ)ՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ, Ե(Ս)....:

Հրատ. Բարխուդարյան, 236, արձ. 771:

**ԴԱՄԲԱՐԱՆԻ ՆԵՐՍՈՒՄ՝ Ա. ՇԱՐՔ**

96. ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. տապանաքար, տափակ, սպիտակավուն քար, բեմի դիմաց. վրան 2 տող.

ՍՄՊԱՏ ԱՐՔԱԻՆ Է ՏԱՊԱՆ

Ս ՅԻՇԵՑԷՔ :ՉԻԲ: (1273):

Հրատ. Զալալեանց, 173 (սխալմամբ :ՉԻԹ:): Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 35: Այիշան, 192: MAK, XIII, 181: Լալաեան, XXVI, 57, Տեր-Ավետիսյան, 490: Բարխուդարյան, 236, արձ. 772:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Այստեղ և այլուր Սմբատ Օրբելյանին տրված «արքա» անվանումն, ըստ էության, ծագում է «արքաուն» անվանումից, որով նա հիշատակվում է Ծղուկ գավառի Հարժիս գյուղի մի վիմագրում (Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 82, Հ<sup>մ</sup> 240): Այս հարցի հանգամանալից մեկնաբանությունը տե՛ս սույն գրքի ուսումնասիրության բաժնում:

97. ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. տապանաքար, տափակ, եղել է նախորդին կից հարավից. վրան.

Այս է հանգիստ արքայաշուք կողմնակալին, հզար և մեծ գործակալին, քաջապահ մենամարտին, աթաբեկ Տարսայիճին. ի թվ. :ՉԼԸ: (1289): Հրատ. Զալալեանց, 173: Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 35 (առանց թվակալի): Այիշան, 192: Լալաեան, XXVI, 58: Բարխուդարյան, 236, արձ. 773:

Ծանոթագրությունը Ս. Բարխուդարյանի. Այս տապանաքարի միայն ջարդված, փոքր մասերն են տեղում: Այն ոչնչացված է եղել 1916 թվականից առաջ, որովհետև MAK, XIII-ը, չի հիշատակում:

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. Տարսայիճի մահվան թվականը նրա որդին՝ Ստեփանոս Օրբելյանը, երկու անգամ (իր Պատմության և Ժամանակագրության մեջ) նշում է ՉԼԹ (1290) թվականով: Գ. Գրիգորյանը հեղափոխական լուծում է առաջարկում կորած տապանագրի թվականի առնչությամբ, նշելով, որ այն, հավանաբար, եղել է ՉԼԹ, սակայն Թ տառի վերնամասը վնասված է եղել և ընդօրինակողներն այդ տառի ներքևի մասով անցնող Լ տառի ստորին մասնիկը Ը-ի ստորին մասնիկ համարելով՝ սխալմամբ ՉԼԸ են կարդացել: Ուսումնասիրողն անգամ բերում է թվատառերի հնարավոր դասավորության գծանկարը (տե՛ս Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, էջ 88):

**98.** ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. *տապանաքար, տափակ, գտնվում է նախորդից հարավ, հարավային պարի մոտ, վրան 4 տող.*

ԱՅՍ ՅԱՐԿ ՏԱՊԱՆԻ ԲԱՆԴ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ Է ԵՒ ԳՈՒՓ ԳԵՐ ՈՒԹԵԱՆ ՀՐԱՇԱԳԵՂ ՄԱՆԳԱՆՆ ԵՒ ՔԱԶԱԶԱԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ՝ ՓԱԽՐԱԴԱԻԼԻՆ, ՈՐԴՈՅ ՄԵԾԱՓԱՌ ԻՇԽԱՆԻՆ՝ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ, Վ(Ա)Ս(Ն) ՈՐՈ ԱՂԱԶԵՄ ՅԻՇ(ԵԼ): Ի ԹՎ(ԻՆ) :ՉԽԵ: (1296):

*Հրատ. Զալալեանց, 174: Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 34: Այիշան, 192: MAK, XIII, 181 (թվ. :Չխէ:): Լալաեան, XXVI, 58: Բարխուդարյան, 237, արձ. 774:*

Ծանոթագրությունը Կ. Մաթևոսյանի. *Սյունյաց մեպրոպոլիս, պատմիչ Ստեփանոս Օրբելյանի կրթութեան եղբոր տապանաքարն է, որի մահվան մասին նա հուզիչ խոսք է թողել նաև իր Պատմության վերջնամասում, նշելով, որ դա տեղի է ունեցել այդ հարվածը գրելուց քիչ առաջ՝ «սակա մի յառաջ քան զգծագրութիւն տառիս» (Ստեփանոս Օրբելեան, էջ 496):*

**99.** ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. *տապանաքար, տափակ, երեսին առյուծի ոտներով և պոչով մարդու քանդակ (նկ. 84), ելնդավոր տառերով արձանագրությունը շրջանակների վրա, գտնվում է Սմբատի տապանաքարին կից, հյուսիսային պարի տակ.*

ԹՎԻՍ :ՉԽԹ: (1300). ԶԳԵՂԵՑԿԱՏԻՊՆ ԷԼԻԿՈՒՄ՝ ՈՐԴԻ ՄԵԾԻ ՏԱՐՍԱԻՃԻՆ, ՈՐ ԱՌՈՅԾԱԻՐԷՆ ԽՐՈՒՏ ՄՌԸՆՉԷՐ ԸՆԴԷՄ ԱՅԼԱՍԵՌ ԳՆԴԻՆ: ԱՂԱԶԵՄ ՅԻՇԵԼ ՅԱՂԱԻԹՍ:

*Հրատ. Զալալեանց, 173: Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 35: Այիշան, 192: MAK, XIII, 181: Լալաեան, XXVI, 58-59, , Տեր-Ավետիսյան, 490: Բարխուդարյան, 237, արձ.775:*

**Բ. ՇԱՐՔ**

**100.** ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. *տապանաքար, տափակ, հարավից երկրորդը. երեսին 3 տող.*

Ի ԹՎ(ԻՆ) :ՉԽԷ: (1298). ԹԱԳԱԶԱՐՄ ԱՐՔԱՅՈՒՀ ԻՆ Է ՄԻՆԱ ԽԱԹՈՒՆՆ՝ ԴՈՒՍՏՐ ՄԵԾ ԿՈ ՂՄԱԿԱԼԻՆ ԱՂԻԱՆԻՑ ԶԱԼԱԼԻՆ:

*Հրատ. Զալալեանց, 174: Այիշան, 192: MAK, XIII, 181: Լալաեան, XXVI, 58: Բարխուդարյան, 237, արձ. 776:*

**101.** ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. *տապանաքար, տափակ, նախորդին կից հյուսիսից, երեսին 3 տող.*

1. [ԵՂԲԱԻՐ ՄԵԾ] ԲԻԻՐԹԷԼԻՆ, ԳԵՂԱՀՐԱՇՆ ՊՈՒՂՏ
2. [ԱՅԻՆ, ՈՐ Ե]ՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՍԱԿԻ ՅԵՏ ՅՈԼՈՎ ՔԱԶ ՄՐՑ-ՄԱՆՑ ՏԻԳ
3. [ԱԽՈՑԵԱԼ ԶԱՆ]ԹԱՌԱՄՆ ԸՆԿԱԼԱԻ ԶՊՍԱԿ ԹՎ(ԻՆ) :ՉԿԷ: (1318):

*Հրատ. Զալալեանց, 174: Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 660: Այիշան, 193: MAK, XIII, 180: Լալաեան, XXVI, 60: Բարխուդարյան, 237, արձ. 777:*

**102.** ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. *տապանաքար, տափակ, նախորդին կից հյուսիսից, վրան 3 տող.*

ԶԱՇԽԱՐՀԱՇԷՆ... ԴՇԽ ՈԱՓԱՌ ՊԱՐՈՆ ԶԹԱՄԹԱ ԽԱԹՈ ԻՆՆ՝ ՄԱՅՐ ԲԻՐԹԷԼԻՆ, ՅԻՇԵՑԷՔ ԹՎ(ԻՆ) :ՉԿԱ: (1312)

*Հրատ. Զալալեանց, 174: Քաջբերունի, Արարատ, 1890, էջ 34: Այիշան, 192: MAK, XIII, 180: Լալաեան, XXVI, 59: Բարխուդարյան, 238, արձ. 778:*

**103.** ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ. *հյուսիսային պարի արևելյան կամարի մեջ, ներքուստ, 16 տող.*

1. ԿԱՄԱԻ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Ց. ԱՅՍ ԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ԱՐՁԱՆ ԱՆՋ
2. ՆՋԵԼԻ ՄԻՆԱ Խ(Ա)ԹՈՒՆԻՍ Է՝ ԴՍԵՐ ՄԵԾԻ ԱՐՔԱԻՆ ԶԱԼԱԼԻՆ ԵՒ ԱՄՈՒՄՆՈ ՄԵԾԱԶ

3. Գի իճեաւնիւն՝ ՏԱՐՍԱԻՃԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴՈՅՄ՝ ԶԱԼԱԼԻՍ, ՈՐ ԳՆԵՑԱՔ Ի ՄԵՐ ՀԱԼԱԼ ԸՆԶԻՑ Զ
4. ՆՈՐՊԵՏԻՆ ԱՅԳԻՆ Ի ՎԷԴԻ ԵՒ ԶԱՅԼՆ Ի ԿՈՐԴՈ ԳՆԵՑԱՔ Ի ՀԱՅՐԵՆԱՏԻՐԱՑՆ ԵՒ ՏՆԿԵՑԱՔ, ԵՒ Բ
5. ՈԼՈՐԵՑԻ Զ:Դ: (4) ԴԵՀՆ՝ :Ա: (1) ՃԱԿԱՏՆ ԲՆԱՇԱՀ ՌԱՀՆ ՈՒ ԻՐ ՊԱՋՈՒՄԻՆ ԱՅԳԻՆ, :Ա: (1) ՃԱԿԱՏՆ ԻՐԻՑ
6. ԻՆ Ա(Յ)ԳԻՆ, :Ա: (1) ՃԱԿԱՏՆ ՈՋՊԷԿԻՆ ԱՅԳԻՆ, :Ա: (1) ՃԱԿԱՏՆ ԲՐԻՀԻՄԻՆ ԱՅԳԻՆ. ՏԵՂՆ :ԺԲ: (12) ԳՐՎԻ, ԶՈ
7. Ր ՅԱՌԱՋ ԱՅԼ ՏՎԱԾ ԷՐ ՎԱՆԻՑՄ՝ ՄԵՔ ՄԵՐ ՅԱԻԺԱՐՈՒԹ(ԵԱՄ)Բ ՎԵՐՍՏԻՆ ՏՎԱՔ Ի ՆՈՐԱՎԱՆՍ, ՅԱԻԱ
8. Գ Ս(ՈՒՐ)Բ ՆՇԱՆՍ ԵՒ Ի Տ(Է)Ր ՍՏԵՓԱՆՈՍ, Վ(Ա)Ս(Ն) ՀՈԳԵ(Ա)Ց ԱՐՔԱԱՇՈՒՔ Տ(ԵԱՌ)Ն ԻՄՈ ՏԱՐՍԱԻՃԻՆ. ԻՍԿ Տ(Է)Ր ՍՏԵՓԱՆՈՍ
9. ԵՒ ՄԻԱԲԱՆ ԵՂԲԱՐՔՍ ԿԱՐԳԵՑԻՆ ՆՄԱ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋԻՆՋ ԶՏԱԻՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆՆ, ԶԻ ՅԱՅՆՄ ԱԻՈՒՐ ՀԱ
10. ՆԴԻՍԻԻ ԱԻ(Ր)ՀՆԵՍՑԵՆ ԶՇԻՐԻՄՍ ՆՈՐԱ ԵՒ :Ժ: (10) ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՉԻՆ, ԵՒ ԱՅՍ ՏՈՒՐՔՍ ՈՉ Ի ԶՐԿԱՆԱՑ, ՈՉ Ի Գ
11. ԵՂԷ, ՈՉ Ի ՊԱՐՈՆԱՀՈՂՈ, ԱՅԼ ՄԵՐ ՀԱԼԱԼ ԴՐԱՄԱԳԻՆ՝ ԱՋԱՏ ՅԱՄԷՆ ՅԱՐԿԱՑ, ՈՐ ՈՉ ՈՒՄ ՀԱՇԻԻ ՉԿԱ Ի ՀԵՏ:
12. ԱՐԴ, ԹԷ Ի ՄԵՐՈՑ ԿԱՄ ՅԱԻՏԱՐԱՑ, ԿԱՄ ՅԻՇԵԱՆԱՑ, ԿԱՄ Ի ՁԵՌՆԱԻՈՐԱՑ ԶԻՆՉ ԵՒ ԻՑԷ ՊԱՏՃԱՌԱԻ ՆԵՆԳԵԼ ԿԱՄ
13. ՀԱՆԵԼ ԶԱՆԱՆ ԶԱՅՍ ԱՅԳԻՍ Ի ՆՈՐԱՎԱՆԻՑ՝ ԿՏՐԵԱԼ ԼԻՑԻՆ ՆՈՔԱ ՅԵՐԿՈՒ ԿԵՆԱՑ, ԸՆԴ ԱԻՁԻՆ ԵՒ ԸՆԴ ՍԱՏԱՆԱԻ,
14. ՆՋՈՎԵԼ ԵՂԻՑԻ ՅԱՄԵՆԱԿԱԼ ԲԵՐԱՆԷՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ, ԶԿԱՅԵՆԻՆ, ԶՅՈՒԴԱԻՆ, ԶՅՈՒԼԻԱՆՈՍԻՆ ԱՌՑԷ ՎԱՐՁ, ԸՆԴ ՎԱ
15. ՍԱԿԱ ՈՒՐԱՑՈՂԻՆ ԴԱՏԵՍՑԻ, ՅԵՐԻՑ Ս(ՈՒՐ)Բ ԺՈՂՈՎՈՅՆ ԵՒ ՅԱՄԷՆ ՍՐԲՈՑ ԱՆԻԾԵ(Ա)Լ ԼԻՑԻ Ի ՄԱՀ ԵՒ Ի ԿԵ(Ա)ՆՔ. ԵՒ ԹԷ ՏԱՃԻԿ
16. ԱԻԱԳ ՓՈՒԻ ԵՒ ՀԱՆԵԼ ԶԱՆԱ :Ռ: (1000), :Ռ: (1000), :Ռ: (1000) ՆԱԼԱԹ ԼԻՆԻ, ՅԻԻՐ ՄԱՀՄԵՏԷՆ ԱՊԻՋԱՐ Լ(Ի)ՆԻ: Ի ԹՎԻՍ :Զ: ԽԱ: (1292): ՀԱՍՏԱՏ Է ԳԻՐՍ ԿԱՄԱԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ:

Հրատ. Զալալեանց, 174 : Ալիշան, 191-192: Լալաեան, XXVI, 51-52:  
 Բարխուդարյան, 238-239, արձ. 779:

ԿՐՈ(ՆԱԻՈՐ), ԿԱՆԳՆԵՑԻ ԶԻԱ  
ՉՍ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ. ՈԽԴ (1195) Թ-(ՎԻՆ):

Ծանոթագրություն. Արձանագրությունը կարևորվում է այնքանով, որ կերպով է եկեղեցու և գավթի կառուցումից ավելի վաղ: Հայտնաբերել է Ա. Հարությունյանը:

**214. ԳԱԻԻԹ.** արևմտյան պատին, ուխտավորների խաչերի շարքում, խաչաքանդակի անկյուններում (նկ. 49).

ՄԿ(ՐՏԻՉ) ՅԻՇ(ԵՑԷԲ)  
Ի Բ(ՐԻՍՏՈ)Ս:



Նկ. 49 Արձ. Հմր 214, 215:

Ծանոթագրություն. Մկրտիչ անձնանվան վերականգնումը պայմանական է: Հարկապես սկզբնապատ Մ-ն անկանոն է փորագրված, ուղղահայաց ստեղծին ունի այլքաձև ելուստ, ինչը տարակույս է հարուցում:

**215. ԳԱՎԻԹ.** արևմտյան պատին, նախորդից աջ, երկու խաչերի ներքևում, 2 տող.

ԶԿՈՒԿՈՉԱՈ Է ԽԱՉ(Ս), ՌԼ (1581), ՅԻՇ  
(ԵՑԷԲ) Ի Բ(ՐԻՍՏՈ)Ս:

**216. ՏԱՊԱՆԱՔԱՐ.** գավթի հարավային պատին զուգահեռ, վրան պատկերված է եպիսկոպոսական գավազան, իսկ վերին աջ անկյունում՝ ինչ-որ գծապատկեր-խորհրդանշան: Գավազանին զուգահեռ արձանագրությունն սկսել են գրել, բայց ինչ-որ պատճառով չեն շարունակել (նկ. 50).

ԱՅՍ Է



Նկ. 50 Արձ. Հմր 216:

**217. ՍՄԲԱՏԻ ԴԱՄԲԱՐԱՆ.** արևմտյան կողմում, երկթեք տանիքի քիվի ներքևի մասում (նկ. 51), միատող.

ՅՈՎԱՆԷՍ

Ծանոթագրություն. Փորագրությունն անավարտ է. վարպետը կամ փորագրիչը գծադրել է տառերը, սակայն, չի փորագրել:



Նկ. 51 Արձ. Հմր 217:

**218.** ԲՈՒՐԹԵԼԱՇԵՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. *Եկեղեցու առաջին հարկի (դամբարանի) առաստաղի չորս ավերարանիչների խորհրդանիշների քանդակներից երկուսը՝ առյուծն ու եզրը, առաջին ուրբերով պահում են ուղղանկյուն տախտակներ, որոնց վրա գրված են ավերարանիչների համառոտագրված (փակագիր) անունները (նկ. 78):*

ՄԱՐԿՈՍ: Ղ(ՈՒ)Կ(ԱՍ):

**219.** ԲՈՒՐԹԵԼԱՇԵՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. *Եկեղեցու առաջին հարկում, հարավարևելյան կողմում ընկած մեծաբեկոր սրբատաշ քարի վերին մասում (նկ. 52).*

...Տ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՊԱ(ԱՐՈՆ)...



Նկ. 52 Արձ. Հմր 219:

**220.** ԲՈՒՐԹԵԼԱՇԵՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. *հարավային պատին, որտեղ ուխտավորների բազմաթիվ խաչեր են քանդակված, երկբլթակ թևերով խաչաքանդակի մոտ, թվականի տասնավորն ու միավորը չեն պահպանվել (նկ. 53).*



Նկ. 53 Արձ. Հմր 220:

ԳԻՐԻՔՈ(Ր) ԿԱԿ(ՆԵՑԻ) Խ(Ա)Յ(ՉՍ), ԹՎ Զ...

**221.** *Նոյն տեղում՝ խաչի կողքին մեծ տառերով գրված է «ՅՆ» (անհասկանալի), իսկ ներքևում (նկ. 54).*

ՄԽԻԹԱՐԻԶՆ ՅԻՇԵՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս:



Նկ. 54 Արձ. Հմր 221:

**222.** ԲՈՒՐԹԵԼԱՇԵՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. *Եկեղեցու հարավարևմտյան անկյան մոտ, հարավային պատին կից կանգնեցված բարձրադիր պատվանդանով գեղաքանդակ խաչքարի քիվին, Ելնդավոր տառերով, խիստ վնասված արձանագրությունից հնարավոր է կարդալ սկզբի հիշատակային բանաձևի մի հատված, որին հաջորդում է թեականորեն վերականգնված անձնանուն (նկ. 55).*



Նկ. 55 Արձ. Հմր 222:



Նկ. 56 Արձ. Հմր 223:

(ՍԲ Խ)ԱԶ(Ս) Է ԲԱՐԵԽ[ԱԽՍ]... [- ՍԱ]ՐԳՍԻ

**223.** ԽԱԶՔԱՐ. *այժմ խաչքարերի պուրակում, ստորին մասում (նկ. 56), 4 տող.*

Ք(ՐԻՍՏՈ)Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՅԻՇԵԱ  
ՋՅՈ[Հ]  
[ԱՆ]ԻՍԻ ՀՈԳԻՆ ԵՒ Ո  
ՂՈՐՄԵԱ, Ի ԹՎԻՍ  
ՉԻՋ. (1277):



224. ԽԱԶՔԱՐ. այժմ՝ խաչքարերի պուրակում, ստորին մասում (նկ. 57), 3 տող.

1. ԳԹԱ Բ(ՐԻՍՏՈ)Ս Ս(ՈՒՐ)Բ ՆՇԱՆԻԻ
2. Ա(ՍՏՈՒԾ)Յ ԱՄԻՐԱՅԻՆ ՀՈՂԳ
3. ԻՈՅՆ. ԱՅՄԷՆ:



Նկ. 57 Արձ. Հ<sup>ր</sup> 224:

Ծանոթագրություն. Վիմագրում վկայված Ամիրան, թերևս, Ջուրջի թոռն է, որը հիշվում է Նորավանքում 1291 թ. (արձ. Հ<sup>ր</sup> 25): Խաչքարը, հավանաբար, դրված է եղել նրա 1318 թ. փապանաքարի մոտ (արձ. Հ<sup>ր</sup> 163):



Նկ. 58 Արձ. Հ<sup>ր</sup> 225:

Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ Փ(Ր)ԿՈՒԹԵ(ԱՆ) ԻԲՐԻՆՈՍԻՆ:

225. ԽԱԶՔԱՐ. բեկոր (ստորին մաս), այժմ թանգարանի մուտքի մոտ (նկ. 58), 5 տող.

ԳՈ(Վ)ԵԼ  
ԽԱԹ  
ՈՒՆ  
ԻՆ, ՓՈԼ  
ԱՏԻՆ:

226. ԽԱԶՔԱՐ. այժմ դրված է թանգարանի մուտքի մոտ, խաչքանդակի երկու կողմում՝ ուղղահայաց (նկ. 59), 2 տող.

Ծանոթագրություն. Խաչքարն ունի պարզ քանդակային հարդարանք՝ հարազատ միջնադարի ու շրջափոփին: Վիմագրում հիշատակված է ոմն Իբրինոս, որը Եփրիանոս – Իբրիանոս անունն է. այն մեզանում գործածվել է 15-16-րդ դդ. (Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Եր., 1944, էջ 156):



Նկ. 59 Արձ. Հ<sup>ր</sup> 226:



Նկ. 60 Արձ. Հ<sup>ր</sup> 227:

227. ՄԱՏՈՒՌ. հուշարձանախմբի արևելյան կողմի առաջին մարտուռի մուտքի վրա դրված՝ ներքևի մասում երիզավոր խոշոր քարի

վրա, որը, հավանաբար, սկզբնապես այլ շինության է պատկանել: Խոշոր փորագրված է «ՅՈՎԱՆԷՍ» անունը, որից աջ՝ ստորին մասում, ու շրջանի խազագրված մի քանի արձանագրություններ կան, մի մասը՝ եղծված: Հետաքրքրություն է ներկայացնում հարկապես թվական ունեցող մի վիմագիր (նկ. 60), որը, փաստորեն, Նորավանքի առայժմ հայտնի միջնադարյան ամենաուշ թվակիր գրությունն է.

ԵՍ՝ Տ(Է)Ր ԸՍՏԵՓԱՆՍ, [Թ]-ՎԻՆ ՌՃԾ (1701)...

228. ԽԱԶԱՔԱՆԴԱԿ բեկոր, դրված Ս. Կարապետ կիսավեր եկեղեցու ներսում (նկ. 61), պահպանված մի քանի տառ.

ՁՇԱԼ[ՈՒԷ]



Նկ. 61 Արձ. Հ<sup>ր</sup> 228:



Ծանոթագրություն. Ենթադրելի է, որ պահպանվածը 13-րդ դարում հաճախ հանդիպող ՇԱԼՈՒԷ անձնանվան սկզբնամասն է:

**229.** ԽԱԶՔԱՐ. վանքի հյուսիսային կողմի ժայռազանգվածներից մեկի ստորոտում եղած քարայրի մուտքի մոտ, կտրված խաչքարի ներքևի մասում (նկ. 62)՝ 2 տող.



Նկ. 62 Արձ. Հ<sup>մ</sup> 229:

ԵՍ՝ ՌԱՄԱՆՈՍ, ԿԱ[Ն]  
Գ(Ն)ԵՑԻ ԶԻԱԶՍ Ի...

Ծանոթագրություն. Խաչքարը հայտնաբերել է Տեր Սահակ ք. Մարտիրոսյանը: Վիմագրում հիշատակված է ոմն Ռամանոս: Վայոց ձորի վիմագրերն ընդգրկող «Դիվան հայ վիմագրության» 3-րդ պրակում ընդհանրապես չի հանդիպում Ռամանոս (Ռոմանոս) անձնանունը:

**ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԳՐՎԱԾ ՎԻՄԱԳՐԵՐ**

Նոր ժամանակների վիմագրերի հրատարակությունը մեզանում քիչ է հանդիպում: Կարծում ենք, որ ժամանակի ընթացքում այն կիրառություն կստանա: Նորավանքի վերջին շրջանում գրված վիմագրերը հիմնականում վերաբերում են վանքի եկեղեցիների վերականգնմանն ու նորոգմանը: Դրանցից առաջինում նշվում է Ս. Ստեփանոս եկեղեցում՝ 1982 թվականից սկսված աշխատանքների ավարտը, որը կատարվել է վերականգնող ճարտարապետ Հրաչյա Գասպարյանի ղեկավարությամբ (աշխղեկ՝ Արտաշես Հովսեփյան): Արձանագրությունը գրվել է նրա մեջ նշված վարպետների նախաձեռնությամբ, վերականգնման տախտակամածները քանդելուց առաջ:

**230.** Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. գմբեթի հյուսիսարևմտյան կողմում, 5 տող.

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՑ 1989 Թ.  
ՎԱՐՊԵՏՆԵՐ՝ ՄԿՐՏՉՅԱՆ ԳՎԻՏՈՆ  
ԱՍԱՏՐՅԱՆ ՄԻԱՄՆԻԿ  
ԱՍԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ  
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՂԱՄ:

**231.** Ս. ՍՏԵՓԱՆՈՍ. բեմի Ս. Սեղանի մոտ, 7 տող.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. ԳԱՐԵԳՆԻ  
Ա ԿԱՌՈՒՑԵՑԱԻ ԶՍԵՂԱՆՍ ԱՐԴԵԱՄԲԲ  
ՄԱՐՏԻԿ ԱԻԵՏԻՍՅԱՆԻ Ի ՓԱՌՍ ԱՍՏՈՒԾՈՅ  
Ի Թ. 1998  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ  
ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ ԳԵՒՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԱՐԱՄ ՄԱՐԿՈՍՅԱՆ:

**232.** ԲՈՒՐԹԵԼԱՇԵՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. հարավային պատին, բուն կառույցի պատից առաջ դրված քարի վրա, 9 տող.

ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑԱԻ ԲՈՒՐԹԵԼԱՇԵՆ  
Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ.Տ.  
ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ  
ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ Տ. ԱԲՐԱՀԱՄՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ  
ՍԻՆԵԱՑ ԹԵՄԻՆ, ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻԻՔ ՏԻԳՐԱՆ ԵՒ  
ՏԻԱՆԱ ՀԱՃԷԹԵԱՆ ԱՄՈԼԻՆ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԳԱՆԱՏԱ, Ի  
ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑ ԻԻՐԵԱՆՑ ԼԵԻՈՆ ԵՒ ԱՆԺԷԼ ՀԱՃԷԹԵԱՆ  
ՆԻ  
ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ԱԶԱՏՈՒՀԻ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ, ՅԱՄԻ  
ՏԵԱՌՆ 1999 ԵՒ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՆԻԸ (1999)-ԻՆ:

Ծանոթագրություն. 1996-1999 թթ. եկեղեցու վերականգնման և բարերարների մասին է: Բուրթելաշենի ավելի վաղ կատարված նորոգման մասին տե՛ս Վ. Հարությունյանի հոդվածը (Վայոց ձորի պատմաճարտարապետական յուշարձանների պահպանության և վերականգնման ուղղությամբ գործադրուած ջանքերը, «Նորավանք» Բ ժողովածու, էջ 41): Այս վերականգնման ժամանակ կարևոր ավանդ են ունեցել նաև վերականգնող ճարտարապետ Հրաչյա Գասպարյանը և ավագ քարգործ վարպետ, աշխղեկ՝ Արտաշես Հովսեփյանը:

**233.** ՎԱՆՔԻ ԲԱԿ. *աղբյուրի վրա, արևմտյան կողմում, 7 փող (առաջին փողը՝ կամարին).*

ԱՆՎԱԽՃԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՂԲԻԻՐԸ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀԱԽԱՏՔՆ Է  
ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՂԲԻԻՐՍ ՀԻՇԱՏԱԿ ԳԱՐԵԳԻՆ Ա  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
1995-1999  
Ի ԲԱՐԵՐԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՃԵԹԵԱՆ  
ԸՆՏԱՆԻՔԻ:

**234.** ՎԱՆՔԻ ԲԱԿ. *աղբյուրի արևելյան կողմում, 8 փող.*

ՆՈՐՈԳՈՒՄՆ ՆՈՐԱՎԱՆԻՑ  
ԲԱՐԵՐԱՐՈՒԹԵԱՄԲ  
ԴԻԱՆԱ ԵՒ ՏԻԳՐԱՆ ՀԱՃԵԹԵԱՆԻ  
ԵՒ ԶԱԽԱԿԱՑ ՆՈՑԻՆ ՍԵԻԱՆ ԵՒ ՆԱԹԱԼԻ  
ԻՍԹԱՄՊՈՒԼԵԱՆԻ, ՅԱԲԵԹ ԵՒ ԱԼԻՆ  
ԵՒ ԶԱԽԱԿԱՑ ՆՈՑԻՆ ԳՐԻԳՈՐ ԵՒ ԷՄՄԱ  
ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆԻ: Ի ԹՎ. 1999  
ԵՒ ՄԻՆԱ ՕՖԵԼԻԱ ԻՍԹԱՄՊՈՒԼԵԱՆԻ:

**235.** ԹԱՆԳԱՐԱՆ. կառույցի դիմաց դրված՝ վերնամասում քանդակազարդ մեծաբեկոր քարի վրա (հայերեն գրությանը հաջորդում է նույնը ռուսերեն և անգլերեն).

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ  
ՄՈՄԻԿԻ  
ԹԱՆԳԱՐԱՆ

**236.** ՏԱՊԱՆԱՔԱՐ. վանքի հյուսիսային պարսպի արևմտյան անկյունամասում, 11 տող.

ՏԻԳՐԱՆ ՀԱՃԵԹԵԱՆ  
1938-2008  
ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐ  
ԵՎ  
ՎԵՐԱՇԻՆՈՂ ՆՈՐԱՎԱՆՔԻ  
«ԳՈՐԾՆ Է ԱՆՄԱՀ  
ԼԱԻ ԻՄԱՑԵՔ  
ՈՐ ԱՊՐՈՒՄ Է ԴԱՐԷ ԴԱՐ  
ԵՐՆԷԿ ՆՐԱՆ, ՈՎ ԻՐ ԳՈՐԾՈՎ  
ԿԱՊՐԻ ԱՆՎԵՐՋ, ԱՆԴԱԴԱՐ»  
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ծանոթագրություն. Բարերար Տիգրան Հաճեթյանի տապանագիրն է: Հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի խորհմաստ խոսքերը բնութագրական են Նորավանքի ողջ համալիրի ու նրա հարուստ մշակութային ժառանգության համար, որը դարեր առաջ կերտվել, իսկ մեր ժամանակներում՝ սկսած խորհրդային շրջանից, վերակերտվել, նորոգվել է բազմաթիվ հայտնի ու անհայտ վարպետների տաղանդալի աշխատանքով, հավատարմորդ ու մշակութասեր անձանց հոգածությամբ:

## ՆՈՐԱՎԱՆՔՈՒՄ ԳՐՎԱԾ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Նորավանքի գրավոր ժառանգության մի կարևոր մասն են կազմում այստեղ գրված ձեռագրերի հիշատակարանները: Դրանք, ի տարբերություն վիմագրերի, թեպետ մեծաթիվ չեն, սակայն շատ արժեքավոր են, որովհետև ստեղծվել են հիմնականում ոչ թե սովորական գրիչների, այլ ժամանակի երևելի գործիչների ձեռքով, ինչպիսիք են Սյունյաց մետրոպոլիտ, պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, մետրոպոլիտ Հովհաննես Օրբելը, բազմաշնորհ գրիչ, մանրանկարիչ, ճարտարապետ Մոմիկը:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները ցայժմ հրատարակվել են 10 սովոր հատորներով (Գարեգին Հովսեփյանի, Լևոն Խաչիկյանի, Արտաշես Մաթևոսյանի, Աշոտ Հովհաննիսյանի, Վազգեն Հակոբյանի աշխատասիրությամբ), և այդքան էլ կարող են կազմել դեռևս անտիպ հիշատակարանները: Դրանք անգնահատելի պատմական սկզբնաղբյուրներ են, քանի որ արձանագրում են անմիջապես ձեռագրերի գրության ժամանակ տեղի ունեցած դեպքերը, ուստի առավելապես արժանահավատ են: Նշելի է նաև, որ այլ ժողովուրդների ձեռագրական մշակույթի մեջ (անգամ հունական, լատինական և այլն) հիշատակարանները շատ փոքր մաս են կազմում և պատահական չէ, որ դեռևս չկան դրանց հրատարակություններ առանձին հատորներով:

Հայերեն հիշատակարանների ժողովածուներում, սովորաբար, դրանք ներկայացվում են որպես աղբյուրագիտական նյութ, նվազագույն ծանոթագրություններով, սակայն ստորև մենք յուրաքանչյուր հիշատակարան ներկայացնում ենք պատմական և բնագրագիտական համառոտ ուսումնասիրությամբ:

Բուն հիշատակարանների բնագրում համառոտագրությունները բացում ենք, չպահպանված մասերի վերականգնումները նշում ուղիղ փակագծերում, հատուկ անունները՝ ընդգծված (մուգ տառերով), էջերի հաջորդման տեղը՝ զույգ գծով՝ //:

Մոմիկից հայտնի փոքրաթիվ մատյաններից միայն այս մեկն է, որտեղ նա հիշատակված է իբրև գրիչ և մանրանկարիչ (Մատենադարան ձեռ. թիվ 2848)<sup>1</sup>: Նկարագարդումից պահպանվել է չորս անվանաթերթ, ավետարանիչների պատկերներից՝ Ղուկասը, իսկ մյուս երկուսը՝ քիչ հանդիպող պատկերագրական տարբերակներով՝ «Մարկոս ավետարանիչ և Պետրոս առաքյալ» և Պրոխորոն (առանց Հովհաննես ավետարանիչի): Մատյանն ունի նաև լուսանցագարդեր, որոնցից մեկը երկհարկ եկեղեցու պատկեր է (230բ), որն ուսումնասիրողների կարծիքով (առաջինն այդ բանը նկատել է Մուրադ Հասրաթյանը)<sup>2</sup> Բուրթելաշեն Ս. Աստվածածին եկեղեցու նախատիպն է:

Հիշատակարանի սկզբնամասը՝ «Փառքը», կաղապարային ձևակերպումներ է պարունակում, սակայն շարունակությունն ունի հետաքրքրական մանրամասներ, որոնցից է արվեստագետի՝ իր գործին տված բնութագիրը՝ «զանձն ի գործ արկի, և եռեալ, յաւղեալ, յարմարեալ, յարիներեալ, տառապեալ գճագրեցի և բովանդակեցի»: Ուշագրավ է, որ Մոմիկն իր բազմագիտակ լինելն արտահայտել է նաև հիշատակարանի թվականը նշելիս՝ օգտագործելով երկու օտար (հռոմեական-բյուզանդական) և երկու հայկական տոմարական հաշվարկ, հատվածի սկզբում՝ Սարկավագադիրը, իսկ վերջում՝ Հայոց Մեծ թվականը:

Հիշատակարանում Մոմիկը նշում է Ստեփանոս Օրբելյանին՝ որպես Սյունյաց առաջնորդ և Նորավանքի վանահայր, բայց նաև առիթն օգտագործելով՝ փառաբանական խոսքերի մի շարք է ձոնում նրան, մանավանդ, որ վերջինս նաև արվեստագետի հովանավորն էր:

Ձեռագիրը ստացել են Հովհաննես քահանան և իր եղբայր Թադեոսը, որոնք Քարկոփի վանքից ոչ հեռու գտնվող Ուռոյ քարո վանքից էին: Հիշատակարանում ասվում է, որ ստացողները ձեռագիրը պետք է դնեն իրենց վանքի եկեղեցում, որի անունը՝ «Սրբոյն Գէորգ», պահպանվել է

<sup>1</sup> Ձեռագիրը գրված է մագաղաթի վրա, ունի 320 թերթ (32,5 x 23,7 սմ), գրչությունը՝ բոլորգիր:

միայն այս հիշատակարանում: Հետաքրքիր է, որ նշվում է նաև մատյանի դրվելու ստույգ տեղը՝ գրքերի արկղը («եղին **յարկեղ** սուրբ եկեղեցւոյն իւրեանց Սրբոյն Գէորգայ»): Այդպիսի հիշատակություն մեզ հայտնի է միայն մեծ վանքերի դեպքում (օրինակ՝ Հաղբատ, Հերմոն):

Եթե հիշատակարանային ավանդությամբ Մոմիկն իրեն կոչում է «ապիկար քարտուղար», «անարհեստս ի գրիչս», «անպիտան գծող», ապա ստացողների անունից գրված հատվածում նրա մասին ասվում է. «զոմն եղբայր սիրելի Մոմիկ անուն, **բազմիմաստ և հանճարեղ յարուեստ գրչի և նկարագրութեան**»: Իսկ հատվածներից մեկում, հիշատակարաններին բնորոշ կաղապարային խոսքերը՝ «աղաչեմ սղալանաց և խոշորութեանն անմեղադիր լինել» Մոմիկը շարունակել է իրեն հատուկ ինքնատիպությամբ՝ «զի բեկ սրտիւ և թախանձեալ մարմնով գրեցաւ» (այլուր չհանդիպող ձևակերպում):

Սա միակ հիշատակարանն է, որտեղ Մոմիկն ակնարկ ունի իր սարկավագական կոչման մասին, երբ գրում է. «անարիս ի սարկաագս», նաև միակ տեղն է, ուր հիշում է իր «բազմերախտ» ուսուցիչ Հովասափին («...զբազմերախտի ուսուցիչն իմ զՅովասաբ»):<sup>1</sup>


Փոքր հիշատակարաններից մեկը (ստորև՝ «գ») ամբողջ էջով՝ կարմիր թանաքով գրված գեղագրական գրչության մի փայլուն նմուշ է<sup>2</sup>: Հետաքրքրական է որ այստեղ գրիչն օգտագործում է ինչպես երկտառ, այնպես էլ միատառ «և» (վերջինս բացարձակորեն գերակշռում է Նորավանքի հիշատակարաններում): Մատյանի մեկ այլ հիշատակագրություն (ստորև՝ «դ»), գրչի անունն է հունարենով:

Նույն վայրում եղած վիմագրերի և գրված հիշատակարանների փոխառնչության տեսակետից հետաքրքրական է այս հիշատակարանում Մոմիկի՝ Տարսայիճի որդի էլիկումին տված բնորոշումը՝ «քաջսպահիկ մենամարտին էլիկումին», որը կրկնված է դրանից մի քանի տարի առաջ

<sup>1</sup> Հնարավոր է, որ նույն այս Հովասափն է, որ հենց 1292 թ. մի ձեռագիր է ընդօրինակել Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցու համար (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 601): Նորավանքում պահպանվել է նաև Հովասափ կրոնավորի 1324 թվակիր տապանաքար (արձ. Հ<sup>Պ</sup> 162) և չի բացառվում, որ նույն անձը եղած լինի:

<sup>2</sup> Լուսանկարը տե՛ս գրքի շապիկի Բ երեսին:

գրված Տարսայիճի տապանաքարի վիմագրում՝ «քաջսպահ մենամարտին, աթաբեկ Տարսայիճին» (արձ. Հ<sup>Պ</sup> 97): Ի դեպ, քանի որ տապանաքարը վիմագրության «Դիվանի» կազմման ժամանակ արդեն կորած էր, կարելի է ենթադրել, որ այնտեղ նույնպես գրված է եղել «քաջսպահ», բայց սխալ է արտագրվել:



Նկ. 63 Մոմիկի 1292 թ. հիշատակարանի մի էջ (317ա):

Հետաքրքիր է նաև Նորավանքի բնորոշման մեջ օգտագործված «փառաբնակ» բառի գրությունը «փաբնակ» համառոտագրությամբ (ի փա(ռա)բնակ և ի հոյակապ և ի հոչակաւոր մենաստանիս Նորավանս»), որը տեսնում ենք նաև մի քանի տարի անց Ստեփանոս Օրբելյանի գրած հիշատակարանում («ի... փա(ռա)բնակ ուխտիս Նորավանից»):

Հատվածներից մեկում Մոմիկը «ահա» բառի համար օգտագործել է երբեմն հանդիպող «ահայ» սխալագրությունը («Եւ արդ, **ահայ** նախագրեալ հայրս...»)

(նկ. 63), որը հնարավոր է կիրառված լինի նաև Նորավանքի գավթի մուտքի բարավորի քանդակում՝ Եսայի մարգարեի «Ահա կոյսն յղասցի՛ եւ ծնցի որդի...» (Եսայի, է, 14) խոսքի առաջին բառերի՝ «ԱՀԱՅ ԿՈՅԱ» համառոտագրության մեջ, և որը կարող է վերծանվել՝ «ԱՀԱՅ ԿՈՅԱ»:

Հիշատակարանն առաջին անգամ հրատարակել է Ա. Մաթևոսյանը<sup>1</sup>:

<sup>1</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 677-679:



## ԱՒԵՏԱՐԱՆ

Մատենադարան, ձեռ. թիվ 2848

Գրիչ և ծաղկող՝ **Մոմիկ**

**ա**

(315ա) Փառք եռակի, եզակի, միաբուն, միասնական, երեք անձնաւորութեան և մի տէրութեան՝ Հար և Որդոյ և Սուրբ Հոգւոյն, որ արժանի արար զփրցուն և զփանաքի գրիչս հասանելի ի վերջին գիծս:

(315բ) Հրամանն տերունի, որ միշտ գոչէ յականջս հասարակաց, թէ «Գանձեցէք զձեզ գանձ անպակաս յերկինս, որ ոչ ցեց ուտէ և ոչ ուտիչ ապականէ», ստիպեաց զոմն ի դասէ երջ(ան)կաց, լուսերամ կրանաստանիս քահանա և կրանաւոր **Յովանէս** վերծայնեալ, յորդիս եկեղեցոյ, անդրանիկ ի համակարգսն պայծառ, ի կղերսն նախագահ, իմացեալ զախցաւորիս, և բուն հարեալ զմշտնջենաժառանգն, կամեցաւ ստանալ զաւակ ի Սիովն և ընտանիս յերուսաղէմ, այսինքն ի նորս եկեղեցի, և երանաւէտ շնորհին արժանաւորիլ: Եւ բարեյորդոր փութով ստիպեաց զտկարութիւն ապիկար քարտուղարիս **Մոմիկ** կոչեցելոյ, դրոշմել ի քարտէնի զգիծ և զնկար (316ա) // զաստուածեան քառառաջ վտակացն հոսմունս, որք մշտասահ կայլակաք կենահրաւէր պայմանաւ զկիպիկոն ձև դեմետրէի ոռոգեալ դաշնաւորեցին, և հրեղէն կաթլաւքն լուծին զհիսիսային խստաշունչ աւոյցն դառնադաժան կարծրութիւնն խավարամած բնութեանս, և գարնան ընդոստ որոտմամբ հարաւասիք աւոյով սաղարթաւորեալ պտղաբերեցին զանտաստանս ոգւոց, այսինքն՝ զաւետապատում մատեանս չորից աւետարանչացն **Մատթէի, Մարկոսի, Ղուկայ և Յոհաննու:**

Զոր և իմ իսկ ի սիրոյ բանադրեալ կամեցա լնու ըստ կարի զբարեյաւժար կամացն կարիս, յեցեալ յոյսն հասարակաց, զանձն ի գործ արկի, և եռեալ, յաւդեալ, յարմարեալ, յարինեալ, տառապեալ զձագրեցի (316բ) // և բովանդակեցի, յամս աստուածապատիւ և հոգևոր տեառն՝ **Ստեփանոսի** Հայոց կաթողիկոսի և աստուածապահ թագաւորին Հայոց **Հեթմոյ** որդոյ **Լևոնի**, յաշխարհակալութեան ընդհանուր աշխարհիս ազգին Նետողաց, յիշխանութեան այսմ նահանգի արհնելոյն և բարեպաշտին, գեղեցկաձաղիկ երիտասարդին և քաջսպահիկ մենամարտին **Էլիկումին** և եղբարց իւրոց, որդւոց ամէնարհնեալ պարոնին աթաբակ **Տարսայիճին**, ի նահանգիս **Սիւնեաց**, ի գաւառիս **Վայոյ ձոր**, ի փա(ռա)բնակ և ի հոյա-

կապ և ի հոչակաւոր մենաստանիս **Նորավանս** կոչեց[ել]ոյ, յարքունապատիւ գահոյս հայրապետութեան, գերափառ և մեծապատիւ, հրաշագան, ամէնիմաստ հզար իմաստասիրի և բանիբուն ռաբունապետի և արհիական (317ա) քաւչապե//տի և վերադիտողի **Տանս Սիւնեաց** տեառն տէր **Ստեփանոսի**՝ առաջնորդի սուրբ ուխտիս, ընդ հովանեաւ երկնաճեմ և աստուածակերտ քաւարանացս, կարողութեամբ **Աւագ Սուրբ նշանիս**, և աստուածընկալ **Սուրբ խաչիս**, և այլ բազմագումար սրբոցս, որք աննման գոլով իբրև զարեգակն ջահաւոր փայլեն յաշխարհիս Հայոց: Ի նոր շրջագայութեանս ՄԹ (209+1084=1293), ի չորեքտասան յորէլոնիս, ԽԱ թվոց յաւելմամբ (14×50+41=1292), և ի ԽԹ ընտիքստիոնիս վեցիւ աճեցեալ (1292), յեթնեկ հարիւրիս և ի քառեկ տասնեկիս միակիւ պսակեալ (741+551=1292):

Եւ արդ, ահայ նախագրեալ հայրս նազելի **Յովանէս** և եղբայր իւր **Թադէոս**, ստացան զսա գանձ հոգևոր և փարթամութիւն անկապուտ և անկշիռ, յիշատակ հոգոյ, և վայելք մարմնոյ, ի պէտս մաքրաբնակ անապատին և ցանկալի (317բ) մենանոց//ին, ի բնակութեանն իւրեանց **Ուռոյ քարոյ**, որ պատուեալ էր և գովեալ ի հին արանց սրբոց, որք և հնտակեր և խոտաբուտ կենաւք հր(ե)շտակացան և անդէն հանգեցան ի քարաժայռ ձորակին և յանուշահամ աղբերականն, և եղին յարկեղ սուրբ եկեղեցոյն իւրեանց **Սրբոյն Գէորգայ:** Վասն որոյ յերեսս անկեալ մաղթեմ զվայելլողսդ և զհանդիպողսդ սուրբ Աւետարանիս, անմոռաց յիշմամբ հայցել ի Տէր զթողութիւն մեղաց, և առնել արժանի աղաւթից և պատարագի զստացողքս սորա՝ **զՅովանէս և զԹադէոս**, զի թերևս ի ձեռս ձեր գոցեն զողորմութիւն յաներեկ աւուրն դատաստանի ի Քրիստոսէ Աստուածոյ մերոյ, որ է արհնեալ յաւիտեանս, ամէն:

Յիշեսջիք և զբազմերջանիկ քահանայն **զԴասապետն**, որ ըստ մարմնոյ՝ ազգ և ըստ հ(318ա)ոգոյ հայր և սնուցիչ: Ընդ նմին և զմայրն իւր **զԾամոսկի**, նայև զձնաւս նոցա **զՎանիկն և զՄաստունն**, եւս առաւել զկիսարեայ տիաւք փոխեցեալն խեղճ մահամբ զկրտսեր եղբայրն իւրեանց **զՅովասաբն**, և յոլով կսկիծ և անմխիթար սուգ եթող տեսողաց և ազգայնոց իւրոց:

Այլև ես տառապեալս **Յովանէս** և եղբայր իմ **Թադէոս**, որ ի բազում ամաց փափագէաք այսմ աստուածաշունչ մատենի, և ըստ ժամանակիս

**ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ (1297 թ.)**

Ստեփանոս Օրբելյանի կոթողային «Սյունիքի պատմություն» աշխատությունն ավարտվում է արժեքավոր հիշատակարանով, որը, ինչպես և բուն մատյանը, նա գրել է Նորավանքում՝ «ի վանս վսեմական և փա(ռա)բնակ ուխտիս Նորավանից»։ Իր գործն ու նրա ընդգրկումը, ինչպես և անունը նա նշում է հետևյալ խոսքերով՝ «գրեցաք զայս քաղցրաբան պատմութիւն հանդէսք դպրութեանց յիշատակարանց առաջնոցն, ոչ ընդհանրական. այլ առանձին Սիսական աշխարհիս, որ կոչի Յիշատակաց մատեան»։

Սույն գրքի ուսումնասիրության հատվածում մենք վկայաբերել ենք երկի հնագույն մատյանից քաղված նրա ամբողջական վերնագիրը, որն ավելորդ չենք համարում կրկնել, քանի որ այն որոշակի տեղեկություններ պարունակող հիշատակարանային բնույթ ունի. «Հանդէս բանից քաղցրավէպ պատմութեանց Տանն Սիսական, հրաշահիւս յարինուածովք յարմարեալ գյիշատակարանս հնոցն, նուաստ եւ ապիկար ոգւոյ Ստեփաննոսի Սինեաց այցելուի եւ նախագահ մետրապալտի, որդւոյ մեծափառ իշխանաց իշխանին Տարսաիծի, որ կոչի սա յիշատակաց մատեան» (Մատենադարան, ձեռ. թիվ 6271, 7բ)։

Ստորև հիշատակարանը ներկայացնում ենք վերոնշյալ ձեռագրի (գրչության վայրը՝ Տաթև, 14-րդ դ.) և հրատարակությունների համեմատությամբ։ Հիշատակարանն առանձին վերնագիր ունի՝ «Յիշատակարան գեղեցկավէպ մատենիս» և սկսվում է աստվածաբանական նախաբանով, որն այլ հիշատակարաններում սովորաբար սկսվում է «Փառք» բառով, բայց այստեղ այն երկրորդ պարբերության մեջ է՝ «Արդ, գոհութիւն և փառք Ստեղծողին...»։ Դրան հաջորդում են տեղեկությունները իր՝ հեղինակի, և երկը ստեղծելու մեծաջան աշխատանքի, օգտագործված սկզբնաղբյուրների ու գործը գրելու նպատակների մասին։ Հետաքրքրական է հատկապես օգտագործված աղբյուրներին վերաբերող հատվածը՝ «յոլով աշխատութեամբ որոնեալ հաւաքեցաք ի հին և նոր պատմագրաց Հայոց, նաև յարձանագրութեանց եկեղեցեաց և ի հնագոյն նամակաց, որ կայր պահեալ յամուրս տեղեացն աշխարհախումբ

պատշաճի հարկեալ զոմն եղբայր սիրելի **Մոմիկ** անուն, բազմիմաստ և հանճարեղ յարուեստ գրչի և նկարագրութեան, որ և սայ ելից զփափագ և զարփումն սրտից մերոց, որ և **Տէր Յիսուս** յաւուրն աներեկի հատուցէ սմա և լցուցէ զտարփումն ոգւոյ իւրոյ։

Արդ, աղաչեմք զամենեսեան, որք (318բ) հանդի/պիք այսմ մատենի, զվերասացեալ ծնաւոսն մեր և զայլազգայինս մեր՝ զքոյրսն մեր **զՄամքան** և **զՏաւասխն**, և **զԲազմոց**, և զմիւս **Բազմոց**, և զհաւրքոյր իմ **զՏաճար** և զհաւրեղբայրն իմ **զԴմիկն**, և զամուսին իւր **զՈսկի**, եւս և զհանիկս մեր **զԾամոսկի** և **զԲախտաւորն**, և զմեզ զմեղապարտ ստացողքս **Յովանէս** և **Թաղէոս** յիշման արժանի արարէք, և յոյսն արարածոց մեզ յիշելոցս, և ձեզ յիշողացդ առհասարակ ողորմեացի այժմ և յանվաղճան յաւիտեանս, ամէն։ Այլև ես՝ թարմատար և անարիս ի սարկաւազս և անարհեստս ի գրիչս **Մոմիկ** զերեսս ի մայր մածուցեալ աղաչեմ սղալանաց և խոշորութեանն անմեղադիր լինել, զի բեկ սրտիւ և թախանձեալ մարմնով գրեցաւ։ Աղաչեմ ևս յիշել զբազմերախտի ուսուցիչն իմ **զՅովասաբ** կուսակրոն քահանայ։

**Բ**

(20բ) Տէր Աստուած **Յիսուս Քրիստոս**, բարեխաւսութեամբ Քո սուրբ չարչարանացն և սուրբ կենսաբեր յարութեանդ, ողորմեայ ստացողաց սորայ **Յովանէս** քաջաջան և բազմերջանիկ կրաւնաւորի, և հարազատ եղբար իւրոյ **Թաղէոսի**, և ծնողաց իրեանց, և մեղուցեալ ծնողիս, և Քեզ փառք յաւիտեանս, ամէն։

**Գ**

(147բ) Քրիստոս Աստուած, յոյս արարածոց, զհուսացեալն ի Քեզ **զԹաղէոս** եւ **զՅովանէս** սրբասնեալ քահանայք յիշեա ողորմութեամբ Քո՝ բարեխոսութեամբ ծնողի Քո, եւ միջնորդութեամբ ամենայն սրբոց Քոց և սիրողաց։ Եւ ինձ՝ անպիտան գծողիս և Քեզ ընդ Հօր և ընդ ամենասուրբ Հոգւոյդ փառք, իշխանութիւնն և պատիւ, այժմ և յաւիտեանս, ամէն։

**Դ**

(147ա) **Մոմիկ** գրիչս<sup>1</sup>։

<sup>1</sup> Անունը և հաջորդ բառի «ի» տառը հունարեն է գրել։

հանդիսարանին Տաթևոյ. էր ինչ և որ յաւանդութեանց ստուգագէտ արանց, որում վկայէին իրքն և տեղիքն, զիտ մտեալ ամենայն ճշդի ստուգութեան»:

Շարունակությունը կրկին աստվածաբանական, խրատախոսական մի հատված է, որին հաջորդում է բուն հիշատակարանային մասը՝ նվիրված գրչության ժամանակին և տեղին: Նախ նշվում են երկրի աշխարհիկ ու հոգևոր տերերը, սկսած մոնղոլական աշխարհակալությունից, մինչև Վրաց և Կիլիկիո հայոց թագավորները, Սյունյաց իշխանները, Ամենայն Հայոց և Աղվանից կաթողիկոսները: Աշխատության ավարտի թվականը հեղինակը տալիս է տոմարական հինգ հաշվարկով. Փրկչական թվականը նշված է 1299, սակայն ինչպես հայտնի է, մեր մատենագրության մեջ հաճախ այն 2 տարով ավելի է իրական թվականից (մասնավորապես՝ այդպես է Սամվել Անեցու մոտ, որի տոմարական կարգը ծանոթ էր Ստեփանոս Օրբելյանին և ընդունելի նրա համար և այդ սկզբունքով է նա իր ժամանակագրությունը կազմել)<sup>1</sup>: Հաջորդն արդեն Հայոց Մեծ թվականն է, որտեղ նշված է 1297 թ.: Դրան հաջորդում են հունահռոմեական տոմարական երկու հաշվարկները և վերջում Սարկավագադիրը, որով ավելի է ամրապնդվում 1297 թվականը<sup>2</sup>:

Հաջորդ հատվածում, դարձյալ հիշատակարանային ավանդույթը պահելով՝ հեղինակը նշում է ժամանակի դժվարությունները և հիշատակ հայցող հուզիչ խոսքեր է գրում (սա նաև գեղարվեստական պատկերավոր խոսքի ուշագրավ նմուշ է): Վերջում Ստեփանոս Օրբելյանը կարծես հանդես է գալիս որպես անմիջական գրուցակից, որն անգամ իր ընթերցողին դիմելով ասում է՝ «մեք և դուք ի միասին գտցուք ողորմութիւն յարարչական սիրոյն Աստուծոյ...»:

<sup>1</sup> Սամուէլ Անեցի և շարունակողներ, ժամանակագրութիւն, էջ 23-24:

<sup>2</sup> Տոմարական այս հաշվարկների մանրամասները տե՛ս Ա. Աբրահամյանի ծանոթագրություններում՝ **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, էջ 540-541, ծնթ. 1646-1650:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳԵՂԵՑԿԱՎԷՊ ՄԱՏԵՆԻՍ

Մատենադարան, ծեռ. թիվ 6271

հեղինակ՝ **Ստեփանոս Օրբելյան**

(382բ) Սկիզբն և կատարած ամենայնին Աստուած, զի ի Նմանէ սկսեալ ի Նովաւ յառաջացեալ, և ի Նոյն կատարի ամենայնն, որպէս ի կարակնակերտ բոլորումն է տեսանել, զի ուստի սկսան՝ ի նոյն յանկեալ միացաւ՝ ի ծոց իւր գրաւեալ զբազմաւորական մասունսն: Տինա՛ և ի տպաւորումն շնորհին է տեսանել, զի հոսեալ յորդառատ յականակիտ յաղբիւրէն, անցանէ ընդ բնան բաշխելով իւրաքանչիւրոցն (329ա) զմասն//աւորն ըստ պատշաճին: Եւ յայնպէս գործեալ յամենեսեան զաւգուտն և զաւգտակարն՝ ինքն նոյն պարզութեամբն միանայ ուստի բղխեացն: Ըստ որում և ես իսկ, շնորհօք վերնաին, բարուք ստորնային, ձևով երկնաին, վարուք եղեռնաին, կերպիւ կենեբաշխ, ոգով կենագրաւ, անուամբ քաւչապետ և բանսարկուին գործապետ, առեալ յաստուածային շնորհացն՝ կամեցաք սակաւ մի սեղանաւորել, և սկիզբն արարեալ Աստուծով յառաջացաք նովիմբ, զոր և աւարտեսցուք ի նոյնն:

Արդ, գոհութիւն և փառք Ստեղծողին էիցս, անճառին և անհասին, պարզևողին առատաբաշխ և խնամող բոլորիցս, օրհնութիւն, պատիւ և երկրպագութիւն անբաւ բիրաւք, անհաս և անվճար ի հրաբուն սեռից երկնաւորաց և ի նիւթեղէն տարրականաց երկրածին կենդանեացս, ի բոլոր եղանակաց և ի բնաւից գոյութեանց արարածոցս, որ կարողացոյց զխակակիրթ տհասութիւն իմոյ մտացս և զցաւալից (329բ) //տարտամութիւն ծովահեղձիկ հոգոյս, տեսանել զաւարտ առարկութեանս և հասանել ի կատարումն սկսմանէ, ի դառն աւուրս և ի սողմածոյց մահաշունչ ժամանակի, յորում մահն ցանկալի և երանական, և կեանքն ատելի և թշուառական. հանապազորդեալ ամենեցունց զցայգն ի ցաւ և զցերեկն ի ցնորք, և ակնկալութիւն ո՛չ ի բարին.այլ ար ըստ արէ յանհնարին վիշտս և նեղութիւնս:

Եւ արդ՝ ի կամս կարող և հզօրին Աստուծոյ Հաւր, և շնորհս գթութեան միածնի Որդոյ նորա Յիսուսի, և յողորմութիւն նախախնամող և ազատիչ Սուրբ Հոգւոյն, ես՝ նուաստ և յոգնամեղ ծառա Քրիստոսի **Ստե-**

**փաննոս**, և ողորմութեամբ Նորին եպիսկոպոս **Սիւնեաց** երկոտասան գաւառաց, նաև, ըստ ներող կամաց Նորին՝ նստեալ ի գահ մետրապալտութեան Տանս, տեսաք նուագեալ և ժտեալ զանուն և գլխատակ առաջնոցն, և յափշտակեալ և կորուսեալ զժառանգութիւնս եկեղեցեաց: Եւ ի վաղուց հետէ (330ա) // ցանկացեալ այսմ նորոգման ի վիպագրութեան, և բազում ջանիւ և յոլով աշխատութեամբ որոնեալ հաւաքեցաք ի հին և նոր պատմագրաց Հայոց, նաև յարձանագրութեանց եկեղեցեաց և ի հնագոյն նամակաց, որ կայր պահեալ յամուրս տեղեացն աշխարհախումբ հանդիսարանին **Տաթևոյ**. Էր ինչ և որ յաւանդութեանց ստուգագէտ արանց, որում վկայէին իրքն և տեղիքն, զհետ մտեալ ամենայն ճշդի ստուգութեան, ի բաց ձգեալ և զունայնախոյզ զրաբանութիւնն, զի մի՛ տաղտկասցին լսողք. և կարճաբան վիպասանութեամբ ցուցաք համառօտի զառուել պիտանին և զճահագոյնն. և գրեցաք զայս քաղցրաբան պատմութիւն հանդէսք դպրութեանց յիշատակարանց առաջնոցն, ոչ ընդհանրական, այլ առանձին **Սիսական** աշխարհիս, որ կոչի Յիշատակաց մատեան:

Եւ թողաք զսա արձան անջնջելի և յիշատակ գովելի յապա ժամանակաց ի հաստատութիւն սուրբ և (330բ) երկն//ահանգէտ աթոռոյս **Սիւնեաց**, և ի պայծառութիւն եկեղեցեաց՝ որ ընդ սորին այցելութեամբ: Եւ բարձեալ զսա մեղսաներկ բազկաւքս տարեալ ընծայեցաք ի տուն Տեառն խայրիս խորհրդական և դահամունս նուիրական կաթողիկէ և առաքելական եկեղեցոյս Տաթևոյ և ամենայն աստուածաբնակ տաճարաց այսմ իշխանութեան: Եւ ի գունս անկեալ աղաչեմք և յոգնակառուս ձայնիւ պաղատիմք, ո՛վ գերապանծ և լուսաճեմ առագաստ երկնաւոր փեսային՝ հայցեա ամենայն սրբովք ի գլխոյն քոյ սխրալի, ընդունել զսա յիւր աստուածաին գանձարան, զայս պտուղ շրթանց և ծնունդ հոգոյ, պատարագ հաճելի, և թէ ոչ ընդ պատուականսն, սակայն ընդ չքաւորեալսն առ խորանան, որք մագ մատուցանէին, նաև ընդ բաժ(ակ) մի ցուրտ ջրոյն կամ ընդ Բ (2) լումաին: Եւ շնորհաւորելով զսա եկեղեցոյ իւրում, տացէ մեզ ակն ունել բարեաց և առատաձիր պարգևին, և թէ ոչ կատարելոյն՝ այլ փշրանացն, (331ա) // յորմէ շունք կերակրին. զի քանքարս զոր ետուր ցիս, ո՛չ բնաւին ընդ անբանութեամբ փակեալ խորեցի, այլ սակաւ մի ըստ ի-

մում սակի արկի ի սեղանաւորն՝ վասն որոյ մի՛ լիցի ինձ լսել եթէ ծառաչար և վատ՝ այլ յաներեկ<sup>1</sup> աւուրն մեծի, ուր բան(ք) սպառին և գործք թագաւորեն, արժանասցուք երանաւէտ ձայնին եթէ «Ե՛կ, մո՛ւտ յուրախութիւն Տեառն», որում գոհութիւն և փառք յամենայն եղելոց այժմ և յանսպառ յաւիտեանս. ամէն:

Արդ՝ յարմարեալ այս հանդէսք բանի շարագրեցաւ յաշխարհակալութեան մեծի և ինքնակալ արքաի դան **Ղազանին**՝ որդւոյ **Արղունին**, ի տիրել տիեզերաց ցեղին Նետողաց, ի թագաւորութեանն Վրաց **Դաւթի**՝ որդւոյ **Դեմետրէի**, և Հայոց **Հեթմոյ**՝ որդւոյ **Լևոնի** թագաւորի, յիշխանութեան այսմ նահանգի արինելոյն և բարեպաշտին **Ելիկումին**՝ որդւոյ **Տարսաիծին** և եղբարց իւրոց, յամս աստուածապատիւ և հոգևոր տեառն **Գրիգորի**՝ ինքնագլուխ պատրիարքի, և տեառն **Ստեփաննոսի**՝ **Աղւանից** կաթողիկոսի, (331բ) // ի թվաբերութեան ժամանակ Բանին ՌՄՂԹ (1299), և ըստ հայումս ի ԺԴ (14) յոբելենին և ԽԶ (46) համարին (14 x 50 = 700 + 46 + 551 = 1297), ի ՃՁԶ (186) ոլոմպիադին և յերկրորդ ամին (186 x 4 = 744 + 2 + 551 = 1297), ի յիսուն ընդիքտիոնին՝ պակասե(ա)լ թվով (750 - /4/ + 551 = 1297), իսկ ըստ քսան և ութնեակ շրջանի արեգականն միոյ հինգհարիւրելին և ՄԺԴ (214) թվին (214 + 1083 = 1297), ի վանս վսեմական և փա(ռա)բնակ ուխտիս **Նորավանից**, ընդ հովանեալ աստուածաբնակ տաճարացս և աստուածակիր նշանացս, ի նժդեհ և ի դառնադաժան աւուրցս, մինչ կայաք ի մէջ տիեզերահոծ տագնապի միշտ զգուեալ երեքալեան դիմակցութեամբ, ակնակառոյց միայն վերին այցելութեան:

Վասն որոյ մայրամած դիմաւք մաղթեմ զդասս սրբազանիցս, զի յիշման զմեզ արասջիք արժանի, և ոչ առնէք անտես զանէութիւնս իմ, որ կամ հողացեալ ի կորդացեալ գերեզմանի, այլ առաջի աչաց համարեսջիք գոգ ի վեր քարշեալ զարլէն մուրողաց, շառագունեալ դիմաւք և տվայտե(ա)լ երեսաւք խնդրել ի ձէնջ փշրանս ողորմութեան, այսինքն՝

<sup>1</sup> «Աներեկ» բառը, որ նշանակում է «երեկո չունեցող» և վերաբերում է անեղ դատաստանի օրվան, Ստեփանոս Օրբելյանը հիշատակարանում օգտագործել է երկու անգամ (նաև Նորավանքի մեծ վիմագրում՝ արձ. Հ<sup>մ</sup> 9): Հետաքրքրական է, որ այն նույնքան էլ 1292 թ. հիշատակարանում կիրառել է Մոմիկը («զողորմութիւն յաներեկ աւուրն դատաստանի ի Քրիստոսէ»):



միով նագիւ երկնաւոր (332ա) // զենմանն առնել արժանի: Եւ թէ սխալանս ինչ և կամ թերի գտանէք ի սմա, յաւելլուած կամ պակասութիւն, մի՛ ախտաւոր մտաւք պարսաւեսջիք, զի բնութիւն է մարմնոյ գթիլ, և տկարանալ ի բանս և ի գործս, այլ ողջախոհ կամաւք ուղղել և աստուածաբար սիրով ներել մեզ և շնորհել զյանցանսն, և ձեզ ամենեցուն լիցի միոյն բիրապատիկ գտանել ողորմութիւն յողորմածէն Աստուծոյ՝ կրկին կենաւք:


Բայց պատուէր դնեն ամենեցուն, որք հանդիպիք սմա, ո՛չ քեցել ի բանից սորա և կամ այլ ընդակել զյեղանակ կարգին, և կամ ժտել ի սմանէ կամ թուխտ հատանել, կամ վասն նախանձու և նենգութեան և կամ այլ ինչ պատճառի: Ապա թէ որ ժպրիի յանդուզն լրբութեամբ՝ ջնջեալ եղիցի ի դպրութենէն կենաց, և կտրեալ ի կտակէն յաւիտենից, ընդ Յուդայի և խաչահանուացն վարձատրեսցի, ընդ սատանայի և ամենայն չարագործացն դատապարտեսցի, և որ որք ընդարինակին զսա դիցէ (332բ) // և ընդ այլոցդ զսակաւ գիծ յիշատակիս, և առհասարակ ամենեքեան, մեք և դուք ի միասին գտցուք ողորմութիւն յարարչական սիրոյն Աստուծոյ՝ ի մարմնի և ի գերեզմանի, և յաներեկ աւուրն մեծի: Եւ Նմա փառք յամենայն արարածոց, և զոհութիւն յամենայն բանակաց յերկնաւորաց յամերամս ժամանակաց յանվախճան յաւիտեանս, ամէն:

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՐԲԵԼԻ ԵՎ ՄՈՄԻԿԻ 1302 Թ. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

1302 թ. իշխանագուն Հովհաննես Օրբելը որպէս գրիչ և Մոմիկը՝ նկարիչ, Ստեփանոս Օրբելյանի պատվերով ստեղծել են անսովոր փոքր չափերի (12 x 8, 5 սմ) մի Ավետարան (Մատենադարան, ձեռ. թիվ 6792): Ըստ երևույթին, այն նախատեսված է եղել առձեռն գործածության համար և մետրոպոլիտն այն մշտապես իր մոտ է ունեցել: Ձեռագրի առանձնահատկություններից մեկն այն է, որ Ավետարանն այստեղ սկսվում է ոչ թե Մատթեոսի, այլ Հովհաննեսի Ավետարանով: Մոմիկն այստեղ զարմանալի վարպետությամբ պատկերել է Ավետարանի տերունական պատկերաշարի հիմնական տեսարանները՝ պատկերագրական ավան-

դական, բայց և նորարարական տարրեր ունեցող ուշագրավ հորինվածքներով<sup>1</sup>:

Հովհաննես Օրբելի հիշատակարանը, կարելի է ասել, աշակերտի ակնածալից մի խոսք է, ուղղված իր ուսուցիչ և ազգական Ստեփանոս Օրբելյանին: Հետաքրքիր է, որ թեև Հովհաննեսը մետրոպոլիտի եղբոր թոռն էր, բայց հիշատակարանում իրեն կոչում է եղբորորդի («զՅովանէս՝ որդի եղբոր ձերո և խրատու և բանին ծննդեամբ՝ ծառայ և որդի ձերումդ սրբութեան»):




Նկ. 64 Հովհաննես Օրբելի 1302 թ. գլխավոր հիշատակարանի ավարտը (299բ):

Հետաքրքրական են նաև Հովհաննես Օրբելի փոքր հիշատակագրությունները: Դրանցից մեկում նա ակնարկում է, որ Ստեփանոս Օրբելյանի հանձնարարությամբ ձեռագրի գրչի գործն ստանձնելով՝ այնուամենայնիվ ամբողջովին չի տիրապետել արհեստի նրբություններին, և մեծ հիշատակարանի վերջում կարմրագիր երկտողով խոստովանում է՝ «Թանաքին արուեստն


<sup>1</sup> Մանրանկարները ձեռագրի սկզբում են՝ Ավետում, Ծնունդ (1բ-2ա բացվածք), Տեսնընդատաց, Մկրտություն (3բ-4ա), Պայծառակերպություն, Մուտք Երուսաղեմ (5բ-6ա), Ոտնվալ, Խաչելություն (7բ-8ա), Ողբ, Հարություն (9բ-10ա), Համբարձում, Հոգեգալուստ (11բ-12ա): Պահպանվել է նաև Հովհաննես ավետարանիչի և Պրոխորոնի պատկերը՝ համապատասխան անվանաթերթերով և Պետրոս առաքյալի պատկերը (որպես գրիչ)՝ անվանաթերթով: Պատկերագրական և ոճական առումով ինքնատիպ են հատկապես Ծնունդը (Հովսեփի անսովոր ընդգծված դիրքով), Պայծառակերպությունը (Քրիստոսի վաղ պատկերագրությամբ և աստվածային երկնքի խորհրդանշական պատկերումով), Հարությունը (Մարիամ Մագդաղենացու միաժամանակ առաջ և ետ նայող կերպարով): Չնայած գրքի փոքր չափերին նկարիչը կարողացել է կանոնական ամբողջականությամբ վերարտադրել պատկերները, օրինակ՝ Համբարձման մանրանկարում վարպետորեն տեղավորել է 17, իսկ «Մուտք Երուսաղեմ» տեսարանում՝ 16 մարդկային կերպար, ընդ որում՝ արտահայտիչ դիմագծերով: Մանրանկարներում թեև ոսկին զգալի տեղ է գրավում, (օգտագործվելով հատկապես որպես պատկերների խորք), սակայն ընդհանուր վառ գունաշարի շնորհիվ այն կոլորիտի համահունչ մասն է դառնում:

չգիտացաք» (նկ. 64): Իսկ Մատթեոսի ավետարանի վերջում, դարձյալ կարմիր թանաքով, նա ստացողի և իր հիշատակումը «պահանջող» երկտող է թողել՝ իշխանական ոճով. «Ստացողին և գրչին յիշումն բարի պահանջեմ» (նկ. 65): Հիշատակարանային այս փոքրիկ արտահայտությունները որոշ պատկերացում են տալիս այն գրող մարդու բնավորության մասին, որն այլուստ հնարավոր չէ իմանալ:

Սույն ձեռագրում առկա Մոմիկի հիշատակարանը չնայած կարճառոտ է, սակայն նրա մյուս հիշատակարանների նման՝ ինքնատիպ (նկ. 66): Համենայն դեպս, գործին իբրև թե անվարժ լինելու մասին ամենուր ընդունված ձևակերպմանը՝ «անհմուտ էի...» (այլուր գրիչները նշում են ինքնախարագանման բազում նման արտահայտություններ), Մոմիկն ավելացնում է՝ «...այլ ժամանակս ձմեռն էր եւ տունս նսեմ», յուրօրինակ արդարացումը (կամ գուցե տրտունջը), որպիսին ոչ մի ուրիշ հիշատակարանում չենք հանդիպում:



Նկ. 65 Հովհաննես Օրբելի հիշատակագրությունը (140թ):



Նկ. 66 Մոմիկի 1302 թ. հիշատակարանը (13թ):

Իր հիշատակարանի վերջում թվականը նշելիս Մոմիկը «թուխ»-ի փոխարեն գրում է՝ «Ի թվիս ՉԾԱ», պահպանելով բառի գրության այն հիմնական ձևը, որն առկա է Նորավանքի վիճազրեցում: Չնայած այն

հանգամանքին, որ հիշատակարանում գրչության վայրը չի նշված, սա-

կայն մեծ հավանականությամբ այն Նորավանքն է, որը Մոմիկի հիմնական գործունեության վայրն էր: Այստեղ էր բնակվում նաև գրիչը՝ Հովհաննես Օրբելը, որն այդ ժամանակ արդեն մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի անմիջական օգնականն էր և կանխակոչված հաջորդը:

Այս մեծարժեք ձեռագիրը, որը ստացողն ընդամենը մեկ տարի է վայելել, քանի որ մահացել է 1303-ին, հետագայում դժվարին ճակատագիր է ունեցել: Ստեղծումից շուրջ մեկ դար անց՝ 1406 թ., ձեռագիրը խիստ վնասված վիճակում (նրանից մնացել էր ընդամենը 158 մագաղաթյա թերթ) հայտնվել է Վասպուրականի կողմերում և անցել նշանավոր վարդապետ Գրիգոր Խլաթեցու ձեռքը: Վերջինս, ըստ արժանվույն գնահատելով այն (նաև՝ համբավավոր ստացողին, գրչին ու ծաղկողին)՝ «յաւժար կամաք» նորոգել է ձեռագիրը, լրացրել թերին 144 թղթյա թերթով և այդ մասին թողել «Գրիգոր վարդապետի է այս» ծայրակապով հիշատակարանը: Մի քանի տարի անց՝ 1411 թ. Արծկեի շրջանում ձեռագիրը ստացել է Հովհաննես անունով մի երեց, որը հիշատակարանում իրեն անվանում է «սպասաւոր և ծառայ Վասիլ թագաւորի պատերազմի Սուրբ Նշանին» (վանքի անունն է), իսկ ձեռագիրը կոչում է «պատերազմի Սուրբ Ավետարան»<sup>2</sup>: 19-րդ դարում ձեռագիրը Մեծօփավանքից բերվել է Երնջակ, այնուհետև՝ Ս. Էջմիածին: Հիշատակարաններն առաջինը հրատարակել է Մեսրոպ Սմբատյանցը<sup>3</sup>:

<sup>1</sup> Ա. Մաթևոսյան, Ս. Մարաբջյան, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Երևան, 2000, էջ 49:  
<sup>2</sup> Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 131-132:  
<sup>3</sup> Մեսրոպ արք. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակա և շրջակայից նորա, Տփլիս, 1904, էջ 230-238: Լ. Խաչիկյանը վերահրատարակել է ձեռագրից (Ժե դարի հիշատակարաններ, էջ 8-9): Այստեղ մենք հրատարակությունը համեմատել ենք ձեռագրի հետ և որոշ սրբագրումներ կատարել (օրինակ՝ «ախմար», «հրամանատրութեանդ», հրատ. մեջ՝ «տխմար», «հրամանատարութեանդ» և այլն):

## ԱԿՏԱՐԱՆ

Մատենադարան, ձեռ. թիվ 6792

Գրիչ՝ **Յովանէս Օրբէլ**

**ա**

(299ա) Գոհութիւն Քեզ Քրիստոս հասակ ի գլուխ գրոցս: Սիրոյ արիւնացն յոյժ տեղեակ գոլով հոգևոր տեսող, զի զաւրաւորք են և ուժեղք, մինչ զի անհնարինս ձեռնարկել տա և մոռացանս արկանել մահուն այնոցիկ, որք դուզնաքեա իմն յաւժարութեամբ նմա հետևին, և ներանձինցն ըղձանօք ջանայցեն նմա հասանել, և այս կրկին ունելով տեսութիւն՝ երկնաւոր և հոգևոր, ըստ մարմնո և երկրաւոր, բայց յոլով իրաւք տարբերեալք ելով ի միմեանց, յաղթող երևի հոգևորն ըստ պատշաճին իւրում: Քանզի երկրաւորն առժամանակ մի է և անկատար, իսկ որ ըստ Աստուծոյն է ոչ ունելով խափանումն և ի ձևոյն ոչ երբէք անկանի, ըստ առաքելո. թեպէտ և ամենայն ինչ խափանի և լռէ: Որ և իմ անարժան անձինս պատահեաց սակաւիմաց և ախմար մտաց տեսութեամբ, որ հոգևորն է սէրով աստուածային գլուխ տէրոյ՝ **Ստեփանոս**, որդի փառաւոր իշխանաց (299բ) իշխ/անին **Տարսայիճին**, զի հարկեալ ի հրամանատուութեան ձերոյ բարձրութենէ և ի սիրոյ, և ոչ յանձին կարողութիւն վստահանալով՝ ձեռնարկեցի այս գործառնութիւն տառակերտեցի նշանախեցիք: Բայց դու ընկալ զձերոյ հրամանատրութեանդ կատարումն, թեպէտ ոչ ըստ կամաց և պարագայց ամաւք վայելելով զուարճօրէն բերկրութեամբ զյետինս ի ծանօթից զերոց՝ **զՅովանէս**՝ որդի եղբօր ձերո և խրատու և բանին ծննդեամբ՝ ծառայ և որդի ձերումդ սրբութեան, յիշեա բարի յիշատակաւ ի Քրիստոս: Որ և դուք լիջիք յիշե(ա)լ բարեաւք առաջի ամենասուրբ Երրորդութեան, հանդերձ ծնողօք և ա(մենայն) ազատագունդ զարմիք ձերաւք: Եւ թէ սղալ<sup>1</sup> գտանէք, թարց մեղադրութեան թողցես

<sup>1</sup> Հովհաննէս Օրբելը «սխալ» բառը գրում է «սղալ» ձևով: Հետաքրքրական է, որ նույն կերպ է այն գրում Մոմիկը 1292 թ. հիշատակարանում («աղաչեմ սղալանաց... անմեղադիր լինել»): Հնարավոր է, որ տառափոխության այս համատեքստում է թաքնված Յախաց քար վանքի անվան ստուգաբանությունը, որն աղբյուրներում հիմնականում հիշատակվում է «Յաղաց քար» ձևով, անելանելի դրության մատնելով «ցաղ» արմատը որոնողներին:

զմեզ, անյիշաչար Տէր, ուսեալդ ի մարդասիրէն Քրիստոսէ, որ է արիւնեալ յալիտեանս. ամէն:

(Կարմիր թանաքով) Թանաքին արուեստն չգիտացաք:

**բ**

(140բ, կարմիր թանաքով) Ստացողին և գրչին յիշումն բարի պահանջեմ:

**գ**

(263ա) Զգերաբուն բանի սպասաւորն և զարեգնափայլ լուսատուն հոգոց զմետրապօլիտն **Սիւնեաց՝** զտէր **Ստեփանոս** ստացող, յիշեցէ՛ք ի Տէր:

**դ**

Ծաղկող՝ **Մոմիկ**

(13բ) Աղաչեմ զհանդիպեալքդ այսմ աստուածաբան տաղիս յիշել զանիմաստ նկարողս՝ **Մոմիկ** և սխալանացն անմեղադիր լինել, զի թեպէտ անհմուտ էի, այլ ժամանակս ձմեռն էր և տունս նսեմ, և Աստուած գիշողսդ յիշէ յիւր անբաւ ողորմութիւնն. և Նմա փառք յալիտեանս. ամէն: Ի թվիս ԶԾԱ (1302) :


## 1307 Թ. ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄՈՄԻԿԻ 1331 Թ. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

1307 թ. Մոմիկը մետրոպոլիտ Հովհաննէս Օրբելի պատվերով Նորավանքում իրականացրել է մի Ավետարանի գրչություն (ձեռագիրն այժմ գտնվում է ԱՄՆ-ում)<sup>1</sup>, բայց նկարագրումը և խորանների տեքստի գրչությունը չի կարողացել կատարել տեսողության վատացման պատճառով, որոնք լրացրել են ուրիշները: Սակայն, տասնամյակներ անց՝ 1331 թ., այս ձեռագրի վերջում նա գրել է գլխավոր հիշատակարանը, Սյունյաց նոր մետրոպոլիտ Ստեփանոս-Տարսայիճի (1314-1331) պատվերով, որտեղ ներկայացնում է մատյանի ստեղծման նախապատմությունը:

<sup>1</sup> Սկզբում մատյանը եղել է Հարթֆորդի համալսարանում (The Hartford Seminary Foundation, The Case Memorial Library, Arm. 3), որտեղ նրա հիշատակարանը արտագրել ու հրատարակել են Հ. Քյուրոյանը և Ա. Սանջյանը: Այժմ տեղափոխվել է Յեյի համալսարան (Beinecke Library of Yale University): Ձեռագրի մանրանկարների և հիշատակարանի առաջին երկու էջերի լուսանկարները մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում Հրայր Բազէին:



Հիշատակարանը գտնվում է ձեռագրի վերջում (298բ-299բ), սկսվում է «Փառքով», որից հետո Մոմիկը գովաբանական խոսքեր ձևակերպելով պատվիրատու Հովհաննես Օրբելին և նշելով նրա տիտղոսաշարը՝ ավելացնում է, որ նրա հանձնարարությամբ ինքը՝ Մոմիկ գրիչը, Նորավանքում գրել է այդ մատյանը իշխանաց իշխան Բուրթելի «հոգու և մարմնի փրկության» և արևշատության համար: Այստեղ գրիչը փառաբանական տողեր է ձևնում Բուրթելին ու նրա տիկնոջը՝ Վախախին, խոսքն ավարտելով հետաքրքիր համեմատությամբ՝ ասելով, որ նրանք Արարչի ձեռքով նույն կավից ու զանգվածից են ստեղծվել (նկ. 67):



Նկ. 67 Մոմիկի 1307 թ. հիշատակարանի հատված (299ա):

Այնուհետև նշվում են գրչության թվականը՝ 1307, և այդ ժամանակ տեղի ունեցած ռազմաքաղաքական անցքերը, մասնավորապես Ղարբանդա (Օլջեյթու) խանի դեպի Գիլան կատարած արշավանքի մասին, որին մոնղոլական զորքի հետ մասնակցել են նաև հայոց Բուրթել և Չեսար Օրբելյան իշխանները և անվնաս վերադարձել, սակայն զորականների մեծ կորուստ են ունեցել: Ի դեպ, օտար աղբյուրներից հայտնի այս արշավանքի մասին սա միակ տեղեկությունն է հայկական սկզբնաղբյուրում:

Դրանից հետո Մոմիկը, կարծես վերադառնալով պատմության սկզբին, նշում է, որ այդ թվականի աշնանը (1307) ինքը և Պողոս վարդապետը (Կիլիկեցի) երկու ձեռագրի գրչություն են սկսել Հովհաննես Օրբելի հանձնարարությամբ (հասկանալի է, որ դրանցից մեկը հենց այդ մատյանն է, իսկ երկրորդը, որի գրիչն ու ծաղկողը Պողոս վարդապետն էր, կամ չի պահպանվել կամ Պողոսի՝ հիշատակարան և թվական չունեցող մատյաններից մեկն է): Ապա Մոմիկը հավելում է, որ ինքը տեսողության կորստի պատճառով չի կարողացել գործը շարունակել և նկարագրումը կատարել («Ես Մոմիկ գրիչ, յաչաց վատեալ... զոսկենկարսն ոչ կարացի ի գլուխ հանել, աւաղ և եղուկ իմոյ տկարութեանս, զի իմով ձեռամբ ոչ եղև...»), և մատյանի ցանկերի (խորանների) գրչությունն ու նկարագրումը կատարել են Հովհաննես գրիչն ու Թորոս նկարիչը (Տարոնացին):

Շարունակելով խոսքը՝ Մոմիկը նշում է, որ մի քանի տարի անց Աստծո շնորհիվ նրա տեսողությունը վերականգնվել է և նա կազմել ու գրել է ձեռագրի հիշատակարանը. «Յուսովն, որ առ Յիսուս, զկնի սակաւ ամաց լոյս աչաց իմոց դարձաւ առ իս ի թուխս 22 (1331) և գլիշատակարանս արարի և գրեցի...» (Հիսուսին հուսալով, քիչ տարիներ անց աչքերիս լոյսը վերադարձավ ինձ 1331 թվին և հիշատակարանս կազմեցի ու գրեցի): Մոմիկը շարունակում է, գրելով, որ այդ բանը նա արել է Ջալալի որդի Ստեփանոսի (Տարսայիճ մականունով) հրամանով, որն այդ ժամանակ Բուրթել իշխանի ցուցումով Ավետարանը զարդարել է տվել ոսկով և արծաթով (այսինքն՝ ոսկեգոծ կազմ է դրել) Եղեգիսի նոր վանքում, որտեղ նա նաև նոր եկեղեցի է կառուցել Ս. Աստվածածնի, Ս. Նիկողայոսի և Ս. Քրիստափորի անուններով: Մենք կարծում ենք, որ այստեղ խոսքը Եղեգիսի՝ հետագայում Ջորաց տաճար անունը ստացած Ս. Աստվածածին



ինքնատիպ եկեղեցու մասին է, որը նրա վիճաբերի համաձայն՝ կառուցել է հենց Ստեփանոս Տարսայիճը (Ս. Նիկողայոսը և Ս. Քրիստափորը, հավանաբար, գլխավոր խորանին կից ավանդատուն-մատուռներն են):

Հիշատակարանը շարունակվել է Մոմիկի ձեռքով, բայց արդեն Ստեփանոս Տարսայիճի անունից: Այստեղ կրկին մեծարանքով հիշատակվում են Բուրթելն ու Վախախը, նրանց զավակները: Ստեփանոս Տարսայիճը երախտագիտությամբ հիշատակում է մատյանի պատվիրատու և իր նախորդ մետրոպոլիտ Հովհաննես Օրբելին, խնդրում է նաև իրեն հիշել, իսկ վերջում մի շատ տպավորիչ ձևակերպմամբ նշում է իրենց մեծանուն նախորդին՝ Ստեփանոս Օրբելյանին:

Հիշատակարանը եզրափակվում է Մոմիկ գրչի՝ հիշատակ հայցող խոսքով:

Գլխավոր հիշատակարանի այս տվյալներին պետք է ավելացնել հետևյալը. ելնելով այն իրողությունից, որ 1308 թ. Մոմիկը Բուրթելի մոր՝ Թամթախ խաթունի պատվերով Նորավանքում մի շքեղ խաչքար է կերտել, պետք է ենթադրել, որ նա ոչ թե ամբողջովին կորցրել է տեսողությունը, այլ այն որոշակիորեն վատացել է, որի պատճառով նա չի կարողացել գրչությունից հետո նշված ձեռագրի մանրատառ հատվածների՝ խորանների և ցրվացանկերի տեքստը գրել (ուստի դա արել է Հովհաննես գրիչը), և նուրբ աշխատանք պահանջող մանրանկարչությունը կատարել, որն էլ արել է Թորոս Տարոնացին: Վերջինս նկարել է խորանները և չորս ավետարանիչների պատկերները, համապատասխան անվանաթերթերով, ընդ որում՝ Մատթեոսի և Մարկոսի անվանաթերթերի գլխազարդերի կենտրոնական մասում դրել է «Տիրամայրը Մանկան հետ» պատկերը, առաջինում՝ «Ստնտուփ», երկրորդում՝ «Խանդաղատանքի» պատկերագրությամբ:

Գլխավոր հիշատակարանից բացի, ձեռագրում պահպանվել են նաև ձեռագրաստեղծման գործընթացի մյուս մասնակիցների փոքր հիշատակագրությունները, որոնք կատարվել են 1307-1308 թթ., և նույնպես հետաքրքրական են: Դրանց մեջ առանձնանում են հենց Մոմիկի երկու գրառումները միևնույն էջում (149բ), որոնցից առաջինն իր անվան նշումն է որպես գրիչ («Մոմիկ գրչի ողորմեսցի Քրիստոս»), իսկ երկրոր-

դը՝ էջի ներքևում՝ մանրատառ, շատ արժեքավոր է, քանի որ այստեղ նա հիշատակում է Գլաճորի համալսարանի ընդունապետ Եսայի Նչեցուն, վարդապետներով (ուսուցիչներով) հանդերձ՝ «Եսայի յիշեսցի վարդապետաք եւ ծն[աւղն] յողորմութիւնն Աստուծոյ»: Եթե մինչ այժմ Մոմիկի՝ Գլաճորի համալսարանի հետ ունեցած կապի մասին խոսվել է՝ նկատի ունենալով նրա մասնակցությունը 1283-1284 թթ. Գլաճորում՝ Ներսես Մշեցու համար ընդօրինակված ձեռագրի նկարազարդմանը, ապա այստեղ Եսայի Նչեցուն հիշատակելով՝ նա կարծես հավաստում է իր հավատարմությունը գլաճորյան դպրոցին: Ի դեպ, ոմանք կարծել են, թե Եսայի Նչեցու անվան այս հիշատակությունը պատկանում է Թորոս Տարոնացուն և գրվել է Գլաճորում, մինչդեռ այն պատկանում է Մոմիկին և գրվել է Նորավանքում:

Հիշատակագրություններից մեկը պատկանում է Հովհաննես գրչին, որի անունը Մոմիկը նշում է գլխավոր հիշատակարանում, որպես խորանների ցանկերի գրիչ, և որը հենց իր գրած էջերից մեկում (13ա) խնդրում է հիշել իրեն որպես «գրիչ ցանկիս»:

Ավելի բազմաթիվ են ստացողի ու նկարչի հիշատակագրությունները: Հովհաննես Օրբելի հիշատակագրությունները ոսկեգիր են: Սակայն, բացառիկ արժեք է ներկայացնում հատկապես այս Ավետարանի առաջին՝ Մատթեոսի անվանաթերթը, որի «Ստնտու Աստվածամոր» պատկերով շքեղ գլխազարդի ներքևում դրված է երկու ոսկեգոծ կլոր կնիք: Աջակողմյանի ներսում բոլորածև գրված է «Տ(Է)Ր ՕՐՊԷԼ ԻՈՎԱ(ՆԷ)», իսկ կենտրոնական մասի փոքր բոլորակի մեջ՝ իրար տակ գրված տառերով՝ «Յ(ԻՍՈՒ)Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ» (նկ. 68): Յավոք, ձախակողմյան կնիքը և նրա վրայի գրությունը քայքայված են, բայց նշմարելի են «ԹԵ» տառերը, որոնք մեծ հավանականությամբ կարող են «Բիրթել» անվան մասնիկը լինել:



Նկ. 68 Մատթեոսի անվանաթերթը՝ Հովհաննես Օրբելի կնիքով:

Ավելացնենք, որ Աստվածամոր պատկերով այս անվանաթերթի գլխազարդը շրջանակված է ճիշտ այնպիսի զարդերիզով, որով երիզված է Աստվածամոր ոտքերի մոտի գորգը Նորավանքի գավթի պատկերաքանդակում (նկ. 20, 42):

Գլխավոր հիշատակարանում Մոմիկի նշած Թորոսը, Տարոնացի կամ Մշեցի հայտնի նկարիչն է, որը մեծ մասամբ հիշատակագրություններ է թողել իր նկարած պատկերների տակ: Սա Թորոս Տարոնացուց հայտնի ամենավաղ մատյաններից մեկն է: Նկատի ունենալով այն, որ նա հիմնականում աշխատել է Գլաձորում, կարող է ենթադրվել, որ այս մատյանն էլ այնտեղ է նկարազարդվել, սակայն հիշատակագրություններում այդ մասին խոսք չկա և չի բացառվում, որ մատյանը նա նկարազարդած լինի հենց Նորավանքում:

Սույն ձեռագրի հիշատակարաններն ունեցել են երկու հրատարակություն՝ առաջինը Հ. Քյուրդյանի՝ Թորոս Տարոնացուն նվիրված, «Բազմա-

վէպում» լույս տեսած հոդվածում (1947)<sup>1</sup>, երկրորդը՝ Ա. Սանջյանի՝ Ամերիկայում գտնվող հայերեն ձեռագրերի ցուցակում (1976)<sup>2</sup>: Դրանք ունեն որոշ տարընթերցումներ, իսկ փոքր հիշատակագրությունները երբեմն փոխլրացնող են:

Նշենք, որ նախկինում չի հրատարակվել գլխավոր հիշատակարանի սկզբնամասը՝ «Փառքի» հատվածը: Հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրատարակության սկզբնական շրջանում «Փառքերը» զանց են առնվել, որպես պատմական արժեք չներկայացնող տեքստեր: Սակայն, դրանք հիշատակարանների անբաժանելի մասն են որպես յուրօրինակ աստվածաբանական նախաբան: Ճիշտ է, «Փառքերի» պարագայում, ավելի, քան հիշատակարանի մեկ այլ հատվածում, կիրառվում են պատրաստի կաղապարներ, սակայն հանդիպում են նաև դրանց համակցումներ, ինքնուրույն ձևակերպումներ և այլն: Դրանք հետաքրքրություն են ներկայացնում մատենագրական, լեզվաբանական և այլ առումներով:

Ավելացնենք, որ ամեն գրիչ չէ, որ կարող էր կազմել աստվածաբանական գիտելիքներ պահանջող և գեղեցիկ շարադրանքով «Փառք»: Դրա համար էին շատերը պատրաստի կաղապարներ գործածում: Երևի պատահական չէ, որ այս մատյանի գրչությունից ու նկարազարդումից հետո երկար ժամանակ գլխավոր հիշատակարան չի գրվել, և ի վերջո հանձնարարվել է Մոմիկին, քանի որ նա կարող էր այդ գործն անել պատշաճ կերպով: Հատկանշական է, որ հիշատակարանի վերջում նա իր կատարած աշխատանքը բնութագրում է հետևյալ բառերով՝ «**գլխատակարանս արարի և գրեցի**»:

Ստորև ներկայացնում ենք նախ գլխավոր հիշատակարանն ամբողջությամբ<sup>3</sup>:

<sup>1</sup> Յ. Քիւրտեան, Դարձեալ Թորոս Տարոնեցի, «Բազմավէպ», 1947, N 9-10, էջ 216-217:

<sup>2</sup> A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, By Avedis K. Sanjian, Los Angeles-London, 1976, p. 85-88.

<sup>3</sup> «Փառքի» մասում էջի վերևում մաշված հատված կա, իսկ ներքևում, մեր ունեցած լուսանկարում՝ տողերի չերևացող ավարտամասեր, որոնք փորձել է վերականգնել հիշատակարանն արտագրող Լուսինե Թումանյանը, որին շնորհակալություն ենք հայտնում:

**ԱԻԵՏԱՐԱՆ (1307 թ.)**

Beinecke Library of Yale University. Arm 3.

**Գրիչ՝ Մոմիկ**

*ԳԼԽԱՎՈՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ (1331 թ.)*

